Ալազան

Ճանապարհին

Վէպ

891.99
Ա-28

1929


ԱԼԱԶԱՆ
ՃԱՆԱ-
ՊԱՐՀԻՆ
ՎԵՊ
ՊԵՏՀՐԱՏ

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible] Библиотека
[illegible] Арм. ССР
[illegible]

[illegible]
[illegible]

ԱԼԱԶԱՆ

ՅԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ՀՍԽՀ Պետական հրատարակչություն
1929 թ.

19 NOV 2010
30 MAY 2005
6270
ԱՐԽԻՎ
ԳՐԱՊԱԼԱՏ

ԱԼԱԶԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ՎԵՊ

ՀՍԽՀ Պետական հրատարակչություն
1929 թ.

2 .01. 2013
17741
1 9 NOV 2013

ՎԵՊՍ ՆՎԻՐՈՒՄ ԵՄ
ՏՊԱԳՐԱԿԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ.

Ալազան։

Հր. № 972։ Գրաւեպվար № 2020 (բ)։ Տիրաժ 2000։
Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում։
Պատվեր № 77։

Гос. Библиотека ССР им. А. Мясникяна
5223-55

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

I

Ժամացույցը սրտի նման բաբախում է և՛ համաչափ, և՛ հատու։

Փողոցը դիտող պատուհանի վերևից, հսկայական մեղուի նման, բռռում է թիթեղաթև օդահան մեքենան։ Միքանի որ է, ինչ աշխատանքն ընթանում է այդ արտասովոր բռռոցի տակ, և ժամացույցի զարկերակը խլանում է այդ բռռոցի մեջ։

Իսկ հուլիսյան արևը։ Ի՞նչ կարող են անել թիթեղե աղմկարար թևերը։ Ցարերը կրակի տաքություն են արձակում և բաց պատուհանից տաք քամի յե փչում, ասես պատուհանի պադվանդանի մոտ հսկայական խարույկ է բորբոքվում։

Հուլիսյան արևը և արևի հուլիսյան շունչը։ Թոշնեցնում է ծառ ու ծաղիկ։ Դանդաղեցնում կյանքը, տեմպը։ Զորացնում շրթունքները։ Թրջում դեմքն ու մարմինը։ Դատարկում է փողոցները։ Առաջարկում թողնել քաղաքը։ Հանում է հազարավոր շշերի խցանները։ Սառույց, սառույց։

Այդպես է հուլիսյան արևը և՛ խստասիրտ, և՛ արշավող։

Այդ արշավի հանդեպ անզոր են բռռացող թիթեղե թևերը պատուհանի վերևում։

Հուլիսյան շոգի ճնշիչ շնչի ներքո, նրանք խնամքով վերցնում են յուրաքանչյուր տառը, միաձուլում, շաղկապում իրար և արճիճե զանգվածին տալիս շունչ ու կենդանություն։

Յեթե թիթեղաթև բոռանը չխանգարի, ժամացույցի միապաղաղ շնչառության հետ լսվում է տառերի ու տառակալի հանդիպման միալար չխչխկոցը։

Արևածաղկի յեն նման, գլխահակ և անխոս։ Հայացքները մեկ ձեռագրի տողերի մեջ են խորասուզվում, մեկ սլանում տառարկղի բազմաթիվ փոսիկների ցանցում։ Մեկ սպասում, մեկ արշավում։ Յեվ շոգը ճնշիչ է, և թիթեղաթև բոռանը անզոր։

Ա՜խ այդ խմբագիրները և այդ հեղինակները։ Գրչի անփույթ մի շարժում և ստիպված են նրանք րոպեներով թողնել ձեռների արշավը, յետ մնալ ընկերներից, լարել տեսողությունը, ավելի կռանալ, խորասուզվել կոտրատված գծիկների մեջ ու մտքից կռահել բառի իսկությունը... Ա՜խ այդ խմբագիրները և այդ հեղինակները... Ինչո՞ւ, ինչո՞ւ չեն ստիպում արճիճի փոշի շնչող այդ մարդկանցը հոգնել այնքան ու լարվել ավելի, յերբ հուլիսյան արևը հեգնում է թիթեղաթևերը և յերբ բարակ քամին անգամ կրակի շնչով է լցնում գրաշարանոցը։

Մաշինա Արտաշին ինչ, նա քշում է։ Բայց դու Արտեմիցը հարցրու։ Յերրորդ րոպեն է, ինչ կռացած կանաչ թանաքով ձեռագրի վրա, տքնում է գտնել անվանի հոդվածագրի այն կծկված բառի իմաստը, վորը կուչ է յեկել անփութորեն խազմզված ծուռ տողերում։ Հնար չկա։ Բառը դիմադրում ու համառում է։ Հուլիսյան արևը մյուս կողմից։ Նա քամեց Արտեմի

ճակատի կնճիռները և հոնքերից խոշոր մի կաթիլ նետեց հենց կծկված այդ բառի վրա։ Հեղուկը թշնամաբար խառնեց անվանի հոդվածագրի այդ բառը և լուծեց կանաչ անորոշության մեջ ու ապա բարակ հոսանքով իջավ դեպի ներքև, ակոսելով բոլոր տողերը։

Մաշինա Արտաշին ինչ, նա քշում է։ Իսկ ի՞նչ անի Արտեմը։ Ել ինչպե՞ս չջղայնանա, ինչպե՞ս չբորբոքվի։ Ա՜խ այդ խմբագիրները և այդ հեղինակները։

— Աշխատանքի պաշտպանությո՞ւն,—վրդովված տոնով ասաց Արտեմը,—անունը կա, ամանումը չկա։

— Ի՛հ, ռադ արա, յա՛...

— Ել ինչո՞ւ, ինչո՞ւ համար ենք ընտրել դրանց,—շարունակեց Արտեմը,—վոր ելի պիտի քռանանք, վոր ելի պիտի տանջվենք։ Քեզ քանի՜ անգամ ասինք, եսպիսի նյութեր չընդունես։ Հետ ուղարկիր, հե՛տ, յես ես նյութը շարողը չեմ,—վրդովված տոնով գրաշարապետ Ակոբին դարձավ Արտեմը։

— Քանի՜ հետ եմ ասել, քանի՜ հետ,—արդարացավ վարպետ Ակոբը։

— Քանի՜ հետ... գնում քրիստոնյի նման վիզդ ծռում ես ու նրանք ել գլխիդ գելի ավետարան են կարդում։ Տա՛ր, շպրտի նյութն առաջները և թող արի, տես են վախտը հաշվի կառնեն թե վոչ։

— Եդպես ել չի կարելի, պարզ հայտնի յա, վոր մենք հո դուշմաններ չենք իրար, յա հո առաջվա խմբագիրն ու բանվորը չենք։ Դե նրանք ել իմանում են, հասկանում են...

— Հասկանո՞ւմ են...—հեգնեց Արտեմը,—դե տար թող հասկանան,—վրդովված՝ ձեռագիրը գրաշարապետի կողմը շպրտեց նա։

— Ա՛յ, հա՛յ, քրիստոնեյությունով գործը գլուխ չի գա, պետք է մի քիչ էլ խիստ լինել,— ասավ Արութը։

— Հայուն ինչ, չարչարվողը մենք ենք, քոռացողը մենք ենք, նա հո չի գնա խմբագրության առաջ վատամարդ լինի։ Խմբագիրն էլ ինչ կասի...

— Յերկու քաղցր խոսք ասին, գլուխը մի քիչ յեղեցին, պրծավ, էլ մեր մասին մտածելը ջերը կգնի ու թե Ադամի տարվա ձեռագիրն էլ տան, կբերի՝ թե շարեք։

— Իսկ դու եստեղ քոռացի։

— Ըտենց չի ախր, ընկերներ, ըտենց չի։ Պարզ հայտնի յա, հո նրանք էլ զատի չեն անում։ Հնարք չկա, մարդ կա, խասյաթն եդ ա, ըդենց ա գրում, չի կարում։ Հենա յես խոսել եմ, շուտով մաշինկա յել կլնի խմբագրատանը ու ըտենց ձեռագրերը կտպեն, կխտակեն, նոր կուղարկեն շարելու։

— Եդ ա ելի, դու յել հավատում ես։

— Բա բան ասեն, հայը չհավատա։

— Հայուն ինչ։

Ու վողջ գրաշարանոցը մի բերան դարձած, տարափում է գրաշարապետի, վարպետ Ակոբի վրա, կարծես բոլոր վատ ձեռագրերը նրա հեղինակությունները լինեյին։

Մաշինա Արտաշին ինչ, նա քշում է։

* * *

Մխոյի ու Ալեքի համար եյականը հուլիսյան արևը չի և վոչ էլ դիմադրող ձեռագիրը։ Այդ բոլորին միացել է և սաստիկ ցավը, վոր նրանց գլուխներում թողել է գիշերվա անքնությունը և արաղի ու գարե-

ջրի խառնուրդը։ Նրանց աչքերի առաջ տառարկղի փոսիկները փոխում են իրենց տեղը, շուռ գալիս և նրանց ձեռները ծուլությամբ ու տարակուսանքով են մոտենում այդ փոսիկներին։

Առաջինը չի։ Արաղախառն այդպիսի բազմաթիվ գիշերներ ու գլխացավի ցերեկներ են անցկացրել նրանք, այսօրվա շոգն էլ առավել, թիթեղաթև պտուտակի բռոցը գումարիր վրան։

— Ղուզս տեղիցը ժաժ ու մաժ ա գալիս,— դեպի Մխոն դարձավ Ալեքը, յոք-յոք Ալեքը։ Բանվորներն այդպես եյին մկրտել նրան և այդպես եյին մկրտել ավել գինին ու արաղը, վորոնք Ալեքին հագցնել եյին տալիս թափթփված, ու վոտների հետ քաշ տալիս կարկատած հսկայական «լոք-լոք» չստերը։

— Իմն էլ քյալլա-քյաֆես ա դառում,— ավելացրեց Մխոն,— ո՛ւֆ, ես անտերի դառոյն էլ... Է՛, քու հնարողի յել...

— Գիշերն ով ա իմանում քանի բոթիլ եք «ենդի աշխարհն» ուղարկել։ Կդռռա յել, կբռռա յել, բա վո՞նց,— վրա տվեց Սեդրակը, վորին շատախոսությունը պարգևել եր «բոշբողազ» մասսայական ածականը։

— Աչքներիցն արաղ ա կաթում, ով ա իմանում ինչքան են վեր ավել։

— Մխո՛, դու են ասա, ելի տըրնգի պար յեկա՞ր։

— Դե սո՛ւս...

— Ելի վեր-վեր թռա՞ր։

— Սուս ասինք, է՛. .

— Մի-մի թաս արաղ, մի-մի թաս արաղ ա դրա իլլաջը, պախմելի դոխտուրն արաղն ա,— փորձված մարդու տոնով ավելացրեց վարպետ Ակոբը։

— Յես էլ եդ եմ ասում է,—ավելացրեց Մխոն։

Արաղի և գլխացավի շուրջն սկսված խոսակցությունը վերջ գտավ և բռռան թիթեղաթեը շարունակեց իրենը։

Արշակը խորասուզված է։ Նա ձեռագրի, արաղի ու գլխացավի շուրջն սկսված խոսակցություններին միայն լռությամբ մասնակցեց։ Խորասուզված շարում է։ Վոչինչ էլ չի հասկանում, վոչ խոսակցություններից և վոչ էլ իր կարդացածիցն ու շարածից։ Մեքենայորեն նայում են աչքերը և մեքենայորեն շարժվում ձեռները։ Բունքերից, այտոսկրերի վրայով իջել են յերկու թաց գծեր, վորոնց վրայով հոսում է գորշագույն հեղուկը։

Մտածում է Արշակը, և այն հանձնարարության մասին է մտածում, վորը նրան արել եր կոմյերիտմիության բջիջը։ Հաջորդ որը, բջիջում, պիտի զեկուցեր կոմյերիտմիության ...-րդ համագումարի արդյունքների մասին։ Արդեն ծանոթացել է յեղած նյութերին և մտքում կետեր է նշանակում այժմ, մտածում առաջարանի մասին և մեքենայորեն շարժում ձեռները տառարկղի փոսիկների ու տառակալի միջև։

Յեվ ուրախ է իրեն արված հանձնարարության համար և քիչ մտավախ։ Արդյոք կարող կլինի՞ հաջողությամբ կատարել այն։ Արդյոք չի՞ կորվի, չի՞ կանգնի տրված հարցերի առաջ առանց պատասխան գտնելու։

Արշակը դարձյալ կմտածեր, գուցե չսթափվեր, յեթե նրա շարվածքի ձեռագիրը չվերջանար։ Թեևը յերկարելով կոտրատվեց և մոտեցավ գրաշարապետին նոր ձեռագրի համար։

Ներկա վեպի հեղինակը հավաստիացնում է իր ընթերցողներին, վոր Արշակը վոչնչով մեղավոր չեր, յերբ նրա այդ օրվա շարվածքի սրբագրությունը հյուսվել եր բազմաթիվ սխալների ցանցով։ Մտքե՜րը, նրանք այնքան հեռու տարան, վոր Արշակը մոռացավ շարվածքի վրա ուշադրություն դարձնել և դրանից էլ ահա այդ շարվածքի սրբագրության թերթի վրա, ինչպես գրաշարներն են սովոր ասել, «Հայաստանի քարտեզ» եր նկարվել, մի բան, վորն առիթ տվեց ու յենթարկեց Արշակին կատակի և սրամտության հարձակումների։

— Ա՛յ տղա, հո սիրահարված չե՞ս,—հանդիմանական տոնով ասավ վարպետ Ակոբը։

— Նոր ա կնիկ առել խեղճը, էլ ի՞նչ սիրահարվի։

— Նոր ա կնիկ առել, հա՛, դե ասա յե՛, իհարկե շարվածքն էլ եդպես կլնի,—վրա տվեց բօբողազը։

— Ես շարվածքն եկեք ուղարկենք մամուլի ցուցահանդես, տղերք։

— Չե՛, կլիշե հանենք ու տպենք պատի թերթում։

— Չե՛, կպցնենք գրաշարանոցի պատից։

— Չե՛, ուղարկենք գնահատու-կոնֆլիկտային հանձնաժողով, թող շարողի կարգը բարձրացնեն։

— Չե՛, ուղարկենք Սանդրոյին թող քեֆը գա։

— Չե՛, ուղարկենք տեղկոմին։

— Չե՛, ուղարկենք միությանը։

— Չե՛, լավն են ա, Արշակն առնի շուշի մեջ ու կախ տա իրա գլխավերևը, վոր տեսնողն էլ հասկանա տղի ուստությունը։

Յեվ այսպես։ Հարձակում ամեն կողմից։ Արշակը լուռ է, չի պատասխանում։ Նա իրավացի չե գտնում

ընկերներին։ Նրանք ինչպես իմանային, վոր Արշակի գլխում ուրիշ մտքեր են յեփվում։

* * *

Յեթե ընթերցողը ցանկանար, ներկա վեպի հեղինակն ամենայն սիրով այստեղ կընդհատեր գրաշարական առօրյային նվիրած իր նկարագրությունը և նրան կառաջնորդեր ու կծանոթացներ տպարանի շատ հետաքրքիր մի անկյունի հետ։

Ջրի միակ ծորակն ե այդ ու նրա շրջապատը։

Պատի վրա տարածված ու յեզերքներով մեկ պատի սպիտակ տարածության մեջ սլացող ու մեկ նահանջող սև տեքստը, յերբեմն սպիտակն ու սևը մոխրագույնով ձուլող անորոշությամբ։

Պատահական այցելուն պիտի կարծեր, վոր այստեղով անցել ե մի նկարիչ, կամ հասարակ մի ներկարար, քսել ե իր հաստ վրձինի մուրը պատին, լվացել ե վրձինը, դարձյալ քսել ու անցել գնացել ե։ Բայց այդ այդպես չի և վոչ ել այնքան պատահական մուրն ու կեղտն են տարածել ծորակի շուրջը, և այդ ե, վոր իր ընթերցողին ցանկանում ե պատմել ներկա վեպի հեղինակը։

Այստեղ, սովորական թվացող այս մուր ու կեղտում, ամբողջ մի պատմություն ե խտացված։ Ցուցամատերով ու բթամատերով ուրվագծված ու ձեռների ափերով ամփոփված հետաքրքիր մի պատմություն։

Ահա, հենց այն հաստ ու սև գիծը, վորն սկսում ե սպիտակից ու շեշտակիորեն իջնում, ձուլվում սևում։ Նա պատահական գիծ չե։ Յեթե ուշադրությամբ քննենք, նա՝ այդ հաստ գիծն ասում ե, վոր տպագրելուց հետո շարվածքը լավ չեն մաքրում, ներկը ցեխ ե դառնում, կլանում տառերը. ցրելիս ու շարելիս գրաշարական մատները ներկի մեջ շաղախվում են։ Ձեռները լվանալու համար տալիս են լվացքի հասարակ սապոն. դիմադրում ե, չի մաքրում, և ահա այն հաստ գիծն ասում ե, վոր գրաշարն իր մատը քսել, տրորել ե պատին, վորպեսզի ներկը գնա, մի քիչ ներկից քսվի պատին, մի քիչ ել մատների կաշուցը, և ձեռները մաքրվեն։ Յեվ յեթե աշխատանքի տեսուչը գա հետախուզության, այն գիծը, ինչպես և մյուս գծերը նրան կարող են պատմել, վոր աշխատանքի պաշտպանության հանձնաժողովն այնքան ել լավ չի աշխատում։

Ահա, առանձին մատների այդ գծերը խտացել, թանձրացել են դրա վրա ու ստեղծել հետաքրքիր այդ պատմությունը։

Յերբ ճաշի զանգը հնչում ե, ներկա վեպի հեղինակը դիտել ե, թե ինչպես կենդանի յեռ ու զեռ ե սկսում յեզակի այդ ծորակի շուրջը։ Իրար հրում են։ Առաջ ե անցնում մեկը, հրում, դուրս են նետում, գալիս ե յերկրորդը, յերրորդը, քսաներորդը։ Պարզում ե մեկն իր ձեռքը ծորակի տակ, մյուսը՝ առաջը կըտրում ե։ Մատներով տրորում են պատը, տրորում սապոնը. բութ մատով տրորում կակուղ սապոնը, ցուցամատը՝ փետի նման վոլորում մեջը, ափը քսում պատին, և կիսամաքուր ձեռներով բաժանվում ծորակից։

II

— «Տանու՜մ են, աղե ջա՜ն, տանու՜մ են»...

Յեթե ուրիշ նորություն ել չլիներ, այդ բավական եր, վոր տպարանն առավոտյան խոսելու նյութ ունենար։

Եվ տանում են նրան, և խոսում են նրանք։

— Ո՞ւմ են տանում, ո՞ւր են տանում,—անշուշտ կհարցնի ընթերցողը ներկա վեպի հեղինակից։

Բայց վոչինչ։ Առանձին վոչինչ։ Սովորական ցերևույթ, վոր կատարվում ե մեր բոլոր գործարաններում, այն ե, վոր նրանք չեն ուզում բաժանվել Ցեղիշից։

Տանում են նրան, առաջ են քշում։

Արդեն չորրորդ տարին ե, ինչ Ցեղիշը, կամ ընկ. Զաքարյանը, – ինչպես կասեր պարոն Խաչքարյանը,— վարում ե գործարանային կոմիտեյի նախագահի պաշտոնը։ Գրաշարապետ եր, հետո դարձավ գործարկոմի նախագահ, իսկ հիմա տանում են։ Այնքան շիտակ ու բարեխիղճ, այնքան տարված իր աշխատանքով, վոր հիմա, դե արի ու տես, բանվորները չեն ուզում բաժանվել նրանից։

Նրան առաջ են քշում աշխատանքի ավագ տեսուչի պաշտոնին, այդ ուրախալի յեր բանվորների համար, բայց միևնույն ժամանակ այդ ուրախալի չեր, վորովհետև գործարկոմը զրկվում եր այնքան նվիրված ղեկավարից։

— Ցեղիշին ել տարա՜ն,—առավոտը ցրվածքի հետ խոսել սկսեց գրաշարանոցը։

— Ցեղիշը գնում ե.—մեքենաները յուղելու հետ խոսք բաց արին մեքենայական բաժնում։

— Ափսո՜ս Ցեղիշը։

— «Տանո՜ւմ են, աղե ջա՜ն, տանո՜ւմ են, տանում են, ինձանից հանո՜ւմ են»...

— Լավ տղա յեր։

— Գործից հասկացող։

— Իսկը են, վոր կա։

— Հեր որհնածներ, ենպես եք ափսոսում, վոր կարծեք թե խեղճը մեռնում ա, տո, տնաշեննե՛ր, ավելի մեծ պաշտոնի յա գնում, ե՛...

— Եդ հո ե՛դ, դրուստ ա, համա դու են ասա, կարա՞նք ենպիսին ճարենք, վոր Ցեղիշի տեղը բռնի։

— Կճարե՛նք։

— Դժվար թե։

— Վո՞նց թե դժվար, կասես Ցեղիշն ել մորից ետպես լավ նախագահ ա ծնվել, աշխատեց սովորեց, ելի՛...

— Եդ լա՜վ. յարաբ ո՞վ կլնի տեղը։

— Մեկը կլնի հալբաթ։

— Կճարե՛նք։

— Արսե՛նը։

— Չե՛, Ակոբը։

— Չե՛, Արտեմը։

— Արշա՛կը։

Արշակը ժպտաց ու գլուխը ծռեց։

— Չե՛, յես ասում եմ Սեդրակը։

— Եդ եր պակաս։

— Ախպե՛ր, վե՛րջ տվեք,—վրա բերեց վարպետ Ակոբը,—ըստեղ տեղը չի, պարզ հայտնի յա, ընտրության վախտը կգա, կընտրենք, ինչ եք գլուխ ուռացնում։

Խոսակցությունը մի պահ դադար առավ։ Ձեռների աշխույժ շարժումները տակավ առ տակավ լցնում են տառակալի դատարկված փոսիկներն արճիճե մանրիկ տառերով։ Ժամացույցը միապաղաղ բաբախում ե։

Ալեքն ու Մխոն դարձյալ չկան, ուշացել են։ Նրանց տառարկղները դատարկ փոսիկների կույր աչքերով դարձյալ նրանց են սպասում։

— Ելի վեր են տվել,—սկսվեց խոսակցությունն Ալեքի ու Մխոյի շուրջը։

— Պախմելիա կլնեն։

— Դրանց տունը չքանդվի, խմելուց ձեռ չեն քաշում։

— Լավ էլ իրար գտել են։

— Նմանն ըզմանը սիրե։

— Թամամ վոր...

— Ահա՛, ձերդ մեծությո՛ւն, բարձրապատի՛վ տեր Ալե՛ք, անունը տուր, փեշը վե կալ, դու արդեն ժամանեցի՛ր, լոք-լո՛ք ախպեր,— վրա տվեց բոցբողազը, յերբ Ալեքը ուռած, կարմրած աչքերով ներս մտավ,— բարև յեկա՛ր, լոք-լոք ախպե՛ր, բա ո՞ւր է են մյուս Թայըդ։

— Չի յեկե՛լ...—ծոր տվեց Ալեքը։

— ՉԷԷԷ...

— Հալբաթ քնած կլնի, խեղճը գիշերվա սհաթի երկսին ա տուն գնացել։

— Ի՛հարկե, տղի գործերը վռազ են։

— Վռազ ասիր ու պրծար։

— Թամամ վոր...

Ալեքը Թևերը տարածելով ծուլորեն կոտրատվեց, աջ թևն ավելի յերկար պահեց ոդում ու կծկելով դեմքին մոտեցրեց, ասես գինու բաժակն եր դեպի բերանն առաջնորդում, բերանը լայն ծռելով հորանջեց, լեզվով քսեց պապակած շրթունքներին, հագավ կապույտ խալաթը և դանդաղ քայլերով տառարկղին մոտեցավ։

— Ո՞ֆ, ես անտերի բռոցն էլ գլուխ ա տանում,—կերկերաց նա ու սկսեց հիվանդի ձեռներով վերցնել շարվածքը ցրելու համար։

— Ճանճերն էլ հոգի յեն հանում, թո՛ւհ, ձեր ստեղծողի յել...

— Բողոքիր Սանդրոյին, թող գա ճանճերը քշի, լոք-լոք ախպեր,—մեջ ընկավ բոցբողազը։

— Դե սո՛ւսս...

— Մեկ էլ ասա, վոր գլխացավիդ ճար անի։

— Սուս ասինք, ԷԷԷ...

— Մեկ էլ ասա, թող գնա են մի Թայիդ գտնի բերի։

— Դե սուս ԷԷԷ... շո՛ւն շան...

— Մեկ էլ ասա, վոր մի թաս արաղ բերի, վոր պախմելիեդ անց կենա...

Ցեվ բոցբողազն արշավում է, և թիթեղաթև բռանն է աղմկում և շոգը ճնշիչ է։

Ալեքը կոտրատվում է ու հորանջում։

III

Տպարանի վարիչ Սանդրո Փաշայանը քառասունհինգին մոտ է։ Մազերն ու միրուքն արդեն սկսել են արծաթազոծվել։

Նա Յերևան աշխատելու յեկավ դեռ 1921 թվի սկզբներին, յերբ քաղաքացիական կռիվների վերջին գնդակի արձագանքը նոր եր լռում և նախերգանքն եր բոլշևիկյան մոլի շինարարության։

Վարժ ձեռներ։ Վարժ ձեռներ եյին հարկավոր։ Քաղաքի ամեն մասերից իրար մոտ հավաքված մասնավոր տպարանները ձուլվել եյին մի ամբողջության մեջ ու վարժ ձեռներ եյին հարկավոր նոր գործը՝ նոր թափով առաջ տանելու համար։ Յեղած ուժերը քիչ եյին ու վատ, և ահա, Թիֆլիսից՝ աշխատանքի հրա-

վերվեցին վեց բանվորներ, որոնց թվում և Սանդրո Փաշայանը։

Անհրապույր էր նրանց աշխատանքի նոր միջավայրը։ Թողել էին «քաղաքը», ինչպես ասում էին նրանք առանձին շեշտով ու կարոտով, թողել էին տուն, ընտանիք, ավելի լավ բնակարաններ և չեկել աշխատելու ավելի վատ պայմաններում։ Ստանում էին կես փութ հաց և հետո «սելյոդկաներ», որոնք հաճախ զարդարված էին լինում սպիտակ, մանրիկ ու շարժուն զեռուններով, հետո ստանում էին որ-որի վրա իր արժեքից զրկվող գույնզգույն թղթադրամներ և աշխատում էին չեռանդուն ու նվիրված։

Քնում էին վեցը միասին, տպարանին կից մի մռայլ ու գաղջահոտ սենյակում։ Ամբողջ գիշերը ջոկում էին իրար խառնված տառերի զանգվածները, «սիպը», ինչպես կասեին նրանք գրաշարական լեզվով։ Ամբողջ գիշերը կատակում էին և ուրախանում, և գիշերը սահում էր։

Սանդրոն գործի անցավ որպես հասարակ գրաշար, ապա ստանձնեց գրաշարապետի պաշտոնը։ Գործը լավ դրեց և օրինակելի։ Գովեցին, խիստ գովեցին Սանդրոյին։ Կարճ ժամանակ անցավ և նա առաջ քաշվեց որպես տպարանի վարիչ։

Սանդրոն վողջ տպարանի սիրելին էր։ Այդպես էլ մնաց նա, չերբ տպարանի վարիչ դարձավ։ Իր վերին աստիճանի պարզ, կատակող բնավորությունը, աշխատանքի նվիրվածությունը, հարգանքը դեպի նույնիսկ ամենաանվորակ աշակերտն ու սև աշխատողը, նրան տվել էր բոլորի սերն ու վստահությունը։

Վառվռուն չիրխասարդ էր Սանդրոն, անխոնջ ու աշխույժ, չնայած նրա մազերն արդեն արծաթազոծվել էին։

Նրան իր գրասեղանի առաջ դժվար գտնեյիր։ Տպարանը ղեկավարում էր վոչ թե սեղանի մոտ նըստած, այլ այնտեղ, գրաշարանոցում, տպագրական բաժնում։ Շտապ աշխատանքի դեպքում ահա նա շարում է գրաշարական խալաթը հագին, կամ տպագրական մեքենան է ղեկավարում։ Նրան կգտնեյիր նաև ղեռատի բանվորի կողքին, կատակելով ցրվածք անելիս, կամ ավելի հեռուները... ավելն ու փայտը ձեռին տպարանի արտաքնոցը մաքրելիս։

— Մեծի հետ մեծ է, փոքրի հետ՝ փոքր, բանվորի հետ՝ բանվոր, նախագահի հետ՝ նախագահ,—ասում էին բանվորները Սանդրոյի մասին։

Կյանքի մեծ մասը տպարանի արճիճոտ մթնոլորտում էր անցկացրել և հետո ցարական բանակում։ Ջուրկ ընտանիքից։ Մենակ։ Տանը՝ ինքն իր համար և դրսում՝ բոլորի։

— Սանդրո, խի՞ չես պսակվում։

— Քեզ պետք ա պսակենք Սանդրո, բոլ ա խալաստոյ ման գաս,—ասում էին բանվորներն ամեն առիթով։

— Սիրեկանս Աղեսումն ա,—կատակում էր Սանդրոն։

Հարց տալը հեշտ է, ավելի քան հեշտ է կատակելը, բայց գիտե՞ն արդյոք նրանք, վոր դրանով տակն ու վրա չեն անում Սանդրոյի սիրտը, ուր թաղված մնում է նրա սիրո հին, մշուշապատ պատմությունը։

Մի անգամ սիրեց Սանդրոն։ Կյանքում մի անգամ և դա չեղավ առաջին սերը, և դա չեղավ վերջին սերը նրա համար։

Դեռ նորահաս յերիտասարդ եր, հազիվ քսաներկու տարեկան։ Դեմքի յերբեմնի նուրբ աղվամազերը գնալով ավելի կարծրանում եյին։ Վերևի շրթունքը գնալով սևանում եր։ Ածելին քերում եր այտերը և Սանդրոյի մատները հաճախ եյին շոյում վերևի շրթունքին սևին տվող նորածիլ բեխերը։

Հանդիպեց կապուտաչյա և շիկահեր ռուսուհուն և սիրտը բաբախեց ուժգին և սիրտը թրթռաց։ Ժըպտաց նրա յերեսին և շիկահեր ռուսուհին նույնպես ժպտաց։ Ժպիտներն իրար վողջունեցին ու սրտերը՝ հասկացան։

Աշխատում եր Սանդրոն տպարանում, շարում տառերը և ցրում տառերը ու մտաբերում Ժենիային, շիկահեր այն ռուսուհուն և աշխատում եր Ժենիան կաֆեյում, թեյ եր մատուցում սրան կամ նրան, բայց հիշում Սանդրոյին, կաթ եր մատուցում և դարձյալ հիշում Սանդրոյին։

Որերն անցնում եյին, Սանդրոն թեյ եր խմում ու զրուցում Ժենիայի հետ։ Յերեկոներն ընթրում եր կաֆեյում, Ժենիայի մատուցած հացով ու մածնով և ընթրում եր Ժենիայի անկեղծ ու սրտաբուղխ ժպիտների տակ։

Սանդրոն ու Ժենիան պիտի ամուսնանային, անպայման պիտի ամուսնանային։ Արդեն խոսել ու պայմանավորվել եյին, բայց ցարական կայսրությանն այդ դուր չեկավ։

Քշեցի՛ն։ Կովկասյան լեռնաշղթայից Սանդրոյին քշեցին տունդրաներն ու տայգաները։

Կայսերական բանակի զինվոր դարձավ Սանդրոն, «հայրենիքի» համար կռվող դարձավ Սանդրոն և վոտով չափից հազարավոր վերստեր, հիշեց Ժենիային։ Նոր յերկրներ տեսավ՝ հիշեց Ժենիային։ Կռվեց ճապոնական ֆրոնտում, հասարակ սալդաթությունից՝ ֆելդֆեբել դարձավ ու դարձյալ հիշեց Ժենիային։

Ժենիան թեյ մատուցեց դարձյալ և հիշեց Սանդրոյին, կաթ մատուցեց Ժենիան, հիշեց ու ափսոսաց Սանդրոյին։

Իսկ Սանդրոն իր սովորական վոտներով անցավ հազարավոր վերստեր, տայգաներով ու տունդրաներով անցավ, ստեպներով անցավ և հիշեց Ժենիային։

Կռվեց դարձյալ, կրակեց «հայրենիքի» թշնամու վրա, նոր վայրերով անցավ, նոր դեմքեր, նոր կանայք ու աղջիկներ տեսավ, որեր ու ամիսներ անցան և նա դարձյալ հիշեց Ժենիային։

Յերբ վերադարձավ կայսերական սալդաթը, արդեն տարիներ եյին անցել։

Յեկավ ծննդավայրը։ Աչքին բավական փոխվել եր։ Փնտռեց Ժենիային ու չգտավ։ Յերկար անգործ մնաց, թափառեց փողոցներով ու հրապարակներով։ Ամեն տեղ մտավ, ամենքից հարցրեց, հուզվեց ու անհանգստացավ և չգտավ նրան։

Ո՞ւր եր. .

Տարիներ անցան ու Սանդրոն հիշեց Ժենիային։

Կրկին տարիներ անցան ու տասնամյակներ կազմեցին։ Այդ տարիները տարան Սանդրոյի յերիտասարդությունը... ել ի՜նչ ամուսնանալ...

Իսկ հիմա հարցնում են, թե ինչո՞ւ չի ամուսնանում նա։

Իսկ հիմա կատակներ են անում։

* * *

Սանդրո Փաշայանի գրասենյակում, հենց նրա հասարակ գրասեղանի կողքին, սրբագրիչի պաշտոնով աշխատում է նախկին տպարանատեր պարոն Աստուր Խաչքարյանը։

Այստեղ, այս չերկու սովորական սեղանների արանքում խտացված է դասակարգային հակամարտության ամբողջ մի պատմություն։

Մի մեռը այն կողմը՝ տպարանի նախկին տեր ու տնօրեն և այժմ վարձու, տեխնիկական աշխատողը, մի մեռը այս կողմը՝ տպարանի նախկին բանվորն ու այժմ վարիչը, այժմ իրավունքներով ավելի բարձր, քան ինքը՝ «Լուսավորիչ» տպարանի տեր ու տնօրեն պարոն Աստուր Խաչքարյանը։

Եվ ինչպես որ-որի վրա չմաշվեր, չհալվեր պարոն Խաչքարյանը։

Նա, վոր միակն եր քաղաքի բոլոր տպարանատերերից, վորը վայելում եր նահանգապետի ու նահանգապետարանի պատվերները կատարելու պատիվը, վորն անձա՛մբ այցելություններ եր անում «Նորին մեծություն» նահանգապետին, վորի տպարանի ցուցանակը նույն ինքը՝ «Նորին մեծությունը» բարեհաճեց զարդարել կայսերական վոսկյա շքանշաններով և վորը վայելում եր ժողովրդական կուսակցության ականավոր ղեկավարներից մեկի պատիվը։ Յեվ ահա այսքան բարձրաստիճան այս մարդը, վորին «Նախախնամությունը» վիճակել եր իր ազգի մեծ զավակը դառնալու, այժմ «ուրիշների կամքը կատարող» է դարձել, տեխնիկական աշխատող «մի ինչ-վոր» Փաշայանի

«ձեռքի տակ»։ Պատկերացնում է արդյոք «ազգային դժբախտությունը» ներկա վեպի ընթերցողը։

Նրան միշտ նկատողություն են անում, վոր լավ չի սրբագրում, վոր ուշադիր չի, վոր անփույթ է, վոր թշնամական վերաբերմունք ունի դեպի գործը։ Սակայն ինչպես ուշադիր լինի նա, ինչպես բարեխիղճ լինի, յերբ ներքևում, իր սեփակա՛ն մեքենաներն են չրխկչրխկում ուրիշնե՛րի համար, իր փայփայած «անգի՛ն» մեքենաները, իր հարազատները, իր «հոգյակները»... Ինչպես ուշադիր սրբագրի նա, յերբ ուրիշնե՛րի համար շարված տեքստում, ահա նայում են Գերմանիայից, հատկապես նահանգապետի գործերի համար պատվիրած, ռուսերեն հազվագյուտ, ի՛ր սեփակա՛ն գլխատառերը։ Ինչպե՞ս, ինչպե՞ս սառնարյուն ու բարեխիղճ սրբագրի նա և ինչպե՞ս Ш-ն—Щ չեռևա նրա աչքին և ինչպե՞ս И-ն—П չթվա նրան։

Խազեյինական, հրամայող զամչիի փոխարեն՝ այժմ տեխնիկական գրիչ են տվել նրա ձեռքին և նահանգապետի համակրանքի փոխարեն՝ այժմ մի հասարակ գրաշար է կարգադրում նրան, այնպիսի մեկը, վորին նա և՛ կարող եր ընդունել իր տպարանում աշխատանքի, և՛ վռնդել, և՛ բարձրացնել ռոճիկը՝ յեթե ցանկանար, և՛ իջեցնել՝ յեթե քեֆն ուզեր։

Հիմա նրան ստիպում են իր սեփակա՛ն մեքենայի սիրտ մաշող չրխկչրխկոցի տակ բարեխիղճ աշխատել։ «Անսի՛րտ մարդիկ»։

Ամեն անգամ նա վորոնում է մեկին, վոր դանգատվի, վոր լա իր ցավը, վոր նկարագրի իր դրությունը։ Չնայած բարեկեցիկ ապրուստին, չնայած Զանգվի ափին դեռ նրա համար չրխկչրխկացող Չրա-

ղացի հասուլթին, նա սիրում է տպարանի կյանքում դեր խաղացող բանվորների, վարչակազմի ու պրոֆմիութենական աշխատողների առաջ ամեն առթիվ լալ իր «թշվառ» ու «անճար» դրությունը։

— Տպարանս առաք, ախպեր, բան չունեմ ասելու, գոնե մի կարգին ռոճիկ տվեք, որ կարողանամ ընտանիքս կերակրել. —ասում էր նա հաճախ։

Ուրիշ խորամանկություն էլ էր ստիպում նրան այդպես վարվել։ Նա մտածում էր—«յեթե յերեխան լաց չլինի՝ կաթ չեն տա»,—յեթե այդ դրությունից միշտ չգանգատվի, յեթե ռոճիկը չավելացնեն էլ, գոնե այդ դրության մեջ կթողնեն, «չեն կրճատի»։ 75 ռուբլի կստանա տպարանից, մի քիչ դրանից ավել՝ ջրաղացից, մի քիչ դրանից պակաս՝ սենյակների վարձից ու «յոլա կգնա»։

Պարոն Խաչքարյանն է, որ բոլորովին չի սիրում ոչ ժողովները և ոչ էլ ցույցերն ու թափորները, բայց պարոն Խաչքարյանն է, որ ամենապարտաճանաչ կերպով հաճախում է թե այդ ժողովները և թե մասնակցում ցույցերին ու թափորներին։

Ժողովներում՝ մի անկյունում կծկված, լուռ և ինքնամփոփ նա ծխում է։ Մտասուզվում։ Հայհոյում մտքում։ Այդ ժողովներում ոչ մի բառ չի խոսում։ «Ոչ սրանց խերին խառնվել, ոչ էլ՝ շառին»,— մտածում է նա։ Քվեարկում է միշտ մեծամասնության հետ։ Յերբ ժողովը շուտ է վերջանում՝ ուրախանում է, իսկ յերբ ձգձգվում է՝ մտքում թունդ հայհոյում «շատախոսներին»։ Շքերթներում ու ցույցերում քայլում է դագաղի յետևից գնացող հուղարկավորի նման,

թթված դեմքով քաշ է գալիս ու մտքում թունդ հայհոյում ու անիծում նրանց հեղինակներին։

Ի՞նչ անե պարոն Խաչքարյանը։ Յեթե իրեն մնար—նա կթքեր այդ բոլոր ժողովների վրա էլ, ցույցերի ու թափորների վրա էլ։ Բա՞յց։ Ահա այդ բայցն էր, որ պարոն Խաչքարյանին շպրտում էր ժողովների անկյունները և քարշ տալիս շքերթների յետևից։ Բա՞յց իր 75 ռուբլի ռոճի՞կը։ Բռնեցին ու կրճատեցին—«թե ժողովներին չես հաճախում, թափորներից փախչում ես, թշնամի էլեմենտ ես, հակմ...»։ Գրծա՞վ գնաց։

Զե՞ որ «անգութ ու անխիղճ» «պյադաների ձեռքն է ընկել», չե՞ որ մի կերպ քարշ գալ է հարկավոր մինչև «նախախնամությունը մի դուռ կբանա»։ Յեվ վերջապես—«շան յերեսին էլ պիտի ժպտալ, նրանից մի մազ պոկելու համար»—կրկնում էր նա իր վաղեմի «իմաստությունը»։

Յեվ ահա, այս յերկու հակադիր բևեռները—նախկին տպարանատեր պարոն Աստուր Խաչքարյանը և նախկին գրաշար Սանդրո Փաշայանն աշխատում են այժմ իրար մոտ, մի մետր հեռավորության վրա, մեկը՝ որպես կարգադրող, մյուսը՝ կատարող, մեկը՝ որպես բարձրացած դասակարգի առաջավոր մարտիկ, մյուսը՝ որպես մեռնող դասակարգի բեկորը։

IV

Աչքերը սուզել է թավ հոնքերի տակ։ Մտածում է յերկա՜ր, խո՜ր։ Շփում է կնճռոտ ճակատը, սպիտակախառն միրուքը։ Ջղայնությամբ ոլորում, տրորում շեկ բեխերը։

Դարձյալ, դարձյալ է մտածում վարպետ Ակոբը։

Չի գտնում։ Չեն գտնում և մյուսները։ Ո՞վ կա հարմար, վոր գործ անի, բան հասկանա, Յեղիշի նման գլուխ դուրս գա, ամոթով չմնա ու ամոթով չանի։

Բոլորն էլ խորասուզված են, բոլորն էլ մտածկոտ։ Բանվորական դեմքերը մեկիկ-մեկիկ անցնում են նրանց մտապատկերների առաջով։ Զննում են։ «Թափ տալիս», ինչպես կասեր վարպետ Ակոբը, ստուգում։ Խիստ, խիստ են ստուգում, ու ամբողջ խորհրդակցությունն այդ ուղղությամբ է խորասուզված։

— «Արշակից հարմարը յանի ո՞վ կա»—մտքումը հարց տվեց իրեն վարպետ Ակոբը, և ապա մտքումն էլ սկսեց ինքն իր հետ վիճել—«Յանի կարա՞ գլուխ հանի։ —Կարա։ Ճարպիկ տղա յա, կսովորի։ Մենք էլ քոմակ կանենք»։

— Մեր Արշակը վո՞նց ա,—դիմեց նա խորհրդակցությանը։

— Վոչինչ...

— Վատ չի։

— Լավ էլ չի։

— Յես էլ Արշակին եմ համաձայն, յախշի դըր,—ասավ Ալի Սադըղ Ողլին։

— Շատ ջահել է, բերանիցը կաթնահոտ ա գալիս. յանի կարա եսքան բանվորության ջուղաբ տալ։ Մեկ էլ՝ ընենց մարդ ջոկենք, վոր տրեստն էլ մի քիչ քաշվի, մարդատեղ դնի, վոր կարա Յաղության հետ գլուխ հանի,—վերջացրեց վարպետ Աբրահամը, տրեստի նախագահին ակնարկելով։

— Ո՞ւր չի կարա, ինչո՞վ ա Յեղիշիցը պակաս, միշտ էլ ջահելներին ընենց թարս աչքով եք մտիկ անում,—վրդովված վրա բերեց յենթավարպետ Մուկուչը։

— Փուչ պոպոք, մեկ էլ դու կարաս, հա՛։

— Բա ի՞նչ։

— Հա դե՛։

— Ջահելը ջահել թող ըլի, համա դու աստ փանդով ըլի, բեջարող, աչքաբաց։ Պարզ հայտնի յա, վոր Արշակն ամենքից էլ մի քիչ ունի, մենք էլ քոմակ կանենք՝ միջից դուս կգա,—շարունակեց իր առաջադրած թեկնածությունը պաշտպանել վարպետ Ակոբը։

— Սեդրակը վո՞նց ա։

— Հե՞չ բան։

— Արսե՞նը։

— Վե՞րջ տուր...

— Շատ թամբալն ա։

— Գլուխ պահող։

Փոքր լռություն տիրեց։ Փակվեցին բերանները և մտքերն սկսեցին գործել։ Մտածում են բոլորը։

Վարպետ Ակոբը մտածում է և միևնույն ժամանակ ձեռքի մատիտով սեղանի յերեսի վարդագույն թղթի վրա ինչ-վոր անուններ է գրում։

Ծուռ ու մուռ տառերով գրեց—Արշակ։ Գիծ քաշեց վրան։ Սեդրակ։ Ջնջեց։ Ապա իրար տակ շարեց—

Սեդրակ,

Արշակ,

Ֆրնդըֆ,

Ալի,

Դասակարգ,

Բաբաջան,

Գեղամ,

Քյավառցի,

Զոփուռ։

Չի գտնում։ Չեն գտնում և մյուսները։ Ո՞վ կա հարմար, վոր գործ անի, բան հասկանա, Յեղիշի նման գլուխ դուրս գա, ամոթով չմնա ու ամոթով չանի։

Բոլորն էլ խորասուզված են, բոլորն էլ մտածկոտ։ Բանվորական դեմքերը մեկիկ-մեկիկ անցնում են նրանց մտապատկերների առաջով։ Զննում են։ «Թափ տալիս», ինչպես կասեր վարպետ Ակոբը, ստուգում։ Խիստ, խիստ են ստուգում, ու ամբողջ խորհրդակցությունն այդ ուղղությամբ է խորասուզված։

— «Արշակից հարմարը յանի ո՞վ կա»—մտքումը հարց տվեց իրեն վարպետ Ակոբը, և ապա մտքումն էլ սկսեց ինքն իր հետ վիճել—«Յանի կարա՞ գլուխ հանի։—Կարա։ Ճարպիկ տղա յա, կսովորի։ Մենք էլ քոմակ կանենք»։

— Մեր Արշակը վո՞նց ա,—գխեց նա խորհրդակցությանը։

— Վոչի՛նչ...

— Վատ չի։

— Լավ էլ չի։

— Յես էլ Արշակին եմ համաձայն, յախչի դըր,—ասավ Ալի Սադըղ Ողլին։

— Շատ ջահել ե, բերանիցը կաթնահոտ ա գալիս. յանի կըրա եսքան բանվորության ջուղաբ տալ։ Մեկ էլ՝ ընենց մարդ ջոկենք, վոր տրեստն էլ մի քիչ քաշվի, մարդատեղ դնի, վոր կարա Յաղությանի հետ գլուխ հանի,—վերջացրեց վարպետ Աբրահամը, տրեստի նախագահին ակնարկելով։

— Խի՞ չի կարա, ինչո՞վ ա Յեղիշեյը պակաս, միշտ էլ ջահելներին ընենց թարս աչքով եք մտիկ անում,—վրդովված վրա բերեց յենթավարպետ Մուկուչը։

— Փուչ պոպոք, մեկ էլ դու կարաս, հա։

— Բա ի՞նչ։

— Հա դե՛։

— Ջահելը ջահել թող ըլի, համա դու աստ փանդով ըլի, բեջարող, աչքաբաց։ Պարզ հայտնի յա, վոր Արշակն ամենքից էլ մի քիչ ունի, մենք էլ քոմակ կանենք՝ միջից դուս կգա,—շարունակեց իր առաջադրած թեկնածությունը պաշտպանել վարպետ Ակոբը։

— Սեդրակը վո՞նց ա։

— Հե՛չ բան։

— Արսե՞նը։

— Վե՛րջ տուր...

— Շատ թամբալն ա։

— Գլուխ պահող։

Փոքր լռություն տիրեց։ Փակվեցին բերանները և մտքերն սկսեցին գործել։ Մտածում են բոլորը։

Վարպետ Ակոբը մտածում է և միևնույն ժամանակ ձեռքի մատիտով սեղանի յերեսի վարդագույն թղթի վրա ինչ-վոր անուններ է գրում։

Ծուռ ու մուռ տառերով գրեց—Արշակ։ Գիծ քաշեց վրան։ Սեդրակ։ Ջնջեց։ Ապա իրար տակ շարեց—

Սեդրակ,

Արշակ,

Ֆրնդրֆ,

Ալի,

Դասակարգ,

Բաբաջան,

Գեղամ,

Քյավառցի,

Զոփուռ։

Նորից չերկմը միտք արից։ Գիծ քաշից Սեդրակի վրա, Արշակի դիմացում խաչ քաշից։ Ֆրնդրքյանի մասին խորը միտք արեց ու համարյա լսելի ձայնով շշընջաց—«Լեզուն թարս ա, չեն հասկանա»։ Ալու մասին մտածեց դարձյալ և նրա անվան դեմը դրեց մի փոքրիկ գծիկ։ «Դասակարգը յեռանդուն ա, ափսոս գրել կարդալուց հետ ա»—մտածեց նա։ Բորեց ճակատը և մի փունջ մազ դուրս քաշելով յուղոտ գլխարկի տակից, սկսեց ջղայնությամբ տրորել։ Մտածում են և մյուսները, բայց նրանք աչքի տակով հետևում են վարպետ Ակոբի մատիտի ու շրթունքների շարժումներին։ Բաբաջանի ու Զոփուռի դիմացը նույնպես խաչ քաշեց, ապա մեքենայորեն ջնջեց Գեղամ և Բավառցի անունները։

Դարձյալ մտածեց։ Դարձյալ խորասուզվեց նա։ Ձախ ձեռքի մատները ջղայնորեն վոլորում եյին ճակատի վրա թափված մազափունջը, իսկ աջ ձեռքի մատիտն անունների դիմացում նկարեց հինգ թևանի ծուռու մուռ աստղ և մուրճ ու մանգաղ, ապա մատիտը մոռացավ անուններին և գիծ քաշեց Ֆրնդրէ-ի, Ալի-ի, «Դասակարգ-ի, Բաբաջան-ի յեվ Զոփուռ-ի վրա։

— Ինչքան միտք եմ անում, Արշակից հարմարը չունեմ,—շարունակեց վարպետ Ակոբը։

— Չէ։ Յես ասում եմ յա Դասակարգին տանք, յա Զոփուռին։ Երկուսն էլ խելքը գլխին տղերք են և գործը յոլա կբերեն,—ծանր տոնով վրա բերեց վարպետ Աբրահամը։

— Խոսք չունեմ, լավ են,—առանց նախագահից ձայն խնդրելու մեջ ընկավ «Բավառեցի» Միրիմանը, համա են ա փիսը, վոր եդ անտեր Դասակարգը գրել

կարդալուց լյութ ա, սկի տաս տոկոս էլ չի բեջարում, այբն ասում է, բենի վրա նստում։ Զոփուռն էլ հեչ մի տոկոսի ակտիվություն չունի, հենա իրեք ամիս ա շեֆի նախագահ ենք ընտրել, քանի՞ տոկոսի գործ ա արել։ Սկի հինգ տոկոսի չել չի արել։ Ելի մնում ա Արշակը, յես էլ նրան համաձայն եմ և հավատացած եմ վոր 75 տոկոսով նա գլուխ կբերի։

— Բայց դու հեչ մի տոկոսով էլ իրավունք չըվերցրիր խոսելու,—ծիծաղելով ավելացրեց վարպետ Ակոբը։

— Հարյուր տոկոսով ներել Բյավառեցուն,—հարեցին մյուսները ծիծաղելով։

— Արշա՛կը։

— Ելի Արշա՛կը։

— Ընտրենք թող եթա։

— Դրանից հարմարն էլ չունենք։

Խորհրդակցության մեծամասնությունն Արշակին հայտնեց իր վստահությունը և ցրվեց, մի ժամ հետո խնդիրը բանվորական ընդհանուր ժողովին քննության դնելու համար։

*
* *

— Վարդան Միրյա՛ն։

— Ներկա՛։

— Արսեն Միհրանյան։

— Я.

— Միրիման Ալդարյա՛ն։

— Ըստեղ եմ։

— Մարտիրոս Ֆընդըքյա՛ն։

— Հա՛ս եմ։

— Հայրապետ Մկրյա՛ն։
— Բնած ա։
Ծիծաղ։
Գործարկոմի քարտուղարը շարունակում է,—
— Միրուշ Սարյա՛ն։
— Այստե՛ղ եմ։
— Կարապետ Կարապետյա՛ն։
— Այստե՛ղ եմ։
— Մխո՛։
— Միկիտանումն ա՛։
Ընդհանուր ծիծաղ։
— Հայկազուն Գեղարքունի։
— Յես այստեղ եմ։
— Ալի Սադըղ Ողլի՛։
— Իստե՛ղ ա։
— Սիրունիկ Վարոսյա՛ն։
— Ժամադիր ա։
— Մի՛ք խանգարի։
— Արշակ Հարիկյա՛ն։
— Աստեղ եմ։
— Սուրեն Սեյա՛ն։
— Ներկա՛։

Յեվ այսպես քարտուղարը շարունակեց մինչև վերջը, ստուգեց ներկաներն ու բացակաները, «ժողովը բացված» հայտարարեց, և խոսք առավ վարպետ Ակոբը։

Ծափերով դիմավորեցին նրան և ժպտերես սկսեց իր խոսքը.—

— Ընկերնե՛ր,— ցած ու հաստատ ձայնով ասավ նա,—հմի բանը նրանումն ա, ախպե՛ր, վոր եսօրվա

մեր ժողովը հավաքվել ա, ղաթի գիփիդ էլ պարզ հայտնի յա, վոր մեր սիրելի ընկեր Յեղիշը, Յեղիշը առաջ ա քաշվում, ավելի բարձր պաշտոնի, նա գնում ա աշխատանքի տեսուչ, ինարկե, գիփիդ էլ պարզ հայտնի յա, վոր մենք սրտանց հաջողություն ենք հայտնում նրան, վոր ավելի առաջ եթա ու մեր երեսն էլ սիպտակ անի։ Պարզ հայտնի յա, վոր մենք նրան հետ պահել չենք կարա, սկի իրավունք էլ չունենք քար գցելու նրա առաջնեթացման դեմը. հմի մենք, ախպե՛ր, հավաքվել ենք, վոր առաջինը «բարի ճանապարհ» հայտնենք մեր սիրելի Յեղիշին, վրա յերկրորդն էլ՝ մեզ համար գործարկոմի նոր նախագահ ջոկենք։

Նա բլուզի լայն թևով սրբեց ճակատի քրտինքը և շարունակեց.—

— Հմի ախպե՛րս, Յեղիշ ջա՛ն, բարի ճանապարհ քեզ ու աջողություն և մեկ էլ մեր երեսն սիպտակ անես։ Պարզ հայտնի յա, վոր մենք քեզ չենք մոռանա, դու յել մեզ չմոռանաս։

Նա ամուր սեղմեց Յեղիշի ձեռքը, ապա փաթաթվեց նրան և նրանք համբուրվեցին։

Փոթորկալի ծափահարությունները յեզրափակեցին ճառն ու գրկախառնումը։ Ծափահարում եյին թե խոսողին և թե բանվորներին այնքան սիրելի Յեղիշե Զաքարյանին—գործարկոմի նախագահին։

— Հմի ընկերնե՛ր, ախպեր ջան,—շարունակեց վարպետ Ակոբը,—մեզ պետք ա ջոկենք մի նոր նախագահ։ Ի՞նչ կասեք, ախպեր։ Եսօր մենք շատ միտք արինք, տեղկոմում շատ վե կալանք-դրինք ու Արշակ Հարիկյանից հարմարը չգտանք։ Ձեզ էլ պարզ հայտնի յա, վոր դրանից էլ լավը չունենք։ Դրա համար էլ յես դնում եմ ընկ. Արշակի թեկնածուն։

— Հա դե՛, ելի ինչ քո եշն ես առաջ քշում,— տաքացած ու առանց խոսք խնդրելու բղավեց Մխոն, որը նոր էր միայն ներս մտել,— բալի մենք Արշակին չենք ընտրի, Կիրակոսին կընտրենք, չա պարոն Խաչքարին կընտրենք, դու ինչ ես քու մարդկանցը նադդացնում։ Նախագահ ես կարգին նախագահություն արա, թե չե ինչ ես առաջ քշում։ Խնդրում եմ հլա ինձ մի ձայն տաս, չես գիտեմ ում կառաջարկեմ։

— Իսկ դու ախմախ ես,— վրա տվավ Միրիմանը։

— Ախմախի ձենն եմ լսում։

— Ընկերնե՛ր, ինչ եք լեզուներդ ճղում, ախար չես ձեզ խոսք չեմ տվել։ Ժողովումն էլ դինջ մնալ չես կարող, այ Մխո անիրավ...— ասավ վարպետ Ակոբը։

— Իսկ դու քեզ մի չերևակայի, թե չե, տես հա...

— Դե ձենդ կտրի, արաղի շտոֆ, թող ժողովը վճռի,— բացականչեց Զոփուռը։

— Մասնավոր միք խոսա, ընկերներ,— սաստեց նախագահը։

— Արշակը լա՛վ է։

— Լա՛վ է։

— Իսկն է, որ կա։

— Ուրիշը չունենք,— ձայնեցին ամեն կողմերից։

— Ընչի չունենք, բա լոփ-լոփ Ալեքն ի՞նչ ա,— վրա բերեց Բոշբողազը։

— Ալեքը գործարկոմի չե, բայց լավ միկիտանկոմի նախագահ կլինի,— ավելացրեց կոմյերիտուհի Սիրուշը։

— Ճիշտ ա։

— Իսկականի հետ ճիշտ ա։

— Ընչի մե կինըմ չեք առաջ քաշե՛ ու...,— վրա տվեց գլուխը տաքցրած Սիրական Կոստանովը։

— Մասնավոր մի խոսաք է՛,— զարմացավ զգուշացրեց վարպետ Ակոբը։

— Լոփ-լոփ Ալեքին ընտրեք, Լոփ-լոփ Ալեքին,— նորից բացականչեց Բոշբողազը։

— Ասինք մասնավոր մի խոսաք է...

— Մասնավոր չի, պետակա՛ն ա,— վրա տվեց Բոշբողազը։

— Դե սո՛ւս, իշի քուռա՛կ,— բամփեց նրա գլխին Սիրական Կոստանովը։

— Ինձ մի ձա՛յն,— բացականչեց Արսենը ու բարձրացավ տեղից։

— Ձայնը տալիս եմ Արսենին,— ասավ վարպետ Ակոբը,— ձայնը քեզ եմ տալիս։

— Ընկերնե՛ր,— ասավ Արսենը քիչ վրդովված և քիչ տաքացած,— Արշակը լավ աշխատող ա, բայց ջահել, կտուցը դեռ դեղին ա, իսկ մեզ ուժե՛ղ մարդ ա հարկավոր, ա՛յ, վարպետ Ակոբն ավելի լավ կաներ, իրա թեկնածությունը դներ, քան Արշակինը։ Իսկ չես առաջարկում եմ որ նախագահ ընտրենք մեր Դասակարգին, ամենից էլ լա՛վ ա, փորձված։

— Իսկ դու ուրիշների անունը մեջ մի գցե՛,— բացականչեց Դասակարգը, տեղից ցատկելով,— Դասակա՛րգ, Դասակարգ, ի՞նչ Դասակարգ, էդ Դասակարգի բեջարելու գործն ա, որ դու չես առաջարկո՛ւմ։ Անջախ եմ սովորել երկու իշի գարին իրարից բաժանել, հմի դու բերում ես մեջ ես գցում թե Դասակարգին ընտրենք։ Համ էլ այրեսոս կխատ թողնեմ, ի՞նչ ա։ Չե՛մ ուզում, չե՛մ ուզում, ընկե՛ր վարպետ Ակո՛բ, չես չեմ ուզում, Դասակարգը ջնջի էդ տեղից...

— Շատ լավ էլ պիտի ուզես։

— Յեթե ժողովը ընտրի դու պիտի ձենդ քեզ քաշես ու կատարես։

— Դասակարգին, Դասակարգին, —

— Բանվոր դասակարգին,— բղավեցին զանազան տեղերից։

— Յես էլ կասեմ չեմ ընտրվի, չեմ կարա, չեմ կարմ, հասկացեք, հասկացեք,— նորից հուզվեց Դասակարգը։

Վարպետ Ակոբը հազիվ էր կարողանում լռեցնել ու շարունակել։

— Հմի յես քվեարկում եմ։ Ըստեղ երկու թեկնածու կա, մեկը Արշակն ա, ընկեր Արշակը, մյուսը՝ Դասակարգ Հայրոն։ Ով ուզում ա, վոր Արշակը, ընկեր Արշակին ընտրենք, թող մատը վեր բարձրացնի։ Լավ, թողեք։ Ով ուզում ա, վոր Դասակարգին ընտրենք, թող նա մատը բարձրացնի։ Լավ, թողեք։

Մատները բարձրացան։ Ձայները բաժանվեցին։ Մեծամասնության վստահությունը շահեց Արշակը և Դասակարգը թռչկոտելով բացականչեց,—

— Կերա՞ք, տեսաք վոր Դասակարգը չնտրվե՞ց, դե գնացեք վառվեցեք...

Արշակ Հարիկյանը քրտնած ու ամոթից կարմրած, վիզը քիչ ծռած, կանգնել էր մի անկյունում ու խորը միտք անում։

Բոլոր աչքերը նրա կողմն եյին սևեռված։ Դեպի նա եյին ուղղված բազմաթիվ հույացքներ։ Այդ հայացքները, այդ աչքերը, ո՜, նրանք ստուգում են, նրանք խիստ են, պահանջկոտ։ Այդ իմանում է Արշակը։ Իսկ դու վո՞նց, Արշակ, կարող կլինե՞ս նրանց գոհացնել, կարող կլինե՞ս այդ բազմաթիվ աչքերից

խրախույսի ու հավանության ժպիտներ շահել։ Կարող կլինե՞ս գնալ այնպես, ինչպես Յեղիշը, վորին այսոր այնքա՜ն, այնքա՜ն խանդավառ կերպով ծափահարեցին, այնքա՜ն մտերմորեն ժպտացին բազմաթիվ դեմքեր։ Կարո՞ղ ես դու այդ, Արշա՛կ...

IV

Արդեն յերրորդ ժամն է, ինչ Յեղիշը հանձնում, իսկ Արշակն ստանձնում է գործերը։

Ինչպես ուսուցիչն առաջին խմբում նորեկ աշակերտին խնամքով բացատրում ու հասկացնում է, վոր յերեք ակռա ունեցող տառը ա յե կոչվում, այնպես էլ Յեղիշը մանրամասնորեն բացատրում է Արշակին գործերի յուրաքանչյուրի առանձնահատկություններն ու կողմերը, իսկ Արշակը՝ տեղովը լսողություն դարձած, միտքը լարած, հետևում է Յեղիշին ու զանազան նշանակումներ անում ծոցատետրում։

Յերբ ավարտեցին, լավ հոգնել եյին։ Յեղիշը թեվերը տարածելով կոտրատվեց, իսկ Արշակը կարևոր ու ընթացիկ գործերը հավաքելով թղթապանակի մեջ, խնամքով կապեց յերեք կողմի սև ժապավենները և վերցնելով այն, դուրս յեկան։

Ինչքա՜ն ժամանակ է սահել։ Ինչքա՜ն են նստել։ Արդեն խավարն իջել, թանձրացել է քաղաքում, էլեկտրական պայծառ լույսերը ճառագայթում են ու սովորական անցուդարձը նվազել է քաղաքի լայն և ուղղաձիգ փողոցում։

Իրար խաչաձևող փողոցի անկյունում նրանք կանգ առան։

Յեղիշը, քիչ տարօրինակ էր գուցե, բայց ամուր սեղմեց Արշակի ձեռքը և հուզված ասաց—

— Հաջողությո՜ւն, Արշա՛կ, հաջողությո՜ւն։

— Կաշխատեմ,— պատասխանեց Արշակը, նույնպես հուզված։

Նրանք բաժանվեցին էլեկտրական պայծառ կաթնալույսի տակ, Ցոլիշը գնաց աջ, իսկ Արշակը՝ ձախ։

***

Գնում է Արշակը հուզված ու մտածկոտ։ Ուրախությունն ու կասկածը պայքարում են ներսում։

Առաջինը հրահրում է։ Արշակը շուռ է գալիս, նայում Թղթապանակին։ Հուզվում է։

— Հաջողությո՜ւն, Արշա՛կ, հաջողությո՜ւն,— ասում է առաջինը։

Յերկրորդը կրծում է անընդհատ, կրծում է միտքը, լուսավառում միտքը լուսարձակի նման ու այդ լույսի տակ ցուցադրում դժվարությունները և յերեկվա հայացքները, վորոնք խիստ եյին, վորոնք պահանջկոտ եյին։ Վոչինչ չգիջող։

— Իսկ դո՛ւ, Արշա՛կ, կարո՞ղ ես,— ասում է յերկրորդը։

Մինչ առաջինը թեթևորեն, առանց աշխատանքի ու հաջողության հեռանկարներ գծելու, կրկնում է—

— Հաջողությո՜ւն, Արշա՛կ, հաջողությո՜ւն։

Ո՞ւմ լսի Արշակը, ո՞ւմ հավատա։ Դեռ անփորձ է, այդ ճիշտ է, բայց չէ՞ վոր բոլորն էլ սկզբում այդպես են լինում։ Հենց ինքը, Ցոլիշը, յերեք տարի առաջ ի՞նչ եր վոր, չէ՞ վոր նա յել հասարակ գրաշար եր իր նման։ Առաջ քաշեցին, աշխատեց, սկզբում այնքան էլ չեյին հավանում, ճիշտ է, բայց նա կամաց-կամաց իրեն գտավ ու վո՜նց առաջ տարավ աշխատանքը։ Իսկ հիմա ծափահարությամբ են բաժանվում նրանից։

Ձե՛ Արշակ, պետք է վճռական լինել ու անվախ, պետք է լարել բոլոր ուժերը և առանց մի պահ կասկածելու աշխատել։ Այո՛, Արշակ, այդպես պետք է վարվել, և այն ժամանակ դու կարող կլինես, և հաջողությունը քեզ կուղեկցի։

— Հաջողությո՜ւն, Արշա՛կ, հաջողություն,— այս անգամ ավելի համոզիչ եր ուրախությունը։

***

Վերգուշը վրդովմունքով բաց արեց դուռը։ Արշակն առանց նախազգուշացնելու այդքան ուշացել եր։

Իսկ Արշակը ժպտալով ներս մտավ։

— Կարող ես շնորհավորել, «տիկի՛ն»,— ասավ նա ժպտալով և աչքերը վոլորելով դեպի խավաքարտե Թղթապանակը։

— Ոհո՛, արդեն մեծ մարդ դառար, էլ վոնց հետդ խոսենք, «աղա՛»,— վրդովմունքը ժպտի փոխելով ավելացրեց Վերգուշը։ Նա ձեռքից վար դրեց ընթերցանության գիրքը և գնաց ամուսնու հանդեպ։

Իսկ Արշակն ուղղակի փաթաթվեց նրան, շոյեց գլուխը, գրկեց ամուր ու համբուրեց։

— Իմ լա՜վ Վերգուշ...

Վերգուշն զգաց, վոր նա այսոր ավելի տարօրինակ է և հուզված։ Ավելի ամուր է գրկել իրեն ու փաղաքշում ավելի ջերմորեն։

— Արդեն գործերն ստացա՞ր։

— Ստացա՛...

— Իմ լա՜վ Արշակ, դե աշխատիր, շատ աշխատիր, վոր ամոթով չմնաս։

— Կաշխատեմ, Վերգո՛ւշ, կաշխատեմ։

Նրանք նստեցին իրար հանդեպ ու տարօրինակ կերպով նայում են անթարթ: Կարծես նոր են տեսել իրար և ծանոթացել ու խոսք չեն գտնում խոսելու:

— Ես արդեն ընտրել եմ,—լռությունը խզելով ասաց Վերգուշը,—շա՜տ սպասեցի, չեկար. իսկ դու թեյ ու՞զում ես:

— Տո՛ւր...

*
* *

Վերգուշը կուչ նստած մահճակալի մի անկյունում, շարունակեց ընթերցանությունը: Բավական կարդաց: Բայց աչքերը փակվել սկսեցին ու գիրքն ընկնում էր ձեռքից: Թողեց գիրքը: Հանվեց ու քնեց, առանց խանգարելու Արշակին, որն ինքնամոռացության հասած, աշխատում էր: Կարդում էր յուրաքանչյուր թղթի կտորը, մտածում, նորից նշանակումներ անում ծոցատետրում, ու այսպես անվերջ:

Մեկ-մեկ հոգնած գլուխը վեր էր բարձրացնում, դիտում շուրջը, պատերը, առաստաղը, ապա նրա հայացքը կանգ էր առնում Ստալինի դեմքին, որը սեղանի վերևից, խուզարկու աչքերով, ասես ստուգում էր Արշակի յուրաքանչյուր շարժումը:

Երբ վերջին թղթերն էր նայում, արդեն ձեռքի ժամացույցի սլաքներն յերկուսին էյին մոտեցել: Ուշ էր: Աչքերը փակվում էյին և բացի այդ, առավոտյան շուտ պետք էր տպարան գնալ, այնքա՜ն գործ կար կատարելու:

Հանվեց քնելու:

Բայց ինչպե՞ս, ինչպե՞ս քնի Արշակը:

Քունն աչքերին մոտ չի գալիս: Ձգայնանում է:

Փակում աչքերը: Բայց մտքերի կինո-էկրանը չի դադարում, նա գործում է անընդհատ: Պատկերներն իրար են հաջորդում:

Շուռ է գալիս աջ կողքին, շուռ է գալիս ձախ, պառկում է կռնակի վրա: Նորից շուռ գալիս, կրկին հետ դառնում: Օգո՞ւտն ինչ: Մտքերը չեն դադարում: Կինոն գործում է:

Իսկ քանի՜ մասից է այդ կինոն, ինչքա՜ն անվերջ են իրար հաջորդող պատկերները: Իսկ ինչո՞ւ յեն կրկնվում միևնույն պատկերները: Այս ի՞նչ ձև է:

Ահա:

Բազմամարդ ժողով է, բազմաթիվ աչքեր սուր նիզակների պես դեպի Արշակն են ուղղված, նրանք պահանջկոտ են, գործ են ուզում:—«Թե չես կարա, վե՛ր դիր»—բղավում է Միրիմանը:—«Քո ի՞նչ գործն ա ըտենց բաների հետ, դու հլա գնա հաց կեր»—ասում է Բոշբողազը:— «Ես քու ըսենցն ու ընենցը, դու ի՞նչ ես, որ մեր գլխին մեծ դառնաս»—հարբած ծոր է տալիս Լոֆ-լոֆ Ալեքը: Բայց ահա, բոլորի միջից յելնում է Յեղիշը, ծափահարում են,—ուռա՜, ուռա՜ յեն կանչում. Միրիմանն էլ ծափահարեց, Բոշբողազն էլ: Յելավ Յեղիշը բոլորի միջից, յելավ ծափերի տարափի տակ, ձեռքը յերկարեց Արշակին, ուժեղ սեղմեց և ասավ ժպտադեմ. Հաջողությո՜ւն, Արշա՛կ, հաջողությո՜ւն:—Հաջողություն ենք հայտնում,—ավելացրեց վարպետ Ակոբը և վողջ ժողովը արձագանքեց միաբերան.—

— Հաջողությո՜ւն, հաջողությո՜ւն...

— Իմ լա՜վ Արշակ, դե աշխատիր, շատ աշխատիր, որ ամոթով չմնաս,—բոլորից հետո բարձրանում է Վերգուշը:

Կրկին ծափահարեցին։ Ծափահարեցին բոլորը, իսկ Լոռ-լոռ Ալեքն իր անճոռնի լեզուն ցույց տվեց միայն։

Բայց էլի, էլի չեն հարձակվում Արշակի վրա։ Ի՞նչ իրավունքով, ի՞նչ եք ուզում Արշակից։ Նա ամբողջ ուժով ու նվիրվածությամբ աշխատել ե, վոչ մի գործ թերի չի թողել։ Ինչո՞ւ չեք անարգում նրան, ինչո՞ւ չեք խլում թղթապանակը, ա՞յս եր միթե ձեր գնահատականը։ Ա՛խր, Լոռ-լոռ Ալեք, չես ինչպե՞ս քեզ խոսք հասկացնեմ։ Սրիկա՛, շատախոս Սեդրա՛կ, մի՞թե վատ եմ արել, վոր զգուշացրել եմ քեզ վարքդ փոխելու համար։

Բայց կրկին վարպետ Ակոբը։ Ինչքա՜ն ժպտուն ե, ինչքան պայծառ —

— Ի՞նչ։ Ո՞վ ա համարձակվում Արշակի վրա... ո՞վ ա թույլ տալիս։ Արշակը լա՛վ, շատ լավ աշխատեց, ընկերներ, այդ պարզ հայտնի յա բոլորիդ էլ, պետք ա շնորհակալություն հայտնենք։

Եվ ծափահարում են բոլորը։ Բազմաթիվ հայացքներ, ժպտո՜ւն, ուրա՛խ հայացքներ շեշտակիորեն վողջունում են Արշակին։

Նորից բոլորի միջից յելնում ե Եղիշը, ծածկում բոլորի դեմքերը, հսկայական հասակով տարածվում, կանգնում ե էլեկտրական կաթնալույսի տակ ու սեղմում նրա ձեռքը, սեղմում ուժգին, ժպտում մտերմաբար ու խրախուսում.—

— Հաջողությո՜ւն, Արշա՛կ, հաջողությո՜ւն...

V

Քայլերն ակամայորեն գրաշարանոց տարան։

Նրան շատ խորթ եր գործարկոմի նեղլիկ գրասենյակը, ուր հաճախ եր մուտք գործել, ճիշտ ե, բայց վորպես պահանջող։ Այդ հեշտ ե։ Իսկ այժմ նա գնում ե վորպես կատարող, վորին սպասում են այն հայացքները, վորոնք այնքան խիստ եյին, այնքան քննարկող։

Արշակին ավելի խորթ ու անսովոր ե թվում խավաքարտե այն դեղնագույն թղթապանակը, վորը տանում ե իր թեվի տակ։

Մի տեսակ քաշվելով, նա բացեց գրաշարանոցի դուռը, ասես առաջին անգամն եյին նրան այնտեղ գործի ընդունում։

— Բարի լո՛ւյս,—թույլ ու չերերվող ձայնով ասավ նա և հուզմունքից եր, թե ամոթից, դողացող ձեռներով թղթապանակը դեպի հետ տարավ։

— Ա՛յ, հազա՜ր բարով մեր նորընծա պորտֆելին,—վրա տվավ Բոշբողազը։—Իսկ մաղարի՜չը, մաղարի՜չը, մաղարիչն յե՞րբ ես առնելու,—կարկտանման շարունակեց նա։

— Մաղարի՜չը։

— Մաղարի՜չը...

— Բարև, Արշակ ջան,—խոր ակնածանքով ասավ վարպետ Ակոբը։

— Մաղարի՜չը։

— Մաղարի՜չը,—շարունակում եյին ամեն կողմից։

Արշակը կարոտագին հայացքով նայեց իր տառարկղին, ասես տարիների անջատումից հետո նա հանդիպում եր իր մտերմին։

Այնտեղ, նրա տառարկղի առաջ մեծ աշխուժով ցրում եր գրաշարության ասպարիզում դեռ նոր-նոր առաջ գնացող Ծիտիկը, հասակով ամենից փոքր,

բայց ամենից ընդունակ աշակերտը փողջ տպարանում։

— Տեսնո՞ւմ ես, Արշակ ջան,—հաստատուն ձայնով ասավ վարպետ Ակոբը,—Ծիտը տեղդ բռնեց, և կարող եմ ասել, նամուսով էլ տեղդ բռնեց. էդպես ա, մեզ պես պառավները, պարզ հայտնի յա, պիտի մեռնեն ու գնան, ձեզ պես սամթին ու խելացի ջահելները էս նոր ճանապարհով առաջ կգնան և նորերը կգան ու կկաղնեն ադատ տեղերը. կյանքն էլ ըտենց ա, պարզ հայտնի յա, որ մեկը մեռնում, գնում ա, հող ա դառնում, մյուսը գալիս նրա տեղը բռնում. կյանքը չի կաղնում, հա հառաջ ա գնում...

— Եդ հո թամամ հիստերիչըսկի մատերալիզմ *դուս բերիր, փիլիսոփա յես ըլել, այ հա՛յ, ու մեր վրին խաբար չկա,—լուրջ տոնով ասավ Արսենը։*

— Փիլիսոփեն վո՞րն ա, Մարքսի հետ ընկերություն ա արել հա՛յը, ինչ եք ասում,—կատակելով վրա տվավ Բոշբողազը։

— Մարքսն իրա աեղումը, ողորմի իրա հոգուն,— ասավ վարպետ Ակոբը,—համա դիփիս էլ պարզ հայտնի յա, որ նրա ամեն մի ասած խոսքը մեզ համար սուրբ ա, սուրբ։

— Որ սուրբ ա, խի՞ չես նրա անունով մի ժամ կառուցում, կամ պատկերի առաջ մոմ վառում,—շարունակեց Բոշբողազը։

— Իսկ դու քո չափը ճանաչի՛,—վրդովվեց վարպետ Ակոբը։

— Զափս քա՞նի մետր ա, ասա վոր ճանաչեմ, մետրամպա՛ժ ես։

— Բոշբողա՛զ, հարամզադա...

Բոշբողազը *դեմոնստրատիվ կերպով յերեք անգամ*

հազաց, աչ աչքը խփեց, լեզուն դուրս յերկարեց դեպի վարպետ Ակոբի կողմը ու ձայնը կտրեց։

Արշակը նույն կարոտով դարձյալ նայեց իր տարօրկղին, վողջ գրաշարանոցին և դուրս յեկավ, թողնելով նրանց յեռուն աշխատանքի ու կատակախառն աշխույժ խոսակցության մեջ։

Նրան սպասում են գործարկոմի աշխատանքները։

*
* *

Արդյոք բոլո՞րն են այդպես սկսում։ Գուցե վոչ։ Բայց Արշակը նախ այդտեղից սկսեց։ Նա փոխեց սեղանի յերեսի վարդագույն թուղթը, վորի վրա առատորեն սփռված ու իրար են խռնված խազբզվածքներ, գծեր, «նկարներ», անուններ, ազգանուններ, հնգաթև աստղեր, մուրճեր, մանգաղներ, վարդ, սոխակ, խաչ, «Արի համով ղուլլուղ արա», «ՀՍԽՀ», «պրոլետարներ բոլոր յերկրների միացեք», «սիրուն Մարուսյա», կոմունարկա, վերստատկա, մի խոսքով խազբզանքների մի ամողջ տոնավաճառ։

Սկսեց կարգի գցել «Գործերը», հները կապեց վերցրեց։ Նորեր ավելացրեց։ Լվաց թանաքամանները։ Նոր թանաք լցրեց—կարմիր ու մանիշակագույն։ Փոխեց գրչածայրերը։ Սրեց մատիտները, ասես գրոհի յեր պատրաստվում։

Այդ որը նա շարունակեց զբաղվել գործերի ուսումնասիրությամբ և մեծ մասով շնորհավորանքներ, խրախուսանքներ, գանգատներ ու բողոքներ չսելով։ Բայց նրա գլուխը սաստիկ ցավում եր, անքնությունն ու հոգնությունն ազդել եյին։

Շնորհավորելու և մեկ էլ իր «դարդերը» պատ-

մելու համար առաջինը յեկավ պարոն Աստուր Խաչքարյանը: Այդ այնքան ել դուր չեկավ Արշակին:

— Ո՜, շա՜տ, շա՜տ ուրախ եմ և շնորհակալ, ընկեր Հարիկյանց: Շնորհավորո՜ւմ, շնորհավորում եմ: Ա՜յ ղոչաղ... Կեցցե՛ս, կեցցե՛ս, ախպե՛ր, ձեզ հենց այստեղ ել հարկավոր եր: Այսուհետև մեր բախտը ձեզ նման ազնիվ տղի ձեռին ե լինելու: Ա՜յ ղոչաղ... Յես ձեզ սկզբից ել սիրում ու հավանում եյի, այս աշխատանքը իսկ ձեզ նման մասսայական և ազնիվ տղի համար ա ստեղծված: Լավ ել առաջ կտանեք: Ա՜յ մալադե՛ց... Յես հասկանո՜ւմ եմ... Գուցե պապիրոս կկամենայիք,— արծաթե պորտ-սիգարն Արշակին մոտեցնելով հրամցրեց նա:

— Վո՛չ, շնորհակալ եմ,— ասավ Արշակը, չնայած այդ դժվար դրությունից դուրս գալու մտքերը նրան ստիպում եյին ծխել:

— Ա՜յ հասկանո՜ւմ եմ: Դրա համար ել յերբ յերեկ ձեր թեկնածությունը քվեարկության դրվեց, քեֆս յեկավ և անկեղծ կերպով առաջինը յես իմ քվեն տվի ձեզ... Ա՜յ, մալադչի՜նա...

Արշակը շփոթվեց, կարմրեց: Ինչո՞ւ խոսակցությունն այսպես սկսեց այս մարդը: Ի՞նչ ե ուզում ասել նա. հեգնո՞ւմ ե Արշակին, ի՞նչ ե:

— Մեր Զաքարյանցն ել վատ չեր, լավ տղա յեր, խոսք չունեմ,— շարունակեց պարոն Խաչքարյանը,— բայց նա շատ միակողմանի յեր դատում, մեր բանվորական ու պրոֆմիությունական շահերի մասին քի՛չ եր մտածում, ավելի շատ տրեստին եր պաշտպանում, քան մեզ. մեր գանգատներին ել գրոշի արժեք չե՛ր տալիս, իսկ տրեստի ամեն մի չնչին պահանջից՝ Չրի-

երն եր թռչում: Մի քիչ ել բյուրոկրատացե՛լ եր: Հմի, հարգելի ընկեր Հարիկյանց, հույսս մեծ ե, վոր դուք եդ բոլորից հեռու կլինեք ու մեր շահերի իսկական և մասսայական պաշտպա՛նը կհանդիսանաք... Ա՜յ, մալադչինա՜...

Պարոն Խաչքարյանը չնայած չեր ուզում, բայց իր խոսակցությանը մի տեսակ վերջակետ դրեց, սպասելով, թե Արշակն ինչ վերաբերմունք ցույց կտա: Յեթե դրական,— ապա կշարունակի, յեթե բացասական,— մի կերպ վերջ կտա:

Արշակը լուռ ե: Ի՞նչ պատասխանի, չգիտե, ինչպես դուրս գա այդ խորամանկ աղվեսի խոսքերի ու ակնարկների տակից: Նա պարզապես վատաբանում ե գործարկոմի նախկին նախագահ Յեղիշե Զաքարյանին, վորին բանվորները չափից դուրս սիրում ու հարգում եյին, շողոքորթում ե Արշակին, նա այդ հասկանում ե, բայց ինչպե՞ս, ինչպե՞ս դուրս գա նրա խոսքերի տակից: Ահա այս ե դժվար Արշակի համար:

— Կաշխատե՛մ,— վերջապես ասավ Արշակը,— ամեն կերպ կաշխատեմ ինձ վրա դրված պարտականությունները կատարել ճշտությամբ, իսկ ինչ վերաբերվում ե Յեղիշին, դուք սխալվում եք, նա շատ լավ աշխատող եր:

— Ո՞վ ե բան ասել, յես միայն նրա մի փոքրիկ թերության վրա շեշտեցի, վոր դուք ի նկատի առնեք:

— Կաշխատե՛մ, կաշխատե՛մ,— կրկնեց Արշակը:

— Գործերին եք ծանոթանում հա՞, ա՜յ ղոչա՜ղ... Ծանոթացե՛ք, ծանոթացե՛ք, մեր յերեսն ել սպիտակ արեք, լա՜վ կլինի,— խոսքը փոխելով շարունակեց պարոն Խաչքարյանը,— բայց... յես ձեզ մոտ մի խնդիր

ունեյի, և յես հավատացած եմ, վոր այդ խնդիրը միայն ձեր միջոցով կարող եմ լուծել։ Այդ մասին յերբ ընկեր Զաքարյանցին եյի դիմում, բանի տեղ չե՛ր դնում, ի՞նչ անենք, շատ էլ վոր նախկին խազեյի՛ն ենք յեղել, դրա համար էլ մեզ մարդատեղ չպե՞տի հաշվել։ Ասացեք խնդրեմ, ընկեր Հարիկյանց, ձեր վո՞ր բանվորն այս իշխանությանն այնքան ոգուտ է տվել, վորքան յես։ Մի այնպիսի գյոզալ տպարան տվի, վոր նմանը չեղած։ Վո՞ր, վո՞ր բանվորն այդքան ոգուտ է տվել, ասացե՛ք խնդրեմ, բայց ելի նրանց սուտը ճշմարտության տեղ անց է կենում, իսկ մեր խոսքերը, մեր արդարացի պահանջները բանի տեղ դնող չկա։ Բանվորական կառավարություն է, բա՞ն չունեմ, բանվորին է պաշտպանում, բայց մեզ էլ ախար մի քիչ մարդատեղ դրեք։ Տպարանս չուզեցի, ախպեր, ձեզ ըլի, փեշքա՛շ եմ անում, բայց մեզ էլ մի կարգին ապրուստի միջո՛ց տվեք, մենք է՛լ մարդ ենք, ընտանի՛ք ունենք, պատի՛վ ունենք…

Ինչպե՞ս պատասխանի Արշակը։ Ա՛յ թե դժվար է։ Նա համոզված է, վոր Խաչքարյանն արդարացի չէ. գիտե, վոր «փչում է», զրպարտում բանվորներին ու իշխանությանը, գիտե, վոր նրա «վողբը» և կեղծավոր քծնանքները բոլորովին այլ նպատակներ են հետապնդում, բայց ինչպե՞ս, ինչպե՞ս, այդ բոլորի մասին հանկարծ ասի պարոն Խաչքարյանի յերեսին, չէ՞ վոր անհարմար է, չէ՞ վոր անքաղաքավարություն կլինի այդ. իսկ մյուս կողմից պարոն Խաչքարյանն, ասես նորանոր դիրքեր գրավելով, առաջ է անցնում։ Արշակը պատասխանում է հաճախ, այն էլ գլխի շարժումով միայն։

— Յես վոչ թե քեզ մոտ գանգատի յեմ յեկել,—

խորամանկ տոնով շարունակեց պարոն Խաչքարյանը,—ո՛, վո՛չ, յես այդպես բաներ չեմ սիրում, յես ցանկանում եմ, վոր դուք, վորպես մեր միակ պաշտպանը և նոր աշխատող, գործի անցնելիս ծանոթանաք, տեղյակ լինեք, թե ինչ անարդարություննե՛ր են կատարվել, վոր ըստ այնմ էլ աշխատեք։ Չո՛րս տարի յե, ինչ անընդհատ աշխատում եմ այստեղ և ամբողջ իմ ուժը նվիրել եմ արդյունաբերությանը. յես գործին միշտ էլ նայել եմ վոնց իմ սեփակա՛ն տպարանում, բայց իմ աշխատանքը չի գնահատվել։ Յերկու տարի յե, ինչ ռոճիկս 75 ռուբլուց չի բարձրանում, վեց դիմում եմ տվե՛լ, բայց…

Պարոն Խաչքարյանը խոսքը չեր կտրի, յեթե տպագրական բաժնից յերկու բանվորներ ներս չմտնեյին, մեկն իր հիվանդության որերի հարցաթերթը հաստատել տալու, և մյուսը՝ թերթին բաժանորդ գրվելու համար։

Արշակն ուրախացավ, վոր վերջապես մի կերպ կազատվի այդ խեղդող մագիլներից։

«Սրանք էլ վախտ գտան»—դժգոհ փնթփնթաց պարոն Խաչքարյանը մտքում։

— Պարոն Խաչքարն ելի հալո՛ւմ ա…

— Խեղճ Արշակի գլխին հալո՛ւմ ա…—ասին բանվորները, յերբ դուրս եյին գալիս գործարկոմի գրասենյակից։

— Հա՛,—շարունակեց պարոն Խաչքարյանը,—դիմում տվի, վոր ինչպես բանվորների ռոճիկը վեց ամիսը մի անգամ բարձրանում է, իմն էլ գոնե թող դրանց նման բարձրացնեն։ Ձեզ եմ հարցնում, ընկեր Հարիկյանց, իրավունք ունեյի՞։

ունեյի, և յես հավատացած եմ, վոր այդ խնդիրը միայն ձեր միջոցով կարող եմ լուծել։ Այդ մասին յերբ ընկեր Զաքարյանցին եյի դիմում, բանի տեղ չէ՛ր դնում, ի՞նչ անենք, շատ էլ վոր նախկին խաղեյի՛ն ենք յեղել, դրա համար էլ մեզ մարդատեղ չպի՞տի հաշվել։ Ասացեք խնդրեմ, ընկեր Հարիկյանց, ձեր վ՞որ բանվորն այս իշխանությանն այնքան օգուտ է տվել, վորքան յես։ Մի այնպիսի գյոզալ տպարան տվի, վոր նմանը չեղած։ Վ՞որ, վ՞որ բանվորն այդքան օգուտ է տվել, ասացե՛ք խնդրեմ, բայց էլի նրանց սուտը ճշմարտության տեղ անց է կենում, իսկ մեր խոսքերը, մեր արդարացի պահանջները բանի տեղ դնող չկա։ Բանվորական կառավարություն է, բա՛ն չունեմ, բանվորին է պաշտպանում, բայց մեզ էլ ախար մի քիչ մարդատեղ դրեք։ Տպարանս չուզեցի, ախպեր, ձեզ ըլի, փեշքա՛շ եմ անում, բայց մեզ էլ մի կարգին ապրուստի միջո՛ց տվեք, մենք է՛լ մարդ ենք, ընտանի՛ք ունենք, պատի՛վ ունենք…

Ինչպե՞ս պատասխանի Արշակը։ Ա՛յ թե դժվա՛ր է։ Նա համոզված է, վոր Խաչքարյանն արդարացի չէ. գիտե, վոր «փչում է», զրպարտում բանվորներին ու իշխանությանը, գիտե, վոր նրա «վողբը» և կեղծավոր քծնանքները բոլորովին այլ նպատակներ են հետապնդում, բայց ինչպե՛ս, ինչպե՛ս, այդ բոլորի մասին հանկարծ ասի պարոն Խաչքարյանի յերեսին, չէ՞ վոր անհարմար է, չէ՞ վոր անքաղաքավարություն կլինի այդ. իսկ մյուս կողմից պարոն Խաչքարյանն, ասես նորանոր դիրքեր գրավելով, առաջ է անցնում։ Արշակը պատասխանում է հաճախ, այն էլ գլխի շարժումով միայն։

— Յես վոչ թե քեզ մոտ գանգատի չեմ յեկել,—

խորամանկ տոնով շարունակեց պարոն Խաչքարյանը,—ո՛, վո՛չ, յես այդպես բաներ չեմ սիրում, յես ցանկանում եմ, վոր դուք, վորպես մեր միակ պաշտպանը և նոր աշխատող, գործի անցնելիս ծանոթանաք, տեղյակ լինեք, թե ինչ անարդարություննե՛ր են կատարվել, վոր ըստ այնմ էլ աշխատեք։ Չո՛րս տարի չե, ինչ անընդհատ աշխատում եմ այստեղ և ամբողջ իմ ուժը նվիրել եմ արդյունաբերությանը. յես գործին միշտ էլ նայել եմ վոնց իմ սեփակա՛ն տպարանում, բայց իմ աշխատանքը չի գնահատվել։ Յերկու տարի չե, ինչ ռոճիկս 75 ռուբլուց չի բարձրանում, վեց դիմում եմ տվե՛լ, բայց…

Պարոն Խաչքարյանը խոսքը չէր կտրի, յեթե տպագրական բաժնից յերկու բանվորներ ներս չմտնեյին, մեկն իր հիվանդության որերի հարցաթերթը հաստատել տալու, և մյուսը՝ թերթին բաժանորդ գրվելու համար։

Արշակն ուրախացավ, վոր վերջապես մի կերպ կազատվի այդ խեղդող մագիլներից։

«Սրանք էլ վախտ գտան»—դժգոհ փնթփնթաց պարոն Խաչքարյանը մտքում։

— Պարոն Խաչքարն էլի հալո՛ւմ ա…

— Խեղճ Արշակի գլխին հալո՛ւմ ա…—ասին բանվորները, յերբ դուրս եյին գալիս գործարկոմի գրասենյակից։

— Հա՛,—շարունակեց պարոն Խաչքարյանը,—դիմում տվի, վոր ինչպես բանվորների ռոճիկը վեց ամիսը մի անգամ բարձրանում է, իմն էլ գոնե թող դրանց նման բարձրացնեն։ Ձեզ եմ հարցնում, ընկեր Հարիկյանց, իրավունք ունեյի՞։

Արշակը լուռ է ու մտածկոտ։ Ի՞նչ պատասխանի։

— Լա՛վ, դուք շարունակեք, այդ մասին հետո կխոսենք,—հարեց Արշակը, հարցի ուղղակի պատասխանից խուսափելու համար։

Բայց «ծամոնը կպչում է»։

— Ձե՛, չե՛, ընկեր Հարիկյանց, դուք են ասեք, յես իրավունք ունեյի՞... ճիշտն ասե՛ք, ինչո՞ւ չեք քաշվում, թե չունեյի. պարզապես ասեք թե, ա՛յ մարդ, ա՛յ շուն, դու իրավունք չունեյիր... խո չե՞մ սխալում...

Ի՞նչ ասի Արշակը։ Նորից տարակուսանք, նորից տատանում։ Բայց վերջապես, կիսաբերան պատասխանեց։

— Իհարկե։

Նա մտքումն իրեն արդարացրեց, վոր իրոք Խաչքարյանն իրավունք ուներ դիմում տալու։

— Այ ապրե՛ս, մալադչի՛նա, գիտեյի, վոր եդպես տղա յես։ Իմ քվեն էլ զուր չեմ տվել։ Հա՛, են եյի ասում, բա ընկեր Հարիկյանց, հիմի եսպիսի այամին, 75 մանեթով էլ մարդ կարա ապրի և հինգ հոգուց էլ ընտանիք պահի՞։ Ձեզ եմ ասում, կարա՞։

Արշակը պատասխանի համար դարձյալ մտածեց, դարձյալ տատանվեց և վորովհետև ա-ն ասել եր, ասավ և բ-ն։

— Իհարկե՛ չէ, – դժկամությամբ պատասխանեց նա։

— Ապրե՛ս, դե յես էլ եդ եմ ասում էլի՛։

— Իսկ Փաշայանցը,—շարունակեց պարոն Խաչքարյանն ավելի սրտապնդված,—բան չունեմ, լա՛վ տղա է, բայց ապարանի վողջ աշխատանքն ինձ վրա է թողել, շան նման մինչև իրիկուն քրտինք եմ թափում,

իսկ նա իրա ռոճիկն ավելացնելու մասին է մտածում միայն. բա դա խի՞ղճ է, ամբողջ ապարանի գործերն իմ վզին գցեն, յես ստանամ 75 ռուբլի, իսկ Փաշայանցը վոչինչ չանի ու ստանա 183 ռուբլի, բա սա արդարությո՞ւն է, բա սա՞ չի ձեր մասսայական հավասարությունը, ես վոր մեր ժամանակը լիներ, ինչ կասեյիք, հը՞...

— Լա՛վ, յես կծանոթանամ գործին և կաշխատեմ մի բան անել,—այդ մարդուն իրենից հեռացնելու նպատակով ասավ Արշակը, առանց սակայն իրեն հաշիվ տալու, թե արդյո՞ք այդպես եր հարկավոր անել։

— Շա՛տ, շա՛տ շնորհակալ եմ, ա՛յ, մալադչի՛նա, ա՛յ ղոչաղ, յես այդպես էլ գիտեյի, ընկեր Հարիկյանց, յես գիտեյի, վոր դուք ազնիվ, բարեսիրտ տղա յեք և մարդու դրության մեջ մտնող։ Այդպիսի մարդիկ միայն կարող են առաջ գնալ և բարձր դիրք ստեղծել իրենց համար,—խորամանկորեն շոյեց պարոն Խաչքարյանը,—սակայն մի պուճուր խնդիր էլ ունեյի, ընկեր Հարիկյանց, յերևի մտքներումդ կհայհոյեք ինձ, «զահլեդ տարա» չե՞, դրուստն ասեք, խո չձանձրացրի՞, հը՞...

— Ձե՛, չե՛, ի՞նչ եք ասում, ընկեր Խաչքարյան,—քաղաքավարության համար ասավ Արշակը։

— Բայց յես գիտեմ ինչ ազնիվ տղի հետ եմ խոսում, դրա համար էլ ինձ վստահ եմ զգում,—շոյելով շարունակեց պարոն Խաչքարյանը,—հա՛, ընկեր Հարիկյանց, ախպե՛ր, յես մի ծառայող, պրոլետար մարդ, ունեմ չունեմ մայրական ժառանգություն մի տուն ու մի բաղ ունեմ, ի՞նչ անեմ, են էլ պահում եմ մորս հիշատակի համար... Ա՜խ, խեղճ պառավ... Շա՛տ լավ կնիկ եր։ Լավ եր, վոր շուտ մեռավ ու ինձ եսպես

խեղճ, աղքատ դրության մեջ չտեսավ, թե չէ սիրտը կճաքեր... Վողորմի հոգուդ, մայրիկ ջան, մխ, մխ... Յես էլ չեյի ցանկանա, վոր ես այամին սեփականատեր լինեյի, բայց վոր մայրական ժառանգություն է, ի՞նչ անեմ, ստիպված եմ պահել, հո չե՞մ կարա դեն ածել, խեղճ պառավի վոսկորները գերեզմանից կբողոքեն։

— Հա՛, հիմի յել,—շարունակեց պարոն Խաչքարյանը,— Գավգործկոմից յեկել են՝ թե տանդ յերկու սենյակները պետք է փոնդի դարձնենք ու տանք ծառայողների· ախպեր, յես չեմ հասկանում ես մեր իշխանության գործերը, յեթե ծառայողի հաշիվ է, մենք ինչ վատ ծառայող ենք, յես ծառայող, աղջիկս ուսանողուհի, են մի տղես է միայն... վոր... գաստրոնոմիչեսկի մագազինի փայատեր է, են էլ ի՞նչ անեմ, իմ հալալ տղեն է, հո դուրս չե՞մ անելու... Հա՛, թե ծառայողի հաշիվ են գցում, ախպեր, մենք ամենքից էլ լա՛վ ծառայող ենք։ Թե ուզում են յերկու սենյակը տալ ծառայողի, հազիր սաղ շենքն է ծառայողի ձեռին, էլ ի՞նչ են ուզում։ դրանից էլ լավ. բա՞ն... Հա՛, հիմի յես են եյի խնդրում, ընկեր Հարիկյանց, վոր մի պուճուր նեղություն քաշեյիք, անցնեյիք Գավգործկոմ ու եդ գահրմար տան խնդիրը պարզեյիք։

— Լա՛վ, մի բան կանենք,—նորից ակամայորեն ասավ Արշակը, բայց զգալով, վոր այդպես չպետք եր ասել, պետք եր ավելի պարզ դնել խնդիրը և ասել ճշմարտությունը։ Ինչու, ինչու յեր քաշվում այդ նախկին խազեյինից, ինչու ավելի խիստ չպետք եր լինել նրա հանդեպ։ «Բայց վոչի՛նչ, դեռ նոր եմ անցել աշխատանքի, միանգամից վրա տալ չի կարելի, սկի կա-

րիք էլ չկա, այդ արդեն անքաղաքավարություն կլիներ, յես կամաց-կամաց ամեն ինչ կանեմ։ Այդ նախկին տուզը թող ինձ հետ այնքան էլ հույսեր չկապի, յես նրա հացին յուղ քսողը չեմ, սխալվո՛ւմ է...»—ինքն իրեն համոզում և հուսադրում եր Արշակը։

— Այ, ապրե՛ս, այ դոչա՛ղ, շնորհակալ եմ, ընկեր Հարիկյանց, ձեր արած լավությունները յես յերբեք չեմ մոռանա, մեկ էլ ձեզ շատ զբաղեցրի, ներողություն եմ խնդրում, ինքս էլ զբաղվեցի։ Հիմա՝ չնայած վոր յես այստեղ գործով եմ զբաղված, Փաշայանցը յերևի հավարը տրեստի գրասենյակն է հասցրել, թե էլի «իրա քեփին գնացել ա...»։ Ախպեր, ի՞նչ եմ արել եդ մարդուն, վոր ինձ եդպես հալածում է, պաշտոնն եմ ձեռից խլե՞լ, չեմ հասկանում... Ե՛հ, ցտեսություն, ընկեր Հարիկյանց, դոչաղ մնացեք, յես վստահ եմ ձեր ազնվության և խղճի վրա, մարդուս էլ եդ է հարկավոր... Յեվ հավատացած եմ, վոր դուք մի քիչ էլ մեր, նախկին «խազեյիններիս», «հա-կա-հե-ղա-փո-խա-կան-ներիս» կողմը կնայեք,—ասավ պարոն Խաչքարյանը, հեգնանքով արտասանելով վերջին բառերը,—միայն ազնիվ ու արդար դատող մարդիկ կարող են առաջ գնալ, հասարակական բարձր դիրքի հասնել, «նախախնամությունը» ձեզ յերկսից էլ տվել է, ու դրանով էլ դուք կգնաք առա՛ջ, առա՛ջ։ Դե՛, ցտեսություն, այ դոչա՛ղ։ Ավել պակաս հալալ արեք, ընկեր Հարիկյանց, դե՛, հաջողություն ձեզ, ցտեսություն, դոչա՛ղ մնացեք, դոչա՛ղ...—շողոքորթությամբ վերջացրեց նա ու մոտեցավ դռանը։

Յերբ, փակելով գործարկոմի դուռը, պարոն Խաչքարյանը դուրս յեկավ, մաղձը կրծում եր սիրտը և

խեղճ, աղքատ դրության մեջ չտեսավ, թե չէ սիրտը կճաքեր… Վողորմի հոգուդ, մայրիկ ջան, մխ, մխ… Յես էլ չեյի ցանկանա, վոր ես այսմին սեփականատեր լինեյի, բայց վոր մայրական ժառանգություն է, ի՞նչ անեմ, ստիպված եմ պահել, հո չե՞մ կարա դեն ածել, խեղճ պառավի ոսկորները գերեզմանից կբողոքեն:

— Հա՛, հիմի յել,—շարունակեց պարոն Խաչքարյանը,—Գավգործկոմից յեկել են՝ թե տանդ յերկու սենյակները պետք է փոնդի դարձնենք ու տանք ծառայողների. ախպեր, յես չեմ հասկանում էս մեր իշխանության գործերը, յեթե ծառայողի հաշիվ է, մենք ինչ վատ ծառայող ենք, յես ծառայող, աղջիկս ուսանողուհի, են մի տղես է միայն… վոր… գաստրոնոմիչեսկի մագազինի փայատեր է, են էլ ի՞նչ անեմ, իմ հալալ տղեն է, հո դուրս չե՞մ անելու… Հա՛, թե ծառայողի հաշիվ են գցում, ախպեր, մենք ամենքից էլ լա՛վ ծառայող ենք: Թե ուզում են յերկու սենյակը տալ ծառայողի, հազիր սաղ շենքն է ծառայողի ձեռին, էլ ինչ են ուզում. դրանից էլ լավ բա՞ն… Հա՛, հիմի յես են էյի խնդրում, ընկեր Հարիկյանց, վոր մի պուճուր նեղություն քաշեյիք, անցնեյիք Գավգործկոմ ու եդ գահրմար տան խնդիրը պարզեյիք:

— Լա՛վ, մի բան կանենք,—նորից ակամայորեն ասավ Արշակը, բայց զգալով, վոր այդպես չպետք եր ասել, պետք եր ավելի պարզ դնել խնդիրը և ասել ճշմարտությունը: Ինչո՞ւ, ինչո՞ւ յեր քաշվում այդ նախկին խազեյինից, ինչո՞ւ ավելի խիստ չպետք եր լինել նրա հանդեպ: «Բայց վոչի՞նչ, դեռ նոր եմ անցել աշխատանքի, միանգամից վրա տալ չի կարելի, սկի կա-

րիք էլ չկա, այդ արդեն անքաղաքավարություն կլիներ, յես կամաց-կամաց ամեն ինչ կանեմ: Այդ նախկին տուզը թող ինձ հետ այնքան էլ հույսեր չկապի, յես նրա հացին յուղ քսողը չեմ, սխալվո՞ւմ է…»—ինքն իրեն համոզում և հուսադրում եր Արշակը:

— Այ, ապրե՛ս, այ դոչո՛ղ, շնորհակալ եմ, ընկեր Հարիկյանց, ձեր արած լավությունները յես յերբեք չեմ մոռանա, մեկ էլ ձեզ շատ զբաղեցրի, ներողություն եմ խնդրում, ինքս էլ զբաղվեցի: Հիմա՝ չնայած վոր յես այստեղ գործով եմ զբաղված, Փաշայանցը յերեկ հավարը արեստի գրասենյակն է հասցրել, թե ելի «իրա քեֆին գնացել ա…»: Ախպեր, ի՞նչ եմ արել եդ մարդուն, վոր ինձ եդպես հալածում է, պաշտոնն եմ ձեռից խլե՞լ, չեմ հասկանում… Ե՛հ, ցտեսություն, ընկե՛ր Հարիկյանց, ողջաղ մնացեք, յես վստահ եմ ձեր ազնվության և խղճի վրա, մարդուս էլ եդ է հարկավոր… Յեվ հավատացած եմ, վոր դուք մի քիչ էլ մեր, նախկին «խազեյիններե՛ս», «հա-կա-հե-ղա-փո-խա-կան-ներե՛ս» կողմը կնայեք,—ասավ պարոն Խաչքարյանը, հեգնանքով արտասանելով վերջին բառերը,—միայն ազնիվ ու արդար դատող մարդիկ կարող են առաջ գնալ, հասարակական բարձր դիրքի հասնել, «Նախախնամությունը» ձեզ յերկսից էլ տվել է, ու դրանով էլ դուք կգնաք առա՛ջ, առա՛ջ: Դե՛, ցտեսություն, այ դոչո՛ղ: Ավել պակաս հալալ արեք, ընկեր Հարիկյանց, դե՛, հաջողություն ձեզ, ցտեսություն, ողջա՛ղ մնացեք, ողջա՛ղ…—շողոքորթությամբ վերջացրեց նա ու մոտեցավ դռանը:

Յերբ, փակելով գործարկոմի դուռը, պարոն Խաչքարյանը դուրս յեկավ, մաղձը կրծում եր սիրտը և

հեգնանքը ծավալվում նրա դեմքին։ «Գյուղացիների մոտ աղաչանք արա,— մտածում էր նա,— ինչ հալիս գլխներում, ձեռ չեն կարող հանել, բայց մեր բացակայությանն, իրենց ժողովներում, ասլան-ղափլան են դառնում, մանեթս են ուտում... Համա ես մեկը վոչինչ, շատ միամիտն ե յերևում, թե չփչացնեն, լավ կլինի... Իմ միամիտ աղավնյակս, յես քո միջոցով գործերս կսարքեմ.— պարոն Խաչքարյանը հեգնանքով վերջացրեց իր խոհերը և մտավ գրասենյակ։

Արշակը յերկար, յերկար միտք արեց, լուրջ վերագնահատումներ արեց այդ իրեն համար անհաճո խոսակցությունից, փոքր ինչ հանդիմանեց իրեն, փոքր ինչ արդարացրեց և թաղվեց գործերում։

Իսկ նրանք շատ են ու բազմազան։ Սեղանի վրա քիչ են «գործ»-երը, բայց դրսում շատ են գործերը։

Նրանք սպասում են կատարման։

VI

Անկետաներում և ցուցակներում գրվում եր Հայրապետ Բալաբեգի Արեշատյան։ Իսկ յեթե փորձեյիր ուղղակի այդ անուն-ազգանունով հարցնել, շատ քչերը գուցե կռահեյին, թե խոսքը նրա մասին ե։

Իսկ յեթե տպարանում սրան, կամ նրան հարց տայիր թե—ինչ ե դասակարգը,—վոմանք հեգնանքով, վոմանք լուրջ կպատասխանեյին—դասակարգը՝ Հայրոն ե։

Յեթե իրեն տայիր նույն հարցը, նա հանդարտ ու մտածկոտ, կարևոր հայտնություն անողի տոնով, նախ կշփեր ձեռների ափերը, ցուցամատով ու բթա-

մատով կշոյեր շեկ բեխերը և կպատասխաներ,—Դասակարգը՝ դա բանվոր դասակարգն ա, վոր հեղափոխություն կատարեց և ցարին թախտից գցեց, մեզ մոտ էլ՝ դաշնակին։ Ով վոր միևնույն ձևով և միևնույն հաջաթներով ա աշխատում արդյունաբերության մեջ և միևնույն ձևերով կռվում ա իրա շահերի համար՝ նա դասակարգ ա։ Խոսքի որինակ, հմի յես, աշխատում եմ միևնույն մաշինեքի վրա և միևնույն ձևով, յեթե կռիվ լինի, միևնույն ձևով էլ կկռվեմ մեր շահերի համար, դրա համար, հմի յես էլ դասակարգ եմ։ Մենք հմենովս մի դասակարգ ենք։

Յերբ ներկա վեպի հեղինակը նյութեր եր հավաքում իր վեպի համար, նրան շատ հետաքրքրեց հենց ինքը, Դասակարգ Հայրոն, վորը տպարանում վաստակել եր ժրաջան ու լավորակ բանվորի անուն։ Իր հետաքրքրությանը բավարարություն տալու համար, ներկա վեպի հեղինակը ցանկացավ մի շարք հարցեր տալ և կենսագրական տեղեկություններ հավաքել Դասակարգից։

Սկզբում Դասակարգը հակառակվեց,—

— Ով գիտա ելի ինչ սատանություն եք հնարել... ելի կազեթի մեջը պիտի գցեք։ Չեմ ուզում, ախպեր, չե...

Յերբ ներկա վեպի հեղինակը նորից խնդրեց և հավատացրեց նրան, վոր «կազեթի մեջը չի գցելու» նրա կենսագրությունը, Դասակարգը մի անգամ հազաց, նորից շփեց ձեռների ափերը և հանդարտ տոնով սկսեց.—

— Հմի յես հո յերկար նազլ չեմ անելու պապիս ու մամիս ժամանակից։ Իմ կենսագրականն ես ա։

Մենք Ալիքուչակցի յենք ու էնտեղ էլ ծնվել։ Յեղել ենք աղքատ գյուղացի։ Յես ինքս յեղել եմ բատրակ, մինչանքի մեծ իմպերիալիզմի կռիվը։ Եդ կռվին ինձ էլ վե կալան սալդաթ ու քշին տաճկի ֆրոնտը։ Հասա մինչանքի Երզրում, Յերզընկի։ Ըտուց էլ 17 թվին սաղ ֆրոնտով դառանք, Հոկտեմբերյան հեղափոխության պատճառով։

— Դառա՛նք։ Եկամ դո՛ւզ մեր գյուղը։ Ինչ տենամ, մերս մեռել ա։ Հերս էլ գաթի թեզ էր մեռել։ Մի խոսքով էլ ինչս էր մնացել գյուղում։ Վոչ տուն ունեյինք, վոչ մալ, վոչ էլ հող։ Թողիմ, դառամ քաղաք։ Ասի գյուղումը բատրակություն անելու տեղակ, հաղիր կեթանք քաղաքումը նոքարություն կանենք։ Եդ դահա լավ ա։

— Քաղաքումն էլ կասեննաս նոքարությունը հաղիր բրթած թան էր, գդալը մեջը դրած։ Ման եկամ, ման եկամ, տնից-տուն, դուքանից-դուքան, սաղ ուչընժդենիքը, ընչանք իրեք ամիսը թամամեց, վրա իրեք ամսին, բախտս բացվե՛ց, վո՛յ են բախտին։ Գործս «աջողակ» գնաց ու աշխատանքի մտա «Լուսավորիչ» տպարանում, տերն էլ գաթի ես մեր պարոն Խաչիքարն էր, վոր հմի ըստեղն աշխատում ա։ Հեռի լոռղաց, հո՛ւ, յես նրա...

— Ասեց թե՝ անունդ ի՞նչ ա, ասիմ՝ Հայրապետ, ասեց՝ Հայրապետ ջան, տպարանը կսրբես կթամզես, տունս կսրբես, աղավարի կուտես, կխմե՛ս, տանս էլ քեզ համար կքնես ու սավայի եդ՝ ամսեկան իրեք մանեթ էլ ժալովնի կստանաս։ Ասիմ՝ Բալաբեգի տղա, բանդ քոք ա, ըսենց աշխատանք դու սկի դրախտումն էլ չիր գտնի։

— Պայմանը լավն էր, աշխատանքս էլ դժար չէր երևում, մե որ, երկոր, վրա իրեք որը... տը՛, տը՛, տը՛, տը՛ը՛ը՛..., եդ ինչ աշխատանք ե՜ր։ Կիսը չճեղքած վեր իմ կենում, տունը, հայաթը, բախչեն ջուր շաղ տալի, ավլում, թամզում, փետը ջարդում, ամանները լվանում, հետի լողաց, դրանց կեղտոտությունը թափում, ընչանքի արևը բացվեր։ Արևը բացվում էր թե չէ, եթում իմ տպարանը, մաքրում, խտակում, ընչանքի պարոն Խաչիքարը շնորք բերեր ու գար տպարան։

— Եդ զուռում..., վո՛ւյ, ներողություն, խոստացել էր քնելու տեղ տալ, տեղն էլ ինչ էր, մի շան բույն, նարդվանների տակին։

— Տպարանում աշխատանքն սկսվում էր թե չէ, նոր էր հոգիս դուս գալիս։ Պարոն Խաչիքարի տպարանումը հո մաշինեքն ըսենց ռեմեններով ու ելեկտրականով չեյի՛ն դառնում։ Ձեռով ինք շուռ տալիս։ Թևերս թիլանում ին, մեջքս երկու տակ էր ըլում։ Քաշի՛ հա քաշի՛։ Սաղ որն առանց նաֆաս առնելու եդ յեքա չարխը շուռ իմ տալիս։ Հոգիս գալիս, հասնում էր բերանս ու թազադան յետ գնում։

— Իրիկնապահին տպարանը փակում ինք։ Հմի կասես թե դրանով էլ չարչարանքիս վերջ էր ըլում, ներողություն կանես, չարչարանքս նոր էր թազադան սկսվում. պարոն Խաչիքարը կարգադրում էր թե— Հայրապե՜տ, կեթաս ջաղացքը, տղերանցը կոգնես։ Եդ էլ չմոռանամ ասել, վոր եդ պա՛րոն Խաչիքարը երկու հատ էլ ջաղացք ուներ Զանգվի ափին, մեկը մինչանքի հիմի յել կա։

— Եթում ի ջաղացքը, ընտեղ էլ շան չարչա-

րանք, մինչանքի կես գիշերը։ Ըդուց դենը ընգարած, ղադրած, յա ջաղացքումն ի թեք ընկնում, քնում, յա գալիս շնարույնս։

— Կիրակի օրերն էլ, համբալի ղայշի, մեշոքներն ու կարզինկեքը շլակի, ընկի պարոնիդ յետևիցը. հետո խանումի հետ ճաշ պատրաստի, ամաններ լվա, գնա նիսյեքը հավաքելու, իրիկնադեմին էլ երեխեքանցը տար ման ածելու։

— Էս էր մեր կյանքն էդ ժամանակը։ Էդպես էլ անց կացավ մինչանքի 20 թիվը։ Մենք վաղուց ինք լսել թե Ռուսաստանում դասակարգը հեղափոխվել ա, ասում ին, թե ըստեղ էլ պտի հեղափոխվի։ Մեկ էլ խաբար բերին, թե Բաքուն էլ վե կալան։ Համա մեր տպարանի տղերանցից մի քանիսը շատ թունդ աշխատում ին հեղափոխելու համար։ Համա դու ինձ ասա, ախմախ իմ, խստակ ախմախ, շատ հեռու յի մնում դրանցից։ Դե՛, վորտեղից էր էն վախտը գիտակցություն։ Վերջը հասկացա։

— Մեր պարոն Խաչիքարի ռանգ-ըռուշն էլ տեղիցը թռել էր։ Քեֆը խարաբ էր։ Շա՜տ էր միտք անում։

— Մի գիշեր էլ քնիցը զարթնեմ ու տենամ, վոր հայաթումը չըրը՛խկ հա չըրը՛խկ, չըրը՛խկ հա չըրը՛խկ, վոնց վոր թե գետինը փորում են։ Ես ինչ խաբար ա՞։ Ասում եմ, թե պարոն Խաչիքարն ա՞, թե նա խի պտի ըլնի վոր. յա թե նա յա ու վռազ գործ կա, աշխատում ա, էլ խի՞ յա թողնում, վոր յես ըսենց հանգիստ քնեմ, վեր կհանի ու կաշխատացնի, էլի՜։ Ասում եմ չէ, ջանըմ, նա չի և հանգստանում։ Մեկ էլ տենամ էլի չըրը՛խկ հա չըրը՛խկ. Նարդվան-

ների վրով էլ գնում ու գալիս են։ Փսփսում են։ Պարոն Խաչիքարն ա, կնիկը, երեխեքը։ Ա՛յ քեզ բա՜ն. թե ի՞նչ խաբա՞րը ա։ Տափ եմ կենում։

— Էլի չըրը՛խկ հա չըրըխկ, էլի փսփսոց, էլի գնալ-գալ, ամանների զրնգոց, ընչանքի լիսադեմին։ Լիսադեմին դրանք խախանդվեցին ու յես վեր կացա։ Մեկ էլ ինչ տենամ, իրիկվա չոր հայաթի մեջտեղում, մի մե՜ծ մարգ են փորել, ծաղկի շիթիլներ տնկել ու ջրել։ Ասիմ չէ՜, ըստեղ հալբաթ մի ոյին կա։

— Նարդվաններով բարձրացա օթախները, ինչ տենամ, դա՜ր ու դատարկ, վոչ խալիչա կա, վոչ կամոդ, վոչ արծաթե ամաններ։ Վոչ էլ պադվալներում յեղ ու ալիր։ Այ թե ինչ խաբար ա՜,—ասում եմ,—Բալաբեգի տղա, դու էշի ականջումը քնել ես։

— Աղա՛, բա տան վեշչիքն ու՞ր ա,—հարցնում եմ պարոն Խաչիքարին։—Ասում ա թե՝ ղրկեցի մեյդանը վոր ծախեն, յես էլ,—ասում ա,—պտի ըստեղից եթամ ներսեսը։ Քեզանից էլ շատ շնորհակալ եմ, լավ ղուլլուղ արիր,—ասում ա,—ես քեզ ես ամսվա ժալովնին, ես էլ քեզ երկու մանեթ «նա-չայ», քեզ հինգ մանեթ փող. ես էլ ես երկու սկամիքը քեզ փեշքաշ,—ասում ա,—վոր տուն ու տեղ կլես, ինձ էլ կհիշես։ Քեզ համար էլ ուրիշ ծառայության տեղ գտի, ես երկու օրս յես պտի եթամ...

— Նոր եմ գլխի ընկնում, թե բանն ընչումն ա, թե խի յին սաղ գշերը փսփսում ու չըրըխկ-չըրըխկացնում, թե խի չոր հայաթումը մարգ բուսավ։ Ասի չէ՜, պարոն Խաչիքարի բաները փի՜ս են։

— Առնեմ սկամիքն ու վազեմ մեր բանվորների կուշտը։ Սաղ պատմեցի։ Տղերքն էլ ասին թե՝ վոչինչ,

Հա յրո՛, միքանի որից յեզը եդ մարդը շուտ կտանք Տպարանն էլ մեր ձեռին կլնի։ Ինձ էլ իրա կշտին տեղավորեց մեր բանվոր Սարգիսը, շատ լավ տղա յեր, ափսոս դաշնակներն սպանեցին, հո՛ւ յես նրանց...

— Միքանի որ յեզը դասակարգն ըստեղ էլ հեղափոխվեց։ Բոլորովս էլ դուս եկանք։ Իշխանությունը վե կալանք ու դառանք մենք մեզանով։

— Հեսա, ուխտ տարի յա անցել։ Ինչքա՛ն բան ա փոխվել։ Մեկ ինձ վրա օրինակ վերցնենք։ Այրետ էլ սովորեցի, գրել-կարդալուն էլ քիչ-քիչ բեջարում եմ։ Մտել եմ կուսակցության մեջ։ Դասակարգի հետ եմ ախշատում։ Հասարակ նոքարությունից ու չարխ քաշելուց՝ տպագրիչ եմ դարձել։ Կնիկ էլ եմ առել, յերեխա չել ունեմ։

— Եդ պարոն Խաչիքարն էլ շատ ա փոխվել, փետրաթափ հավ ըլի կասենաս, յա թե չէ՝ ատամները հանած գել։ Կուչ ա եկել։ Մեկ-մեկ էլ ինձ ու ինձ ասում եմ,—Հը՛, պարոն Խաչիքա՛ր, քեֆդ վո՞նց ա, մի գիշերում սարքած մարդդ ի՞նչ ելավ։

— Հմի «Լուսավորիչ» տպարանից մեկ յես եմ մնացել ըստեղ, մեկ Մխոն, մեկ էլ պարոն Խաչիքարը։ Տպարանն էլ ո՞ւր ա... Հե՜յ գիդի աշխարք. բա՛, եսպես ա աշխարքը, դասակարգն էլ իրանը գիտի,— դարձյալ ափերը շփելով վերջացրեց Դասակարգը։

VII

Գրաշարանոցում Մաշինա Արտաշն էր։ Մեքենատան բաժնում՝ Դասակարգ Հայրոն։ Լավ օրինակները միշտ նրանցից եկին բերվում։

Բոլորն էլ շարում են։ Մաշինա Արտաշն էլ է շարում։ Գրաշարները։ Բերանը հո չի՞ աշխատում։ Ձեռներն աշխատում են, բերանը՝ ազատ։ Բերանն էլ հո չի՞ լռում։ Ձեռներն աշխատում են և բերանը՝ խոսում։ Նյութը շա՛տ։ Բոցբողազը օրինակ։ Այդ ուրիշ է, վոր Լոֆ-լոֆ Ալեքն ու Մխոն լռում են, կամ համարյա լռում են։ Նրանց գործն ուրիշ է։ Արազախառն գարեջուրը, կամ գարեջրախառն արաղը, «Նոյա Տապանը», ու հետո առավոտյան գլխացավ, չորացած շրթունքներ, դառնացած քիմք։ Լեղի։ Հորանջ, ծմրկտոց։ Բայց նրանք խոսում են գիշերը, յերբ շշերը հաշտ են ու ժպտուն, յերբ բաժակները համբուրվում են բերանաբաց ու յերբ արգանը նվվում է դառն ու հարբած։

Ու խոսում են։ Վոմանք արշավում են։ Բոցբողազը ձեզ օրինակ, վոմանք հասնում, վոմանք կաղում։ Ալեքն ու Մխոն էլ՝ նայած օրվան ու տրամադրությանը։

Իսկ Արտաշը հակառակն է։ Ձեռներն աշխատում են, բերանը՝ փակ։ Բերանը կաշխատի, յերբ ձեռները կանգ կառնեն։ Իսկ նրանք էլ դժվար են կանգ առնում։ Դառնում են անընդհատ, տառակալի ու տառարկղի տարածության մեջ ու դառնում աննկատ։ Նրա շարվածքն անսխալ է լինում, և այստեղ վոչ մի կաշխարդություն կամ գաղտնիք չկա։ Շարում է արագ, արշավում է ձիավորի նման, և դրա համար էլ նա Մաշինա չէ։

— Մաշինեն զոռեց։

— Մաշինեն քշեց։

— Վրա տվավ։

— Մաշինեն պրծավ,— ասում է շրջապատը։

Ուրիշ լավ շարողներ էլ կան, և մաքուր, բայց

Հա յրո՛, միքանի որից յեդը եդ մարդը շուռ կտանք Տպարանն ել մեր ձեռին կլնի։ Ինձ ել իրա կշտին տեղավորեց մեր բանվոր Սարգիսը, շատ լավ տղա յեր, ափսոս դաշնակներն սպանեցին, հո՛ւ յես նրանց...

— Միքանի որ յեդը դասակարգն ըստեղ ել հեղափոխվեց։ Բոլորովս ել դուս եկանք։ Իշխանությունը վե կալանք ու դառանք մենք մեզանով։

— Հեսա, ութ տարի յա անցել։ Ինչքա՛ն բան ա փոխվել։ Մեկ ինձ վրա օրինակ վերցնենք։ Այբենտ ել սովորեցի, գրել-կարդալուն ել քիչ-քիչ բեջարում եմ։ Մտել եմ կուսակցության մեջ։ Դասակարգի հետ եմ աշխատում։ Հասարակ նոքարությունից ու չարխ քաշելուց՝ տպագրիչ եմ դարձել։ Կնիկ ել եմ առել, յերեխա յել ունեմ։

— Եդ պարոն Խաչիքարն ել շատ ա փոխվել, փետրաթափ հավ ըլի կասենաս, յա թե չե՝ ատամները հանած գել։ Կուչ ա եկել։ Մեկ-մեկ ել ինձ ու ինձ ասում եմ,—Հը՛, պարոն Խաչիքա՛ր, քեֆդ վո՞նց ա, մի գիշերում սարքած մարդդ ի՞նչ ելավ։

— Հմի «Լուսավորիչ» տպարանից մեկ յես եմ մնացել ըստեղ, մեկ Մխոն, մեկ ել պարոն Խաչիքարը։ Տպարանն ել մեր ա... Հե՜յ, գիդի աշխարք. բա՛, եսպես ա աշխարքը, դասակարգն ել իրանը գիտի,— դարձյալ ափերը շփելով վերջացրեց Դասակարգը։

VII

Գրաշարանոցում Մաշինա Արտաշն եր։ Մեքենատան բաժնում՝ Դասակարգ Հայրոն։ Լավ օրինակները միշտ նրանցից եյին բերվում։

Բոլորն ել շարում են։ Մաշինա Արտաշն ել ե շարում։ Գրաշարները։ Բերանը հո չի՞ աշխատում։ Ձեռներն աշխատում են, բերանը՝ ազատ։ Բերանն ել հո չի՞ լռում։ Ձեռներն աշխատում են և բերանը՝ խոսում։ Նյութը շա՜տ։ Բոշբողազը օրինակ։ Այդ ուրիշ ե, վոր Լոֆ-լոֆ Ալեքն ու Մխոն լռում են, կամ համարյա լռում են։ Նրանց գործն ուրիշ ե։ Արագախառն գարեջուրը, կամ գարեջրախառն արաղը, «Նոյա Տապանը», ու հետո առավոտյան գլխացավ, չորացած շրթունքներ, դառնացած քիմք։ Լեղի։ Հորանջ, ծմրկտոց։ Բայց նրանք խոսում են գիշերը, յերբ շշերը հաշտ են ու ժպտուն, յերբ բաժակները համբուրվում են բերանաբաց ու յերբ արգանը նվվում ե դառն ու հարբած։

Ու խոսում են։ Վոմանք արշավում են։ Բոշբողազը ձեզ օրինակ, վոմանք հասնում, վոմանք կաղում։ Ալեքն ու Մխոն ել՝ նայած որվան ու տրամադրությանը։

Իսկ Արտաշը հակառակն ե։ Ձեռներն աշխատում են, բերանը՝ փակ։ Բերանը կաշխատի, յերբ ձեռները կանգ կառնեն։ Իսկ նրանք ել դժվար են կանգ առնում։ Դառնում են անընդհատ, տառակալի ու տառարկղի տարածության մեջ ու դառնում աննկատ։ Նրա շարվածքն անսխալ ե լինում, և այստեղ վոչ մի կախարդություն կամ գաղտնիք չկա։ Շարում ե արագ, արշավում ե ձիավորի նման, և դրա համար ել նա Մաշինա յե։

— Մաշինեն զոռեց։

— Մաշինեն քշեց։

— Վրա տվավ։

— Մաշինեն պրծավ,—ասում ե շրջապատը։

Ուրիշ լավ շարողներ ել կան, և մաքուր, բայց

ավելի դանդաղ, դրա համար էլ նրանցից վոչ մեկը Մաշինա չի կոչվում։

Մեքենայական բաժանմունքում էլ լավ տպագրիչներ կան — Ֆընդըքյանը, վարպետ Աբրահամը, Բարաջանը, բայց այստեղ էլ օրինակները Դասակարգ Հայրոյից են բերվում։ Լուրջ, աշխատանք պահանջող, պատկերազարդ տպագրությունները նրան են հանձնվում։ Վոչ թե խնամքով ե մոտենում գործին, այլ ուղղակի գուրգուրանքով։

— Մեր դասակարգի գործն էլ վոր մուղայիթով չանենք, էլ ինչ դուրս կգա, — ասում ե նա հաճախ։

Յեվ ամբողջ տպարանում լավագույն օրինակները նրանք են, — Դասակարգ Հայրոն ու Մաշինա Արտաշը։

Գնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովի նիստերում հաճախ եր մրցության տրվում ձեռնարկը, և վորպես չափանիշ ու Նորմա, հրապարակ եյին գալիս Դասակարգ Հայրոն ու Մաշինա Արտաշը։

— Յեթե Արտաշը ինն արժե, ապա դա, սկի վեց էլ չարժի։

— Յեթե դրան ութ եք ուզում դարձնել, ապա Դասակարգին պիտի տասներկու տալ։

— Յեթե դրան մի կոպեկով ավելացվի, ապա հալալ կլի Դասակարգին ու Արտաշին իրեքական ավելացնել, — վիճում ու առարկում եյին գնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովում։

Լավագույն օրինակները լինելով հանդերձ, նրանք, ինչպես բանաստեղծն ե ասում, չեյին հանգստանում «հաղթության դափնիների» վրա։ Նրանք համառ եյին, փոքրիկ մանուկների նման, վորոնք ուզում են բոլոր

խաղալիքները կոտրել, ստուգել, իմանալ նրանց բովանդակությունը, տիրապետել նրանց։

Յեվ համառորեն հետապնդում եյին, առաջ, առաջ։

* * *

Ամառվա յերեկոները։ Իսկ ինչքան հաճելի յեն նրանք հենց այս փոքրիկ քաղաքում։

Կենդանի յեռ ու զեռ պողոտայում։ Կայտառ պիոներների նման, մերկասրունք, մատաղահաս ծառերն ընթանում են պողոտայի յերկու ափերով։ Լուսավառված մայթեր։ Ցուցափեղկեր։ Մարդկային խոսուն հեղեղ պողոտայում։ Հետո կապույտ յերկինք, հսկայական լուսամփոփի նման շրջված քաղաքի լույսերի վրա։ Պայծառ, աստղազարդ։ Քաղաքային այգի։ Նվագ։ Շարժում։ Թարմություն շնչող ծառեր։

Նորից ամառային նույն յերեկոները։ Դրսում՝ նույնը։ Ներսում՝ Լոֆ-լոֆ Ալեքն ու Մխոն գարեջրի շշերի անտառներ են բարձրացնում «Նոյա Տապանի» սեղանների վրա և հիացմունքի ու զմայլանքի ժամեր վայելում արգանի և Բեդնի Գիգոլու հովանավորության ներքո։

Դարձյալ նույն ամառային յերեկոները։ Յեվ Մաշինա Արտաշը վեցերորդ յերեկոն ե, ինչ գլխահակ շարում ե։ Բայց շատ ավելի դանդաղ, քան կշարեր լրագրի սյունյակները։

Նա կենսագործում ե այն միտքը, վոր շաբաթներ շարունակ տանջել, հալածել ե նրան։ Նա կատարում ե այն խոստումը, վոր տվել ե իրեն։

Միտքը թելադրում եր, համառում, վորոշել և այժմ կատարում ե վորոշումը։

Պետք էր նորանոր նվաճումներ անել և առաջ գնալ: Իսկ տպագրական ասպարեզը շատ հնարավորություններ ուներ:

Արտաշը փորձել էր տառերով ու զարդանկարներով շարել Լենինի դիմանկարը, շարվածքում խտացնելով նրա կենսագրությունը: Վոգևորող այս միտքը լուսավառվում էր: Սիրտն ուռչում էր հրճվանքից, աչքերը փայլում էին ու մատները շարում: Իսկ դըրսում՝ ամառային հաճելի ցերեկներն էին ժխորում:

Սանդրո Փաշայանն էլ էր վոգևորվել, նա մտքում գուրգուրում էր Արտաշին, այդ համառ «վորդին», վորն անընդհատ «կրծում է իր արհեստը»: Նա թույլատրեց Արտաշին ցերեկները ազատ գալ աշխատելու և տրամադրեց ինչ վոր անհրաժեշտ էր:

Իսկ Դասակարգ Հայրո՞ն: Նա վո՞րտեղ է վոր հետ մնա: Գրոհեց: Հասավ:

Ճակատն ու աչքերը գծագրվել էին տառերով: Շատ բնորոշ էին ու արտահայտիչ: Արճիճե սառը տառերը դրսևորում էին մեծ առաջնորդի պայծառ դեմքը: Արտաշի աչքերը ճչում էին ուրախությունից: Միտքը լուսավառվում էր: Ճակատին, թրջված ապակու նման, հավաքվում ու հոսում էին քրտինքի կաթիլները: Շարում էր:

* * *

Գնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովը հատուկ նիստ էր գումարել:

Քննության նյութը՝ տպագրական գործում կարևոր նորություն համարվող այդ աշխատանքն էր: Ձեռքից-ձեռք էր անցնում: Նայում էին հեռվից: Նայում էին մոտիկից: Տպագրական տառերով, նրբությամբ շարված, արտահայտիչ ու բնական, չորս գույներով, նույնքան վարպետությամբ տպագրված՝ Լենինի նկարն էր: Նկարի ներքևում, աջակողմյան անկյունում, մանր տառերով տպագրված էր—

Շարեց՝ գրաշար Արտաշես Հովակիմյան

Տպագրեց՝ Հայրապետ Առևշատյան:

Հանձնաժողովը վոգևորվեց ու խրախուսանքի խոսքեր ասեց:

— Ա՜յ թե աշխատո՜ղ են,—ուրախությամբ բացականչեց վարպետ Ակոբը:

— Մալադեց, ախպեր, մալադեց:

— Սրանց արժի նվերներ տալ:

— Անպայման:

— Անպայման:

— Յես առաջարկում եմ,—ասավ Բաբաջանը,— դիմել տրեստին, նախ վոր ես տեսակ գործը ձեռից բաց չթողա, որինակի համար, կարելի յա ես շարվածքը շատ տպել ու տարածել, դա համ տրեստին ա լավ, համ էլ մեր բանվորությանը, որինակի համար, դըրանով մեր սաղ բանվորության պատիվը կբարձրանա: Մեկ էլ յես առաջարկում եմ, վոր տղերանց. որինակի համար, վորոշ նվեր տրվի: Դա մի կողմից իրանց կուրախացնի և մեկ էլ մյուսներին կշահագրգռի եղպիսի բաներով զբաղվել ու արհեստում կատարելագործվել: Որինակի համար, յես առաջարկում եմ դիմել տրեստին, վոր Դասակարգին ու Արտաշին հարուրական մանեթ նվեր տան: Դրանից տրեստը չի աղքատանա, զատո՛, որինակի համար, տղերքն էլ կուրախանան:

Հանձնաժողովը հավանություն տվեց Բարաջանի առաջարկին և արձանագրեց։

Տրեստի վարչությունը հարգեց հանձնաժողովի վորոշումները և անցավ նրանց կատարմանը։

Պատի թերթն արձագանքեց։

Միքանի օր հետո Դասակարգ Հայրոն և Մաշինա Արտաշը միասին մտան ՄՕՊՐ-ի գրասենյակը և միասին էլ դուրս յեկան 100-ական ռուբլու ստացականներով։

* * *

Դասակարգ Հայրոն միջահասակ է։ 30-ին մոտ։ Շեկ բեխերն սկսվում են քթածակերից ու փակագծերի պես վոլորվում բերանի շուրջը։ Քիթը ծուռն է, տգեղ։ Աջ այտի վրա քանդակված սատրակետաձև սպին ավելի յե տգեղացնում նրա դեմքը։ Աչքերը վառվում են։ Խիտ հոնքերը գրկախառնվել են իրար և հորդել քթի բարձրունքներից դեպի ավելի ներքև, տալով թռչող բազեյի թևերի ձևը։ Սպիտակաձև սպին էլ իր պատմությունն ունի թաղված տարիների անցյալում և կապված Հայրոյի բատրակության շրջանի աշխատանքների հետ։

Բայց հետաքրքիրն այդ չի գուցե։

Ներկա վեպի ընթերցողին անպայմանորեն կհետաքրքրի մի ուրիշ բան։ Նա անշուշտ կցանկանա պարզել իրեն համար, թե ինչպես պատահեց, վոր դեռևս 1920 թվին, հասարակ սևագործ բանվորը, յոթ տարվա ընթացքում, լավորակ տպագրիչի համբավ վաստակեց։

Յեվ այդ է, վոր ցանկանում է իր ընթերցողին հաղորդել ներկա վեպի հեղինակը։

Յերբ խորհրդայնացումը համախմբեց քաղաքի բոլոր տպարանները և կաշվյա հաստ ժապավենները գրկեցին տպագրական մեքենաների անիվները ու յերբ էլեկտրականությունը թափ և շարժում տվեց նրանց, այն օրվանից Դասակարգ Հայրոն մոռացավ մեջքն յերկտակել ու պտտել ծանր անիվի հետ։ Նա դարձյալ աշխատեց այդ մեքենաների շուրջը, բայց ավելի հանգիստ ու տանելի աշխատանքով։ Գրաշարանոցից շարվածք էր բերում և տպագրված տառերը լվանում, գրաշարանոց տանում, մաքրում ու յուղում էր մեքենաները, բայց այդ չէր նրա իդեալական աշխատանքը։ Նա ավելի հեռուներն էր տեսնում։ Ագահորեն հետևվում էր տպագրիչի յուրաքանչյուր շարժումին, գողանում էր ժամանակից և կրկնապատկում իր ուշադրությունը «այրեստը» սովորելու համար։

Ազատ ժամերին խնդրում էր վարպետից և վարպետն ընդառաջում էր նրան։ Ու վոգևորված թռչում էր նա մեքենայի վրա, դիտում, ուսումնասիրում էր և թուղթ հասցնում նրա հսկայական բացված յերախին։

Վարպետ Աբրահամը քայլ առ քայլ հետևում էր։ Բացատրում մեքենայի մանրամասները, «գաղտնիքները»։ Սովորեցնում պերեպլավկան, տպագրելը։ Այնքան չբացատրեց վարպետը, վորքան յուրացրեց Հայրոն։

Գիշերները՝ անկողնում, թե ընթրելիս, ժողովում, թե ակումբում, նրան հալածում ու հանգիստ չէր տալիս մի միտք,—«այրեստը» սովորել—դառնալ տպագրիչ, առաջնակարգ, վորակավոր բանվոր։ Նա ուրախու-

թյամբ պատրաստ էր համաձայնվել իր սովորական, ութ ժամյա աշխատանքից հետո աշխատել դարձյալ ութ ժամ, առանց վարձատրության, աշխատել և սովորել «այրեստը»։

— Վարպետ, ջես էս այրեստը պտի սովրեմ, հոգիս էլ դուս գա, պտի սովրեմ,— ասում էր նա վարպետ Աբրահամին։

Այդ համառությունն էլ սիրում էր վարպետ Աբրահամը, այդ համառությունն էլ վոգևորում էր նրան։ Նա միջնորդեց Սանդրո Փաշայանին, վորպեսզի թույլատրի Հայրոյին՝ սև աշխատանքներից տպագրիչի աշակերտի աշխատանքին փոխադրել, և հույս հայտնեց.

— Ահա, Սանդրո՛, եսոր ինչ որ ա, կհիշես, թե դրանից առաջնակարգ տպագրիչ չդուս եկավ, ջես սրանք մկրատով կկտրեմ,— և ձեռքը բեղերին տարավ ու քաշեց։

— Դառնալուն, կարող ա դառնալ, բայց ջես իրավունք չունեմ։ Են վախտ դրա տեղը մի ուրիշը պտի ընդունեմ, վոր դրա աշխատանքը տանի, հո չեմ կարող փեչատնիկին սև աշխատող դարձնեմ, նշանակում ա նորը պտի ընդունեմ, իրավո՞ւնք չունեմ, առանց են էլ տպարանն անգչալներով լիքն ա… դեռ պետք ա կրճատեմ, վոչ թե ընդունեմ։

Ինչ կարող էր առարկել վարպետ Աբրահամը։ Լռեց ու համաձայնվեց։ Բայց վորդը կրծում էր Հայրոյի սիրտը, նա հանգիստ չուներ,— «Ա՛խ մի թե ես այրեստն էլ կսովրե՜մ, էլ դարդ չունեմ»— ասում էր հաճախ ինքն իրեն։

Անցան ամիսներ և վարպետ Աբրահամը, տեխնիկական հնարավորություններ ստեղծելուց հետո, Հայրոյի հարցը դարձյալ հարուցեց։

Լուծվեց դրականորեն։ Հայրոյի յերազները կյանք եյին դառնում։ Հուզվեց, վոգևորվեց պատանու նման՝ վորին տալիս են իր ամենասիրելի ընծան, նա թռչկոտել սկսեց վողջ տպարանով և ծափ զարնել։

Անցավ աշխատանքի։ Կանգնեց տպագրական մեքենայի վրա և սիրտը պայծառ հորիզոնի նման բացվեց։ Մեքենայի անիվները դարձան Հայրոյի ղեկավարությամբ և նա խանդավառվեց։

Սկսեց դանդաղ, քայլ առ քայլ։ Փոխում էր վոտները և շարունակում դարձյալ դեպի առաջ։ Մեքենան յենթարկվեց, բայց Հայրոն դեռ հետապնդում էր։

Նրա մեքենան չափ էր ընկնում մի ժամ կամ կես ժամ առաջ։ Ճաշի զանգը Հայրոյին այնքան էլ հեշտ չեր պոկում իր մեքենայից։ Իսկ յերեկոներն ամենից ուշ նա յեր գնում ծորակի մոտը, լվացքի սապոնով լվանալու ձեռները։

«Այրեստն» էր սովորում։

Համառորեն հետապնդեց և հաջողությամբ կատարեց նվաճումներ։ Առաջին ցանկությունները կյանք դարձան, բայց դրանով էլ չվերջացան Հայրոյի ցանկությունները։

Իսկ գրել-կարդա՞լը։ Արդեն սկսել է այդ ուղղությամբ։ Կապելով կարդում է արդեն, բայց դա բավական չի։ Նա պետք է կարդա այնպես, ինչպես խոսում է, առանց արգելքի։ Թե չե, ի՞նչ…

Ցերեկը համառորեն մեքենան է հետապնդում և յերեկոները՝ կռանում լրագրի վրա, խորասուզվում նրա տողերի մեջ։ Շարժում է շրթունքները, նրանք ամուր իրար սեղմում, դեմքը կնճռոտվում է, ասես ներքին ինչ-վոր ցավ է ուզում զսպել։ Կարդում է բարձ-

րաձայն, կարդում ե ցածրաձայն։ Կապում ե հնչյունը հնչյունին, վանկը՝ վանկին և ելի։

Դրանով ել չես վերջացնի։ Վորդը կրծում ե ներսից։ Միտքը հրահրում։ Հայրոն պայծառորեն տեսնում ե հեռանկարը։ Հետապնդում։ Անհանգիստ, անհանգիստ։

Պետք եր լինել առաջավոր գիրքերում, ավելի կազմակերպված ու գիտակից։ Այս անգամ մագնիտը կուսակցության շարքերից եր ձգում և հզոր մի ուժ Հայրոյին մղում եր դեպի առաջ։

Այստեղ եր, վոր Հայրոն շատ եր ստուգում իրեն։

Քննում, քննադատում։—Արժանի՞ յե արդյոք։— Արժանի յեմ,—վորոշում եր նա։ Յեվ այստեղ եր, վոր Հայրոյի կարծիքով իրեն պակասում եր շա՜տ բան։ Վանկերը կապելով կարդալը դեռ բավական չի։— Բալաբեգի տղա՛,—հարցնում եր նա ինքն իրեն,—իսկ դու գիտե՞ս ինչ ա դասակարգը, չգիտե՜ս։ Ել ո՞ւր ես առաջ զոռում։—Գիտե՞ս ինչ ա կուսակցությունը, ելի՜ չգիտես...։

Նա միայն գիտեր, վոր կուսակցության մեջ մտնողին այդ հարցերն ել են տալիս։ Իր ականջովն ե լսել, իսկ ինքն ի՞նչ պիտի պատասխանի,—վոչի՜նչ։ Այստեղ եր, վոր նա վորոշում եր, վոր ինքը դեռ արժանի չի կուսակցությանը։—Այբեստն ու կապելով կարդալը քի՜չ ա, պետք ա դասակարգն ել իմանալ, բա՛, Բալաբեգի տղա՛, բրթած թան հո չի՞. մի բաշ առաջ ես քշում, համա առանց դրանց տեղ չե՛ս հասնի,—ասում եր դարձյալ նա ինքն իրեն։

Հիմա յել այդ ուղղությամբ ե աշխատում ու մտատանջվում։

— Ի՞նչ ա դասակարգը։

— Ի՞նչ ա կուսակցությունը,—հարցնում եր նա այս կամ այն կուսակցականին և ատամները սեղմած, միտքը լարած, աշխատում եր ամբողջությամբ յուրացնել նրանց ասածները։

— Ի՞նչ ա դասակարգը,—այս հարցը մանավանդ, նա շատերին տվեց և բոլորի պատասխաններն ել լսեց ուշադրությամբ, և այդ եր պատճառը, վոր ինչպես ներկա ընթերցողը տեսավ, նրա անունը վողջ տպարանում մասսայականացել եր վորպես—Դասակարգ։

Նա իմացավ ի՞նչ ե դասակարգը և հասկացավ ինչ ե կուսակցությունը։ Մաքառեց ավելին իմանալու համար։

Դարձյալ ստուգեց իրեն։ Հաշվեհարդարի նստավ, վոգևորվեց։ Անցավ առաջ։

Հայրոյին ընդունեցին կուսակցության շարքերը։ Վերջին նպատակներն եյին կյանք դառնում։ Արդեն կարդում եր առանց շրթունքներն իրար սեղմելու և տանջվելու, բայց դեռ վոչ սահուն։ Հաճախում եր քաղգրոց։ Ղեկավարում եր շեֆընկերությունը։ Ամբողջ սրտով վառվում եր կուսակցության և դասակարգի համար։ Նվիրված արդյունաբերությանը, կուսակցությանը, հասարակական աշխատանքներին։

Այս բոլորն եյին ահա, վոր յերբեմնի անդրագետ, անորակ Հայրապետին դարձրին վողջ տպարանում սիրված, ժրաջան ու գիտակից —Դասակարգ։

VIII

«Նոյա Տապանի»-ն այնքան ել սովորական ճաշարաններից չեր։ Նա իր «բարի» հարևանությունն եր առաջարկել տպարանին, և ահա, յերկու տարուց

րաձայն, կարդում է ցածրաձայն։ Կապում է հնչյունը հնչյունին, վանկը՝ վանկին և ելի։

Դրանով էլ չէս վերջացնի։ Վորդը կրծում է ներսից։ Միտքը հրահրում։ Հայրոն պայծառորեն տեսնում է հեռանկարը։ Հետապնդում։ Անհանգիստ, անհանգիստ։

Պետք էր լինել առաջավոր դիրքերում, ավելի կազմակերպված ու գիտակից։ Այս անգամ մագնիտը կուսակցության շարքերից էր ձգում և հզոր մի ուժ Հայրոյին մղում էր դեպի առաջ։

Այստեղ էր, վոր Հայրոն շատ էր ստուգում իրեն։

Քննում, քննադատում։—Արժանի՞ յե արդյոք։—Արժանի յեմ,—վորոշում էր նա։ Յեվ այստեղ էր, վոր Հայրոյի կարծիքով իրեն պակասում էր շա՜տ բան։ Վանկերը կապելով կարդալը դեռ բավական չի։—Բալաբեգի տղա,—հարցնում էր նա ինքն իրեն,—իսկ դու գիտե՞ս ինչ ա դասակարգը, չգիտե՛ս։ Էլ ո՞ւր ես առաջ զոռում։—Գիտե՞ս ինչ ա կուսակցությունը, ելի՛ չգիտես...։

Նա միայն գիտեր, վոր կուսակցության մեջ մտնողին այդ հարցերն էլ են տալիս։ Իր ականջով է լսել, իսկ ինքն ի՞նչ պիտի պատասխանի,—վոչի՛նչ։ Այստե՛ղ էր, վոր նա վորոշում էր, վոր ինքը դեռ արժանի չի կուսակցությանը։—Այբբենն ու կապելով կարդալը քի՛չ ա, պետք ա դասակարգն էլ իմանալ, բա՛, Բալաբեգի տղա՛, բրթած թան հո չի՞. մի բաշ առաջ ես քշում, համա առանց դրանց տեղ չե՛ս հասնի,—ասում էր դարձյալ նա ինքն իրեն։

Հիմա յել այդ ուղղությամբ է աշխատում ու մտատանջվում։

— Ի՞նչ ա դասակարգը։

— Ի՞նչ ա կուսակցությունը,—հարցնում էր նա այս կամ այն կուսակցականին և ատամները սեղմած, միտքը լարած, աշխատում էր ամբողջությամբ յուրացնել նրանց ասածները։

— Ի՞նչ ա դասակարգը,—այս հարցը մանավանդ, նա շատերին տվեց և բոլորի պատասխաններն էլ լսեց ուշադրությամբ, և այդ էր պատճառը, վոր ինչպես ներկա ընթերցողը տեսավ, նրա անունը վողջ տպարանում մասսայականացել էր վորպես—Դասակարգ։

Նա իմացավ ի՞նչ է դասակարգը և հասկացավ ինչ է կուսակցությունը։ Մաքառեց ավելին իմանալու համար։

Դարձյալ ստուգեց իրեն։ Հաշվեհարդարի նստավ, վոգևորվեց։ Անցավ առաջ։

Հայրոյին ընդունեցին կուսակցության շարքերը։ Վերջին նպատակներն էին կյանք դառնում։ Արդեն կարդում էր առանց շրթունքներն իրար սեղմելու և տանջվելու, բայց դեռ վոչ սահուն։ Հաճախում էր քաղդպրոց։ Ղեկավարում էր շեֆընկերությունը։ Ամբողջ սրտով վառվում էր կուսակցության և դասակարգի համար։ Նվիրված արդյունաբերությանը, կուսակցությանը, հասարակական աշխատանքներին։

Այս բոլորն էին ահա, վոր յերբեմնի անդրագետ, անորակ Հայրապետին դարձրին վողջ տպարանում սիրված, ժրաջան ու գիտակից—Դասակարգ։

VIII

«Նոյա Տապան»-ն այնքան էլ սովորական ճաշարաններից չէր։ Նա իր «բարի» հարևանությունն էր առաջարկել տպարանին, և ահա, յերկու տարուց

ավել է, ինչ կծկվել և նրան շատ մոտիկ, իր նեղլիկ դուռը հարբած ռեխի նման դեպի տպարանը ծռած։

Բեղնի Գիգոլոն,—այդպես էր կոչում ինքն իրեն «Նոյա Տապան»-ի տերը, և այդպես էլ կոչում էին նրան բոլոր հաճախորդները,—ամեն միջոց ձեռք էր առնում, որ հաճախորդներին ավելի ամուր շղթայի իր յուղոտ ու կեղտոտ սեղաններին։ Նա իր պատերին մեծ-մեծ ու ծուռտիկ տառերով գրել էր՝

Այսօր կանխիկ, վաղն ապառիկ։

Ճիշտ է, այդպես էր գրել նա, բայց... իր հաճախորդների սիրուցը դրդված, և նրանց դրության մեջ մտնելով, պահում էր մի մեծադիր, քրքրված դավթար, որի յուղոտ ու քրքրված յերեսներին, նոսր տառերով գրում էր՝ զանազան անուններ, թվեր գրում էր յերբ քեֆն ուզեր, և ջնջում, դարձյալ յերբ քեֆն ուզեր։ Վորովհետև նա դավթարումը գրում էր, յերբ հաճախորդը լինում էր հարբած, և հաշվեհարդարի նստում նրա հետ, յերբ նա լուրջ էր լինում, կամ մոտավորապես լուրջ էր լինում, այդ պատճառով էլ հաճախ բարդություններ էին առաջանում և անախորժությունների ու կռվի առիթ տալիս։

Այդպիսի դեպքերում Բեղնին մեկ հուզվում էր, մեկ մռայլվում, ճակատին ու դեմքին արհեստական կնճիռներ բարդում, կծում շրթունքները և ապա դեմոնստրատիվ կերպով, գումարը ցույց տվող հաշվեչոթքի հատիկներից մի քանիսը դեն գցում, «զիջում» և հաճախորդին ապացուցում իր հալալությունը։

Բայց Բեղնին իր գործը գիտեր, ինչ որ գնում

էր, հաշվեչոթքից էր գնում, իսկ իրենից ոչինչ չէր գնում։

Նիսյաների դավթարը գրավիչ էր ու գրավիչ, բայց դրա հետ միասին, «Նոյա Տապան»-ն ուրիշ գրավչություն էլ ուներ։ Ճաշարանի մի անկյունում, հնամաշ կարմրավուն վարագույրների հետևում Բեղնին պահում էր իր վաղեմի ընկեր ու հավատարիմ արգանը, որը հաճախ էր հարբած մարդու նման նվվում, և թվում էր դուրեկան, մանավանդ յերբ հաճախորդների տրամադրությունը գինու և ողու ուղեկցությամբ սկսում էր տակավ առ տակավ բարձրանալ։

Հատակը հող է ու թաց, հատակին վոսկորներ, թղթեր, ծխախոտի մնացորդներ ու տուփեր։ Պատերը գորշ են ու բորբոսնած, պատերին՝ գունատված ու կեղտածածկ, եժանագին ու «գրավիչ» նկարներ—մերկ կանայք, ազդրեր և այլն։ Բայց այդ չի էականը, այդ չի Բեղնու ուշադրության առարկան, այլ ճաշարանի Ֆասադը, դախլի գլուխը։ Բեղնին իր «գեղարվեստական» ու «ճարտարապետական» ամբողջ «տաղանդը» գործադրել է այդ ուղղությամբ։ Դախլի գլխին նվիրական արձանի նման կանգնեցրել է, պարոքի դիմաց, մեկից վերցրած ցուցաբանդ շկաֆը, և նրա դարակներում, մեծության ու արժանավորության կարգով շարել գինին, ողին, գարեջուրն ու կոնյակը, կոնսերվները։ Հետո, ներքևի դարակներում, կանաչեղենի պսակով շրջապատված—զակուսկի, պլոնիկ, սուկի և այլն։ Հետաքրքիրը ցուցաբանդ շկաֆի կատարն է, ուր աջից և ձախից ոդի մեջ վոլորվել են խոյի հսկայական զույգ կոտոշները և նրանից անմիջապես ներքև, մի մեխից կախված է Լենինի գունատ նկարը։ Ցուցաբանդ

նկաթի կողքի պատին Ռիկոլի և Ունշլիխտի շատ ժամանակին նկարներն են փակցված, վորոնց վրայից Բեդնին հաճախ քաշ է անում դաստբխանից բերած միսը։

Ամբողջ շաբաթը սեղանի վրայի սպիտակ թղթերը գունափոխվում են, կարմրում, դեղնում, կեղտի մեջ կորցնում են իրենց նախկին գույնը, ամբողջ շաբաթը Բեդնին մատուցում է, գրում, աշխատում, ամբողջ շաբաթը նրա բեխերը գալիս բերանն են խուժում, բայց Բեդնին դրանց վրա ուշադրություն դարձնողը չի։ Ամեն ինչ նա կարգի յե բերում շաբաթ օրը, յերբ գիշերվա ժամի յերկուից հետո սկսում է իր յերեկլի «շաբաթօրյակը»։ Մաքրում է սեղանների յերեսը, թուղթը փոխում, խոհարարի հետ մաքրում հատակը։ Խոհարարին ողի յե հրամցնում և ճամբու դնում ու ինքն անցնում է դախլի գլուխը։

Հաշվեչոթքի վրա գցում է, գցում է։

Գցում է նաղդը, գցում է նիսյան։ Դուրս է հանում ծախսերը, խոհարարի ռոճիկը, «անիծված» նալոգների շաբաթականը։ Ելի գցում է։ Ստուգում, թե «տակին տաս է մնացել», ձախ աչքը փակում է, աջով՝ ժպտում, յուղոտ ձեռներով սրում, վոլորում է բեխերը, իսկական տղամարդու ստաֆանով արագ գցում և ինքն իրեն վոգևորում,—«Հալա դահա լավ կլնի, սպասի մի պաղավատ անող ռսի աղջիկ բերեմ, են վախտ դու թամաշ արա մուշտարին ու ոգուտը»։

Ամեն շաբաթ օր, մանավանդ յերբ վաստակը շատ եր լինում, Բեդնին վորոշում եր «ռսի աղջկա» խնդիրը, բայց կատարել չեր կարող այն և դարձյալ ինքն եր մատուցում, վորովհետև նախ՝ իր ուզածը, սիրունը չեր

գտնում և յերկրորդը՝ աշխատավարձի վրա չեյին հահամաձայնվում։

Ալեքն ու Մխոն վոչ միայն «Նոյա Տապան»-ի «հիմնադիրները» կարող եյին համարվել, այլև նրա ամենօրյա զարդը։ Տպարանից գալիս եյին նաև ուրիշները, գալիս եյին նաև դրսից. խանութպաններ, պատահական մարդիկ, և գինին այդ բոլորովին անծանոթ, յերբեմն գիրքով, աշխարհայացքով ու աշխատանքով հակադիր մարդկանցը, բերում, մոտեցնում, մտերմացնում եր իրար ու բոլորում միևնույն սեղանի շուրջը։ Յեվ նրանք քաղցր ու անուշ զրուցում եյին, և իրար հետ զրուցում եյին գինու բաժակները։

* * *

Վոչ, Ալեքի գլխավերևում փայլող այդ հարյուր մոմյա ելեկտրական լամպը չի, վորն այնպես փառավորել է նրան ու սիրտը լցրել անսահման հաճույքով, վոչ, աշխատանքի պայծառ հեռանկարն ել չի,—այլ նրա սեղանի վրա անտառված գարեջրի շշերն են, վորոնք ժպտում են, պսպղում ելեկտրական լույսի տակ և լցնում Ալեքի, Մխոյի և մյուսների սրտերն անսահման հաճույքով, տղամարդության նախանձախնդրությամբ և անասելի հպարտությամբ։ Քանի այդ շշերն ավելանում են, այնքան ավելանում է վոգևորությունը և քանի այդ շշերը դատարկվում են, բազմապատկվում է թասիբը և հպարտությունը ու բազմապատկվում է լոպպազությունը, ինչպես կասեր վարպետ Ակոբը։

Ալեքը կարգադրել եր դատարկ շշերը չտանել

սեղանի վրայից։ Յեվ զուր տեղը չէր կարգադրել։ Նրանք, այդ դատարկ շշերը ժպտում էյին բերանաբաց, նրանք, այդ դատարկ շշերը լցնում, բովանդակում էյին Ալեքի սիրտը և սիրտն ուռչում էր. նրանք, այդ դատարկ շշերը շա՛տ բան էյին ասում Ալեքին։

— Քառասուն տարի էս աշխարհումն ապրող մա՛րդ եմ,—տասը մատներով խորոված մեծ վոսկորը բռնած կրծելով, ծոր տվեց Ալեքը,—ամեն սրջանաության մեջ մտած, ելած մարդ եմ, համա յես ձեզ ասում եմ, վոր կնիկարմատին պետք ա շա՛տ մուղայիթ լինել, գյա՛մը, գյա՛մը ձեռումդ պինդ պահե՛լ, թե չե վայն եկել ա գլխիդ...—բերանը ծռմռելով վերջացրեց նա և ընդգծված ագահությամբ շարունակեց հարձակումը վոսկորի վրա։

— Դրո՛ւստ ա, դրո՛ւստ։

— Զուր չի ասած թե—

— Մարդո՛ւ գլխին, միշտ պատուհա՛ս,
Պատիժ ե կնի՛կը...
— Ռասպո՛ւտինին շապի՛կ կարեց
Նիկոլի կնի՛կը...

Նվվացին սեղանակիցները և գարեջրի բաժակները հաստատեցին Լոք-լոք Ալեքի «փիլիսոփայությունը»։

— Բեղնի՛, յես քու հորդ հոգում գինի ածեմ, մի արգանիդ բերանը բաց արա չէ՛,—վոգևորվեց Մխոն։

— Մի դարդիման ղայդա՛..

— Ես սհաթին, յես ձեր չարը տանեմ,—ասավ կարմրաքիթ ու արտասվախառն Բեղնին և մոտեցավ իր նվվան բարեկամին։

Արգանը նվվաց ինչ-վոր հարբած յեղանակ և վոգևորությունն իր գագաթնակետին հասավ։

— Բեղնի, քո հոր հոգին... լպստեմ, մի դյուժին էլ պիվա,—արգանի նվվոցի միջից ծոր տվեց Ալեքը։

— Ե՛ս սհաթին։

— Նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, հոգո՛ւո՛ւդ մե՛ռնեմ,
Մա՛լա՛կան սոլի՛դ մեռնե՛մ...
— Յես ինչ ա՛ա՛նեմ, դո՛ւ ա՛ա՛րեցիր,
Նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, հոգո՛ւո՛ւդ մեռնե՛մ˝˝...
— Լցրե՛ք, տղերք ջա՛ն,
— Հոգո՛ւո՛ւդ մեռնե՛մ...
— Տաշի՛, տղերք ջա՛ն...

— Ես մի ստաքանն է՛լ խմենք են մարդի կենացը,—աչքերը շուռ-մուռ տալով ասաց Ալեքը,—վորը վոր տեսնում ա՛ իրա ընկերն ընկե՛լ ա ցխի՛ միջին, ձեռի՛ցը բռնո՛ւմ, քաշում ա՛, վե՛ր ա հանում, և մեկ է՛լ... թաղադան քացի տալիս, գցում ցխի մե՛ջը...

Բոլորը հրհռացին, բաժակները համբուրվեցին սիրողաբար և կոկորդները կլկլացին։

— Տաշի՛, տուշի՛, տաշի՛, տուշի՛,
— Հայ ջա՛ն, հայ ջա՛ն...

Բեղնին ինչպե՛ս կարող եր իր անգին մուշտարիների խաթրին կպչել, նա ինչպե՛ս կարող եր նրանց աղմուկը դադարեցնել, շատ էլ ճաշարանում ուրիշ հաճախորդներ կան։ Բայց մեկ է, նրանց քեֆն էլ ե գալիս ուրախ ժամանցից։

IX

Արշակը վոգելից խմիչքների հետ վոչ մի մտերմություն չուներ. կյանքում յերկու անգամ եր միայն գինի խմել, մեկն իր կարմիր հարսանիքին եր, շատ

ստիպեցին, խմեց և մեկ ել մայիսի 1-ի ընկերական խնճույքին։ Նրան բոլորովին դուր չեր գալիս, ուղղակի զզվում եր գինու կամ ողու հոտն առնելիս։

. Վոչ ընթրելու, վոչ ել խմելու համար նա իր քայլերը դեպի «Նոյա Տապան»-ն ուղղեց։ Տպարանում արտադրական խորհրդակցություն եր, ուշ վերջացավ։ «Նոյա Տապան»-ի մասին շատ եյին խոսում, նա գիտեր, գիտեր նաև այն, վոր տպարանի բանվորներից վոմանք իրենց ազատ ժամանակն այստեղ եյին վատնում և ահա ժողովից հետո նա ցանկացավ անցնել «Տապան»-ի մոտով և նայել։

Հենց նոր եր գլուխը ներս յերկարել դռնից, յերբ մի վայրի աղմուկ պոռթկաց ներսից,—

— Վա՜յ, Արշա՜կ ջա՜ն։

— Վա՜յ, հոգո՜ւդ ղուրբան։

— Արշա՜կ ջա՜ն։

— Վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ, ես ո՞ւմն ենք տեսնում, ես ո՞վ ա գալի, հլա մի թամա՜շ, հլա մի թամաշ ե. յես քու հոգուն սատկեմ, թաղա տեղկոմ ջան...

Արշակը հազիվ եր պատրաստվում իրեն հաշիվ տալու, յերբ Մխոն, շուռ-մուռ գալով, գլորվելով, մոտեցավ դռանը, գրկեց Արշակին, պլռչ-պլռչ համբուրեց ու գլորելով ներս բերավ։

— Բեղնի՛, յես քու հորդ ջիգյարը խորոված անեմ,—ծոր տվեց Ալեքը,— ես մեր ազիզ ղոնաղի համար խորոված բեր։

— Բարո՜վ եկար, Արշակ ջա՛ն, հազա՜ր բարով։

— Արշակի կենացը։ Մի-մի ստաքան Արշակի կենացը։

— Ջա՜ն, ջա՜ն, հայ ջա՜ն։

— Սաղ ըլնես, Արշա՜կ ջան։

— Յես քո հոգո՜ւն ղուրբան։

Նորից բաժակները համբուրվեցին չրխկալով և նորից կոկորդները կլկլացին։

— Չե՞ս խմում, մեր տղա, վո՞նց ա քու բանը,— հանդիմանական տոնով Արշակին դիմեց Ալեքը։

Արշակը գլխով բացասական նշան արավ։

— Վո՞նց թե, բա մենք մեռա՞ծ ենք... բա մենք կնիկարմա՞տ ենք... զոռով, քթիցդ բերանդ կածենք, հա՛...

Արշակն զգաց, վոր խուսափելն անհնար ե, վերցրեց գարեջրով լի բաժակը և մեծ զզվանքով խըմեց կիսի չափ ու յերբ ուզում եր յետ բերել բաժակը բերանից, Ալեքը նրա հատակից ամուր բռնած, սեղմում եր շրթունքներին ու մռնչում,—

— Մինչև տա՜կը, մինչև տա՜կը...

— Մինչև տա՜կը,—կրկնեցին մյուսները։

Ընդդիմանալն անհնար եր և Արշակը դատարկեց դառն ու անդուրեկան հեղուկը մինչև հատակը։

— Այ մալադե՜ց...

— Այ ըտե՜նց...

— Տղամարդի՜ նման...

— Ո՛վ ել վոր ըլեք ըստեղ, ինչ մասսայի մարդիկ ել վոր ըլեք, յես առաջարկում եմ սաղիդ ել մի-մի ստաքան, վոտնակայց, խմել մեր ընկեր Լենինի կենացը,—վողջ ճաշարանին դիմելով ու բերանը ծռելով ասավ Մխոն։

— Ողորմի իրա արդար հոգուն,—դեմքին տխուր արտահայտություն պատվաստելով ու կարեկցական տոնով ավելացրեց Բեղնին։

Ամեն խավի մարդկանցով լի այդ ճաշարանում մի ճշուկ անցավ, բոլորը վոտքի կանգնեցին։

Զնայած Մխոյի այդ քայլը նրան բոլորովին դուր չեկավ ու վրդովեցրեց, բայց և այնպես, Արշակն էլ վոտքի կանգնեց, բարձրացրեց բաժակը, համերաշխորեն բախեց մյուսներին ու յերբ բոլորը կլկլացնելով խմում եյին, նա կամացուկ սեղանին դրեց իր բաժակը։

— Ամո՛թ, ամո՛թ քեզ, Արշա՛կ, ընկեր Լենինի կենա՛ցն էլ չե՛ս խմում...

— Վոր լեղի յել լիներ, գետին չպիտի դնեյիր։

— Ամո՛թ քեզ, ամո՛թ...

Ի՞նչ անի Արշակը։ Պետք եր համակերպվել և նա մեծ դժվարությամբ դատարկեց և յերկրորդ բաժակը։

— Ուռա՛, ուռա՛, տո՛ւշ...—ծոր տվեց Ալեքը։

Մեծ աշխուժով կրծում եյին վերջին վոսկորները և չրխկացնում բաժակները։

* * *

Հանդիպակաց սեղանի շուրջն արդեն յերկրորդ ժամն ե, ինչ նստած խմում և Ալեքենց սեղանի ուրախությանն են մասնակցում տպարանին հարևան յերկու խանութպանները։ Նրանք համերաշխորեն արձագանքում են Ալեքենց բոլոր բաժակաճառերին։

— Ցես քու ըսենցն ու ընենցը... Բեդնի՛, ըստեղ արի,—վրա բերեց Ալեքը։

Բեդնին յեկավ համարյա չոքեչոք։

— Են լավ տղերանցը մի դյուժին պիվա տուր ինձանից,—դեպի խանութպանները ցույց տալով ասավ նա։

— Ե՛ս սհաթին։

Հրամանը կատարվեց և խանութպան հարևաններն աչքերի գիշատիչ փայլով դիմավորեցին շշերին։

Այստեղ եր, վոր Արշակը զայրացավ, այստեղ եր, վոր նա վրդովվեց։ Զզվաց «Տապան» գալը։ Այժմ ի՞նչ անի, գնալ չի կարող, գերվել ե հարբած բազուկներում, միայն էլ վրդովեցուցիչ ե։ Ի՞նչ անի, ինչպես դուրս գա այս դրությունից։ Մնում եր համոզել և փորձել, բոլորին միասին դուրս բերել այդ վորջից։

Այդ ուղղությամբ սկսեց աշխատել։ Արդեն բոլոր շշերը դատարկվել եյին, վերջին վոսկորները մաքրվել մի միացորդներից և Արշակի առաջարկը՝ տուն գնալու մասին համարյա ընդունելության եր արժանանում բոլորի կողմից, յերբ չորեքթաթ՝ սեղանին մոտեցավ Բեդնին, կախեց իր կարմրած, պղպեղի նման քիթը սեղանի վրա և յերկարեց մի շիշ կոնյակ․

— Նրանք տվին,—ասավ և ձգվեց։

Բոլորը դեպի խանութպանները դարձան, վորոնք նայում եյին խոշոր բարերարություն կատարած մարդու ինքնապարար ժպիտով։

Ինչպե՛ս վրդովվեց Արշակը, ինչպե՛ս գազազեց, ծնոտը դողում եր հուզմունքից ու մատները ջղայնությամբ տրորում եյին սեղանի յերեսի կեղտոտ թուղթը։ Բայց նա վոչինչ անել չեր կարող, պետք եր համբերել միայն։

Արագով սկսված ու գարեջրով շարունակվող հարբեցողության պաշտամունքը կոնյակով էլ պսակվեց և բոլորն օրորվելով վեր կացան, իրենց զգայարանների ու նյարդերի սանձերն ալքոհոլի քմահաճ ձեռներում թողած։

Ամեն խավի մարդկանցով լի այդ ճաշարանում մի շշուկ անցավ, բոլորը վոտքի կանգնեցին։

Չնայած Մխոյի այդ քայլը նրան բոլորովին դուր չեկավ ու վրդովեցրեց, բայց և այնպես, Արշակն էլ վոտքի կանգնեց, բարձրացրեց բաժակը, համերաշխորեն բախեց մյուսներին ու յերբ բոլորը կլկլացնելով խմում էյին, նա կամացուկ սեղանին դրեց իր բաժակը։

— Ամո՛թ, ամո՛թ քեզ, Արշա՛կ, ընկեր Լենինի կենա՛ցն էլ չե՛ս խմում...

— Վոր լեղի յել ըլներ, գետին չպիտի դնեյիր։

— Ամո՛թ քեզ, ամո՛թ...

Ի՞նչ անի Արշակը։ Պետք եր համակերպվել և նա մեծ դժվարությամբ դատարկեց և յերկրորդ բաժակը։

— Ուռա՜, ուռա՜, տո՛ւշ...—ծոր տվեց Ալեքը։

Մեծ աշխուժով կրծում եյին վերջին վոսկորները և չրխկացնում բաժակները։

* * *

Հանդիպակաց սեղանի շուրջն արդեն յերկրորդ ժամն ե, ինչ նստած խմում և Ալեքենց սեղանի ուրախությանն են մասնակցում տպարանին հարևան յերկու խանութպանները։ Նրանք համերաշխորեն արձագանքում են Ալեքենց բոլոր բաժակաճառերին։

— Յես քու ըսենցն ու ընենցը... Բեդնի՛, ըստեղ արի,—վրա բերեց Ալեքը։

Բեդնին յեկավ համարյա չոքեչոք։

— Են լավ տղերանցը մի դյուժին պիվա տուր ինձանից,—դեպի խանութպանները ցույց տալով ասավ նա։

— Ե՛ս սհաթին։

Հրամանը կատարվեց և խանութպան հարևաններն աչքերի գիշատիչ փայլով դիմավորեցին շշերին։

Այստեղ եր, վոր Արշակը զայրացավ, այստեղ եր, վոր նա վրդովվեց։ Զղջաց «Տապան» գալը։ Այժմ ի՞նչ անի, գնալ չի կարող, գերվել ե հարբած բազմություն, մնալն էլ վրդովեցուցիչ ե։ Ի՞նչ անի, ինչպե՞ս դուրս գա այս դրությունից։ Մնում եր համոզել և փորձել, բոլորին միասին դուրս բերել այդ վորջից։

Այդ ուղղությամբ սկսեց աշխատել։ Արդեն բոլոր շշերը դատարկվել եյին, վերջին վոսկորները մաքրվել մսի մնացորդներից և Արշակի առաջարկը՝ տուն գնալու մասին համարյա ընդունելություն եր արժանանում բոլորի կողմից, յերբ չորեքթաթ՝ սեղանին մոտեցավ Բեդնին, կախեց իր կարմրած, պղպեղի նման քիթը սեղանի վրա և յերկարեց մի շիշ կոնյակ.

— Նրանք տվին,—ասավ և ձգվեց։

Բոլորը դեպի խանութպանները դարձան, վորոնք նայում եյին խոշոր բարերարություն կատարած մարդու ինքնապարար ժպիտով։

Ինչպե՜ս վրդովվեց Արշակը, ինչպե՜ս գազազեց, ծնոտը դողում եր հուզմունքից ու մատները ջղայնությամբ տրորում եյին սեղանի յերեսի կեղտոտ թուղթը։ Բայց նա վոչինչ անել չեր կարող, պետք եր համբերել միայն։

Արագով սկսված ու գարեջրով շարունակվող հարբեցողության պաշտամունքը կոնյակով էլ պսակվեց և բոլորն որորվելով վեր կացան, իրենց զգայարանների ու նյարդերի սանձերն ալքոհոլի քմահաճ ձեռներում թողած։

Մոտակա փողոցի անկյունում, ուր պետք է բաժանվեին իրարից, նրանք մոտ մի ժամ կանգնեցին, խոսեցին յերկար, իրար գովեցին և գովեց ամեն մեկն ինքն իրեն, վեր հանեցին իրենց բոլոր արժանիքները, համեմատեցին ուրիշների հետ, դարձյալ գովեցին ու վերջապես բաժանվեցին զանազան փողոցների վրա։

* * *

Գնում է Ալեքը։ Գնում է սանձերն ալքոհոլի ձեռներում։ Յեվ նա քշում է մեկ ձախ, մեկ աջ, մեկ հետ, մեկ առաջ, օրորում թափահարում Ալեքին և դարձյալ քշում։ Աչքերին հագցրել է մի նորագույն ակնոց, վորի տակից իրերը նայվում են այլ գունավորմամբ ու շարժումներով։ Նա իր մեջ զգում է մի գերագույն ուժ, վորի առաջ պարտավոր են խոնարհվել բոլոր շնչավոր ու անշունչ առարկաները, բոլոր մարդիկ…

Մթության միջից, ավլի յեզրին, Ալեքի առաջ ցցվեց մի բարձրահասակ անորոշություն։

Նոր ուժը, նոր վոգին, վոր տիրապետողն եր նրա մեջ, վորը քշում եր նրան մեկ ձախ, մեկ աջ, նա հրահանգել եր Ալեքին լինել նաև բարեսիրտ և ամենասեր։ Յեվ ահա հրահանգում է դարձյալ։

Ալեքը մոտենում է բարձրահասակ անորոշությանը, հինգ քայլի վրա հանում գլխարկը, թափահարում և քաղցրությամբ ծոր տալիս,—

— Բարև՛, ընկեր ջան…

«Ընկերը» չի պատասխանում։

Ալեքն ավելի առաջ է գնում և կրկնում այս անգամ չարացած,—

— Բարև՛ քեզ…

Վոչ մի պատասխան։

Ա՛յս ինչ հանդգնություն։

Ալեքը դարձյալ է առաջանում և արդեն կատաղած վրա յե տալիս,—

— Տո՛, զուռռումսա՛ղ, քեզ հետ չե՞մ, բարև քեզ,— ասում ու ալքոհոլի թելադրությամբ աջ ձեռքը բարձրացնում ապտակելու անմարդավարի «ընկերոջը», ու շըըը՛խկ… ձեռքը խփում անզգա մի կարծրության։

Հեռագրասյունն եր այդ։

Հանկարծակիի գալով ու անասելի ցավ զգալով, Ալեքը մի պահ հետ-հետ գնաց։ Ստուգեց իրեն։ Այդ ինքն եր։ Տեղում օրորվեց մի քիչ և մեկ ձախ, մեկ աջ, մեկ հետ, մեկ առաջ, շարունակեց ճանապարհը ալքոհոլի խելագար տակտով։

Այդ տակտն եր, վոր Ալեքին մղեց նշանավոր անտակտությունների։

Յեվ գնում եր Ալեքը և մրմռում, և հետ եր գնում, և առաջ, և ձախ եր գնում, և աջ, և ստուգում եր իրեն, և դարձյալ գնում եր։

Նորից ալքոհոլն եր ղեկավարում, և նորից Ալեքը յենթարկվում եր անվերապահորեն։ Յեվ ահա, նա հրամայեց Ալեքին կտրել դեմից յեկող անծանոթ անցորդի ճամբան ու վրա պրծնել,—

— Առաջ-առա՛ջ, բարե՛վ, աստծու բարին, ընկե՛ր, հետո յե՛լ, յես քու ըսենցն ու ընե՛նցը… առաջարկում եմ ինձ մի պապիրոս տաս։

Անցորդը կանգնեց մի պահ, չափեց դիմացինին, տեսավ վոր խելագարության չափ հարբած է, զիջեց նրան հայհոյանքը և շարունակեց իր ճանապարհը։

Մոտակա փողոցի անկյունում, ուր պիտի բաժանվեյին իրարից, նրանք մոտ մի ժամ կանգնեցին, խոսեցին չերկար, իրար գովեցին և գովեց ամեն մեկն ինքն իրեն, վեր հանեցին իրենց բոլոր արժանիքները, համեմատեցին ուրիշների հետ, դարձյալ գովեցին ու վերջապես բաժանվեցին զանազան փողոցների վրա։

* * *

Գնում է Ալեքը։ Գնում է սանձերն ալքոհոլի ձեռներում։ Յեվ նա քշում է մեկ ձախ, մեկ աջ, մեկ հետ, մեկ առաջ, օրորում թափահարում Ալեքին և դարձյալ քշում։ Աչքերին հագցրել է մի նորագույն ակնոց, վորի տակից իրերը նայում են այլ գունավորմամբ ու շարժումներով։ Նա իր մեջ զգում է մի գերագույն ուժ, վորի առաջ պարտավոր են խոնարհվել բոլոր շնչավոր ու անշունչ առարկաները, բոլոր մարդիկ…

Մթության միջից, առվի չեզրին, Ալեքի առաջ ցցվեց մի բարձրահասակ անորոշություն։

Նոր ուժը, նոր վոգին, վոր տիրապետողն եր նրա մեջ, վորը քշում եր նրան մեկ ձախ, մեկ աջ, նա հրահանգել եր Ալեքին լինել նաև բարեսիրտ և ամենասեր։ Յեվ ահա հրահանգում է դարձյալ։

Ալեքը մոտենում է բարձրահասակ անորոշությանը, հինգ քայլի վրա հանում գլխարկը, թափահարում և քաղցրությամբ ծոր տալիս,—

— Բարև՛, ընկե՛ր ջան…

«Ընկերը» չի պատասխանում։

Ալեքն ավելի առաջ է գնում և կրկնում այս անգամ չարացած,—

— Բարև՛ քեզ…

Վոչ մի պատասխան։

Ա՛յս ինչ հանդգնություն։

Ալեքը դարձյալ է առաջանում և արդեն կատաղած վրա չե տալիս,—

— Տո՛, զուռռումսա՛ղ, քեզ հետ չե՞մ, բարև քեզ,— ասում ու ալքոհոլի թելադրությամբ աջ ձեռքը բարձրացնում ապտակելու անմարդավարի «ընկերոջը», ու շըը՛խկ… ձեռքը խփում անզգա մի կարծրության։

Հեռագրասյունն եր այդ։

Հանկարծկիի գալով ու անասելի ցավ զգալով, Ալեքը մի պահ հետ-հետ գնաց։ Սթափվեց իրեն։ Այդ ինքն եր։ Տեղում օրորվեց մի քիչ և մեկ ձախ, մեկ աջ, մեկ հետ, մեկ առաջ, շարունակեց ճանապարհը ալքոհոլի խելագար տակտով։

Այդ տակտն եր, վոր Ալեքին մղեց նշանավոր անտակտություններին։

Յեվ գնում եր Ալեքը և մրմռում, և հետ եր գնում, և առաջ, և ձախ եր գնում, և աջ, և սթափում եր իրեն, և դարձյալ գնում եր։

Նորից ալքոհոլն եր ղեկավարում, և նորից Ալեքը յենթարկվում եր անվերապահորեն։ Յեվ ահա, նա հրամայեց Ալեքին կտրել դեմից յեկող անծանոթ անցորդի ճամբան ու վրա պրծնել,—

— Առաջ-առա՛ջ, բարե՛վ, աստծու բարին, ընկե՛ր, հետո յե՛լ յես քու ըսենցն ու ընե՛նցը… տռաջարկում եմ ինձ մի պապիրոս տաս։

Անցորդը կանգնեց մի պահ, չափեց դիմացնին, տեսավ վոր խելագարության չափ հարբած է, գիջեց նրան հայհոյանքը և շարունակեց իր ճանապարհը։

Ալեքն ավելի պաղաղեց ու սկսեց գլորվել նրա հետևից,—

— Ցես քու եսը...

— Ցես քու ենը...

— Կաղնի՛, կաղնի՛, յես քու ըսենցը... կաղնի՛ թե չես ուզում ջանդակդ սաղ-սաղ փռեմ։

Անցորդը գուցե վախից, կամ գուցե անախորժությունը կանխելու նպատակով կանգնեց և համոզիչ տոնով ասավ,—

— Ընկե՛ր ջան, պապիրոս չունեմ, յես ծխող չեմ։

— Ծխող չե՞ս, հա՛... յես քու ըսենցը... առ հա քեզ, վոր ծխող չես,—որորվելով ասավ Ալեքը և քիչ առաջ հեռագրասյունի վրա ցավացրած աջ ձեռքը սկսեց հարվածներ հասցնել անցորդի գլխին, դեմքին, ուր վոր հասնում եր հարբած ձեռքը։

Ալքոհոլը ծափահարում եր։

Ինքնապաշտպանության հետ միասին, անցորդը խռպոտ ու կերկերուն ձայնով սկսեց աղաղակել,—

— Միլիցիոնե՛ր...

— Միլիցիոնե՛ե՛ե՛ր...

Աղմուկից, գիշերվա շորերով դուրս թափվեցին մոտակա տների բնակիչները։ Վրա հասնող միլիցիոները հանգստացրեց նրանց և արդեն իրեն կորցրած Ալեքին առաջն առած, յերիտասարդ անցորդի հետ, առաջնորդեց քաղաքամաս։

Համապատասխան հարց ու փորձից և արձանագրություն կազմելուց հետո, Ալեքին առաջնորդեցին մի այլ տապան, վորը մութն եր ավելի, անհրապույր, վորտեղ վոչ գինի կար, վոչ գարեջուր, ու արգանի մուլտոցին փոխարինում եր քրեական հանցավորների խուխուցը, հայհոյանքներն ու խոսակցությունը։

X

Ինչպես արդեն հայտնի յե ներկա վեպի ընթերցողին, ամեն մի նորություն և անակնկալ տպարանում պատմվում եր առաջինը Բոծբողազի, այդ նույն ինքը, գրաշար Սեդրակի կողմից։ Նա սովոր եր դեպքերը բազմապատկել, պատկերազարդել և հաղորդել ուրույն ձևով ու վոճով։

Նշանավոր գիշերվանը հաջորդող այդ նշանավոր առավոտյան, նա դեռ բանվորական համազգեստի թևերը չկռճկած, հազաց մի անգամ, կոկորդը մաքրեց և խորհրդավոր տոնով, շատ կարևոր նորություն հաղորդողի ձևով սկսեց,—

— Սիրելի ընկերնե՛ր, բանը նրանումն ա՛, դե լա՛վ ականջ արեք, յերեկ գիշե՛րը, Նոյա Տապանո՛ւմ, հանդիսավոր նի՛ստ ե գումարված յեղել, պատվավոր նախագահությամբ հայտնի կո՛ւլ-տուրական գործիչ (բութ մատը խփեց կոկորդին) Լոֆ-լոֆ Ալեքի, քարտուղարությամբ նորին մեծություն արաղի շտոֆ Մխոյի և բարեհաճ մասնակցությամբ «Նոյա Տապան»-ի կողմից դեռ նոր առաջ քաշվող մեր հարգելի Արշակի, խանութպանների, առևտրականների և մասամբ նորին...։ Բացման խոսքով հանդես ե յեկել արաղը, հիմնական զեկուցում տվել ե գինին, ըստ եյության արտահայտվել են պիվեն ու լիմոնադը և բուռն ծափերի տակ յեզրափակման խոսք ե առել կարմի՛ր... կոնյակը։

Գրաշարանոցն աշխուժացավ, բոլորը ծիծաղեցին Բոծբողազի այդ հետաքրքիր, նմանողական պատմության վրա։

Ալեքն ավելի պաղաղեց ու սկսեց գլորվել նրա հետևից,—

— Յես քու եսը...

— Յես քու ենը...

— Կաղնի՛, կաղնի՛, յես քու ընենցը... կաղնի՛ թե չես ուզում ջանդակդ սաղ-սաղ փռեմ։

Անցորդը գուցե վախից, կամ գուցե անախորժությունը կանխելու նպատակով կանգնեց և համոզիչ տոնով ասավ,—

— Ընկե՛ր ջան, պապիրոս չունեմ, յես ծխող չեմ։

— Ծխող չե՞ս, հա՜... յես քու ընենցը... առ հա քեզ, վոր ծխող չես,—որորվելով ասավ Ալեքը և քիչ առաջ հեռագրասյունի վրա ցավացրած աջ ձեռքով սկսեց հարվածներ հասցնել անցորդի գլխին, դեմքին, ուր վոր հասնում էր հարբած ձեռքը։

Ալքոհոլը ծափահարում էր։

Ինքնապաշտպանության հետ միասին, անցորդը խռպոտ ու կերկերուն ձայնով սկսեց աղաղակել,—

— Միլիցիոնե՛ր...

— Միլիցիոնե՜ե՛ր...

Աղմուկից, գիշերվա շորերով դուրս թափվեցին մոտակա տների բնակիչները։ Վրա հասնող միլիցիոները հանգստացրեց նրանց և արդեն իրեն կորցրած Ալեքին առաջն առած, յերիտասարդ անցորդի հետ, առաջնորդեց քաղաքամաս։

Համապատասխան հարց ու փորձից և արձանագրություն կազմելուց հետո, Ալեքին առաջնորդեցին մի այլ տապան, վորը մութն էր ավելի, անհրապույր, վորտեղ վոչ գինի կար, վոչ գարեջուր, ու արգանի մալտոցին փոխարինում էր քրեական հանցավորների խոխոցը, հայհոյանքներն ու խոսակցությունը։

X

Ինչպես արդեն հայտնի յե ներկա վեպի ընթերցողին, ամեն մի նորություն և անակնկալ տապանում պատմվում էր առաջինը Բոքբողաքի, այդ նույն ինքը, գրաշար Սեդրակի կողմից։ Նա սովոր էր դեպքերը բազմապատկել, պատկերազարդել և հաղորդել ուրույն ձևով ու վոճով։

Նշանավոր գիշերվանը հաջորդող այդ նշանավոր առավոտյան, նա դեռ բանվորական համազգեստի թևերը չկոճկած, հազաց մի անգամ, կոկորդը մաքրեց և խորհրդավոր տոնով, շատ կարևոր նորություն հաղորդողի ձևով սկսեց,—

— Սիրելի ընկերնե՛ր, բանը նրանումն ա՛, դե լա՛վ ականջ արեք, յերեկ գիշե՛րը, Նոյա Տապանո՛ւմ, հանդիսավոր նի՛ստ է գումարված յեղել, պատվավոր նախագահությամբ հայտնի կո՛լ-տնտեսական գործիչ (բութ մատը խփեց կոկորդին) Լոֆ-լոֆ Ալեքի, քարտուղարությամբ նորին մեծություն արաղի շտոֆ Մխոյի և բարեհաճ մասնակցությամբ «Նոյա Տապան»-ի կողմից դեռ նոր առաջ քաշվող մեր հարգելի Արշակի, խանութպանների, առևտրականների և մասամբ նորին...։ Բացման խոսքով հանդես է յեկել արաղը, հիմնական զեկուցում տվել է գինին, ըստ եյության արտահայտվել են պիվեն ու լիմոնադը և բուռն ծափերի տակ յեզրափակման խոսք է առել կարմի՛ր... կոնյակը։

Գրաշարանոցն աշխուժացավ, բոլորը ծիծաղեցին Բոքբողաքի այդ հետաքրքիր, նմանողական պատմության վրա։

— Հա, վերջը, կոնյակի ժամանումից հետո, եդ խմիչքներն իրար վրա հավաքվելով, փորներումը թունդ վեճի յեն բռնվում, ղալմաղալ, տուր ու դմբոց, ու վերջն էլ միաձայն մի ռեզալյուցիա յեն ընդունում, այնպիսի մի ռեզալյուցիա, վոր քարի վրա ընկնի կճալցնի: Բոլորն էլ հարյուր տոկոսով յենթարկվում են եդ ռեզալյուցիային և կատարում նրա բոլոր պունկտերը:

— Եդ ռեզալյուցիան, սիրելի ընկերներ, մեր Լոբ-լոբ ախպորն առաջարկում ե բոլոր շնչավոր ու անշունչ առարկաներին գլուխ տալ, բարևել: Գլուխ տալ և հազար ու մի բան: Մեր Լոբ-լոբ ախպերն էլ դեմ գալով մի ստոլբի, գլխարկը հանելով բարևում ա, և տեսնելով, վոր դիմացինն իրան բանի տեղ հաշիվ չի անում, իրա բարևին չի պատասխանում, տուր վոր կտաս, տուր վոր կտաս, սիլլի տակ ե առնում եդ խեղճ... ստոլբին:

Գրաշարանոցը հռհռաց միաբերան:

Բոշբողազը նույն հետաքրքիր ձևով ու պատկերացումով պատմեց նաև Ալեքի վերջին հերոսության ու քրեական հանցավորների «ծոցումը գիշերելու» պատմությունը և խորհրդավոր կերպով վերջացրեց,—

— Այժմ, սիրելի ընկերներ, հայտնի կուլ-տու-րական գործիչ Ալեքը հանգստանում և կազդուրվում ե առաջին քաղաքամասի քրեական բաժնում:

Գրաշարանոցը դարձյալ ծիծաղեց:

— Թե դրուստն ուզում եք իմանալ, եդ սկի յել ծիծաղելու բան չի,—հանդարտ տոնով ասավ վարպետ Ակոբը,—եդ մեր բոլորիս ցավն ու պատիժն ա, պարզ հայտնի յա, վոր եդ ամոթը մերն ա, մեր սաղ բան-

վորներիս: Մենք պետք ա մտածենք, պետք ա մի ճար գտնենք, դրանց առաջն առնելու, դրանց խելքի բերելու համար:

— Ի՞նչ ես առաջարկում, ա՛յ հայ,—վրա տվավ Բոշբողազը:

— Են, վոր դու մի քիչ ձենդ քեզ քաշես և գյավազությանդ վե՛րջ տաս:

— Հետո՞:

— Հետո յել են, վոր դրանք էլ բալքի աբռու ունենա՛ն ու եդ անտեր «տապանից»-ը ձեռ քաշեն:

— Ո՞վ ա բան ասել, թող աբռու ունենան, թող ձեռ քաշեն,—ասավ Արսենը:

— Մենք պետք ա ոգնենք:

— Ո՞վ ա բան ասել, ոգնենք:

— Քիչ ենք ոգնե՛լ, քանի հետ ենք ասել, ճար չկա:

— Ընկերավարի յել ասինք չեղավ, պաշտոնական էլ ասինք չեղավ, էլ մենք ինչ անենք, հո Ցալչու մոտ չենք գնալու, յա թե չե դրանք յերեխաներ հո չեն: Վոր չեն հասկանում, մենք ինչ անենք:

— Ցես են գիտեմ, վոր դրանց վրա զուր տեղը ժամանակ ենք կորցնում, բան չի դուրս գա...

— Ըտենց չի, ընկերնե՛ր, ըտենց չի՛,—համոզիչ տոնով շարունակեց վարպետ Ակոբը,—դուշ հո չեն, վոր ըտենց մի անգամից բաց թողանք, դրանք էլ մեզ նման մարդիկ են, բանվորներ, պարզ հայտնի յա, վոր մենք դեռ շատ պետք ա աշխատենք դրանց վրա: Շատ էլ ասենք, թե նրանք խմելուց ձեռ չեն ուզում վեկալել, եդ հալա չի նշանակում, վոր մենք դրանցից պտի ձեռ վեկալենք: Պետք ա ամեն կերպ աշխատենք դրանց եդ չար ճանապարհից հանել:

— Ջոր ճյուղը, գիտես ինչ բան ա, չոր ճյուղը,— մեջ ընկավ Պուճուր Ակոբը,— մի չծռես, չի կարելի, չոր ճյուղը չի ծալվի, զուր տեղն ինչ ես միսյոնների նման քարոզ կարդում, ա՛յ հայ։

Թիթեղե թևերը բռռում են պատուհանի վերևում, ժամացույցը բաբախում է համաչափ ու ցրվածքն ընթանում է Ալեքի «քաջագործությունների» շուրջն սկսված վիճաբանությամբ։

* * *

Մեքենայական բաժնումն էլ խոսակցությունը նույն նյութի շուրջն էր սկսվել։ Այստեղ էլ յերիտասարդ տպագրիչ Մարտիրոս Ֆընդըքյանն էր վրդոված խոսում.—

— Բանվորին անունը կարատավորեն։ Աս չափ ալ խմել կըլլա՞։ Ջանըմ ատոնք մա՛րդ չեն, ատոնց տեղը մեր բանվորական շարքերը չէ՛։ Յես Սանդրոյին տեղն ըլլայի նե, տաս անգամ գործատունեն վոնդեր եյի։ Սա մեր Արշակն ալ չի խորհիր, վոչինչ չի ըներ ջանըմ, սենդիկայեն[1] վռնտե զոնե։

Մարտիրոս Ֆընդըքյանը մոտ քսանհինգ տարեկան, վառվռուն յերիտասարդ է։ Հազիվ յերրորդ ամիսն է, ինչ նա ներգաղթողների հետ Հունաստանից յեկել և աշխատում է տպագրական բաժնում, վորակավոր տպագրիչի պաշտոնով։ Դեռ Հունաստանում, տիրող կարգերի ծանր մղձավանջի տակ, մտել է կոմկուսակցության շարքերը և դարձել նրա նվիրված մարտիկը։ Խորհրդային իշխանության ամենահասարակ ինչին նայում է վորպես սրբություն։ Մոլեռանդ կոմունիստ է։ Սիրտը կտոր-կտոր է լինում, յերբ տեսնում է, վոր

[1] Խոսքը պրոֆմիության մասին է։

Ալեքն ու Մխոն փոխանակ նվիրվելու սոցիալիստական շինարարությանը, ալքոլին են յերկրպագում։

— Թքած ատոնց վրա,— նորից բորբոքվեց Ֆընդըքյանը, վարպետ Աբրահամին ու Դասակարգին դառնալով,— ջանըմ ատոնք բարոյականություն չունի՛ն, ատոնք մարդիկ չե՛ն, չե՛ն խպնիր, ողին թեյի բաժակով կխմեն, հեռագրասյունին ապտակ կքաշեն, անմեղ անցորդները կծեծեն, քաղաքին կարգը կխանգարեն, վոստիկանատուն կերթան ու դահա չե՛ն խըպնիր։ Թո՛ւհ, թո՛ւհ սուռաթընըզա սիգըն։ Վարպե՛տ, համա կսեն սա մեր Արշակն ալ հետերնին յեղած է, ինչ կսես վարպետ, ճի՞շտ կսեն, հավատալու՞ չե...

— Կարող ա պատահել, ամա դժվար թե նա խմելու համար գնացած ըլնի։ Իրիկունը մեկտեղ ժողովի եյինք, ուշ վերջացավ, կարող ա ուժին անելու համար ա գնացել ու դրանց ճանկն ընկել։ Դա ըտենց բաներից գլուխ չունի, չէ՛...

— Դրուստ ա՛, դրուստ ա՛,— հաստատեց Դասակարգը։

— Ջանըմ սա ճաշարանն ինչու՞ հոս թողուցեր են, ինչու՞ չեն խորհիր ասոր մասին։ «Նոյա տապա՛ն», անունին նայե, ինչ ալ անուն դրեր են վրան։ Առաջ եդ փեզավանգին դուռը գափամից ընելու չէ...

— Դրուստ ա, դրուստ ա ասում,— դարձյալ հաստատեց Դասակարգը։

Ֆընդըքյանը դեռ յերկար տաքանար գուցե, բայց արդեն մեքենան յուղելը վերջացրեց և անցավ տպագրությանը, Դասակարգն էլ՝ իրենը։

Մեքենաները չափ ընկան և հաճելի աղմուկը բռնեց վողջ բաժանմունքը։

* * *

Սանդրոն վրդովված ներս մտավ Արշակի մոտ և սկսեց գանգատվել.

— Բե մատաղ, հոլսալես հատավ, չես սրանց հետ ի՞նչ անեմ։

— Բոլոր ուշացած ժամերի փողը պահիր,— ասավ Արշակը,— մենք էլ մեր գծով ինչ հարկավոր է կանենք։

— Բանը պահելը չի, հասկանո՞ւմ ես. բա էս քար ու հանդ տեղը հա էս ղայդի քարվանսարա՞ պիտի դառնա, բա կարգ ու կանոն չպիտի՞ լինի էստեղ, ով ուզենա ուշանա, ով ուզենա գործի չգա, ով ուզենա հարբած տպարան գա, բա սրա վերջը ի՞նչ ա լինելու։ Բա տեղկոմն ինչո՞ւ ենք ընտրել, որ դրանց դեմ էլ ոչինչ չի անում։ Չեմ հասկանում, ախպեր...

— Այդ խայտառակությունների մասին մենք մտածել ենք, և դու զուր տեղն ես գործարկոմին քննադատում, որը քո ֆունկցիաների մեջ չի յել մըտնում։

— Ի՞նչ եք մտածել, որ քանի գնում, կարգ ու կանոնը վերանում ա։

— Ոչի՛նչ, վերջը լավ կլի՛,— պաշտոնական տոնը կատակի վերածելով, ավելացրեց Արշակը։

— Է՛, վերջը լավ կլի, էդ ա, էլի՛,— վրդովվեց Սանդրոն և դուռն ամուր փակելով, դուրս գնաց. նրան դուր չէր գալիս, երբ լուրջ գործը կատակի էին վերածում։

Արշակը երկար մտածեց։ Հարցրեց վարպետ Ակոբին, Դասակարգին, Ալուն, Բաբաջանին, և վերջապես համաձայնեցնելով գործարկոմի ամբողջ կազմի հետ,

վորոշեց Ալեքի ու Մխոյի հարցը քննության դնել հաջորդ ուժա բանվորական ընդհանուր ժողովում։

* * *

Ալեքն այդ օրը գործի չեկավ։

Նրան մինչև կեսօրը պահեցին միլիցիատանը և խիստ հանդիմանության յենթարկելով ու իր արարքները չկրկնելու համար ստորագրություն վերցնելով, բաց թողին։

Տուն գնաց։ Գոռգոռաց կնոջ վրա։ Քաշքշեց, հայհոյեց։ Տնքալով պառկեց անկողնու վրա, վոտները փռեց, չնայած կնոջ փաղաքշական տոնին ու թախանձանքներին, վոչինչ չասեց նրան կատարվածի մասին, ելի գոռգոռաց,—«Կնիկարմատի ինչ գործն ա տղամարդու հաշիվներում խառնվի՛»—բղավեց նա և ապա սկսեց խռմփալ։

Իսկ Մխոն տպարան յեկավ յերկու ժամ ուշ, ուռած, կարմրած աչքերով ու գունատված։

— Բարև՛վ հազար բարի՛, նորին մեծություն առաջի շտո՛Ֆ, վո՞նց ես, քեֆդ, հալդ, էդ վոնց ա՛, վոր դու յել միլիցիատուն չե՞ս ընկել,—վրա պրծավ Բոբողազը։

— Վո՞նց թե...

— Վոնց թե՛, բա՛, էն մի թայդ միլիցիատանը քե՛ֆ ա քաշում, Ալեք—Մխո և Ընկերության տոնն է, իսկ դու խաբա՛ր չունես, այ քեզ ակտի՛վիստ,—շարունակեց Բոբողազը։

Յեվ իսկապես Մխոն տպարանում միայն իմա-

ցավ իր սրտակցի «քաջագործությունները»։ Ընդհանուր կատակի, ծաղր ու ծանակի չենթարկվեց։

Բոչբողազն ուժերի գերազանց լարումով շարունակում էր։

* * *

Բանվորական ընդհանուր ժողովն է հավաքվել։

Կեպիներ, կարմիր թաշկինակներ, ժպտուն, պայծառ հայացքներ, ժպտուն դեմքեր։

Գալիս են նրանք, հավաքվում են, և ժողովատեղին թնդում է աղմուկից։

Պայծառ, հեռանկարով լի հայացքներ, կայտառ դեմքեր և ելի։

Սպասում են անհամբեր։ Առանձին շրջաններ այս ու այն անկյունում։ Հուզված խոսում են բոլորը։ Օրակարգում դրված են ուշացումների, անկարգապահության, և դրա հետ կապված մի շարք այլ հարցեր, վորն ավելի շուտ նշանակում է Լոֆ-լոֆ Ալեքի, Մխոյի հարցը, վորոշ հավելումներով։

Բոլորն արդեն ծանոթ են Ալեքյան «քաջագործություններին» և տեղյակ «Ալեֆ-Մխո յեվ Ընկերության» գործունեությանը, ինչպես կասեր Բոչբողազը։

Ժողովը բաց արեց Արշակ Հարիկյանը, գործարկոմի նախագահը։ Կարճ ու շփոթ խոսեց նա։ Խոսեց հարբեցողության, անկարգապահության և ուշացումների մասին։ Խոսքերը հնչում էին ծանր ու հատիկ-հատիկ, և նա ասում էր.

— Մեր ընկերները խայտառակ վարքի մեջ են, փոխանակ իրենց ազատ ժամանակը բանվորական ակումբներում, կարմիր անկյուններում անցկացնելու, գինետներումն են քաշ գալիս։

— Իսկական կարմիր անկյունը էնտեղ է,— բացականչեց Բոչբողազը,— կարմիր գինին էլ էնտե՛ղ։

Բոլորը ծիծաղեցին։

— Իսկ դո՞ւ։

— Իսկ դու։

— Պակաս չե՞յիր կոնծում։

— Քո մասին էլ խոսա,— բացականչեցին Ալեքն ու Սիրական Կոստանովը, Արշակին դիմելով։

— Ա՛յս րոպեյիս, այդ մասին էլ կասեմ,— շարունակեց Արշակը,— բավական չի, վոր իրենց վերջին կոպեկը տալիս են միկիտանին, բավական չի, վոր ուշադրություն չեն դարձնում իրենց ընտանիքների վրա, դեռ ես բոլոր խայտառակությունները բավական չեն, դեռ եդ ընկերները սիստեմատիկ կերպով խախտում են աշխատանքի դիսցիպլինան, ուշանում են աշխատանքից, քամակից հարված հասցնում արդյունաբերությանը, և դեռ եդ բոլորի՜ց հետո փողոցներում խայտառակ խուլիգանություններ անելով, արատավորում են մեր բանվորության անունը։

Արշակը խոսում էր հուզված, նրա ձեռքը և ծնոտը դողում էին։ Չնայած խիստ ակնարկներ արեց, բայց մի տեսակ ամաչեց, կամ նպատակահարմար չգտավ. Ալեքի ու Մխոյի անունները հիշատակելու, չնայած վողջ ժողովը գիտեր, վոր խոսքը նրանց մասին է։

— Յես պատահաբար ընկա այդ վորջը,— շարունակեց Արշակը,— և անձամբ բախտ ունեցա տեսնել

խայտառակությունը։ Ի՞նչ խայտառակություն է, ընկերնե՛ր։ Բանվորի և սպեկուլյանտի խայտառակ դաշինքն է ամրանում այնտեղ։ Խմում են իրար կենաց, բանվորն ու սպեկուլյանտը, խմում, և իրար գործերի հաջողություն ցանկանում։ Իրար հյուրասիրում են դյուժիններով գարեջո՛ւր ու գինի՛։ Յես անձամբ բախտ ունեցա և տեսա, թե ինչպես բանվորական կոպեկներով մի դյուժին գարեջուր լափեցին էդ սպեկուլյանտները, իհարկե, մեր ֆունկցիաների մեջ չի մտնում դրանց էլ քննադատել, բայց յես օրինակ եմ բերում։ Բա սա ամոթ ու խայտառակություն չի՞, բա ի՞նչ է, ընկերներ։ Մենք պարտավոր ենք մտածել, շատ լուրջ մտածել ու էս խայտառակ դրությանը վերջ տալ։

Յերբ Արշակը հուզված կերպով վերջացրեց, քրտինքը վողողել էր նրա ճակատը, և վար էր վազում այտերով։

Հանդես յեկավ վարպետ Ակոբը։

— Ընկերներ, դիփիդ էլ պարզ հայտնի յա, վոր էս մեր տպարանի դիսցիպլինեն շատ փիս հալի յա, գալիս են ուշ, հարբած, գործը փչացնում են, կասես իրանցը չի՛, կասես օտարի գործն ա։ Պարզ հայտնի յա, վոր դրանց էլ լրացնում են մեր աշակերտությունը։ Ջիգյարս կտոր կտոր ա լինում, վոր տեսնում եմ կորպուսը ցրել են ցիցերոյի մեջ և շարվածքը սիպ արել, մարզանն ու ռեգլետն իրար խառնել և ո՞վ ա իմանում էլ ինչ սատանայական բաներ։ Ընկերնե՛ր, յես ասում եմ, վոր պետք ա էս դիփի առաջն առնել, քանի շուտ ա։ Ախպե՛րս, ընկերնե՛ր, ինչ թաքցնենք, դիփիդ էլ պարզ հայտնի յա, վոր մեծ մեղավորներն էս մեր Ալեքն ու Մխոն են, ջահելներն էլ դրանցից օրինակ են քաղում։ Հմի՛, ախպե՛րս, ընկերնե՛ր ջա՛ն, պարզ հայտնի յա, վոր պետք ա շուտ առաջն առնենք, պետք ա դրանց վրա խիստ ըլենք և արժանի դաս տանք դրանց։

Ծափահարություններ։

— Էս դիսցիպլինի հարցը շատ վատ ա մեզ մոտ,— ասավ Սանդրո Փաշայանը, առանց նախագահից խոսք խնդրելու,— մեր յերիտասարդներին քանի՛ հետ եմ ասել, ենպիսի խոսքե՛ր եմ ասել, էլ հայրակա՛ն, էլ պապակա՛ն, յեղբայրական ու ընկերական, բայց օգուտ չի անում էլի՛, օգուտ չի՛ անում...

— Պրծա՞ր,— խիստ ակնարկով ասավ Արշակը, վորն ուզում էր հասկացնել, թե ինչքան էլ վարիչ լինես, մենք էստեղ «Ֆունկցիաներ ունենք» և դու իրավունք չունես առանց խոսք խնդրելու խոսել,— Այժմ խոսքը տալիս եմ ընկեր Դասակարգին։

— Խոսի՛ր, խոսի՛ր Դասակարգ,— բացականչեցին։

— Կխոսա, բա ի՛նչ, Դասակարգը կխոսա, խի պիտի լռա վո՞ր,— ժողովին դառնալով սկսեց Դասակարգը,— ընկերնե՛ր, էս թավուր բան յես չեյիմ տեսել։

— Դե տե՛ս,— բացականչեց Բոշբողազը։

— Սո՛ւս, լաչա՛ռ,— շարունակեց Հայրոն,— էս մեր տղերքը գործը թողած, այրեսը թողած, դասակարգի ինդուստրալիզացեն թողած, կնում խմում են, շուլուղ անում, դիսցիպլինեն վոտի տակ տալի։ Ամոթ չկա, բան չկա։ Մենք էլ կասենաս պրաժեկտորի ժողովուրդ ենք, թամաշ ենք անում ու ծիծաղում։ Բա վո՞նց պտի ըլի սրա վերջը։ Մեր դասակարգը խիստ պետք ա ըլի

խնամ։ Թե չպատժենք դրանց, հա ընենց պտի ոչնչրագուծյուն անեն, բա դրա վերջը ուր պտի հասնի, ես էլ չգիտեմ։

Դասակարգից հետո խոսք խնդրեց Մարտիրոս Ֆընդըքյանը և սկսեց ջղային ու կրակոտ,—

— Եվրոպային մեջ բանվորները բանտերու ու կախաղաններու մեջ կմեռնեն, իրենց դիքթաթուրին հասնելու համար, հոս տեղ, բանվորական իշխանության ատենոք մեր ընկերները ալքոհոլին դիքթաթուրին կվազեն, «Նոյա Տապան» կերթան, սիեքուլյանթին հետ գիրկընդխառն կկոնծեն, յեզը փողոցին մեջ մարդ կապտակեն, գործատունեն ժամերով կբացակային, բանվորական գործին թշնամու աչքով կնային... Ալ ինչպե՞ս սիրտերնիս աջըլլանմիշ չըլլա, ինչպե՞ս համբերությամբ նայենք սա խայտառակություններուն վրա։

— Ատոնց տեղը հոս չե,—ավելի տաքացած շարունակեց Ֆընդըքյանը,—փողոցն ե ատոնց տեղը, թող յերթան չոուլանմիշ ըլլան, ինչքան քեֆերնին կուզե։ Ընկերներ, յես կտեսնամ, վոր հոս մեր ղեկավար մարմիններն ալ հանցանք ունին, շատ հանգիստ կնային սա խնդիրներուն, ղանոնք պարապ բաներ կկարծին, թեթև նկատողություն մը, կամ զգուշացում մը և լմընցավ, սակայն վորդը կթողուն կենդանի, վոր ներսեն կրծե։ Հարկ ե ավելի խիստ ու համարձակ ըլլալ։ Յես կառաջարկեմ դուրս վռնդել ատոնց մեր շարքերեն։ Դո՛ւրս։ Մաքրենք մեր բանվորական ընտանիքն անհարազատ ու խորթ տարրերեն։

—Հոս-հո՜ս՜ս՜ս՜...—քթի տակ, հեգնանքով մռլտաց Լոֆ-լոֆ Ալեքը։

Ֆընդըքյանը ծափերի տարափի տակ ավարտեց իր ճառը ու նստավ սաստիկ հուզված։

— Ընկերներ,—հանդարտ տոնով սկսեց Բարաջանը,—որինակի համար, յեթե մի տան երեխեն գնա գողություն անի, յա խուլիգանություն, ումն ա ամոթը, ինարկե, սաղ տանը, մեծին ու պստիկին։ Հմի, որինակի համար, ես մեր Ալեքի ու Մխոյի արածները, ծեմ կմեղադրեն, ինարկե մեր սաղ տպարանների բանվորներիս։ Ընկեր Ֆրնդրքն ասաց, վոր, որինակի համար, դրանց մեր շարքերից հեռացնենք, և շատ էլ ճիշտ ասաց, պետք ա դրանց երկսին էլ մեր պրոֆմիության շարքերից հեռացնենք։ Հետո մեկ էլ յես չեմ հասկանում, ես մեր ընկեր Արշակն եդ մի բանն ինչու չասաց, վորովհետև, որինակի համար, Ալեքը ինն ամսով, իսկ Մխոն ութ ամսով պրոֆմիության տոկոսներն էլ չեն տվե՛լ...

— Բեդնի Գիգոլուն տոկոս տալիս են բոլ չի՛, պրոֆմիությա՞նն էլ տան,—բացականչեց Բոչբողազը։

— Դրուստ վոր,—շարունակեց Բարաջանը,—դրուստ վոր ընենց։ Որինակի համար, մի մարդ, վոր ներքին կանոնադրությանը չի յենթարկվում, դիսցիպլինեն խախտում ա, պրոֆմիության տոկոսները չի տալիս, էլ ի՞նչ պրոֆմիության անդամ կարող ե լինե՛լ, չեմ հասկանում։

Յերբ բոլորն արտահայտվեցին, յերբ բոլորն էլ հրապարակեցին վրդովմունքի իրենց բաժինը, Արշակը յեղած առաջարկությունները ձևակերպեց և քարտուղարը գրի առավ հետևյալ կերպ.—

ԼՍԵՑԻՆ	ՎՈՐՈՇԵՑԻՆ
1. Ալեքսան Վարդանյանի և Մխիթար Քարտաշյանի հարցը։ Արտահայտվեցին ընկ. ընկ. Արշակը, վարպետ Ակոբը, Հայրոն, Ֆընդըքյանը, Բաբաջանը, Միրզյանը, Արտաշը, Արսենը, վորոնք բոլորն էլ շեշտում էյին ընկերների բացասական ընթացքը։	1. ա) Ալեքսան Վարդանյանին, վորպես գործարանային և պրոֆմիութենական դիսցիպլինային անհարգատ և խախտող ելեմենտ, հեռացնել պրոֆմիության շարքերից։ բ) Մխիթար Քարտաշյանին անել խիստ և վերջին նկատողություն և առաջարկել թողնել «Նոյա Տապանը», հարբեցողական թեքումների մեջ չընկնել, և տալ 2 ամիս ժամանակ և խիստ առաջարկել, վոր մացնի պարտք յեղած տոկոսները։ գ) Հանձնարարել տպարանի վարչությանը, ընկեր Սանդրո Փաշայանին, վոր խիստ կերպով հետևի և ուշացողներից ու բացակայողներից պահի բաց թողած պրոգուլի ժամերի փողը։ դ) Հանձնարարել պատի թերթի խմբագրին, վոր թերթի հատուկ էջերում հոդվածներ գրի դիսցիպլինայի, հարբեցողության, ուշացումների մասին և խիստ քննադատի դրանց։

Յերբ Արշակը պատրաստվում էր յեղած առաջարկությունները քվեարկության դնելու, Ֆընդըքյանը տեղից վեր ցատկեց ու բացականչեց,—

— Կցեք, առաջարկություն մ'ալ ցես ունիմ։

— Խնդրեմ,—ասավ Արշակը։

— Ցես կառաջարկեմ բանաձևին մեջ կետ մ'ալ ավելացվի, վոր դիմվի քաղխորհրդին ու խնդրվի, վոր սա «Նոյա Տապանն» է, ինչ գլխկում է, հոս տեղվընքեն հեռացվի և մեր բանվորական մթնոլորտը չապականե։ Անոր բարի դրացիությունը չուզեցի՛նք, ախպա՛ր։

Ֆընդըքյանի առաջարկությունը ծափահարությամբ ընդունվեց և քարտուղարն այն ավելացրեց արձանագրության մեջ։ Բանաձևն ընդունվեց յերեք դեմով և մի ձեռնպահով։

Ժողովը ցրվեց։

Ժպտուն հայացքներ։ Պայծառ դեմքեր։ Ուրախ խմբեր։

Ալեքն ու Մխոն դուրս յեկան գլխիկոր և մռայլ։

* * *

Պատի թերթի խմբագրի ղեկավար Մարտիրոս Ֆընդըքյանը սրամիտ տղա չէր։ Ամբողջ գիշերը քնել չկարողացավ։ Անկողնում պառկած անընդհատ շուռ ու մուռ էր գալիս։ Մտքում պատի թերթի համար շարադրում իր ֆելյետոնը և մտածում ծաղրանկարների մասին, վորոնք բովանդակեյին Ալեքի ու Մխոյի «քաջագործությունների» ամբողջ շարքը։

Հաջորդ որը վոգևորված գործի անցան։ Յերեք որում խմբագրեցին, շարեցին, տպեցին թերթը և «Տպագրիչ»-ի այդ համարը լույս տեսավ առանձին

խնամքով ու մեծ հետաքրքրություն առաջացրեց տպարանում։

Ցընդըքյանի սրամտությունները թերթին տվել եյին առանձին փայլ ու կենդանություն։ Հարբեցողությանը, դիսցիպլինային և այլ խնդիրներին նվիրված միքանի հոդվածներից ու մի ֆելյետոնից հետո, թերթը զարդարված էր նաև սուր ծաղրանկարներով։

Ահա նրանք։

Առաջին նկար.—

Պատկերացված է «Նոյա Տապան»-ի ներսը։ Արգանը։ Բեդնի Գիգոյին։ Ալեքն ու Մխոն գարեջրի բազմաթիվ շշերի վրայով շուռ են յեկել, գրկախառնվել հաստափոր խանութպանների հետ ու համբուրվում։ Նկարի տակ աչքի զարնվող սև տառերով գրված էր.—

«Ամրացնենք դաշինքը...»։

Յերկրորդ նկար.—

Ալեքը լակեյի շորերով, մի ձեռքը կրծքին սեղմած, առևտրականներին է մատուցում ափսեյի վրա շարած շշերը։ Նկարի տակ գրված էր.—

«Յերախտագիտության համեստ նվեր բանվոր դասակարգից»։

Յերրորդ նկար.—

Ալեքը գլխարկը հանած, բարևում է հեռագրասյունին։ Տակին գրված էր.—

«Նոյա Տապանից կարոտագին բարեվ քեզ, ընկեր...»։

Չորրորդ նկար,—

Ալեքն ապտակում է անցորդին։ Տակին գրված.—

«Թե չես ուզում ջանդակդ փռեմ, ինձ պապիռոս տուր...»։

Հինգերորդ նկար.—

Ալեքը գլխիկոր գնում է միլիցիոների առջևից։ Տակին գրված.—

«Մի զոհ յեվս բանվոր դասակարգի շարքերից»։

* * *

«Տպագրիչ»-ի այդ համարն աննախընթաց էր։

Դասակարգը գործից հետո, կանգնած պատի առաջ, լարված ուշադրությամբ կարդում էր թերթը և հաճախ գլուխը թափ տալիս, թե վո՞նց եղպես հաջող ու սրամիտ են գրել հոդվածները։

Բաբողացն իր վոգևորության գագաթնակետն էր ապրում...

խնամքով ու մեծ հետաքրքրություն առաջացրեց տպարանում։

Ցընդըքյանի սրամտությունները թերթին տվել էին առանձին փայլ ու կենդանություն։ Հարբեցողությանը, դիսցիպլինային և այլ խնդիրներին նվիրված միքանի հոդվածներից ու մի ֆելյետոնից հետո, թերթը զարդարված էր նաև սուր ծաղրանկարներով։

Ահա նրանք։

Առաջին նկար.—

Պատկերացված է «Նոյա Տապան»*-ի ներսը։ Ար-գանը։* Բեդնի Գիգոյին։ *Ալեքն ու Մխոն գարեջրի բազմաթիվ շշերի վրայով շուռ են յեկել, գրկախառնվել հաստափոր խանութպանների հետ ու համբուրվում։ Նկարի տակ աչքի զարնվող սև տառերով գրված էր.—*

«Սւմrացնենf դաշինfր...»։

Յերկրորդ նկար.—

Ալեքը լակեյի շորերով, մի ձեռքը կրծքին սեղմած, առևտրականներին է մատուցում ափսեյի վրա շարած շշերը։ Նկարի տակ գրված էր.—

«Ցեrախsագիsուբյան համեսs նվեr բանվոr դասակարգից»։

Յերրորդ նկար.—

Ալեքը գլխարկը հանած, բարևում է հեռագրասյուներին։ Տակին գրված էր.—

«Նոյա Տապանից կարոsագին բարեվ fեզ, բնկե r...»։

Չորրորդ նկար,—

Ալեքն ապտակում է անցորդին։ Տակին գրված.—

«Թե չես ուզում ջանդակդ փոխեf, ինձ պապիrոս sուr...»։

Հինգերորդ նկար.—

Ալեքը գլխիկոր գնում է միլիցիոների առջևից։ Տակին գրված.—

«Մի զոհ յեվս բանվոr դասակարգի շարfերից»։

* * *

«Տպագրիչ»-ի այդ համարն աննախընթաց էր։

Դասակարգը *գործից հետո, կանգնած պատի առաջ, լարված ուշադրությամբ կարդում էր թերթը և հաճախ գլուխը թափ տալիս, թե վո՞նց եղպես հաջող ու սրամիտ են գրել հոդվածները։*

Բոշբողազն *իր վոգևորության գագաթնակետն էր ապրում...*

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

I

Արշակի և պարոն Խաչքարյանի հարաբերությունները գնալով ավելի սերտ էին դառնում։

Պարոն Խաչքարյանը շարունակում էր առաջ մղել գանգատների ու պահանջների շարքը, իսկ Արշակն էլ շարունակում էր նրան լսել լռությամբ, կամ մոտավոր խոստումներ անելով։ Այս հանգամանքը մի կողմից թևավորում, վոգևորում էր պարոն Խաչքարյանին և մյուս կողմից՝ Արշակին լուրջ խորհրդածությունների առիթ տալիս։—«Յես սրա ամեն մի պահանջին հավանության նշան եմ ցույց տալիս, և այնքան է յերես առել, վոր հանդգնում է իմ ներկայությամբ սևացնել ու հայհոյել մեր լավ ընկերներին։ Չե՛, լավ չես անում, Արշակ, էս տեսակ քաղաքավարությունն էլ բանի պետք չի։ Իմ բնավորությունն էլ հեչ բանի նման չի։ Ինչո՞ւ չեմ քաշվում այդ նախկին խոզեյինից, շատ էլ տարիքով, յերկու անգամ մեծ է ինձանից, ի՞նչ արած։ Պետք է պարզ լինել, խիստ, բոլշևիկի նման։ Ինչո՞ւ պարզապես յերեսին չասել, վոր ինքը, պարոն Խաչքարյանը սխալվում է, վոր բանվորական դիկտատուրան չի սիրում նախկին խոզեյիններին շոյել ու մեծարել։ Ինչո՞ւ չասել, վոր իրա՝ Արշակի աչքում Սանդրո Փաշայանն ավելի բարձր է, ավելի գնահատելի,

քան այդ նախկին տուզը։ Չե՛, Արշակ, պետք է ասել, անպայման պետք է ասել, թե չէ այսպիսով բան չի դուրս գա... Բայց այս անգամ այսպես գնաց, սատանան տանի, մյուս անգամ յես անպայման կասեմ»— այսպես ինքն իրեն մտածում, հանդիմանում ու հուսադրում էր Արշակն ամեն անգամ, յերբ պարոն Խաչքարյանը բարեհաճում էր իր անհաճելի ներկայությունից ազատել նրան։ Յեվ ամեն անգամ, յերբ վորոշ ժամանակ էր սահում, ու պարոն Խաչքարյանը դարձյալ իր պահանջներով ու գանգատներով բեռնավորված այցելում էր ընկեր Հարիկյանցին, ինչպես սիրում էր էր ասել նույն ինքը պարոն Խաչքարյանը,—Արշակը հեշտությամբ մոռանում էր իր «ուխտը» և դարձյալ շարունակում նրան լսել փափկած սրտով։

Որեր անցան և շաբաթներ, դարձյալ վճռեց Արշակը, դարձյալ խախտեց իր վճիռը, դարձյալ յեկավ պարոն Խաչքարյանը, դարձյալ խնդրեց։

Սակայն նրա խնդիրները պահանջկոտության ու հավակնոտության փոխվեցին, յերբ Արշակը փորձեց նրան «լծել» և ոգտագործել։

Պարոն Խաչքարյանը հաշվապահի հռչակ էլ էր վայելում։ Իսկ Արշակը բոբիկ էր։ Գործարկոմն էլ հաշիվներ ուներ։ Ինչպե՞ս պահել այդ հաշիվները, դրամական «խայտառակ» այդ քաոսն ինչպե՞ս կարգի բերել, ինչպե՞ս վարել.—ահա խնդիրներ, վորոնք լայն խորհրդածությունների առիթ էին տալիս Արշակին։ Կարիք էլ չկար այդ «բյուրոկրատական» գործի վրա գլուխ ցավացնել, մանավանդ վոր դա իր «ֆունկցիաների մեջն էլ չի մտնում սկի»։ Մնում էր ուրիշ յելք փնտրել և ուրիշ միջոցների դիմել։ Յեվ նա գտավ

առանց հեռուներն ընկնելու։ Մտածեց ու վճռեց, վորպես կոլեկտիվի անդամ, միութենական կարգով պարտականություն դնել նրա վրա անվճար կերպով կատարելու այդ աշխատանքները։ «Ինչո՞ւ չանել,— մտածում եր Արշակը,— չե՞ վոր կուսակցությունն էլ լոզունգ ե տվել բուրժուական մասնագետներին ոգտագործելու մասին»։

Գործի անցավ։

Պարոն Խաչքարյանը, հակառակ Արշակի սպասածին, վոչ միայն չմերժեց, այլև հաճույքով ընդունեց «միութենական» այդ պարտականությունը. նա սրտի անհուն բերկրանքով վողջունեց այդ պատեհությունը, վորը նրան առիթ եր տալիս ավելի մերձենալու, մտերմանալու Արշակի հետ և միևնույն ժամանակ իր «մասնակցությունը բերելու միութենական աշխատանքներին»։

Արշակը պարզապես զարմացած մնաց այդ մարդու նվիրվածության վրա, վորն առանց վորևիցե վարձատրության հանձն առավ կատարել անվճար ու բավականին դժվար այդ պարտականությունը։ «Հրաշալի մարդ ե,— մտածում եր Արշակն ինքն իրեն,— ամբողջովին նվիրված ե մեր գործին, և սրան մինչև հիմա մենք չենք գնահատել։ Յեվ քանի՜-քանի՜ այսպիսիներ են կորչում հաճախ»...

***

Յերեկոները, յերբ հաճախակի նրանք գալիս եյին գրասենյակ հաշիվները կարգավորելու, պարոն Խաչքարյանը դեռ 2-ը 4-ի վրա չգումարած, սկսում եր,—

— Ընկե՛ր Հարիկյանց, ախպե՛ր, վո՞նց պիտի լինի

մեր ճարը, մեր ռոճիկը միշտ ես մեռյալ կետում պիտի մնա։ Դուք շատ լա՛վ եք աշխատում, մասսայակա՛ն, բայց դե, մեզ վրա յել մի քիչ ուշադրություն դարձրեք է՛... Դե յես էլ յերեկվա յերեխեն չեմ, վոր ամեն որ ձեր դեմը կտրեմ ու իմ ռոճիկի մասին խոսեմ, սկի բնավորություն էլ չունեմ նման բաներ անելու։ Հավատացնո՞ւմ եմ ձեզ, յեթե ապրելու միջո՛ց ունենայի, յես սրիկա եյի, յեթե ձեզ այսպես անհանգստացնեյի։ Այնտեղն եմ հասել, վոր ստիպված եմ մորիցս հիշատակ մնացած են քամբախտ ջրաղացն էլ ծախել։ Ի՞նչ անեմ, ճարս ինչ։ Բայց յես ձեզ ասում եմ, յես նույնքան եմ շահագրգռված մեր արդյունաբերությամբ, մեր մասսայական աշխատանքներով, վորքան դուք բոլորդ, վորքան Սանդրո Փաշայանցը, վորքան բջիջի քարտուղար Բաբաջանը և մյուս բոլոր բանվորները։ Յես ձեր թշնամի՞ն եմ, ի՞նչ ե, միանգամից ասեք էլի՛...

— Ի՞նչ եք ասում, ինչե՞ր եք մտածում,— ընդհատեց Արշակը։

— Դուք ինչ ուզում եք ասեք, վո՛չ և վո՛չ, յես ես իշխանության ամենալավ բարեկամն եմ, բայց հաց տվեք, վոր ընտանիքս ուտի՛, խոսքով բարեկամ չեն լինում։ Յես էլ ձեզ նման տնտեսականից եմ մոտենում, յես էլ մի քիչ ընկեր Մարքսից խաբար ունեմ։ Յես չեմ էլ ուզում ինձ գովել, ընկեր Հարիկյա՛նց, եդպես բաների սովորություն էլ չունեմ, դուք ինձ լա՛վ եք ճանաչում և ինքներդ էլ տեսնում եք իմ նվիրված ծառայությունս ես իշխանությանը։ Տեսա՛ք ինչպես ձեր առաջին իսկ խնդիրքից յես հանձն առա կարգավորել մեր մասսայական աշխատանքները, մեր հաշիվները։ Հո ձեզանից փող չպահանջեցի՞։

առանց հեռուներն ընկնելու։ Մտածեց ու վճռեց, վորպես կոլեկտիվի անդամ, միութենական կարգով պարտականություն դնել նրա վրա անվճար կերպով կատարելու այդ աշխատանքները։«Ինչո՞ւ չանել,—մտածում եր Արշակը,—չե՞ վոր կուսակցությունն ել լոզունգ ե տվել բուրժուական մասնագետներին ոգտագործելու մասին»։

Գործի անցավ։

Պարոն Խաչքարյանը, հակառակ Արշակի սպասածին, վոչ միայն չմերժեց, այլև հաճույքով ընդունեց «միութենական» այդ պարտականությունը. նա սրտի անհուն բերկրանքով վողջունեց այդ պատեհությունը, վորը նրան առիթ եր տալիս ավելի մերձենալու, մտերմանալու Արշակի հետ և միևնույն ժամանակ իր «մասնակցությունը բերելու միութենական աշխատանքներին»։

Արշակը պարզապես զարմացած մնաց այդ մարդու նվիրվածության վրա, վորն առանց վորևիցե վարձատրության հանձն առավ կատարել անվճար ու բավականին դժվար այդ պարտականությունը։ «Հրաշալի մարդ ե,—մտածում եր Արշակն ինքն իրեն,—ամբողջովին նվիրված ե մեր գործին, և սրան մինչև հիմա մենք չենք գնահատել։ Յեվ քանի՜-քանի՜ այսպիսիներ են կորչում հաճախ»...

* * *

Յերեկոները, յերբ հաճախակի նրանք գալիս եյին գրասենյակ հաշիվները կարգավորելու, պարոն Խաչքարյանը դեռ 2-ը 4-ի վրա չգումարած, ասում եր,—

— Ընկե՛ր Հարիկյանց, տխուր, վո՞նց պիտի լինի

մեր ճարը, մեր ռոճիկը միշտ ես մեռյալ կետո՞ւմ պիտի մնա։ Դուք շատ լավ եք աշխատում, մասսայական, բայց դե, մեզ վրա յել մի քիչ ուշադրություն դարձրեք ե՜... Դե յես ել յերեկվա յերեխեն չեմ, վոր ամեն որ ձեր դեմը կտրեմ ու իմ ռոճիկի մասին խոսեմ, սկի բնավորություն ել չունեմ նման բաներ անելու։ Հավատացնո՞ւմ եմ ձեզ, յեթե ապրելու միջո՞ց ունենայի, յես սրիկա եյի, յեթե ձեզ այսպես անհանգստացնեյի։Այնտեղն եմ հասել, վոր ստիպված եմ մորիցս հիշատակ մնացած են քամբախտ ջրաղացն ել ծախել։ Ի՞նչ անեմ, ճարս ինչ։ Բայց յես ձեզ ասում եմ, յես նույնքան եմ շահագրգռված մեր արդյունաբերությամբ, մեր մասսայական աշխատանքներով, վորքան դուք բոլորդ, վորքան Սանդրո Փաշայանցը, վորքան բջիջի քարտուղար Բաբաջանը և մյուս բոլոր բանվորները։ Յես ձեր թշնամի՞ն եմ, ինչ ե, միանգամից ասեք ելի՜...

— Ի՞նչ եք ասում, ինչե՞ր եք մտածում,—ընդհատեց Արշակը։

— Դուք ինչ ուզում եք ասեք, վո՛չ և վո՛չ, յես ես իշխանության ամենալավ բարեկամն եմ, բայց հաց տվեք, վոր ընտանիքս ուտի, խոսքով բարեկամ չեն լինում։ Յես ել ձեզ նման տնտեսականից եմ մտանում, յես ել մի քիչ ընկեր Մարքսից խաբար ունեմ։ Յես չեմ ել ուզում ինձ գովել, ընկե՛ր Հարիկյանց, եդպես բաների սովորություն ել չունեմ, դուք ինձ լավ եք ճանաչում և ինքներդ ել տեսնում եք իմ նվիրված ծառայությունս ես իշխանությանը։ Տեսա՛ք ինչպես ձեր առաջին իսկ խնդիրքից յես հանձն առա կարգավորել մեր մասսայական աշխատանքները, մեր հաշիվները։ Հո ձեզանից փող չպահանջեցի՞։

— Չէ...

— Բա տեսնում եք, չէ՞ որ ուրիշը լիներ իմ տեղը, հանձն կառնե՞ր։ Ձեզ եմ ասում, հանձն կառնե՞ր, ճիշտն ասեք։

— Ճիշտ է, ճիշտ է, չէր առնի։

— Ասացեք խնդրեմ, ենքան մեծ-մեծ խոսող ձեր վո՞ր կուսակցական ընկերը հանձն կառներ այսպիսի աշխատանք կատարել և այն էլ... անվճար։ Բա՞ն չունեմ, գիտեն էլ լավ տղերք են, բայց եդ մեկը չէյին անի։

Արշակը լուռ է ու մտախոհ։

— Չէ, չէ, ընկե՛ր Հարիկյանց, ճիշտը պատասխանեցեք, կանեյի՞ն, թե վո՞չ...

— Ճիշտ է, չէյին անի,— մեքենայորեն ասավ Արշակը, նրա ծառայությունը մի կերպ վարձատրած լինելու նպատակով։

— Ա՛յ մալադե՛ց, դե յես էլ եդ եմ ասում էլի՛...

Պարոն Խաչքարյանի «նվիրաբերած» ծառայությունը գործարկումին Արշակին պարզապես փակուղու մեջ գցեց ու կաշկանդեց։ Նա վոչ միայն դադարեց իրեն տված խոստումները կատարելուց,— այն է՝ բոլշևիկյան վճռականությամբ վարվելու պարոն Խաչքարյանի հետ,— վոչ միայն նրա բոլոր առածներին սկսեց հավանություն տալ, այլև կարծես միտք ծագեց նրա մեջ, վորպես հատուցում պարոն Խաչքարյանի «նվիրական» աշխատանքի, ամեն գնով աշխատել պաշտպանել նրա «վտանգված» շահերը տրեստի առաջ և պաշտպանել նրա «մայրական ժառանգության» անձեռնմխելիությունը։ «Ի՞նչ կա վոր,— մտածում էր նա, - մի լավություն է կանենք մարդուն ու դրանից հետո կոգտագործենք նրան, ինչքան ուզենանք»։

Արշակն արդեն վորոշ չափով խոսք էր տվել պարոն Խաչքարյանին, վոր կաշխատի նրա ռոճիկի բարձրացման և սեփական տան սենյակները «Ֆոնդի շուրջկալից ազատելու համար։

Ավելի վոգևորությամբ էր պարոն Խաչքարյանը գցում հաշվեչոթքի հատիկները, և մեծ յեռանդով էր 2-ը գումարում 4-ի վրա։ — «Լա՛վ եմ ճանկս գցել,— մտածում էր նա,— իմ անմեղ աղոճնյակս, յես քո միջոցով բոլոր գործերս գլուխ կբերեմ, ինչքան էլ Թյուրաս, անոգուտ է...»։

«Լա՛վ եմ ձեռս գցել ու լծել սրան,— մտածում էր Արշակը,— ինչ ուզում են ասեն, շատ անվնաս ու բարեխիղճ մարդ է, ի՞նչ անենք, շատ էլ նախկին խազեյին է, բայց վոր նվիրված է աշխատում, այդ փաստ է, ասենք Էնգելսն էլ կապիտալիստի տղա յե յեղել, բայց պակաս Էնգելս է դարձե՞լ։ Չէ, ինչ ուզում են ասեն, պետք է սրան ամուր պահել մեր ձեռքերումը, ափսոս է։ Յես էլ լիովին ոգտագործում եմ սրա մասնագիտությունը, ինչպես մեր կուսակցությունն է հրահանգել։ Բայց այս բոլորի դիմաց հարկավոր է մարդուն գոնե մի լավություն անել, մի կերպ վարձատրել։ Յես փող չեմ առաջարկի, այդ անհարմար է, բայց կաշխատեմ նրա ռոճիկի ու սենյակների համար և այն ժամանակ նա ինչքա՛ն գոհ կլինի ու ինչպե՛ս կսկսի աշխատել...»։

Արշակը կամաց-կամաց կարծես ինքն էլ չիմանալով թե ինչպես, սկսեց զբաղվել պարոն Խաչքարյանի «վտանգված» շահերը պաշտպանելով և նույն Խաչքարյանի «մայրական ժառանգությունը» հովանավորելով։ Նա դիմեց քաղխորհրդին՝ սենյակների հա-

— Չէ...

— Բա տեսնում եք, եթե ուրիշը լիներ իմ տեղը, հանձն կառնե՞ր։ Ձեզ եմ ասում, հանձն կառնե՞ր, ճիշտն ասեք։

— Ճիշտ է, ճիշտ է, չէր առնի։

— Ասացեք խնդրեմ, ենքան մեծ-մեծ խոսող ձեր վո՞ր կուսակցական ընկերը հանձն կառներ այսպիսի աշխատանք կատարել և այն էլ... անվճար։ Բա՛ն չունեմ, գիտեն էլ լավ տղերք են, բայց եդ մեկը չեյին անի։

Արշակը լուռ է ու մտախոհ։

— Չէ, չէ, ընկեր Հարիկյանց, ճիշտը պատասխանեցեք, կանեյի՞ն, թե վո՛չ...

— Ճիշտ է, չեյին անի,— մեքենայորեն ասավ Արշակը, նրա ծառայությունը մի կերպ վարձատրած լինելու նպատակով։

— Ա՛յ մալադե՛ց, դե յես էլ եդ եմ ասում էլի՛...

Պարոն Խաչքարյանի «նվիրաբերած» ծառայությունը գործարկումին Արշակին պարզապես փակուղու մեջ գցեց ու կաշկանդեց։ Նա վոչ միայն դադարեց իրեն տված խոստումները կատարելուց,— այն է՝ բոլշևիկյան վճռականությամբ վարվելու պարոն Խաչքարյանի հետ,— վոչ միայն նրա բոլոր ասածներին սկսեց հավանություն տալ, այլև կարծես միտք ծագեց նրա մեջ, վորպես հատուցումն պարոն Խաչքարյանի «նվիրական» աշխատանքի, ամեն գնով աշխատել պաշտպանել նրա «վտանգված» շահերը տրեստի առաջ և պաշտպանել նրա «մայրական ժառանգության» անձեռնմխելիությունը։ «Ի՞նչ կա վոր,— մտածում եր նա,— մի լավություն ե կանենք մարդուն ու դրանից հետո կոգտագործենք նրան, ինչքան ուզենանք»։

Արշակն արդեն վորոշ չափով խոսք եր տվել պարոն Խաչքարյանին, վոր կաշխատի նրա ռոճիկի բարձրացման և սեփական տան սենյակները «Ֆոնդի շուրջկալից ազատելու համար։

Ավելի վոգևորությամբ եր պարոն Խաչքարյանը գցում հաշվեչոթքի հատիկները, և մեծ յեռանդով եր 2-ը գումարում 4-ի վրա։ — «Լա՛վ եմ ճանկս գցել,— մտածում եր նա,— իմ անմեղ աղավնյակս, յես քո միջոցով բոլոր գործերս գլուխ կբերեմ, ինչքան էլ թպրտաս, անոգուտ ե...»։

«Լա՛վ եմ ձեռս գցել ու լծել սրան,— մտածում եր Արշակը,— ինչ ուզում են ասեն, շատ անվնաս ու բարեխիղճ մարդ ե, ի՞նչ անենք, շատ էլ նախկին խազեյին ե, բայց վոր նվիրված ե աշխատում, այդ փաստ ե, ասենք Ենգելսն էլ կապիտալիստի տղա չե յեղել, բայց պակաս Ենգելս ե դարձե՞լ։ Չէ, ինչ ուզում են ասեն, պետք ե սրան ամուր պահել մեր ձեռքերումը, ափսոս ե։ Յես էլ լիովին օգտագործում եմ սրա մասնագիտությունը, ինչպես մեր կուսակցությունն ե հրահանգել։ Բայց այս բոլորի դիմաց հարկավոր ե մարդուն գոնե մի լավություն անել, մի կերպ վարձատրել։ Յես փող չեմ առաջարկի, այդ անհարմար ե, բայց կաշխատեմ նրա ռոճիկի ու սենյակների համար և այն ժամանակ նա ինչքա՜ն գոհ կլինի ու ինչպե՜ս կսկսի աշխատել...»։

Արշակը կամաց-կամաց կարծես ինքն էլ չիմանալով թե ինչպես, սկսեց զբաղվել պարոն Խաչքարյանի «վտանգված» շահերը պաշտպանելով և նույն Խաչքարյանի «մայրական ժառանգությունը» հովանավորելով։ Նա դիմեց քաղխորհրդին՝ սենյակների հա-

մար։ Մերժեցին։ Համառեց ու պաշտպանեց։ Դիմեց տրեստի վարչությանը՝ ռոճիկի համար։ Մերժեցին։ Համառեց ու պաշտպանեց։

Պարոն Խաչքարյանը քայլ առ քայլ հետևում եր Արշակի «աշխատանքներին» ու հրճվում։

Արդեն վորոշ շշուկներ եյին շրջում բանվորների մեջ։ Խոսում, դժգոհում եյին այն մասին, վոր Արշակն ընկել ե պարոն Խաչքարյանի ազդեցության տակ, դարձել գործիք նրա ձեռին։

Շշուկները գնալով ծավալվում եյին։ Վոմանք պաշտպանում եյին Արշակին, վոմանք պարսավում։

* * *

— Նահապետական ջաղացով սոցիալիզմ չես կառուցի,—ասում եր ամեն անգամ տրեստի նախագահ Սիմոն Յաղությանը,—մեզ հարկավոր են նոր, կատարելագործված մեքենաներ։ Հետամնաց, հետամնաց եք, մ՛յ, օրինակի համա, մեզ լինոտիպ ա հարկավո՛ր, ռոտացիոն, ստերոտի՛պ։ Առանց դրանց բան չի դուրս գա, ինչքան էլ ջաղացներին զոռ տանք։

Նա ամեն կերպ աշխատում եր իր նպատակներն իրագործել և տպարանները մեքենայացնել ու ռացիոնալացման յենթարկել, համոզում եր աջ ու ձախ, խոսում եր բոլորի հետ, ագիտացիա յեր տանում այդ ուղղությամբ։ Արդեն կատարելագործված տպարանի համար կառուցել եր տալիս նոր շենք, բերել եր տվել յերեք լինոտիպներ, վորոնք ահա տարուց ավել եր, ինչ չխչխկում եյին գրաշարանոցում։ Բայց այս բոլորը չեր, պետք եր սկսված գործն ավելի մեծ թափով առաջ տանել ու պսակել հաջողությամբ։

Արդեն վարկավորողներ և ոժանդակողներ գտել եր, մնում եր արտասահման գործուղվել և իր սեփական ձեռներով ու խելքով գլուխ բերել մեքենաների գնումը։

Վերջին շաբաթների ընթացքում նա միայն այդ ուղղությամբ եր զբաղվում։ Տրեստի առօրյա աշխատանքների մասին հոգալը թողել եր արդեն։ Այդ աշխատանքները նա հարմար եր գտնում Սանդրո Փաշայանին հանձնել, վորը և իր բացակայության ամիսներին պիտի վարեր տրեստի նախագահի պաշտոնը, իսկ իր վերադարձից հետո մնար տրեստում, վորպես նախագահի տեղակալ։

Սանդրոն սկզբում առարկեց, դժվարացավ, իր ուժերից վեր համարեց այդ աշխատանքը, բայց յերբ բջիջը նույնպես հարմար գտավ նրան այնտեղ աշխատելու, նա գնաց անտրտունջ և նվիրվեց աշխատանքներին։

— Նահապետական ջաղացով սոցիալիզմ չես կառուցի,—և Սիմոն Յաղությանը ճանապարհ ընկավ դեպի արտասահման։

II

Նույնանման յերեկոներից մեկն եր։ Գործարկոմի գրասենյակում պարոն Խաչքարյանն զբաղված եր թվերը կարգի բերելով, իսկ Արշակը՝ արձանագրությունններն ու թղթերը։

Գործարկոմի անվճար հաշվապահին քաջալերելու համար Արշակը մանրամասն պատմեց իր կատարած բոլոր աշխատանքների մասին. պատմեց, թե ի՞նչ ե ասել քաղխորհրդում, ի՞նչ են պատասխանել, ի՞նչ ե

ասել արևատում, ինչ են պատասխանել: Պատմեց, թե ինքը համաձայն է պաշտպանից, չէր մերժելին, և վերջում պարոն Խաչքարյանին հուսադրեց, որ ամեն միջոցի կդիմի նրա պահանջները դրականորեն լուծելու համար:

Կեղծված ժպիտով պարոն Խաչքարյանը խորը շնորհակալություն և յերախտագիտություն հայտնեց իր «միամիտ աղավնյակին» և կրկնապատկված յեռանդով շարունակեց թվերի համադրումն ու հակադրումը:

Յերբ աշխատանքն ավարտած՝ դուրս եկին գալիս, դեռ տպարանի դռան մոտ պարոն Խաչքարյանն Արշակին դիմեց ու հրավիրեց իր տունն ընթրիքի.—

— Հոգնած ու քաղցած ենք, թե յես, թե դուք, տունս էլ մոտ է, կգնանք, աստված ինչ տվել է կուտենք, ասենք ներողություն, դուք սածուն չեք հավատում, ասենք յանի ծվ ա հավատում, դե խոսք է, ասում ենք. հա, ընթրենք, մի քիչ զրույց կանենք: Լավ պատշգամբ ունեմ այգու վրա, արժե այնտեղ սալաթով արաղ, կամ լիմոնով չայ խմել: Վորը կուզեք: Աղջիկս էլ լավ ջութակ է նվագում, դե ժամանակ կանցկացնենք մի քիչ..

Արշակը չառարկեց: Նա քաղցած էր, ապա առիթը կօգտագործեր և կծանոթանար պարոն Խաչքարյանի տանն ու ընտանեկան կյանքի հետ: Բացի այդ, նրա աղջկա մասին էլ շատ էին խոսում:

Մտերմաբար զրուցելով նրանք հասան պարոն Խաչքարյանի տունը, որը գտնվում էր քաղաքի գլխավոր փողոցներից մեկի վրա:

Էլեկտրական կոճակի հպումից մի քանի րոպե հետո շքադուռը բացվեց և նրանց ընդառաջեց յերիտասարդ ու հնամաշ շորերով աղախինը:

— Խանումդ տա՞նն է,— բոլորովին այլ տոնով ասավ պարոն Խաչքարյանը: Արշակն այդ տոնը նոր միայն լսեց նրանից:

Աղախինը գլխով դրական նշան արավ:

«Խանումդ տա՞նն է»,—այս բառերը, և մանավանդ այն տոնը, որով ասվեցին նրանք, շատ խորթ ու թշնամական հնչեցին Արշակի ականջին: Այս ո՞ւր է ընկել նա, այս ի՞նչ աստիճաններով է բարձրանում: Արդյոք սա նրա տե՞ղն է: Ի՞նչ վտանգավոր ճանապարհ է բռնել նա: Իսկ ի՞նչ պիտի ասեն բանվորները, յեթե իմանան, որ Արշակը պարոն Խաչքարյանի ռոճիկի և սենյակների համար արած դիմումներից հետո, ընթրիքներ է վայելում նրա խանումի մոտ: Սա պարզապես խայտառակություն է: Պետք է փախչել այստեղից, պետք է կտրել բոլոր կապերն այս բուրժուական պարոնից: Բայց ինչպե՞ս: Արդեն ուշ է և անհարմար: «Սա վերջինը կլինի, Արշա՛կ, անպայման վերջինը»—վորոշեց նա և հանցավորի դողդոջուն քայլերով առաջ անցավ:

Միջանցքում նրանց դիմավորեց դեկոլտե հագած, հաստ վիզը մարգարտաշար ժանյակով և ականջները փղոսկրյա, անխնաչափ ողերով զարդարած, սպիտակաթավ, կարմրաշուրթ, քառասունին մոտ մի կին, որն իր շարժ ու ձևերով կարծես ուզում էր ասել,— «Ներողություն, յես դեռ բոլորովին յերիտասարդ եմ»:

— Ծանոթացիր, Աննա, մեր լավ ընկերներից, տպարանի բանվորների ղեկավար ընկեր Արշակ Հարիկյանց:

— Շա՜տ ուրախ եմ,—կեղծ ժպիտով կոտրատվեց տիկինը և յերկարեց իր մերկ ու հաստլիկ թևը:

— Բարև ձեզ,—հուզված և ակամայորեն ասավ Արշակը և սեղմեց իրեն երկարացված ձեռքը։

— Ներս համեցեք,—կոտրատվեց տիկինը։

Նրանք հետևեցին տիկնոջը։

Արշակը պարզապես զարմացավ, երբ մտավ աղքատության մասին այնքան գանգատվող այդ մարդու բնակարանը, որը թաղված էր գորգերի ու թանգարժեք զարդերի մեջ։ Արշակի ուշադրությունը գրավեցին պատի նկարները։ Այնքա՜ն հետաքրքիր ու բնորոշ էին նրանք։ Դիմացը, ոսկեզօծ շրջանակի միջից փայլում էր մի մեծ, սպիտակ խաչ, որի երկու թևերից կախված հերարձակ, սպիտակ շորերով մի աղջիկ գթաղերս աչքերով դեպի վեր էր նայում։ Մյուս պատին, գորգի վրա, իրար կողքի կախված էին վառ գույներով ասեղնագործված Էջմիածնի վանքի և «Վոգի Հայաստանի» նկարները, նույնանման ոսկեզօծ շրջանակում։ Նրանցից մի քիչ հեռու, անկյունում, դարձյալ ասեղնագործ, Քրիստոսի «լուսապայծառ» գլուխը փշյա պսակում։ Մյուս պատին՝ Բաջնի Վարդան Մամիկոնյանի պողպատե սաղավարտով ցցված գլուխը և նրա կողքին՝ Ալեքսանդր Մյասնիկյանի փոքրադիր նկարը։

Երբ Արշակը զարմացած ու տարված պատի նկարներն էր դիտում, պարոն Խաչքարյանը նրան մոտեցավ և կամացուկ վրա բերեց,—

— Ընկեր Հարիկյանց, չկարծեք, որ ես ազգայնական կամ կղերական մարդ եմ, քա՛վ լիցի։ Այս նկարները մեծ մասամբ ես պահում եմ, որպես գեղարվեստական լավագույն գործեր, մենք ամբողջ տընով գեղարվեստի երկրպագուներ ենք, բացի այդ,

ինչպես տեսնում եք, ես կպցրել եմ նաև մեր մասսայական գործիչ, լուսահոգի ընկեր Մյասնիկյանի նկարը։

— Ձե՛, ես հենց այնպե՛ս, նայում էի...—ասավ Արշակը, մի բան ասած լինելու համար։

— Բայց ավելի լավ է, ընկեր Հարիկյանց, գնանք պատշգամբ, այնտեղ ավելի զով է և սրտաբաց,—առաջարկեց պարոն Խաչքարյանը։

Արշակը հետևեց նրան։

Պատշգամբում, պարսկական վոճով կահավորված թաղտի վրա թիկն տված, երիտասարդ մի աղջիկ խորասուզվել էր հաստափոր մի ռոմանի մեջ։

— Աղջիկս է,—շշնջաց պարոն Խաչքարյանը։

Արշակի հայացքներն այդ կողմն ուղղվեցին և կենտրոնացան։

Տեսնելով հորն ու անծանոթ հյուրին, աղջիկն իսկույն վեր ցելավ, կանգնեց, գիրքը բացված դիրքով դրեց սեղանի վրա և հայացքը շուռ տվեց կողմնակի ուղղությամբ։

— Լյալյա՛, ծանոթացի՛ր այս լա՛վ երիտասարդի հետ, ընկեր Արշակ Հարիկյանց, տպագրական բանվորության մասսայակա՛ն ղեկավարը,—կեղծ տոնով աղջկան դիմեց հայրը։

— Լյալյա՛,—թույլ ու նազանքով արտասանեց աղջիկը և նույնքան նազանքով երկարեց իր հոլանի թևը։

— Բարև ձեզ,—ասավ Արշակը, կես հուզված, կես ամաչկոտ և սեղմեց նրա ձեռքը։

Արշակը նստեց։ Ի՞նչ նստել. նա նստեց, բայց հույզերն արշավում են, սիրտը թրթռում է։ Ինչ որ

անասելի հաճույք պատճառեց նրա սիրտը, լցրեց այն պայթելու չափ։ Նա յերբեք այդպես չեր վոգևորվել միանգամից։ Լյալյան պարզապես գրավեց նրա ամբողջ ուշադրությունը։ Բոլորուն դեմքը, սպիտակ ու սլացող պարանոցը, սև ու աշխույժ աչքերը, իր թանգագին բեռով այնքան հպարտ ու ցցուն կուրծքը, վորն ավելի ընդգծված ու գայթակղիչ եր իսպանական տարազի սեղմող գոգնոցի տակից։ Այդ բոլորն անակընկալի բերին Արշակին, շփոթեցրին պարզապես և նա ամբողջովին տեսողություն դարձած՝ կլանվեց այդ յերիտասարդ աղջկանով։ Մտաբերեց Վերգուշին, համեմատեց նրան Լյալյայի հետ, ինչ համեմատություն, վորքա՜ն գեղեցիկ ու գրավիչ ե Լյալյան։

Հայրը վորոշ չափով նկատեց, վոր «միամիտ աղավնյակը» հրապուրվել ե իր աղջկանով, քիչ հպարտացավ, վոգևորվեց և Արշակին ավելի գրավելու համար, փաղաքշական տոնով ասավ.—

— Այդպես հասարակ միք նայի աղջկանս, ընկեր Հարիկյանց, նա լավ արվեստագետ ե, հիանալի նվագող և լավագույն պարողուհի, միևնույն ժամանակ հաճախում ե և՛ պարերի ստուդիան, և՛ կոնսերվատորիան։

Լյալյան մեջքից կոտրատվեց, ժպտաց և հայացքը վար խոնարհեց։

— Շատ ուրախ եմ,—հուզված արտասանեց Արշակը։

Այս այն մոմենտն ե, յերբ մարդու սիրտն արագարագ բաբախում ե և արյունը խելապտույտ շրջան ե անում յերակներում, յերբ մարդ ակամայորեն մոռացության ե տալիս իր տարիքը, պարտականություն-

ները, դիրքը և ունկնդրում իր սրտի բաբախին։ Արշակի համար այս այն մոմենտն եր։

Նա չեր ցանկանում այդպես հուզվել ու վոգևորվել այդ աղջկանով, «չե՞ վոր վերջապես յես ամուսնացած եմ, իսկ հիմա Վերգուշն ինձ տանն սպասում ե»— մտածում եր նա, չեր ել ցանկանում, վոր Խաչքարյանները վորևե չափով իմանային իր հուզմունքն այդ աղջկա հանդեպ. նույնիսկ սկսեց նախատել իրեն, թե ինչու յեկավ, բայց միևնույն ժամանակ սկսեց սըրտապնդել իրեն, վոր վոչ մի վատ բան չի կատարվել Խաչքարյանի տունը գալով։ Ժամանակ կանցկացնեն, իսկ յեթե նրան հուզում ե այդ աղջիկը, ինչ կա վոր, յեթե հուզմունքը փոխադարձաբար ե, ապա ավելի լավ, կարելի յե ոգտվել «բուրժուական այդ ժառանգությունից» ևս։ Համբուրել կամ թեկուզ ուրիշ բաներ, դրանից ինչ կա վոր, ո՞վ կտուժի դրանից, վո՛չ վոք, և վերջապես դա իր անձնական գործն ե, վորի մեջ վոչ կուսակցությունն իրավունք ունի խառնվելու, վոչ ել վորևե մեկը։ Վերգուշն իրա տեղումը, նա իր իսկական կինն ե և վորպես այդպիսին ել կմնա իր սիրելին մինչև վերջը։

Այսպես մտքերը վխտում եյին Արշակի գլխում, դառնում կենդանի պատկերներ, գործողություններ, դրական և բացասական իրենց հետևանքներով։

Ջնայած Արշակը նախապես վորոշել եր լիմոնով թեյ խմել, բայց Լյալյայի ներկայությունը ծայր առած անասելի հուզմունքը, իրար հակադիր մտքերը, ստիպեցին ու առաջարկեցին նրան ընտրել յերկրորդը,— սալաթով ողին։

Յեվ այն Արշակը, վոր գզվում եր ողու կամ գի-

Բաբաջանի բաժակաճառը և մելամաղձոտ այդ յերգն ու նվագը տակն ու վրա արին Արշակի սիրտը։ Նա հիշեց վերգուշին, ապա Լյալյային։ Հիշեց վերջինի ճկուն թևերը, բաց ու սպիտակ պարանոցը, իսպանական գոգնոցում սեղմված կուրծքը և մեղավորորեն կիսաբաց ու թաչկոտող աչքերը։ Վերգուշն անհետացավ մտա-

պատկերից և ամբողջ հասակով ու գրավչությամբ, նազանի ու խոլական, մնաց Լյալյան։

Արշակը մտքում խմեց Լյալյայի՝ կենացը։ Ինքն իրեն, վոչ վոք չիմացավ այդ։ Խմեց ամենամեծ բաժակով, քամեց մինչև վերջը, կարոտագին ծծեց բաժակի շուրթերը, ասես Լյալյայի շուրթերը լինեյին, խմեց յերկրորդը։ Կարոտը կրծում եր սիրտը։ Այդ րոպեյին լինել նրա մոտ, կամ նրան ունենալ իր մոտ, այդ եր նրա միակ փափագը։ Դարձյալ խմեց Արշակը և թախծեց խորը։

Ապա վոգևորված, ձեռքը գրպանը տարավ և ափի մեջ տրորելով հանեց ու նվագողներին շպրտեց մի կանաչագույն թղթադրամ։ Ավելի վոգևորված նրանք զլեցին միևնույն յեղանակը։

Արշակը քամեց չորրորդ բաժակը։ Աչքերը կարմրատակել, ջրակալվել եյին, ասես դուրս եյին ուզում թռչել ակնակապիճներից։

Զուռնան նվվում ու յերգում եր նույն յեղանակը։

Արշակը հանեց յերկրորդ թղթադրամը և նույն ձևով շպրտեց նույն հասցեյին։

Նվագողներն ավելի վոգևորվեցին և վոգևորվեց Արշակը։

Դարձյալ խմեց նա ու հանեց յերրորդ թղթադրամը, ճմռթելով, նրանց շպրտեց և մռնչաց,—

— Զայնդ անսպառ վարպետ...

Ինչո՞ւ պիտի սպառվեր վարպետի ձայնը։ Թղթադրամները նրա խռպոտ ձայնալարերն ավելի եյին բորբոքում։

Բոլորը զարմացել եյին Արշակի վարմունքի վրա։ Վոմանք կռահեցին պատճառը։

Բոլոր թղթադրամներն սպառեց Արշակը և սկսեց խուզարկել գրպանների անկյունները։ Բլուզի գրպանից նա հանեց, ափում ճմլկտեց և նվագողներին շպրտեց մի այլ թղթա... բայց վոչ դրամ։

Յերգող թմբկահարը զարմացավ, բացեց այդ վերջին «շաբաշը» և այնտեղ կարդաց,—

«Սիրելի Արուս.

Այս շաբաթ գալ չկարողացա, գործեր շատ ունեյի։ Արշակի միջոցով ուղարկում եմ այս յերկտողը, վոր հանգիստ լինես՝ յեվ չմտածես, թե ինչո՞ւ չեկա։ Յերեխաներին լավ նայիր։ Յեթե ցուրտ ե, Արշակի միջոցով տեղեկացրու, տաք շորեր ուղարկեմ։

Քո Վռամ»

* * *

Յերբ սեղանը հավաքում եյին, արդեն յերեկոյանում եր։ Արևը վերջին հրաժեշտն եր տալիս լեռների փայլփլուն կատարներին, զեփյուռը քամու թևեր եր առել։ Անտառը խշշում եր, ներքևում փռված քաղաքը ժպտում եր կղմինտրածածկ տանիքներով և ամպերը կարկամած ու կարոտագին ճամբու եյին դնում արևին։

Սեղանը հավաքեցին, խմբական կլոր պար թռան և Սանդրոն «Դաղստան»-ի նվագների տակ, թևերը տարածելով առաջ անցավ։

Նրանք իջնում եյին և անտառը խշշում եր կարոտագին հրաժեշտով

Սիրուշը, Բաբաջանն ու Ցընդըրքյանը գնում եյին թևանցուկ։

Արշակին տանում եյին յերկու թևերից բռնած։

* * *

Յերեկոն կենդանի յե գավառական քաղաքի գլխավոր փողոցում: Խայտաբղետ հասարակություն: Բաղքենի տիկնայք և աղջիկներ: Կոմյերիտականների թևանցուկ խմբեր, բանվորներ, կարմիր բանակայիններ:

Տարերային յերթը հոսում ե «գլխավոր» փողոցի կարճ ու կլոր հասակովը մեկ: Թևատարած սավառնում ե մոտակա ճաշարանի յերգչի պատռված ձայնը: Խանութներ յերկու կողմերում, բերանաբաց խանութներ— «Մանրավաճառ Նյեգանս», «Մրգի խանութ Երզրում», «Մսավաճառ Սերոբ», «Ճաշարան, խաշ Մասիս»: Ձմերուկի կույտեր: Դեղնած վարունգներ: «Մերեժկի»: Շոկոլադ: Պղպեղ: Բադրիջան: «Заря Востоко», Արևածաղկի սերմեր:

Յեվ այդ բոլորով շրջապատված, ահա դառնում ե տարերային յերթը գլխավոր փողոցի կարճ ու կլոր հասակովը մեկ:

Արշակին քնեցրին գյուղացու տանը և իրանք յեկան զբոսնելու: Ահա, դառնում են այդ շփոթ ժխորում: Սանդրոն բան հասկանալ չի կարող: Ավելի գրավիչ ե պատռված այն ձայնը և թառի թրթիռները: Այնտեղ գարեջուր ել են տալիս:

Նրանք շուռ յեկան դեպի ճաշարանը և ընդհատված ուրախությունը շարունակեցին այնտեղ: Վաղը մեկնում են, մյուս որը նրանց սպասում ե աշխատանքը, այսօր ուրանում են նրանք, թարմանում, բայց այս ուրախությունը յերբեք նման չի «Նոյա Տապան»-ի ուրախությանը և վոչ ել այս խմելիքները նման են «Լուսավորիչ» տպարանի նախկին տեր ու տնորեն

պարոն Ասատուր Խաչքարյանի լիմոնով թեյին, կամ սալաթով ողուն: Այդ պարզ ե բոլորին, պարզ ե նաև ներկա վեպի ընթերցողին ու նրա հեղինակին:

VII

Պարոն Ասատուր Խաչքարյանը պարզապես վրդովված եր. արդեն յերկրորդ ամիսն եր, ինչ նա անվճար «ծառայում եր գործարկոմին, կարգի յեր գցում նրա հաշիվները», յերկու ամիս եր անընդհատ, ինչ իր «ցածն եր լալիս», բայց Արշակ Հարիկյանի «դատարկ խոստումները» դեռ վոչ մի շոշափելի արդյունք չեյին տվել:

Մի օր նա հուզված տոն վերցնելով, Արշակին դիմեց.—

— Ընկեր Հարիկյանց, ձեր խոստումները խոստումներ ել մնացին: Բա սրա վերջն ի՞նչ ե լինելու, Փաշայանցը ջուխտ վոտը մի կոշկի մեջ ե դրել, վոչ մի կոպեկ չի ուզում ավելացնել, քաղխորհուրդը վոչինչ չի զիջում: Թե ձեր ձեռիցը բան չի դուրս գա ու ձեր ուժն եդքան ե, ասացեք գոնե, վոր յես իմ գլխի ճարը տեսնեմ, թե չե եսպես շարունակել չի կարելի:

Ի՞նչ անի Արշակը, ի՞նչ պատասխանի: Արհամարհե՞ գործարկոմի վորոշումը, շարունակե՞ դարձյալ այդ նախկին տուզի գործով զբաղվել: Այդ չի կարելի, այդ խայտառակություն ե: Իսկ ի՞նչ անի այդ մարդու հետ, վորին խոսք ե տվել, հավատացրել, խոսք ե տվել և աղջկանը, վորին վերջին ժամանակներս նա չի պատահել, ճիշտ ե, բայց մեծ հաճույքով կցանկանար տեսնել ու զրուցել հետը:

Ո՞ւմն ես լսելու դու, Արշակ, ո՞ւմ հետ ես ընթա-

* * *

Յերեկոն կենդանի յե գավառական քաղաքի զբոսավայր փողոցում։ Խայտաբղետ հասարակություն։ Բաղքենի տիկնայք և աղջիկներ։ Կոմյերիտականների թևանցուկ խմբեր, բանվորներ, կարմիր բանակայիններ։

Տարերային յերթը հոսում է «գլխավոր» փողոցի կարճ ու կլոր հասակովը մեկ։ Թևատարած սավառնում է մոտակա ճաշարանի յերգչի պատռված ձայնը։ Խանութներ յերկու կողմերում, բերանաբաց խանութներ— «Մանրավաճառ Ելեգանս», «Մրգի խանութ Երզրում», «Մսավաճառ Սերոբ», «Ճաշարան, խաշ Մասիս»։ Զմերուկի կույտեր։ Դեղնած վարունգներ։«Մերեժկի»։ Շոկոլադ։ Պղպեղ։ Բադրիջան։ «Заря Востоко», Արևածաղկի սերմեր։

Յեվ այդ բոլորով շրջապատված, ահա դառնում է տարերային յերթը զբոսավայր փողոցի կարճ ու կլոր հասակովը մեկ։

Արշակին քնեցրին գյուղացու տանը և իրանք յեկան զբոսնելու։ Ահա, դառնում են այդ շփոթ ժխորում։ Սանդրոն բան հասկանալ չի կարող։ Ավելի գրավիչ է պատռված այն ձայնը և թառի թրթիռները։ Այնտեղ գարեջուր էլ են տալիս։

Նրանք շուռ յեկան դեպի ճաշարանը և ընդհատված ուրախությունը շարունակեցին այնտեղ։ Վաղը մեկնում են, մյուս որը նրանց սպասում է աշխատանքը, այսոր ուրանում են նրանք, թարմանում, բայց այս ուրախությունը յերբեք նման չի «Նոյա Տապան»-ի ուրախությանը և վոչ էլ այս խմիչքները նման են «Լուսավորիչ» տպարանի նախկին տեր ու տնօրեն

պարոն Ասատուր Խաչքարյանի լիմոնով թեյին, կամ սալաթով ողուն։ Այդ պարզ է բոլորին, պարզ է նաև ներկա վեպի ընթերցողին ու նրա հեղինակին։

VII

Պարոն Ասատուր Խաչքարյանը պարզապես վրդովված եր. արդեն յերկրորդ ամիսն եր, ինչ նա անվճար «ծառայում եր գործարկոմին, կարգի յեր գցում նրա հաշիվները», յերկու ամիս եր անընդհատ, ինչ իր «ցաւը եր լալիս», բայց Արշակ Հարիկյանի «դատարկ խոստումները» դեռ վոչ մի շոշափելի արդյունք չեյին տվել։

Մի որ նա հուզված տոն վերցնելով, Արշակին դիմեց.—

— Ընկեր Հարիկյանց, ձեր խոստումները խոստումներ էլ մնացին։ Բա սրա վերջն ինչ է լինելու, Փաշայանցը ջուխտ վոտը մի կոշկի մեջ է դրել, վոչ մի կոպեկ չի ուզում ավելացնել, քաղխորհուրդը վոչինչ չի զիջում։ Թե ձեր ձեռքը բան չի դուս գա ու ձեր ուժն եդքան է, ասացեք գոնե, վոր յես իմ գլխի ճարը տեսնեմ, թե չե եսպես շարունակել չի կարելի։

Ի՞նչ անի Արշակը, ինչ պատասխանի։ Արհամարհի՞ գործարկոմի վորոշումը, շարունակի՞ դարձյալ այդ նախկին տուղի գործովը զբաղվել։ Այդ չի կարելի, այդ խայտառակություն է։ Իսկ ինչ անի այդ մարդու հետ, վորին խոսք է տվել, հավատացրել, խոսք է տվել և աղջկանը, վորին վերջին ժամանակներս նա չի պատահել, ճիշտ է, բայց մեծ հաճույքով կցանկանար տեսնել ու զրուցել հետը։

Ո՞ւմն ես լսելու դու, Արշակ, ո՞ւմ հետ ես ընթա-

նալու։ Մի կողմում գործարկոմն է և վողջ բանվորությունը, մյուս կողմում՝ «Լուսավորիչ» տպարանի նախկին տեր ու տնօրեն պարոն Աստուր Խաչքարյանը և իր պարուհի աղջիկը։ Վերջապես վորոշիր, Արշակ, չէ՞ վոր պարոն Խաչքարյանը չար պարտատերի պես գլխիդ է կանգնել և պատասխանի սպասում։

Բայց դժվար է Արշակին այդ դրությունից դուրս գալ։ Նա բացահայտորեն պարոն Խաչքարյանի պաշտպանի ու հովանավորողի դերում հանդես գալ չի ուզում, խորշում է դրանից, բայց միևնույն ժամանակ չի կարող նրա յերեսին ասել, վոր ինքը դադարում է նրա «դատը պաշտպանելուց», չէ՞ վոր դա նախ անքաղաքավարություն, անմարդավարություն կլինի և առիթ կտա անախորժությունների։ Նման կոնպենսացիայի հույսով նա պարոն Խաչքարյանին յերկու ամիս աշխատեցրել է ձրի, իսկ հիմա ինչպես հայտարարի, վոր ինքը սխալվել է, վոր ինքը հնարավորություն չունի վոչինչ անելու։ Չէ՞ վոր այդ խայտառակություն է իր համար, չէ՞ վոր կարող է պատահել նրան Լյալյան և յերեսն ի վեր ասել—«Ամոթ ձեզ, ընկեր Արշակ, յես ձեզանից չեյի սպասում, յես չեյի կարծում, վոր դուք խաբեբայի մեկն եք»։ Իսկ ի՞նչ պիտի պատասխանի նրան Արշակը։ Նա հո չի կարող հաղորդել գործարկոմի վորոշումը, այդ նախ՝ վարկաբեկիչ է իր համար և յերկրորդը՝ անհարմար։

Մնում եր ուրիշ յելք գտնել և Արշակը մտածում է խորասուզված։

Վերջապես նա գտավ «յերկու չարյաց փոքրագույնը», նա վորոշեց բռնել միջին ճանապարհը—լսել և կատարել գործարկոմի վորոշումն ընդհանրապես, բայց

միևնույն ժամանակ աշխատել նաև Խաչքարյանի գործերով, բայց վոչ, վո՛չ, ավելի ճիշտը, ցույց տալ նրան, վոր ինքն աշխատում է այդ ուղղությամբ։

Վերջապես նա իր վար խոնարհած գլուխը բարձրացրեց և պարոն Խաչքարյանին դիմելով, ասավ.—

— Ընկեր Խաչքարյա՛ն, դուք մի անհանգստանաք, անհոգ մնացեք, յես վոր խոսք եմ տվել ձեզ, կկատարեմ. չնայած, ճիշտ է, բավական դժվարություններ կան և անհարմար դրություն է ստեղծվում ինձ համար, բայց և այնպես դուք հաստատ համոզված յեղեք, վոր յես իմ խոսքի տերն եմ։

— Դրանում յես հավատացած եմ, յես այդպես էլ գիտեմ, ընկեր Հարիկյանց, ձեզ վրա յես վոչ մի կասկած չունեմ, բայց ինձ զարմացնում է այն, վոր դուք չեք պայքարում ձեր ավտորիտետի համար։ Դուք մասսայական աշխատող եք, դուք այսքան բանվորության ղեկավարն եք, ինձ այն է զարմացնում, վոր ձեր վորոշումներն ու դիմումները տրեստում հաշվի չեն առնվում, իսկ դուք հանգիստ նստում եք ձեր տեղում, չեք պայքարում, սա վերջապես վոչ միայն ձեր ավտորիտետի հարցն է, այլ և մեր բոլորիս, մեր վողջ բանվորությանը։ Այստեղ յես խոսում եմ վոչ թե նրա համար, վոր իմ հարցն է հրապարակի վրա դրված, ո վո՛չ, յերդնում, այլ նրա համար եմ խոսում, վորովհետև դա մեր ընդհանուրիս շահերի խնդիրն է շոշափում, այսոր յես եմ, վաղը Կիրակոսն է, մյուս որը Մարկոսն է և վերջապես ամբողջ մեր բանվորությունը։ Յեթե մի հարցում դուք չկարողանաք ձեր գիծն անցկացնել ու տապալվեք, դրանից հետո տրեստը կսկսի ձեզ վոչնչի տեղ հաշվել և իրա արածն

անել։ Ահա, ինձ գլխավորապես խնդրի այս կողմն է շահագրգռում։

Արշակը լսում էր միայն և յերբեմն գլխով հավանության նշաններ էր անում։ Խոսելը դժվար էր։ Հարմար խոսքեր ու պատասխաններ չեն ճարվում։

* * *

Փաշայանն ու պարոն Խաչքարյանը լուրջ ընդհարվեցին։ Վերջին սրբագրությունն անելիս՝ Խաչքարյանը բաց էր թողել կոպիտ մի սխալ, վորով 100 ռուբլիանոց պատվերն ամբողջովին փչանում էր։ Փաշայանն առաջարկում էր պատվերի փողը բռնագանձել պարոն Խաչքարյանի ռոճիկից, և արձանագրում, վոր դրանով հինգերորդ դեպքն է լրանում, ինչ նրա անուշադրության և անբարեխղճության պատճառով պատվերները փչանում էյին։

Խաչքարյանը գաղգաղում էր.—

— Սպանեցեք էլի՛, կոտորեցե՛ք, միանգամից տվեք սպանեցեք, պրծնենք, մի բան վոր նախկին խազեյին ենք, մարդ չենք։ Հերիք չե, վոր միքանի գռոշներով եք վարձատրում իմ հսկայական աշխատանքս, են էլ ուզում եք ձեռիցս խլել։ Սպանեցեք, ավելի լավ է, տարեք միանգամից գնդակահարեցեք, պրծնենք...

— Սպանելու բան չկա,—ասում էր Փաշայանը,—մի անգամ չի, յերկուսը չի, յերեքը չի, սրա վերջն էլ ա հասնելու, մի քիչ ուշադրությամբ սրբագրի, մի քիչ ուշքդ քեզ հավաքի, քեզ ինչ ա պատահել, վա՜...

— Դու ավետարան մի կարդա, ես հասակիս նոր քեզանից դաս չպետք է սովորեմ, նոր քո ասելով չի,

վոր բարեխիղճ պիտի աշխատեմ,—ասում էր պարոն Խաչքարյանը։

— Ետեղ դաս տալու հարց չկա, իմ պարտքն ա քեզ զգուշացնելը, վոր բարեխիղճ վարվես դեպի պետական գործը։

— Քո պրիկազներով չի, վոր նոր պիտի բարեխիղճ դառնամ, ինչքան իմ ուժերը պատում են, յես նվիրված աշխատում եմ։

— Տեսնո՜ւմ եմ։

— Այո՛, լավ տես, ռոճիկս էլ տես, իմն էլ տես, քոնն էլ տես։

— Դրանով ինչ ես ուզում ասել։

— Վոչինչ... այն, վոր շա՜տ լավ եք վաձատրում։

Փաշայանը չուզեց հարցն անհատապես վճռել, նա հարմար գտավ գործի քննությունը հանձնել գնահատու-կոնֆլիկտային և արտադրական հանձնաժողովներին և առաջնորդվել նրանց վորոշումներով ու յեզրակացություններով։

Պարոն Խաչքարյանն առարկել չէր կարող։

Նախ քան հանձնաժողովների միացյալ նիստ գումարելը, նա դարձյալ այցելեց իր «միամիտ աղավնյակ»-ին, վիզը ծռած ու կծկված։

Այնպես խեղճ ու այնպես աղիողորմ էր խոսում նա, վոր ամբողջովին ազդեց Արշակի զգացմունքների վրա։ Նա սկսեց կարեկցել, խղճահարվել ու մտքում վրդովվել Փաշայանի վրա։

— Օգնեցե՛ք ինձ,—ասում էր պարոն Խաչքարյանը,—պաշտպանեցեք ի սէրն աստծո, ի սէր նախախնամության, մի՛ք թույլ տա, վոր յես կորչեմ, մի՛ք թույլ տա, վոր ընտանիքս սովից կոտորվի, ձեզնից

վատ ուրիշ բարեկամ չունեմ, ընկեր Հարիկյանց, պաշտպանեցեք ինձ, փրկեցեք ի սերն աստծո...

Արշակը կարեկցության սահմանից դուրս չեկավ. նա հուսադրեց, խրախուսեց պարոն Խաչքարյանին,—

— Դուք անհոգ կացեք, միք մտածի, յես մի բան կանեմ։

«Յեվ իսկապես,—ինքն իրեն սկսեց խորհրդակցել Արշակը,—չի կարելի այս խեղճ մարդուն այսքան չարչարել. ի՞նչ են ուզում սրանից, թող թողնեն հանգիստ վեր ընկնի իր տեղումը և մնա։ Խեղճ ու վողորմելի մարդ է, վոնց ուզենաս, էնպես էլ կոգտագործես, վոչ վոքի վոչ մի վնաս չի տվել, վերջապես ի՞նչ են ուզում սրանից։ Սխալմունք է, պատահում է, ո՞վ ասես չի սխալվում։ Սանդրոն էլ իսկապես վոր համը հանում է»։

— Ձեզ վրա յե ամբողջ հույսս,—կերկերուն ձայնով դարձյալ ասաց պարոն Խաչքարյանը,—ոգնեցեք ինձ, փրկեցեք ինձ, ազատեցեք ինձ։

Նա աղերսագին հայացք նետեց Արշակի վրա և դուրս գնաց։

* * *

Արտադրական և գնահատու կոնֆլիկտային հանձնաժողովների անդամները հավաքվեցին և արտադրական հանձնաժողովի նախագահ վարպետ Աբրահամը նիստը բացեց.—

— Եսօրվա օրակարգին, ընկերներ,—ասավ նա,—դրված ա ընկեր Փաշայանի և Խաչքարյանի միջև յեղած կոնֆլիկտը և հետո էլ միքանի ընթացիկ հարցեր, մեր տառերի փչացման, տպագրության և ու-

րիշ բաների վրա։ Վորովհետև առաջին օրակարգի հարցը ընկեր Փաշայանն ե առաջարկել, ուստի և յես խոսքը նրան եմ տալիս։ Սանդրո, խոսա։

— Ընկերներ,—սկսեց Սանդրո Փաշայանը,—ես փչացումների բանը շատ փիս հալի յա, ես էլ քանի հետ ա, ընկեր Խաչքարյանը ուշք չի դարձնում, սրբագրությանը բարեխիղճ չի վերաբերվում և դրանով էլ առաջանում ա փչացումը։ Քանի հետ եմ ասել, խոսել, պրիկազով էլ նկատողություն եմ անել տալ տվել, բայց ոգուտ չի անում։ Հմի էսպես թողնել չի կարելի, էսպիսով տրեստը կքանդենք, յես տրեստից էլ կարգադրություն եմ ստացել, վոր էդպիսի դեպքերում, յեթե փչացումն անուշադրության և անբարեխղճության պատճառով է, դրանցից էլ փողը բռնել, վոր մի քիչ դրանք խելքի գան և ուշք դարձնեն, վրա յերկրորդ էլ, վոր կարգ ու կանոն մտնի։ Հմի գալով ես մեր ընկեր Խաչքարյանի փչացումին, յես պետք ա ասեմ, վոր պետք ա մենք նրա ռոճկիցը բռնենք։

— Ճիշտ ե։

— Ծիշտ ա։

— Եդպես էլ հարկավոր ա։

— Ներողություն ընկերներ,—վոտքի կանգնելով սկսեց պարոն Խաչքարյանը,—նախքան ճիշտ ասելը, թողեք մի յերկու խոսք էլ յես ասեմ. ընկեր նախագահ, ինձ խոսել կարելի՞ յե։

— Իհարկե, կարելի յա։

— Եսքան տարի, ընկերներ, յես ես արդյունաբերության միջին կյանք մաշեցի։ Ի՞նչ ուզում են խոսեն պատերի տակ, բայց յես ամբողջ հոգովս նվիրված. եմ ես իշխանությանը և մեր արդյունաբերու-

թյանը և աշխատում եմ ինչքան իմ համեստ ուժերն են ներում: Փչացա՜վ: Ի՞նչ անեմ, պատահմունք է, սխալն աչքիցս փախել է, միթե դրա համար մարդու եսպես կմորթե՞ն: Բա դուք խիղճ չունե՞ք: Կամ թե ասենք ինքը, ընկեր Փաշայանցը յերբեք չի՞ սխալվել, վոր եսպես միանգամից ուզում է յերակներս կտրատել: Ասացեք խնդրեմ, հարգելի ժողովականներից վո՞ր մեկն այսքան ժամանակ մտածեց իմ ռոճիկի վրա մի քանի կոպեկ ավելացնելու մասին, վոր հիմա հեշտ կերպով ուզում եք վորոշել, վոր հարյուր մանեթ խլեն իմ ռոճիկից: Բա ի՞նչ պիտի ուտի իմ ընտանիքը: Մուրացկաններ խո չե՞նք դառնալու... Խի՜ղճ ունեցեք, ընկերներ, խի՜ղճ...

Արշակի համար դրությունը չափազանց անհարմար եր: Նա դեմ հանդիման կանգնած է մի կողմից պարոն Խաչքարյանին և մյուս կողմից գործարկոմի միքանի անդամներին: Ի՞նչ անի, պարոն Խաչքարյանին տուգանելու հետ համաձայնվել չի կարող. չե՞ վոր հենց մի ժամ առաջ խոսք է տվել: Բացահայտորեն նրան պաշտպանողի դերում հանդես գալ դարձյալ չի կարող, չե՞ վոր նա խոսում է գործարկոմի անդամների ներկայությամբ, վորոնք հատուկ վորոշում ունեն Արշակի և պարոն Խաչքարյանի մասին: Նա դարձյալ ընտրեց միջին ճանապարհը և խոսեց բնդհանրապես:

— Ընկեր նախագահ,— ձայն խնդրելով սկսեց նա,— յես կարծում եմ, վոր տուգանելու սիստեմը շատ սխալ է ու խայտառակություն, և մեր պրոֆմիությունները պետք է դրան դեմ գնան: Ինչպե՞ս, խորհրդային իշխանության, բանվոր դասակարգի դիկտատուրայի ժամանակ աշխատավորին տուգանե՞ն: Պրոֆմիությունն այդպիսի բան թույլ տալ չի կարող:

— Յես այստեղ մեր հարգելի ընկեր Սանդրո Փաշայանին պիտի հիշեցնեմ Լենայի դեպքերը, վորին կարծեմ նա ծանոթ կլինի. յերբ ցարական չինովնիկները խայտառակ կերպով բանվորներին տուգանում եյին, վորից և առաջացան գործադուլները, ցույցերը և բանվորների ջարդերը: Յես զարմանում եմ, վոր Սանդրոն բանվորության ծոցից դուրս գալով, նման վտանգավոր առաջարկություն է անում: Այո, պրոֆմիությունները հանդուրժել չեն կարող տուգանքի քաղաքականությունը և այն էլ ընկեր Սանդրոն ցանկանում է, վոր մենք վորոշենք: Յեկեք իրար չխառնենք մեր ֆունկցիաները: Ընկեր Սանդրոյի ֆունկցիայի մեջ մտնում է և նա դիրեկտիվ ունի տուգանել, իսկ մեր ֆունկցիաների մեջ էլ մտնում է պայքարել նման խայտառակությունների դեմ և վոչ թե հավանություն տալ:

— Ագպես ալ գիտեյինք, յավրո՛ւմ,— տեղից բացականչեց Ֆընդըքյանը:

Արշակի խոսքն առիթ տվեց տաք վիճաբանությունների և հարձակումները դեպի նա ուղղվեցին և սլաքները նրան դիպան:

— Ընկեր Արշակը Լենայի դեպքերու անունը տվա՛վ,— սկսեց Ֆընդըքյանը,— սակայն անիկա մոռցավ, վոր Լենայի դեպքերու և պարոն Խաչքարյանի անբարեխղճության միջև սանկ «փոքրի՜կ» տարբերություն մը կա: Անոր ասելով մենք պիտի թողունք, վոր մեր սոցիալիստական շինարարությունը խաթարվի, անբարեխիղճները անպատիժ մնան, կամ թե պրոֆմիությունները պիտի պաշտպանեն սոցիալիստական արդյունաբերության վնասատուներին, ծույլերին

ու անբարեխիղճներին, վորպեսզի իբր թե Լենայի դեպքերը «չկրկնվեն»... Մաշալլա՜հ, մաշալլա՜հ... Վո՛չ, ընկեր Արշակ, դուն պրոֆմիության գծի անաղարտությունը պահպանող առաքյալը մի ձևանա, ատիկա չի անցներ, մենք ալ քչի՛կ մը կը հասկնանք ատկե: Գալով պարոն Խաչքարյանի անբարեխղճության, դե ատիկա բացարձակ ճշմարտություն է, և ընկեր Արշակը քողարկված կերպով անոր պաշտպանելու համար, Լենայի դեպքերեն սկսավ, ընկեր Արշակն ավելի լավ կըներ, վոր բացահայտորեն հանդես գար պարոն Խաչքարյանին պաշտպանողին դերին մեջ և վոչ թե մեզի յերեխաներու տեղ դներ և զարտուղի ճանապարհներով սկսեր իր վտանգավոր գիծը: Վո՛չ, ընկեր Արշակ, վո՛չ, յեթե դուն պարոն Խաչքարյանին ձեռքին մենդիլն ես դարձած, այդ դեռ չի նշանակում, վոր մենք քու ըսածները՝ վորպես պրոֆմիութենական հրահանգ պիտի ընդունենք: Յես առաջարկում եմ և կպահանջեմ, վոր Սանդրոյին առաջարկն ընդունվի:

Խոսք խնդրեց Քյավառեցի Միրիմանը.—

— Ընկերնե՛ր,—սկսեց նա,—յես պարզապես զարմացա, վոր ես մեր ընկեր Արշակը հարուր տոկոսով պաշտպանեց Խաչքարյանին: Մենք բոլորս էլ լավ ենք ճանաչում Խաչքարյանին, մենք գիտենք, վոր նա ակի մի տոկոսի չափ բարեխիղճ չի, ուր մնաց, վոր հավատանք թե նա հարուր տոկոսով լավ աշխատող ա: Մեր ընկեր Ֆրենզերը շատ լավ առաջարկեց, վոր ով վոր մեր սոցիալիստական աշխատանքներում փչացումներ ա անում, պետք է նրանից հարուր տոկոսով դուրս գանք, թե չէ վոր քրիստոնյի նման մոռենանք, թե ես պարոն Խաչքարն ա, յա թե չէ Լենայի դեպքերի պատմությունը որինակ բերենք, են վախտը մեր գործը ակի մի տոկոսով էլ առաջ չի գնա: Ով ուզում ա լինի, ով վոր անբարեխղճության շնորհիվ փչացնում ա, պետք ա հարուր տոկոսով դրանից փողը պահվի:

Յերբ բոլորն արտահայտվեցին, վարպետ Աբրահամը քվեարկության դրեց հարցը և ձայների մեծամասնությունը վորոշեց հավանություն տալ Սանդրո Փաշայանի առաջարկին, պարոն Խաչքարյանից՝ փչացված պատվերի փողը՝ 5 ամիս ժամանակամիջոցում բռնագանձելու մասին:

Պարոն Խաչքարյանը գազազած դեմքով վեր կացավ տեղից,—Սպանեցե՛ք, գնդակահարեցե՛ք,—ասավ, —ավելի լավ է միանգամից տվեք սպանեցե՛ք, էլ ինչ եք մաս-մաս հոգիս առնում... անխիղճնե՛ր, անգութնե՛ր...

Նրա ձայնը դողում էր, հուզված կերպով նա դուռը վրա զարկեց ու հեռացավ:

Անցան որակարգի հաջորդ հարցին:

Վարպետ Ակոբը զեկուցեց տառերի փչացման և անխնամ տպագրության մասին:

— Ցրվածքին հեչ ուշք չեն դարձնում, ախպերս,— ասում էր նա,—դիփիդ էլ հայտնի յա, վոր 10-ի տառը ցրվում են պետիտի մեջ, պետիտը՝ ցիցերոյի մեջ, ութ պունկտի կվադրատը շաղ են տալիս 6-ի մեջ, իրեք ցիցերը կես կվադրատի մեջ են խառնում, մարզաններն ու ռեգլետները խառնում են: Ախպերս, սրա առաջը պիտի առնվի՞, թե չէ: Տառերի փչացման համար մեկ էլ մեղավոր են մեր տպագրիչները, դիփիդ էլ պարզ հայտնի յա, վոր կրասկեն շատ են տալիս, ցեխում, լցնում են տառերի մեջը. Նաբորը լավ չեն մաքրում,

բարաբանը հուպ են տալիս, տառերը նստացնում ու փչացնում։ Ես բոլորի դեմը պիտի առնել, ախպերս, ընկերներ...

— Աշակերտները, աշակերտներն են մեղավոր,— ասավ Բյավառեցին,—անկետումն իրանց գրաշար են գրում, համա վոչ մի տոկոսի պլուս չեն հանում, չեն իմանում կվադրատը քանի պունկտ ա․ գետին ընկած տառն էլ հո վերցնելու խասյաթ չունե՛ն։ Եդպիսով տառերի 10 տոկոսը կորչում, փչանում ա։

— Քանի՛ հետ եմ ասել, գնում գլխներին կանգնում եմ, սհաթներով բացատրում, բացատրում, հասկացնում, էլի օգուտ չի անում, միքանիսի ուշքն ու միտքը ուրիշ տեղ ա,—ավելացրեց Սանդրո Փաշայանը։

— Տպագրության վրին խոսեցին,—ասավ Դասակարգ Հայրոն,—յես էլ միքանի խոսք եմ ուզում ասել․ վարպետ Ակոբը դրուստ խոսաց, մեր տպագրիչները ենքան էլ ուշք չեն դարձնում, վորպես իրանց դասակարգի գործին չեն մոտիկանում, պերեպրավկին ուշք չեն դարձնում, բարաբանը հուպ են տալիս, տառերը ջարդում, եդ բոլորը դրուստ ա․ և մեկել են վոր, խոսքս, իհարկե, վարպետ Աբրահամ, քո վրին չի, համա մեր բաժինների ստարշիներն էլ ուշք չեն դարձնում։ Եդ էլ կարևոր ա, վորը պետք ա մենք քննության յենթարկենք։

Արշակն այս խնդրի շուրջն սկսված վիճաբանությունների չմասնակցեց։ Նա խոցված՝ ընկերների արտահայտություններից, ինչպես նաև հանձնաժողովի վորոշումից, ներսուզված, մտածում էր խորը, վերագնահատումներ անում, հանդիմանում իրեն, պաշտպանում և այսպես։

Ցավոտ խնդիր էր քննվում և խլեց ավելի քան յերկու ժամ։ Բոլորն արտահայտվեցին, ապա Ֆընդըքյանն առաջարկեց իր բանաձևը․—

1. Հանձնարարել բաժինների ավագներին ավելի ուշադիր հսկել տպագրության, ցրվածքի և շարվածքի վրա։
2. Զգուշացնել աշակերտներին ցրվածքին ուշադիր վերաբերվել։
3. Աշակերտներին ավելի բարեխիղճ և ճարպիկներին մեկուն հանձնարարել ցրվածքի սեղանին հսկողի պարտականությունը։ Անիկա իր անձնական պատասխանատվությամբ թող հսկե ցրվածքին վրա և թերացողներուն անել նկատողություն ու նույնիսկ գործեն հեռացնել։
4. Տպագրիչներուն և վերստկչիկներուն առաջարկել մաքուր լվանալ տառերը և ուշք դարձնել տպագրությանն ու պերեփրավքային։

Ֆընդըքյանի առաջարկությունն անցավ միաձայն, յեթե չհաշվենք Արշակին, վորը տխուր ու մտազբաղ, վոչ միայն հարցի քննությանը չմասնակցեց, այլև նրա քվեարկությանը։

Հաջորդ օրը տպարանի բաժանմունքներում փակցրված վորոշումը աշխուժություն ու թարմություն մտցրեց։ Կոմյերիտական Մացոն նշանակված էր ցրվածքի սեղանի հսկիչը, կամ «ուստաբաշին», ինչպես կատակում էին ընկերները։

*
* *

Մոտենում էր պատի թերթի հրատարակման ժամանակը և Մարտիրոս Ֆընդըքյանն ամբողջու-

թյամբ այդ ուղղությամբ և մտածում: Խնդիրներ ու թերություններ շատ կան: Պետք է խարազանել բոլոր թերությունները, բոլոր սխալները և այդ անել նոր ու հետաքրքիր ձևերով: Նա տեսավ, որ ծաղրանկարների ձևն ամենից հետաքրքիրն էր ու բանվորների կողմից ընդունելին և մտածեց այս անգամն ևս գլխավոր թերությունները խարազանել այդ ձևով:

Յերկար մտածեց նաև Արշակի մասին: Պետք էր նրան նույնպես արժանացնել խարազանի հարվածներին, առանց սակայն նկատի ունենալու նրա գործարկոմի նախագահ լինելու հանգամանքը: Պետք էր սթափեցնել նրան:

Մտածեց, յերկար մտածեց, ձևը գտավ,—պատրաստել տվեց մի ծաղրանկար հետևյալ բովանդակությամբ,—պարոն Խաչքարյանը կորացած մեջքով, դողդողալով գնում է, ձեռքին մի հաստ գավազան՝ Արշակի կերպարանքով:

Ծաղրանկարը տպագրվեց: «Տպագրիչ»-ի մշտական բանաստեղծ-աշխատակից Սուրեն Ապտակունին նկարի տակին գրել էր հետևյալ քառյակը,—

Պարոն Խաչքարը ծերացել է,
Համ ծերացել, համ կորացել է,
Նրան պետք է մի գավազան,—
Դու չես վոր կաս, այ Արշակ ջան:

Ֆընդըքյանի այդ քայլը ռումբի նման պայթեց վողջ տպարանում:

* * *

Բայց վարպետ Ակոբն էլ ճառեր չասեց տպարանում: Վերջինը նա արտահայտվեց արտադրական

հանձնաժողովի նիստին և պատրաստվեց իր հաշիվները մաքրել տպարանի հետ:

Սխալ էր կարծում նա, վոր միայն «սամթով ջահելներն են նոր ճանապարհով» առաջ պիտի գնան: Այժմ էլ նրան են տանում և այն էլ վոչ այնքան հասարակ տեղ: Նրան առաջ են քաշում գլխավոր դատարան դատավորի պաշտոնով: Նա յերկու տարուց ավել գլխավոր դատարանի ատենակալ լինելով, հնարավորություն էր ունեցել վորոշ չափով ծանոթանալու իր նոր «մասնագիտությանը», բայց հակառակ դրան նա ընդդիմանում էր և չէր ուզում կտրվել գրաշարական առօրյայից:—Պարզ հայտնի յա, վոր ինձանից դատավոր չի դուրս գա, էլ ուր եք քշում ինձ,—առարկում էր նա, բայց բջիջն ու պրոֆմիության վարչությունը վորոշեցին և նա յենթարկվեց:

— Հայուն մի մոլիկ, դատավոր դառավ:

— Ա՛յ հո՛յ, կարաս մի մեզ դատե՞ս:

— Դատը՝ դատ, բայց կաշառք չվերցնես հա՜…

— Մի քիչ սամթով խոսեք հետը, թե չէ վճիռ կհանի դատապարտել սոցիալական գերագույն չափին, պնդակահարության:

— Արեց, արեց, դատավոր մարդ ա…

— Ա՛յ հո՛յ, մի վեդրո գինի և մի գառը մաղարիչ ունես տալու, թե չէ՞…

— Լա՛վ, ինչ եք հիշեցնում, նա իրա գործը լավ գիտի, դատավոր է չէ՞, բոլոր զակոններն էլ գիտի…

Այսպես ուրախ ասում ու կատակում էին գրաշարները, «ձեռք էին առնում» նոր դատավոր վարպետ Ակոբին, բայց յերբ յեկավ վերջին օրը, նրանք բոլո-

րը, վողջ տպարանով ծափահարեցին և մեծ խանդավառությամբ ճանապարհ դրին նրան դեպի դատարան։

VIII

Միևնույն զգացմունքը շարունակում էր ավելի ծավալվել ներսում և տանջել Մարտիրոս Ֆընդըքյանին։ Դարձյալ տպագրում էր նա և դարձյալ Սիրուշի դիմագծերն էին ուրվագծվում սպիտակ թղթի վրա։

Տանջվում էր Ֆընդըքյանը, բայց նրան պակասում էր այն «գերմարդկային» ուժն ու «արիությունը» Սիրուշին հայտնելու իր զգացմունքների ու սիրո մասին։ Ամեն անգամ, երբ նա հանդիպում էր Սիրուշին, կամ զրուցում նրա հետ, նախապես մտադրվում էր պատմել ամեն ինչ և գործը վերջացնել, բայց ամեն անգամ, երբ պատրաստվում էր այդ անելու, նրա ուժերն սպառվում էին և լեզուն սկսում էր դավաճանել նրան։ Մտածում էր նամակով հայտնել բոլորը, բայց գտնում էր, որ քաղքենիական ձև է նամակով «սեր բացատրելը», և որ Սիրուշը մերժելու դեպքում, կարող էր նամակը պտտեցնել ընկերների մոտ ու ծաղրի առարկա դարձնել։ Ի՞նչ անի Ֆընդըքյանը, իսկ սի՞րտը, սիրտը տրոփում է, և նա ամեն անգամ սաստիկ հուզմունքով է Սիրուշին հանդիպում։

Դարձյալ նրանք միասին զրուցում են բանվորական ակումբի բակում։ Երբեմն խոսում են զանազան նյութերի շուրջը և երբեմն տասնյակ րոպեներով շրջում լուռ ու անխոս։

Միայն մեկ-մեկ Ֆընդըքյանը լռությունը խզելով, գուցե տարօրինակ է դա ներկա վեպի ընթերցողի համար, ասում է—да՛... Նա խոսակցության նյութ

է փնտրում ու չի գտնում, բառերը խեղդվում են կոկորդում և նա դարձյալ կրկնում է—да՛...

Նրանք երկար զրուցեցին այդ օրը։ Ֆընդըքյանն ուժերի զորահավաք կատարեց և վերջնականապես վորոշեց բառերով դրսևորել այն, ինչ որ կրծում է նրա սիրտը, միտքը։ Սիրուշը նկատում էր, որ նա մտասուզված է։ Ֆընդըքյանը մտքում կրկնում էր ասելիքը. պատրաստվում լսելի ձայնով արտասանելու այն մի քանի դժվար բառերը և ապա դարձյալ կանգ առնում, դարձյալ մտածում և շարունակում փոխել շփոթված քայլերը։

Նորից սերտեց ասելիքը և թոթով ու այլայլված կիսատ բառերով շշնջաց.

— Սիրուշ, ես քեզնով հիացած եմ։

Նա զգաց, որ իր այտերը վառվում են, սիրտը տրոփում է ավելի ուժգին ու արագ։ Նա ցնցվեց, կարծես մարմնի մի որևէ մասից նրան հպեցին էլեկտրական հոսանքը։ Նա զգաց նաև, որ մարմինը թեթևացավ հսկայական մի բեռից և որ իրեն պարուրեց հաճելի հանգստությունը։

— Հետո՞ —քրքջալով ասավ Սիրուշը։

Քրքիջը ցնցեց։ Քրքիջն սպանիչ էր։ Ի՞նչ արիր դու Ֆընդըքյան։ Այդ ի՞նչ ասիր դու։

— Հետո՛ այն, հետո այն, որ ես, ես...

Խոսքերը խորտակվում էին նրա կոկորդում։ Քրտինքը վազում էր։ Յերակներում արշավ էր։ Սրտում խփոց ուժգին, ուժգին։

— Լա՛վ, ասա առանց հուզվելու,—սրտապնդեց Սիրուշը։

— ... Որ ես, որ ես. . քեզ սիրում եմ...

լա՛վ աղջիկ ես, իսկ դո՞ւն, իսկ դո՞ւն, ի՞նչ կըսես, հե՞… —նա խոսում եր ավելի հուզված ու այլայլված։

Սիրուշը քրքջաց ավելի բարձրաձայն ու վոչինչ չպատասխանեց։

— Ինչո՞ւ այդպես կխնդաս, գուցե զի՞ս կծաղրես, շիտակ ըսե, Սիրուշ։

— Ծաղրելու վոչինչ չկա։

— Հապա ի՞նչ։

— Հենց այնպես, ծաղրս գալիս ե։

— Իսկ քու կարծիքն ի՞նչ ե, Սիրուշ։

— Վոչի՛նչ, սիրում ես, սիրիր, այդ վատ չե։

— Իսկ դո՛ւն, դո՛ւն, դո՛ւն ի՞նչ կըսես, դուն ալ ինձ կսիրե՞ս, հե՞…—ավելի սրտապնդված և անայլայլ ասավ Ֆընդըքյանը։

Սիրուշը դարձյալ ծիծաղեց։

Ֆընդըքյանի սիրտը դարձյալ խփում եր ամուր ու հևասպառ. Նա հուզված ու սրտատրոփ, պատասխանի յեր սպասում։

— Ըսե, ջանըմ, ի՞նչ կերկընցունես,—անհամբեր վրա տվավ նա,—շիտակն ըսե, դուն ալ կսիրես զիս, թե՞ վոչ.. ճշմարիտն ըսե, առանց քաշվելու և ամչնալու։

Յեվ այս բոլորը խոսում ե Ֆընդըքյանը։

Սիրուշը ծիծաղելով խփեց նրա ուսին և ավելացրեց.

— Լա՛վ տղա յես։

— Այդքանը հերիք չե։

— Հապա ի՞նչ։

— Դուն հարցիր շիտակ պատասխանը տուր։

— Լա՛վ, յես էլ եմ… Լա՛վ տղա յես, չնայած վոր անունդ Մարտիրոս ե,—ծիծաղելով ասավ Սիրուշը։

Ֆընդըքյանի սիրտն ավելի արագ թափով բաբախել սկսեց և նա դարձյալ զգաց, վոր իր այտերը վառվում են, վոր քրտինքը վողողել ե մազերը, ճակատը, շապիկը թաց ե և յերակներում արշավ։

* * *

Ներկա վեպի հեղինակը չի ցանկանում իր ընթերցողին վերստին ծանոթացնել Լոֆ-լոֆ Ալեքի «փիլիսոփայության» և «աշխարհայացքի» հետ։ Ընթերցողը հիշում ե նրա յերեվելի բաժակաճառը «Նոյա Տապան»-ում, յերբ նա զգուշացնում եր իր բաժակակիցներին կանանց «գյամր» ամուր բռնել և բաց չթողնել։ Ներկա վեպի հեղինակը ցանկություն ուներ միայն մի քանի գծերով ծանոթացնել իր ընթերցողին թե ինչպես եր Լոֆ-լոֆ Ալեքն իր տեսակետը կիրառում գործնական կյանքում։

Նա տուն եր գալիս կես գիշերին, ստիպում կնոջը յելնել անկողնից, հագնվել, կերակրել իրեն։ Չնայած նա գալիս եր «Տապան»-ից, բայց և այնպես կինը պարտավոր եր նրան սպասարկել ամենայն ճշտապահությամբ և հեզությամբ։ Ամեն մի տրտունջը կընոջ կողմից՝ հանդիպում եր Լոֆ-լոֆի յերկհարկանի հայհոյանքներին, բռունցքներին, քաշքշոցներին և այլն։ Նա պարտավոր եր լսել ու հեզությամբ կատարել իր «մարդու», ինչպես ասում եր Ալեքը, բոլոր կարգադրություններն ու ցանկությունները, անկախ իր կամքից ու ցանկությունից։ Նա պարտավոր եր գիշերվա ամեն մի ժամին կերակուրը տաք ունենալ, հացը պատրաստ, իր դեմքը ծիծաղկոտ, անտրտունջ,

նույնպես կիջնեին Լոք-լոքի բռունցքները և կտեղային նրա հայհոյանքները:

Բայց կինը միշտ այդպես հանդուրժել չէր կարող, յերբեմն բորբոքվում էր, վրդովվում և նոր էր սկսվում ծեծի ու հայհոյանքի ցուցահանդեսը:

Չնայած գործարկոմի և բանվորական ընդհանուր ժողովների վորոշումներին, Լոք-լոքը վոչ միայն չկարըվեց «Նոյա Տապան»-ից, այլև նրանց «ջգրու» ավելի ամուր կապվեց «Տապան»-ի կեղտոտ հատակին ու յուղոտ նստարաններին, և չնայած ընկերների խրատներին, նա ավելի խիստ ռեժիմներ սահմանեց իր կնոջ համար, վորը հանդգնում էր գանգատվել իր հարևաններին կամ Ալեքի ընկերներին:

Չկարողանալով հանդուրժել «Ալեքյան կարգերին», նա «համարձակվեց ըմբոստանալ» մինչև այն աստիճան, վոր հասավ մինչև տպարանի կին կազմակերպիչը և նրա միջոցով Բան-գեղջ բաժինը:

Գազազեց Լոք-լոք Ալեքը: Յերկինքը վորոտաց, շանթեր տեղացին, կայծակը շառաչեց ու սպառնաց ամեն ինչ լափել և տակն ու վրա անել:

ՅԵՐՐՈՐԴ ՄԱՍ

I

Ամեն որ, յերբ գարնանային Արևը թեքվում է դեպի մայրամուտ, մեծ յեռանդով ջրում են քաղաքի գլխավոր զբոսավայր-փողոցը: Փողոցի յերկայնքն ի վեր, զուգահեռորեն ընթանում են մատաղահաս ու գանգրահեր ծառերը: Յեվ ամեն յերեկո, յերբ ջրում են փողոցը և մատաղահաս ծառերը սվսվում են զեփյուռի թևերում, ամեն որ, յերբ արևը դեպի մայրամուտ է գնում, կենդանի յեռ ու զեռ է սկսվում քաղաքի այդ զբոսավայր-փողոցում:

Գալիս են տղամարդիկ, իրենց կանանց հետ թևանցուկ, կամ յերեխաների ձեռիցը բռնած, յերեխաներով ողակված: Նրբազգեստ ու թեամերկ տիկիններ են գալիս և աղջիկներ: Դեռատի աղջիկներ: Յերիտասարդ տղամարդիկ: Ծերեր: Շրջում են: Մի մասը վեր է գնում, մյուս մասը՝ վար: Հանդիպում են իրար: Ծանոթը բարևում է ծանոթին: Տղամարդը սևեռուն և քաղցած հայացքով նայում է այս կամ այն աղջկանը, կամ «աչքերի վաննա յե ընդունում», ինչպես կասեր Բոցբողազը: Աղջիկն ասենք խուսափում է: Մյուսը տե-

գի տալիս, յերրորդը հուզվում է ու այսպես հոսում են նրանք մեկ վեր, մեկ վար։

Արշակը դառնացած սրտով շրջում է խայտաճամուկ այդ հոսանքով։ Նա խիստ վրդովված է ու վշտացած։ Պատի լրագրի վերջին համարը նրան խայտառակեց, անխղճորեն քրքրեց նրա սիրտը. բացի այդ, կոմբջիջի բյուրոյի այսօրվա նիստում նրան հանդիմանություն արին։

Այժմ Արշակը դուրս է յեկել զբոսնելու և քիչ հանգստանալու։ Չլսելով Վերգուշի թախանձանքներին, նա մերժեց նրա հետ զբոսանքի դուրս գալ. բայց և այնպես նա մենակ է, նա մարդ է փնտռում, մի սրտակից ընկեր, մի լավ ծանոթ, վոր թեթևացնի նրա սրտի վրա նստած ծանրությունը, վոր մոռացնել տա դորշ առօրյան, բարդություններով ու հակասություններով լեցուն։ Նա մտածում է գինետանը, կամ նույնիսկ «Նոյա Տապան»-ում վորոնել փրկությունը, բայց գտնում է, վոր դա յելք չի։ Խուզարկու աչքերով, խայտաճամուկ այդ հոսանքի ալիքներում նա Լյալյայի դեմքն է փնտռում։ Բավական յերկար ժամանակ է, ինչ Լյալյային չեր հանդիպել և ինքն է դրա պատճառը։ Իր կողմից վորոշ շրջանում ցուցաբերված սառնությունը Լյալյային հեռացրեց իրենից, և նա խուսափում է անգամ Արշակին հանդիպելուց ու բարևելուց։

Այժմ ինքը, ինքը կմոտենա, նույնիսկ ներողություն կխնդրի իր անտարբերության համար։

Միայն Լյալյայի մոտ է փնտռում նա իր «վշտերի» ամոքումը և վրդովմունքի ու ջղայնության փարատումը։ Միայն թե նա յերևա։

Շրջում է Արշակը մտամոլոր ու սևեռուն հայաց-

քով։ Վեր է գնում, վար է դառնում, շրջում հայացքը, սուզվում խայտաճամուկ հոսանքում, բայց իր վորոնածը չկա։—Գուցե նա քաղաքում չի։—Բայց վո՞չ, ո՞ւր պիտի գնա վոր։

Ի՞նչ անել, արդեն մոտ մի ժամ է ինչ շրջում է, հոգնեց, բայց չհուսահատվեց։

Հուսադրեց իրեն։ Մտածեց, վոր վորոշ ընտանիքներ ժամը 10-ից հետո յեն միայն զբոսանքի յելնում, Լյալյային դասեց այդ ընտանիքների աղջիկների շարքը և սպասեց։

Դարձյալ շրջեց նա և ժամեր անցան ու վրդովմունքի, մտածմունքների, հանգստության վրա ավելացավ հուսահատությունը։

Նա արդեն պատրաստվում եր տուն գնալու, յերբ հանդիպակաց մայթից նշմարեց ինչ-վոր ծանոթ կանացի դեմք, վորը դեպի վեր եր բարձրանում, բայց մի՞թե նա յե, մի՞թե Լյալյան է դա։ Մի ամիս դեռ չանցած, մի՞թե նա կարող եր այդքան փոխվել։ Մազերն այլ ձևի յեն կտրել ու սարքել, յերկու խոշոր փակագծեր ականջների մոտ, դեմքի շուրջը, ճակատին կամար. յերբ ավելի մոտեցավ Արշակը, նոր փոփոխություններ ել նկատվեցին. Նրա հոնքերն ավելի բարակել եյին ու կորացել, իսկ այտին խա՞լ, ա՞յդ ինչպես, ա՞յդ վորտեղից բուսավ։ Վարդագույն շղարշային զգեստի մեջ Լյալյան այս որն ավելի գեղեցիկ եր ու գրավիչ։ Նա գալիս եր իր յերկու ընկերուհիների հետ և իր նայվածքով ցանկանում եր Արշակի ներկայությունն ու գոյությունը ջնջել պողոտայից։

Բայց Արշակը համարձակությամբ նրան մոտեցավ, բարևեց, տվեց անունը և կանգնեց նրան շատ մոտիկ։

— Դուք ինձ բա՞ն էիք ուզում ասել,— նազանքով հարցրեց Լյալյան։

— Այո։

— Մի րոպեյով ներողություն, աղջիկներ,— դարձավ նա ընկերուհիներին։

Նրանք քրքջալով շարունակեցին ճանապարհը։

Արշակը խոստովանեց, որ ինքը վերջին օրերում սառն է վերաբերվել դեպի Լյալյան, բացատրեց «օբյեկտիվ» պատճառները և ներողություն խնդրեց, միևնույն ժամանակ հայտնեց, որ սաստիկ կարոտել է նրան։

Լյալյան քմահաճորեն ժպտաց և Արշակի վրա վոլորեց իր կախարդական հայացքը։

«Ի՞նչ համեմատություն սրա և Վերգուշի միջև,— մտածում էր Արշակը,— նա պարզապես փալաս է, զուրկ վորևէ հրապույրից, ի՞նչ անենք, թե գուլպաս լավ է կարկատում ու ժամանակին լվանում շապիկս։ Իսկ սա ուրի՜շ է, գրավիչ, գեղեցիկ։ Բայց յես ի՞նչ եմ անելու վերջը, ու՞ր եմ գնալու, ու՞մ հետ եմ լինելու։ Չէ՞ որ Վերգուշն ինձ շա՜տ է սիրում, յես էլ նրան էլի սիրում, այժմ էլ նրան խղճում եմ յես...»— մտածում և իր մտքերի ցանցում մոլորվել էր Արշակը։

— Շա՜տ եք տխուր,— ասաց Լյալյան Արշակին դառնալով, նա իրադարձություններին տեղյակ էր։ Փընդրըքյանի ծաղրանկարի մասին հայրը պատմել էր նրան, ինչպես նաև պատմել էր այն մասին, որ իրենց պատճառով Արշակին խայտառակել են վողջ տպարանում, և գուցե այդ էր պատճառը, որ Լյալյան այդ օրն ավելի ներողամիտ գտնվեց, մոտեցավ Արշակին և նրան ավելի մոտիկ զգաց իրեն։

— Վոչինչ, յես կարծում եմ դու ընդունակ ես քո ներկայությամբ փարատելու իմ տխրությունը,— պատասխանեց Արշակը։

— Միթե՞...

— Այո, այո...

— Ի՞նչ եք ասում։

— Այո, ճիշտ եմ ասում, յես դրանում հավատացած եմ։

— Դե՛հ, կփորձենք։

Լյալյան Արշակի հետ խոսում էր «դուք»-ով, իսկ Արշակն՝ ընդհակառակը։

Առանց նախապես պայմանավորվելու, նրանք սկսեցին բարձրանալ դեպի ավելի վերը, դեպի փողոցի վերջավորությունը։ Վոչ մեկը մյուսին չհարցրեց, թե ու՞ր են գնում, կամ ինչու՞։ Ասես քայլերը նախապես պայմանավորվել էին և իրենք էլ նրանց էին հանձնել ամբողջ տնորինությունը։

Բավական բարձրացան։ Արշակն առանց թույլտվություն խնդրելու բռնեց Լյալյայի մերկ թևից։ Մատներն ողակվեցին թևի շուրջը և էլեկտրական բոլոր մի հոսանք թափահարեց Արշակին և հասավ մինչև սիրտը, հուզեց ու ալեկոծեց այն։

Լյալյան չընդդիմացավ։

Յերբեմն խոսակցության նյութը վերջանում էր։ Զրուցում էին ի միջի այլոց։ Բառեր չէին գտնում։ Գնում էին լուռ։ Նրանց սրտերն էին խոսում, ինչպես կասեր բանաստեղծը։

Փողոցի վերևում թզուկ ուռիներ կան և բարդիներ բարձրահասակ։ Նրանք սվսվում են, վորովհետև զեփյուռ է, նրանք վողողված են լույսով, վորովհետև

— Դուք ինձ բա՞ն եյիք ուզում ասել,— նազանքով հարցրեց Լյալյան։

— Այո։

— Մի րոպեով ներողություն, աղջիկներ,— դարձավ նա ընկերուհիներին։

Նրանք քրքջալով շարունակեցին ճանապարհը։

Արշակը խոստովանեց, որ ինքը վերջին օրերում սառն է վերաբերվել դեպի Լյալյան, բացատրեց «օբյեկտիվ» պատճառները և ներողություն խնդրեց, միևնույն ժամանակ հայտնեց, որ սաստիկ կարոտել է նրան։

Լյալյան քմահաճորեն ժպտաց և Արշակի վրա վոլորեց իր կախարդական հայացքը։

«Ի՞նչ համեմատություն սրա և Վերգուշի միջև,— մտածում էր Արշակը,— նա պարզապես փալաս է, զուրկ որևէ հրապույրից, ի՞նչ անենք, թե գուլպաս լավ է կարկատում ու ժամանակին լվանում շապիկս։ Իսկ սա ուրի՜շ է, գրավիչ, գեղեցիկ։ Բայց ես ի՞նչ եմ անելու վերջը, ո՞ւր եմ գնալու, ո՞ւմ հետ եմ լինելու։ Չէ՞ որ Վերգուշն ինձ շա՜տ է սիրում, ես էլ նրան էյի սիրում, այժմ էլ նրան խղճում եմ ես...»— մտածում և իր մտքերի ցանցում մոլորվել էր Արշակը։

— Շա՜տ եք տխուր,— ասավ Լյալյան Արշակին դառնալով, նա իրադարձություններին տեղյակ էր։ Ֆընդըքյանի ծաղրանկարի մասին հայրը պատմել էր նրան, ինչպես նաև պատմել էր այն մասին, որ իրենց պատճառով Արշակին խայտառակել են վողջ տպարանում, և գուցե այդ էր պատճառը, որ Լյալյան այդ օրն ավելի ներողամիտ գտնվեց, մոտեցավ Արշակին և նրան ավելի մոտիկ զգաց իրեն։

— Ո՜չինչ, ես կարծում եմ դու ընդունակ ես քո ներկայությամբ փարատելու իմ տխրությունը,— պատասխանեց Արշակը։

— Մի՞թե...

— Այո, այո...

— Ի՞նչ եք ասում։

— Այո, ճիշտ եմ ասում, ես դրանում համոզված եմ։

— Դե՜հ, կփորձենք։

Լյալյան Արշակի հետ խոսում էր «դուք»-ով, իսկ Արշակն՝ ընդհակառակը։

Առանց նախապես պայմանավորվելու, նրանք սկսեցին բարձրանալ դեպի ավելի վերը, դեպի փողոցի վերջավորությունը։ Ոչ մեկը մյուսին չհարցրեց, թե ո՞ւր են գնում, կամ ինչո՞ւ։ Ասես քայլերը նախապես պայմանավորվել էին և իրենք էլ նրանց էին հանձնել ամբողջ տնօրինությունը։

Բավական բարձրացան։ Արշակն առանց թույլտվություն խնդրելու բռնեց Լյալյայի մերկ թևից։ Մատներն ողակվեցին թևի շուրջը և էլեկտրական բորբ մի հոսանք թափահարեց Արշակին և հասավ մինչև սիրտը, հուզեց ու ալեկոծեց այն։

Լյալյան չընդիմացավ։

Երբեմն խոսակցության նյութը վերջանում էր։ Զրուցում էին ի միջի այլոց։ Բառեր չէին գտնում։ Գնում էին լուռ։ Նրանց սրտերն էին խոսում, ինչպես կասեր բանաստեղծը։

Փողոցի վերևում թզուկ ուռիններ կան և բարդիներ բարձրահասակ։ Նրանք սվսվում են, վորովհետև զեփյուռ է, նրանք վողողված են լույսով, վորովհետև

վերևից կախվել և լուսապարար դեմքով գեր լիալուսինը։

Առվից այն կողմը, քարաշար, անկանոն պատի մեջտեղում մի խոռոչ կա, մամուռ քարերով յեզերված. Նա ավելի շուտ պարսկական տների բուխարիկներին ե նման, ուր յերեկոները կրակ են վառում և հավաքված նրա լուրջը՝ լսում են լեգենդներ և հեքյաթներ։

Այդտեղ, այդ բուխարիկանման մամուռ խոռոչում, վոմանք մոմ են վառում, իսկ այդ խոռոչը «սուրբ» ե, ասում են, «մուրազատու»։ Մոմը հալչում ու թափվում ե ներսի քարերի վրա, իսկ այդ քարերը նույնպես «սուրբ» են, «խորհրդավոր» ու գուշակող»։ Նրանք գուշակում, հաղորդում են «սրտի մուրազը», բավական ե, վոր դու մտքումդ խորհուրդ անես և փոքրիկ մի քարի կտոր վերցնելով, փակցնես խոռոչի ներսի քարերին։ Յեթե փոքրիկ քարը կպավ, ո՜ յերջանկություն, «մուրազդ կատարվում ե»։ Իսկ փոքրիկ քարերն անտերունջ են, իսկ փոքրիկ քարերն անդավաճան են։

— Մի րոպեյով ներողություն,— ասավ Լյալյան և ցատկեց առվակով այն կողմը։

Լուսնի լուսով Արշակը տեսնում եր նրա ամեն մի շարժումը և լուսնի լուսի տակ, իր շարժումներում նա անչափ հետաքրքիր եր։

Ահա նա վերցրեց փոքրիկ խիճը և ներս յերկարեց։

Յերկրորդ անգամ, յերրորդ անգամ։

Ապա ծիծաղադեմ ու թռչկոտելով անցավ առվակը և մոտեցավ Արշակին։

— Ի՞նչ եյիր անում,— հարցրեց Արշակը։

— Վոչինչ, հենց այնպես,— թոթովելով ասավ Լյալյան,— յես հենց այնպես, ի հարկե, դուք դրան չեք

հավատում և ծիծաղում եք, բայց յես հենց այնպես.. բախտ եյի փորձում։

— Ե հաջո՞ղ անցավ, «մուրազդ» կատարվե՞ց,— հեգնեց Արշակը։

— Գրեթե,— ասավ Լյալյան,— յերկու անգամ սաղ, մի անգամ փուչ։

Այնտեղ, ուր թզուկ ուռիներ կան ու բարդիներ բարձրահասակ և լուսնի լույսից պաշտպանող ստվեր, այնտեղ նրանք կանգ առան։ Արշակն ագահորեն դիտում եր Լյալյային և հիանում։ Մտքում ամեն ինչ զոհում եր նրա համար։

Կանգնելով հոգնեցին։ Արշակն առաջարկեց նստել և նրանք իրար շատ մոտիկ, ծունկ-ծնկի նստեցին ուռիների հովանու տակ, անկանոն ընկած քարերի վրա։ Բերկրալի ժամերը հոսում են և Արշակը բոլորովին չի հոգնել, չի ձանձրացել։

Թող ժամերը սահեն, թող մինչև անգամ լուսանա։

Նա ուզում ե ավելի մոտիկ նստել Լյալյային, շունչը նրա շնչին, ձուլված նրան։

— Վերջապես, ինչո՞ւ ավելի յերկարացնենք,— ինքնավստահ տոնով ասավ Արշակը,— այս սպասողական դրությունն սպանիչ ե։ Յես խայտառակ կերպով սիրահարված եմ քեզ վրա, կարող ես ինձ յերջանկացնել, յեթե սիրես և կարող ես հավիտենականորեն դըժբախտացնել, յեթե մերժես։

— Բայց ինչո՞ւ խայտառակ կերպով։

— Դե խոսք ե ելի, ուզում եմ ասել սաստիկ կերպով։

Կատակի տոնը փոխելով, Լյալյան լուրջ կերպով հարց տվեց.

— Իսկ չէ՞ որ դուք ամուսնացած եք։
— Թքա՛ծ։
— Ինչպե՞ս։
— Շատ պարզ։ Թքած քեզանից բացի ուրիշ կնոջ ու ընտանիքի վրա։
— Ա՜խ, այդպե՞ս։
Լյալյան ներքին հրճվանք զգաց, նրան չափազանց հաճելի էր, երբ տղամարդիկ իր ներկայությամբ նվաստացնում էին իրենց կանանց և առհասարակ բոլոր կանանց՝ նրան բարձրացնելու համար։ Այդպիսի դեպքերում նա իրեն զգում էր խոշորագույն արժեքի մրցանակ տանողի դերում։
— Իսկ դուք չե՞ք սիրում ձեր կնոջը։
— Ո՛չ։
— Բոլորովի՞ն։
— Բոլորովին։
— Իսկ նա սիրո՞ւմ է ձեզ։
— Չգիտեմ, երևի։
— Դուք կարող եք նույնիսկ նրանից բաժանվե՞լ։
— Այո՛։
— Եվ կբաժանվե՞ք։
— Այո՛, եթե միայն դու այդպես ցանկանաս։
— Դո՛ւ...
— Այո՛, Լյալյա՛, ես քես հավատացնում եմ։
— Իս՛կ եթե ձեր կինը չցանկանա ձեզանից հեռանալ։
— Ինչպե՞ս, նա ինչպե՞ս կարող է զոռով իմ կինը դառնալ, երբ ես չեմ ցանկանա։
— Լա՛վ, որ այդպես է, գալիս է,— ասաց Լյալյան, ամուր խփեց նրա ձեռքին և սեղմեց։

Լյալյան այդ բոլորն արավ ոչ թե նրա համար, որ անկեղծորեն սիրում էր Արշակին և պատրաստվում նրա հետ ամուսնանալու, այլ հենց այնպես, «խաղացնելու համար», ինչպես ասում էր նա։ Նրան հաճելի էր, երբ երիտասարդ տղամարդիկ պտտում են իր շուրջը, մանավանդ այնպիսիները, որոնք իր պատճառով բաց են թողնում իրենց կանանց և թրևում նրա շրջազգեստի շուրջը։ Իսկ ինքը խոստումներ կտա և ապա հեռվից կծիծաղի նրանց միամտության ու «ախորժակի» վրա, ինչպես սովոր էր ասել «որխորդ» Լյալյան։
Այդ փոքրիկ ձեռքը, որ գտնվում էր Արշակի ափերի մեջ, նրան նոր շունչ և հույզ ներարկեց։ Ողջ մարմնով սարսուռ անցավ։ Նա պարզապես դողում էր։ Տված խոստումը շատ թանգ արժեր և նրա կատարումը կապված հոգեկան և բարոյական ահագին բարդությունների հետ։
Բայց նա մի պահ մոռացության տվեց այդ բոլորը և փարվեց Լյալյային, մոտեցրեց շրթունքները նրա շրթունքներին, ավելի ամուր սեղմեց նրան իր կրծքին, բայց հանկարծ միտքը շանթահարվեց, նա հիշեց Վերգուշին, «արդյոք ի՞նչ է անում հիմա, անքուն ու անհանգիստ ինձ չի՞ սպասում արդյոք»։ Նրա թևերը թուլացան։ Թուլացավ Լյալյայի մեջքի շուրջը սեղմված օղակը։ Լյալյան այդ զգաց։
— Ի՞նչ պատահեց ձեզ,— հարցրեց նա Արշակին։
— Ոչինչ, հուզված եմ։ Դուք ինձ շատ հուզեցիք։
— Մի՞թե։ Բայց կարիք չկա շատ հուզվելու։
Արշակը նորից մոռացավ ամեն ինչ։ Վերգուշը

չքացավ մտքից իր սպասումներով ու անհանգստությամբ։ Նա ավելի ամուր գրկեց Լյալյային։ Նրանց շուրթերն իրար խառնվեցին և նա ամուր համբուրեց այն շուրթերը, վորոնք այնքա՛ն հուզել էին նրան։

Ծառերը սվսվացին մեղմ ու փըսփսացին, իսկ վերևից, ծռված բերանով նայում էր խանդոտ լուսինը։

*
* *

Վերադառնում են նրանք թևանցուկ և ուրախ։ Արշակը կատակներ է անում, Լյալյան արձագանքում։

Պարոն Ասատուր Խաչքարյանի տան դռան մոտ նրանք յերկար կանգնեցին։ Արշակին դժվար էր բաժանվել նոր վաստակած այդ յերջանկությունից։ Վորքան հնարավոր էր, նա ձգում էր խոսակցության նյութը, վոր ավելի սպասեն, վոր դարձյալ նայի նրան ու հիանա։

Արդեն գիշերը թեքվել է բավական։ Մեղմ ու դուրեկան զեփյուռն է շոյում։ Նրանք բաժանվեցին հրաժեշտի համբույրով։ Արշակը խանդոտորեն գրկեց նրան, պինդ-պինդ համբուրեց, ասես ընդմիշտ էր բաժանվում նրանից։

Գնում է Արշակը մտքերի կոշմարի տակ։

«Իսկ Վերգուշը,—հարցնում է նա ինքն իրեն,—ի՞նչ պիտի անեմ նրա հետ։ Արդյոք քնած կլինի՞։ Յերանի թե քնած լիներ։ Արդյոք հարց ու փորձ չի՞ անի, իսկ յես ի՞նչ պատասխանեմ նրան, ի՞նչ ասեմ։ Ի՞նչ.. բաժանվե՞լ նրանից, կատարե՞լ Լյալյային տված խոստումը, բայց ինչպե՞ս, չէ՞ վոր սիրել եմ նրան, նա յել ինձ սիրել ու սիրում է անչափ, տանջվում ինձ համար։ Իսկ Լյալյա՞ն, նրան տված խոստումը։ Նրա համբույրնե՞րը։ Ձէ, վոչ մի բան պահել չի կարող, Լյալյան իմս է լինելու։ Բայց ի՞նչքան լավ կլիներ մնալ Վերգուշի հետ և միևնույն ժամանակ լիներ Լյալյայի հետ։ Բայց այդ արդեն անբարոյականություն է։ Լյալյան չի ընդունի, ինչպես նաև Վերգուշը։ Իսկ ի՞նչ անել։—

— Նա մտածեց խորը, հուզումնալի և իրեն սրտապընդելով սկսեց. – Ձէ, միակ յելքն այդ է... հեռանալ Վերգուշից։ Զոհել ամեն ինչ Լյալյայի համար և վերջապես նա այնպիսի դիրքի չէ, վոր Վերգուշից ավելի լավին և արժանի—գործարկոմի նախագահ, կենտվարչության անդամ, համագումարների պատգամավոր, հանձնաժողովների անդամ և դեռ ավելի ընդարձակ ճանապարհ ու բարձունքներ կան նրա առաջը։ Իսկ ի՞նչ է ներկայացնում Վերգուշն իրենից, մի հասարակ, կիսակիրթ աղջիկ, վորը սիրում է իրեն ճիշտ է, գուլպա չէ կարկատում, լվացք անում, մաքրում սենյակը և շատ-շատ մասնակցում է պատգամավորուհիների պարապմունքներին ու սովորում Խորհրդային Միության կառուցվածքը։ Իսկ Լյալյա՞ն, նա լայն շրջապատի աղջիկ է, կուլտուրական և վոր ծածկում է բոլոր առավելությունները՝ գեղեցիկ է ու հրապուրիչ։ Յեվ վերջապես հո չի կարելի միշտ միևնույն կերակուրից ուտել։ Եդ ինչպե՞ս, միևնույն տեսակի կերակուրից վոր ձանձրանում է մարդ, էլ ինչպե՞ս հավիտյանս կարող է ապրել միևնույն կնոջ հետ։ Ասենք Վերգուշն ենքան էլ գուցե չտանջվի։ Կանցնի վորոշ ժամանակ և ամեն ինչ կմոռանա»։

Այսպես։ Գնում է Արշակը և խորհրդածում ինքն իր հետ։ Նա համոզում, նախապատրաստում է իրեն՝ Լյալյային տված խոստումը կատարելու համար։

չքացավ մտքից իր սպասումներով ու անհանգստությամբ։ Նա ավելի ամուր գրկեց Լյալյային։ Նրանց շուրթերն իրար խառնվեցին և նա ամուր համբուրեց այն շուրթերը, վորոնք այնքա՜ն հուզել եյին նրան։

Ծառերը սըվվացին մեղմ ու փըսփսացին, իսկ վերևից, ծաված բերանով նայում եր խանդոտ լուսինը։

* * *

Վերադառնում են նրանք Թեանցուկ և ուրախ։ Արշակը կատակներ և անում, Լյալյան արձագանքում։

Պարոն Ասատուր Խաչքարյանի տան դռան մոտ նրանք յերկար կանգնեցին։ Արշակին դժվար եր բաժանվել նոր վաստակած այդ յերջանկությունից։ Վորքան հնարավոր եր, նա ձգում եր խոսակցության նյութը, վոր ավելի սպասեն, վոր դարձյալ նայի նրան ու հիանա։

Արդեն գիշերը թսել և բավական։ Մեղմ ու դուրեկան զեփյուռն և շոյում։ Նրանք բաժանվեցին հրաժեշտի համբույրով։ Արշակը խանդոտորեն գրկեց նրան, պինդ-պինդ համբուրեց, ասես ընդմիշտ եր բաժանվում նրանից։

Գնում և Արշակը մտքերի կոշմարի տակ։

«Իսկ Վերգուշը,—հարցնում և նա ինքն իրեն, — ի՞նչ պիտի անեմ նրա հետ։ Արդյոք քնած կլինի՞։ Յերանի թե քնած լիներ։ Արդյոք հարց ու փորձ չի՞ անի, իսկ յես ի՞նչ պատասխանեմ նրան, ի՞նչ ասեմ։ Ի՞նչ.. բաժանվե՞լ նրանից, կատարե՞լ Լյալյային տված խոստումը, բայց ինչպե՞ս, չե՞ վոր սիրել եմ նրան, նա յել ինձ սիրել ու սիրում և անչափ, տանջվում ինձ համար։ Իսկ Լյալյա՞ն, նրան տված խոստումը։ Նրա համ-

բույրնե՞րը։ Չե՛, վոչ մի բան պահել չի կարող, Լյալյան իմս և լինելու։ Բայց ի՞նչքան լավ կլիներ մնալ Վերգուշի հետ և միևնույն ժամանակ լիներ Լյալյայի հետ։ Բայց այդ արդեն անբարոյականություն և։ Լյալյան չի ընդունի, ինչպես նաև Վերգուշը։ Իսկ ի՞նչ անել։—

— Նա մտածեց խորը, հուզումնալի և իրեն սրտապընդելով սկսեց. — Չե՛, միակ ելքն այդ և... հեռանալ Վերգուշից։ Զոհել ամեն ինչ Լյալյայի համար և վերջապես նա այնպիսի գիրքի չե, վոր Վերգուշից ավելի լավին և արժանի—գործարկոմի նախագահ, կենտվարչության անդամ, համագումարների պատգամավոր, հանձնաժողովների անդամ և դեռ ավելի ընդարձակ ճանապարհ ու բարձունքներ կան նրա առաջը։ Իսկ ի՞նչ և ներկայացնում Վերգուշն իրենից, մի հասարակ, կիսակիրթ աղջիկ, վորը սիրում և իրեն ճիշտ և, դուլպա յե կարկատում, լվացք անում, մաքրում սենյակը և շատ-շատ ժամանակցում և պատգամավորուհիների պարապմունքներին ու սովորում Խորհրդային Միության կառուցվածքը։ Իսկ Լյալյա՞ն, նա լայն շրջապատի աղջիկ և, կուլտուրական և վոր ծածկում և բոլոր առավելությունները՝ գեղեցիկ և ու հրապուրիչ։ Յեվ վերջապես հո չի կարելի միշտ միևնույն կերակուրից ուտել։ Եդ ինչպե՞ս, միևնույն տեսակի կերակուրից վոր ձանձրանում և մարդ, ել ինչպե՞ս հավիտյանս կարող և ապրել միևնույն կնոջ հետ։ Ասենք Վերգուշն ենքան ել գուցե չտանջվի։ Կանցնի վորոշ ժամանակ և ամեն ինչ կմոռանա»։

Այսպես։ Գնում և Արշակը և խորհրդածում ինքն իր հետ։ Նա համոզում, նախապատրաստում և իրեն՝ Լյալյային տված խոստումը կատարելու համար։

Վերգուշը գիշերային շորերով բացեց սենյակի դուռը և առանց Արշակի հետ խոսք փոխանակելու պառկեց։ Իսկույն քունը տարավ։

Այդ լավ էր, Արշակը հարց ու փորձերից ազատվեց։

II

Նրանք վորոշված ժամ ունեյին և տեղ։ Լյալյան այլևս տպարան չեր գալիս։

Արշակը կես ժամ առաջ գալիս եր վորոշված փողոցի անկյունը և սպասում Լյալյային։

Թևանցուկ շրջում եյին։ Բարձրանում վերև, ուր թզուկ ուռիներ կային և բարդիներ բարձրահասակ, ուր յերբեմն գեր լուսինն եր նայում բերանաբաց և յերբեմն կեռ լուսնեղջյուրը՝ աստղերի կկոցուն հույլի միջից։

Թզուկ ուռիները խանդոտորեն լսում եյին նրանց համբույրները և սարսռում և սրսփում և փսփսում։

Ժամերն անցնում եյին։

Արշակը շատ ժողովներ լքեց, շատերը մոռացավ, շատերն ինքը չհրավիրեց։ Առաջին պլանում միշտ դիտեց Լյալյային, վերջինում՝ գործարկոմի աշխատանքները։ Պարոն Ասատուր Խաչքարյանի հետ «խնամախոսությունը» նախապատրաստելու համար, Արշակն ավելի տենդոտ ու սրտագին սկսեց զբաղվել նրա գործերով—ռոճիկի բարձրացման խնդրով, սենյակների խնդրով։ Նոր ամուսնությունն արագացնելու համար, Վերգուշի նկատմամբ ցուցաբերած սառնությունը նա կրկնապատկեց, բազմապատկեց և մնաց անտարբեր։ Նա քաշվում եր, ամաչում միանգամից հայտնել Վեր-

գուշին, վոր նրան չի սիրում, իր անտարբեր վերաբերմունքով նա ուզում եր այնտեղը հասցնել, վոր Վերգուշն ինքը բաժանվելու առաջարկություն անի։

Իսկ Վերգո՞ւշը։

Նա գնալով դալկանում ու նիհարում եր։ Մտատանջությունը քամում եր նրան։ Քուն և հանգիստ չուներ։ Նստում եր յերեկոները, սպասում յերկար, մտածում, վերցնում ընթերցանության գիրքը, վոչինչ չեր հասկանում կարդացածից և այսպես ամեն յերեկո։

Արդեն վորոշ շշուկներ հասել եյին Վերգուշին, նրան ասել եյին, վոր Արշակն ինչ վոր կոկետկայի հետ ե շրջում, ներկված մի քաղքենուհու հետ և այդ շշուկները կրծում եյին նրա սիրտը, հալում ու մաշում եյին նրան։

Ինչպե՞ս հաշտվել այդ մտքի հետ, ի՞նչպես հանդուրժել Արշակին ուրիշի հետ։ Ինչպես բաժանվել Արշակից, ի՞նչպես մոռանալ նրան, վորին սիրել ու սիրում ե Վերգուշը։

Մտածում եր Վերգուշը, տանջվում յերկար և սպասում կարոտագին։

Գալիս եր Արշակը կես գիշերին, սառը բարևում եր։ Գալիս եր հաճախ հարբած, այս ավելի յեր զարմացնում ու վրդովեցնում Վերգուշին։

Նա, վորն ատում եր խմիչքը, այժմ հարբած և տուն գալիս, նա, վոր համբույրներով եր դիմավորում իրեն, այժմ նստում ե անխոս ու անպատասխան։

Բայց Վերգուշն սկսեց ավելի խիզախորեն դնել հարցը, նա մի կողմ շպրտեց իր զգացմունքները, մոռացավ Արշակին կապող սիրո թուլությունը և մի յերեկո հարցը դրեց ավելի պարզ ու կտրուկ.—

— Արշա՛կ, վերջապես յես պետք է իմանամ, թե ինչն է քեզ այդպես սառեցրել իմ հանդեպ։ Սա ի՞նչ վերաբերմունք է վերջապես։

Արշակին քիչ տարօրինակ թվաց Վերգուշի այդ տոնը։

— Ամեն բան հո չի՞ կարելի քեզ ասել,— պատասխանեց նա սառնորեն։

— Ախ այդպե՞ս։ Այդ վո՞ր օրից։ Արդեն այդտե՞ղն ես հասել։

— Վո՞րտեղ։

— Այնտեղ, վոր չես ցանկանում ինձ պատմել քեզ տանջող յերևույթների մասին։

— Ամեն ինչ պատմելու կարիք չկա։

— Վորովհետև այդ քեզ ձեռնտու չի՞ գուցե։

— Դիցուկ և այդպես։

— Հա՛, այդպես ասա...

— Հա՜ա՜ա՜...

— Առանց բերանը ծամելու և ծաղրելու։

— Այդպես է։

— Ի հարկե, այդպես կլինի, վորովհետև...

— Ի՞նչ վորովհետև, հը՞, ի՞նչ վորովհետև, ի՞նչ...

Արշակը շանթահարվածի նման էր։

— Վորովհետև լսել եմ, սիրահարվե՛լ ես... գուցե քո՛ւ կոկետկան է այդպես սովորեցրել... Հա՜, հա՜, հա՜, հա՜...

Վերգուշի ծաղրն սպանիչ էր։ Արշակը քիչ մնաց այլայլվեր, բայց նա իրեն գտավ և պատասխանեց սառնարյուն կերպով.—

— Դիցուկ և այդպես։ Ի՞նչ կա վոր...

— Հմա՜, ուրեմն ճի՞շտ է,— վրդովված բացական-

չեց Վերգուշը,— յեթե այդ ճիշտ է, ել ինչո՞ւ, ինչո՞ւ չես գալիս այստեղ, ինչո՞ւ չես կեղծավորություն անում, խնդիրը պարզ դիր և հեռացիր։ Կարծում ես, վոր շա՜տ պիտի մտածեմ քո մասին։ Յերբեք, սիրում եյի քեզ, ճիշտ է, բայց կարող եմ և մոռանալ։ Իսկ դու վողորմելիի մեկն ես, սիրահարվե՛լ է և քաջություն չունի պարզորեն հայտնել ու հեռանալ...

Արշակը լուռ եր ու մտածկոտ, պատասխան չեր գտնում։ Նա տանջվում եր ներսից և միևնույն ժամանակ աշխատում եր ցույց չտալ այդ Վերգուշին և յերևալ անտարբեր։

* * *

Ամենօրյա անախորժ հանդիպումները Վերգուշի հետ, ջղեր գզգող նրա հարձակումները, ներքին յերկվությունն ու տանջանքը, դրսի խոսակցությունները, Արշակին ստիպեցին խնդիրը դնել ավելի պարզ ու լուծել։

Նախ նրան բնակարան եր հարկավոր։ Գործ դրեց բոլոր ջանքերը, գործարկոմի անունից գրություններ հղեց քաղխորհրդին, հաջողեցրեց մի կերպ և ձեռք բերեց մի սենյակ, ապա սառնասրտությամբ հայտնեց Վերգուշին, վոր գնում է, բաժանվում իրենից, վոր ընտանիքը խանգարում է իրեն, չի թողնում սովորել, ավելի առաջ գնալ, վոր նախընտրել է մենակ ապրել, վոր այս, վոր այն...

Այլայլվեց Վերգուշը, ճիշտ է, բայց արտաքնապես նա իրեն ցույց տվեց բոլորովին անտարբեր։ Սեղմեց ատամները և պահեց մորմոքը սրտում։ Նա

Արշակին ուզեց հասկացնել, որ առանց նրան ել կարող ե ապրել, ապրել հանգիստ և անայլայլ։

Բայց յերբ Արշակն իր թղթերով ու իրերով դուրս յեկավ, առանց «մնաս բարև» ով, Վերգուշի սիրտն ասես կտոր-կտոր արին, նա դառնությամբ փղձկաց և յերկարորեն հեկեկաց սրտակտոր ու մորմոքալի։

Գնում ե Արշակն արբեցած նոր հեռանկարներով, նոր հորիզոններով, նոր «բախտով»։

*
* *

Ինչպես պղնձյա սկավառակն ընկնի սալահատակին, ամուր զրնգա և զրնգոցն արագորեն չոր կողմը տարածվի, այնպես էլ այդ լուրը տարածվեց ողջ տպարանում։

— Արշակը բաժանվել ե կնոջից։

— Կինը նրան դուրս ե արել։

— Պարոն Խաչքարին փեսա յա դառնում։

Խոսում ու պատմում են բոլոր բաժանմունքներում։ Պատմեց Բոցբողազը յուրահատուկ գունեղությամբ ու պատկերազարդումով։ Արին զանազան յենթադրություններ, գնահատումներ, վերագնահատումներ։

Արշակը յերկու օր գործի չեկավ։

Պարոն Խաչքարյանը հուզված և անհանգիստ դրության մեջ եր։ Նրան վոգևորում եր Արշակի հետ բարեկամանալու միտքը։

Տարածվեց և մի այլ լուր, ավելի ուրախալի. Բոցբողազը պատմեց լիաթոք հրճվանքով։ Պատկերացրեց քեֆի մանրամասնությունները, բաժակաճառերը։

Ֆընդըքյանի և Սիրուշի կարմիր հարսանիքի լուրն եր այդ։

III

Գործը վերջապես դատարան ընկավ։ Լոֆ-լոֆ Ալեքի կինն այլևս հանդուրժել չկարողացավ ամուսնու ծեծերն ու հայհոյանքները։ Տպարանի կին կազմակերպչուհին խորհուրդ տվեց հարցը տեղափոխել դատարան և սկսեց նախապատրաստվել այդ ուղղությամբ, բայց Լոֆ-լոֆն իմանալով բանի եյությունը՝ ցանկացավ կանխել։ Նա ավելի շուտ դիմեց դատարան և ներկայացրեց կնոջն ամբաստանող մի ամբողջ բողոքագիրք։

Նա դատարանին գանգատվում եր, որ կինն իրեն խանգարում ե, որ պետք յեղածին չափ չի խնամում, որ դավաճանում ե, ուրիշ տղամարդիկ ե տանում-բերում իր մոտ, որ վերջապես ամուսնանալու ժամանակ նա իրեն խաբել ե, թե ինքը ջահել ու «կույս աղջիկ ե», այնինչ բոլորովին հակառակն ե դուրս յեկել, որ նա մազերը ներկել ե ջահել յերևալու համար, այնինչ պառավ ե յեղել, որ իր փողերը գողանում ե, որ տունը թալանում ե, և վերջապես ինչ որ միտն եր յեկել, գրի յեր առել ու ներկայացրել դատարան։

Յեվ ահա, հիմա վարպետ Ակոբը ծանոթանում ե այդ գործի հետ, կարդում ու ծիծաղում ե բարձրաձայն, պատմում իր կոլեգաներին։ Նրանք ել են ծիծաղում։

Բայց Լոֆ-լոֆ Ալեքն ի՞նչ իմանար, որ այդ գործը վարպետ Ակոբի ձեռքը պիտի ընկներ, որը շատ լավ ծանոթ ե իրերի դրությանը։

Պատահեց այդպես։

Արշակին ուզեց հասկացնել, վոր առանց նրան ել կարող է ապրել, ապրել հանգիստ և անայլայլ։

Բայց յերբ Արշակն իր թղթերով ու իրերով դուրս յեկավ, սառն «մնաս բարև» ով, Վերգուշի սիրտն ասես կտոր-կտոր արին, նա դառնությամբ փղձկաց և յերկարորեն հեկեկաց սրտակտոր ու մորմոքալի։

Գնում է Արշակն արբեցած նոր հեռանկարներով, նոր հորիզոններով, նոր «բախտով»։

*
* *

Ինչպես պղնձյա սկավառակն ընկնի սալահատակին, ամուր զրնգա և զրնգոցն արագորեն չոր կողմը տարածվի, այնպես ել այդ լուրը տարածվեց վողջ տպարանում։

— Արշակը բաժանվել է կնոջից։

— Կինը նրան դուրս է արել։

— Պարոն Խաչքարին փեսա չա դառնում։

Խոսում ու պատմում են բոլոր բաժանմունքներում։ Պատմեց Բոշբողազը յուրահատուկ գունեղությամբ ու պատկերազարդումով։ Արին զանազան յենթադրություններ, գնահատումներ, վերագնահատումներ։

Արշակը յերկու որ գործի չեկավ։

Պարոն Խաչքարյանը հուզված և անհանգիստ դրության մեջ եր։ Նրան վոգևորում եր Արշակի հետ բարեկամանալու միտքը։

Տարածվեց և մի այլ լուր, ավելի ուրախալի. Բոշբողազը պատմեց լիաթոք հրճվանքով։ Պատկերացրեց քեֆի մանրամասնությունները, բաժակաճառերը։

Ֆընդըքյանի և Սիրուշի կարմիր հարսանիքի լուրն եր այդ։

III

Գործը վերջապես դատարան ընկավ։ Լոֆ-լոֆ Ալեքի կինն այլևս հանդուրժել չկարողացավ ամուսնու ծեծերն ու հայհոյանքները։ Տպարանի կին կազմակերպչուհին խորհուրդ տվեց հարցը տեղափոխել դատարան և սկսեց նախապատրաստվել այդ ուղղությամբ, բայց Լոֆ-լոֆն իմանալով բանի եյությունը՝ ցանկացավ կանխել։ Նա ավելի շուտ դիմեց դատարան և ներկայացրեց կնոջն ամբաստանող մի ամբողջ բողոքագիր։

Նա դատարանին գանգատվում եր, վոր կինն իրեն խանգարում է, վոր պետք յեղածին չափ չի խնամում, վոր դավաճանում է, ուրիշ տղամարդիկ է տանում-բերում իր մոտ, վոր վերջապես ամուսնանալու ժամանակ նա իրեն խաբել է, թե ինքը ջահել ու «կույս աղջիկ է», այնինչ բոլորովին հակառակն է դուրս յեկել, վոր նա մազերը ներկել է ջահել յերևալու համար, այնինչ պառավ է յեղել, վոր իր փողերը գողանում է, վոր տունը թալանում է, և վերջապես ինչ վոր միտն եր յեկել, գրի յեր առել ու ներկայացրել դատարան։

Յեվ ահա, հիմա վարպետ Ակոբը ծանոթանում է այդ գործի հետ, կարդում ու ծիծաղում է բարձրաձայն, պատմում իր կոլեգաներին։ Նրանք ել են ծիծաղում։

Բայց Լոֆ-լոֆ Ալեքն ի՞նչ իմանար, վոր այդ գործը վարպետ Ակոբի ձեռքը պիտի ընկներ, վորը շատ լավ ծանոթ է իրերի դրությանը։

Պատահեց այդպես։

Աշունը պտտվել, գարուն էր դարձել և վարպետ Ակոբն այժմ արդեն նախագահում է դատական նիստերին:

Յեվ ահա ուրիշ գործերի թվում, այդ որը քննվում էր նաև Լոֆ-լոֆ Ալեքի հարուցած գործը:

Պատահականությունները սովորաբար փնտրում են միայն հեքյաթներում և վիպերում, սակայն կյանքումն էլ այդպիսի պատահականություններ շատ են լինում, յերբեմն հետաքրքիր, զարմանալի:

Գուցե այդ դեպքը ներկա վեպի հեղինակի կողմից վորպես պատահականություն դիտվի, բայց գուցե և դա դատարանի քարտուղարի սրամտության արդյունքն էր, գուցե նա սարքել էր այնպես, վոր տպագրական բանվորի գործը քննվի դատարանի տպագրական բանվորական կազմով:

Ատենակալները հրավիրվել էին տպարանից— Դասակարգ Հայրոն ու Մարտիրոս Ֆընդըքյանը:

Ժամի 10-ին քարտուղարը զանգահարեց և առանձին յերկյուղածությամբ հայտարարեց,—

— Դատարանը գալիս է:

Բոլորը վոտքի կանգնեցին:

Առաջինը ներս մտավ ներկա վեպի ընթերցողին արդեն ծանոթ վարպետ Ակոբը և ապա, նրա հետևից Մարտիրոս Ֆընդըքյանը և Դասակարգ Հայրոն:

Լոֆ-լոֆ Ալեքն ապշել էր: Յերա՞զ է արդյոք, թե իրականություն: Սա հո կխայտառակե՞ն իրեն:

Դասակարգ Հայրոն, շրթունքները կծելով, հազիվ ծիծաղը զսպում էր:

Առաջինը քննության առնվեց հետաքրքիր մի գործ:

Միջակից բարձր տնտեսության տեր մի գյուղացի գողացել էր իր հարևան, չքավոր գյուղացու միակ լծկան եզը, գիշերով մորթել, միսը դրել ղավուրմա և կաշին անհայտացրել:

Մեղադրական եզրակացությունը կարդացվեց, վկաները հարցաքննվեցին և դատարանը հարցերով դիմեց մեղադրյալ հաղթանդամ ու միրուքավոր գյուղացուն:

— Մեղադրյալ Սերոբյան, դուք ինչպե՞ս գողացաք և անհայտացրիք Սարուխանյանի եզը:

Մեղադրյալը խոր գլուխ տվեց և աղերսական տոնով պատասխանեց,—

— Արդարադատ դիվան ենող դատավորներ, յես ինչ ըսեմ, դուք ըսեցեք:

— Իսկ դուք ինչպիսի՞ տնտեսության տեր եք:

— Արդարադատ դիվան ենող դատավորներ, յես ինչ ըսեմ, դուք ըսեցեք:

Սկսած անուն ազգանունից, մինչև գործին վերաբերվող ամենավերջին հարցին «մեղադրյալ Սերոբյանը» միևնույն պատասխանը տվեց:

— Մեղադրյալ Սերոբյան,— վերջացրեց իր հարցերը դատարանի նախագահը,— դուք ձեզ օրենքի առաջ մեղավոր ճանաչո՞ւմ եք:

— Արդարադատ դիվան ենող դատավորներ, յես ինչ ըսեմ, դուք ըսեցեք:

«Արդարադատ դիվան ենող դատավորները» խորհրդակցական սենյակում կես ժամից ավելի զբաղվելուց հետո, յեկան և հայտարարեցին, վոր «Սարիբեկ Սարգսի Սերոբյանը, 56 տարեկան, ամուսնացած, անգրագետ, չդատված, պարապմունքով հողագործ, չքավոր գյու-

Աշունը պատվել, գալուն էր դարձել և վարպետ Ակոբն այժմ արդեն նախագահում է դատական նիստերին։

Յեվ ահա ուրիշ գործերի թվում, այդ օրը քննվում էր նաև Լոէ-լոէ Ալեքի հարուցած գործը։

Պատահականությունները սովորաբար փնտռում են միայն հեքյաթներում և վեպերում, սակայն կյանքումն էլ այդպիսի պատահականություններ շատ են լինում, յերբեմն հետաքրքիր, զարմանալի։

Գուցե այդ դեպքը ներկա վեպի հեղինակի կողմից վորպես պատահականություն դիտվի, բայց գուցե և դա դատարանի քարտուղարի սրամտության արդյունքն էր, գուցե նա սարքել էր այնպես, վոր տպագրական բանվորի գործը քննվի դատարանի տպագրական բանվորական կազմով։

Ատենակալները հրավիրվել էին տպարանից— Դասակարգ Հայրոն ու Մարտիրոս Ֆընդըքյանը։

Ժամի 10-ին քարտուղարը զանգահարեց և առանձին յերկյուղածությամբ հայտարարեց,—

— Դատարանը գալիս է։

Բոլորը վոտքի կանգնեցին։

Առաջինը ներս մտավ ներկա վեպի ընթերցողին արդեն ծանոթ վարպետ Ակոբը և ապա, նրա հետևից Մարտիրոս Ֆընդըքյանը և Դասակարգ Հայրոն։

Լոէ-լոէ Ալեքն ապշել էր։ Յերա՞զ է արդյոք, թե իրականություն։ Սա հո կխայտառակե՞ն իրեն։

Դասակարգ Հայրոն, շրթունքները կծելով, հազիվ ծիծաղը զսպում էր։

Առաջինը քննության առնվեց հետաքրքիր մի գործ։

Միջակից բարձր տնտեսության տեր մի գյուղացի գողացել էր իր հարևան, չքավոր գյուղացու միակ լծկան յեզը, գիշերով մորթել, միսը դրել ղավուրմա և կաշին անհայտացրել։

Մեղադրական յեզրակացությունը կարդացվեց, վկաները հարցաքննվեցին և դատարանը հարցերով դիմեց մեղադրյալ հաղթանդամ ու միրուքավոր գյուղացուն։

— Մեղադրյալ Սերոբյան, դուք ինչպե՞ս գողացաք և անհայտացրիք Սարուխանյանի յեզը։

Մեղադրյալը խոր գլուխ տվեց և աղերսական տոնով պատասխանեց,—

— Արդարադատ դիվան ենող դատավորներ, չես ինչ ըսեմ, դուք ըսեցեք։

— Իսկ դուք ինչպիսի՞ տնտեսության տեր եք։

— Արդարադատ դիվան ենող դատավորներ, չես ինչ ըսեմ, դուք ըսեցեք։

Սկսած անուն ազգանունից, մինչև գործին վերաբերվող ամենավերջին հարցին «մեղադրյալ Սերոբյանը» միևնույն պատասխանը տվեց։

— Մեղադրյալ Սերոբյան,—վերջացրեց իր հարցերը դատարանի նախագահը,—դուք ձեզ օրենքի առաջ մեղավոր ճանաչո՞ւմ եք։

— Արդարադատ դիվան ենող դատավորներ, չես ինչ ըսեմ, դուք ըսեցեք։

«Արդարադատ դիվան ենող դատավորները» խորհրդակցական սենյակում կես ժամից ավելի զբաղվելուց հետո, յեկան և հայտարարեցին, վոր «Սարիբեգ Սարգսի Սերոբյանը, 56 տարեկան, ամուսնացած, անգրագետ, չդատված, պարապմունքով հողագործ, չքավոր գյու-

դացի Ալեքսան Վարդանի Սարուխանյանի միակ յեզը գողանալու և մի գիշերում անհայտացնելու համար դատապարտվում է հինգ տարվա ազատազրկման»։

Պահակները կծկված Սարիբեգին առաջն առած տարան։

— Լսվում է գործ ըստ մեղադրանքի Ալեքսան Վարդանյանի, քրեական օրենսգրքի...

Լոֆ-լոֆ Ալեքն ընդհատեց նախագահին, շանթվածի նման վեր թռավ տեղից, առանց ձևականության, առանց «ընկեր նախագահ» կամ «ընկեր դատավորներ» ասելու, հուզված բացականչեց.—

— Վարպետ Ակոբ, յես խնդրում եմ իմ գործը յետ վերցնել, յես յետ եմ վերցնում իմ դատը, յես չեմ ուզում...

— Են ժամանակ յես եմ քեզ դատի տալիս, աննամ՛ուս, անամ՛ոթ,—բղավեց նրա կինը վերջին շարքերից։

— Գուցե դուք նման կազմով չեք ուզում, որ քննվի ձեր գործը, դուք իրավունք ունեք առարկելու այդ դեպքում։

— Չէ՛, չէ՛, վարպետ Ակո՛բ, Հայրո ջա՛ն, հետ տվեք, հետ տվեք, ախպե՛ր, չեմ ուզում։

Հանդիսականները զարմացել եյին Ալեքի տարորինակության վրա։

Դատարանը վորոշեց հետ տալ Ալեքսան Վարդանյանի գործը և հայտնեց նրա կնոջը, յեթե նա դժգոհ է, կարող է նա ընդհանուր կարգով գործ հարուցել իր ամուսնու դեմ։

Ալեքը դուրս յեկավ քրտնած, առանց կնոջ յերեսը նայելու և հեռացավ արագաքայլ։

* * *

Լոֆ-լոֆ Ալեքի դատի և դատաստանական կազմի մասին խոսում ու քրքջում եր ամբողջ տպարանը։

Բոզբողազը քշում եր։ Արշավում։ Նա իր տարերքի մեջ եր, վոգևորության գագաթնակետին։

Ֆընդըքյանը պատրաստում եր պատի թերթի հերթական համարը։

IV

Գործարկոմն իր կողմից բոլոր միջոցներն սպառելուց հետո, նրա կոմունիստական ֆրակցիան հարմար գտավ Արշակի հարցի վերջնական լուծումը հանձնել կոմբջիջին։

Արշակն ամբողջովին գործիք եր դարձել «Լուսավորիչ» տպարանի նախկին տեր ու տնորեն պարոն Ասատուր Խաչքարյանի ձեռքին. ուշադրություն չեր դարձնում գործարկոմի աշխատանքներին, անփութությունն ու թափթփվածությունը ծայր աստիճանի յեր հասել, նա լքում եր կուսակցական ժողովները, հետաձգում ու կանոնավոր կերպով չեր հրավիրում գործարկոմի նիստերը, ուշադրություն չեր նվիրում արտադրական խորհրդակցությունների աշխատանքներին և այս բոլորի մասին պետք եր մտածել, պետք եր մտածել ավելի լուրջ և շտապ միջոցներ ձեռնարկել։

Կոմբջիջի ժողովը հավաքվել է այդ խնդիրը քննելու համար։ Հավաքվել է հենց տպարանում, տառարկղերի շուրջը։

Վարպետ Ակոբը, չնայած «ընկեր դատավոր» է դարձել նրանց համար, բայց ամուր կերպով շարու-

նակում եր կապված միայն տպագրական կյանքին, նրա առօրյային և աշխատանքներին։ Կոմբջիջի այդ օրվա ժողովին նա յել եր յեկել։

Յեկել եր և կուսակցության կոմիտեյի քարտուղարը։ Նախկին բանվոր եր նա, այժմ կտրված բանվորական ստանոկից, բայց կապված բանվորական կյանքին ու առօրյային։ Նա անձամբ շրջում եր բոլոր գործարանները, ծանոթանում բանվորների աշխատանքներին ու դրությանը, առավոտները կանուխ նա հաճախ շրջում ե բանվորական բնակարանները, ստուգում, հետաքրքրվում, բացերի ու թերությունների վերացման համար կտրուկ միջոցների դիմում։

Բարձրահասակ ե նա և խրոխտ, ասես վիշկա լինի, բայց չուգունից, պողպատից ձուլված, ամուր կանգնած ու հաստատակամ։ Ճակատը լերկ ե ու պայծառ, հայացքը թափանցող։

Նրա ներկայությունը չափազանց ճնշում եր Արշակին։ Մազերը թաց են, ճակատը վողողված։

Բջիջի քարտուղար Բաբաջանը ժողովը բացեց և սեղմ ու ժլատ խոսքերով ծանոթացրեց իրերի դրության հետ։

— Ցավալի հանգամանք ա, ընկերներ, — ասում եր նա, — վոր մարդկանց առաջ ես քաշում, օրինակի համար, մեծ հույսերով, բայց եդ բոլորը ջուրն ե ընկնում։ Մեր Արշակն իրեն պահել չկարողացավ և նրա արարքներն, օրինակի համար, մեր ամբողջ կուսակցության անունը խայտառակեց։ Նա գլորվեց մինչև պարոն Խաչքարյանի գիրկը, իսկ եդ փորձված գելն ենպես իր ձեռքն առավ ես մեր միամիտին, վոր, օրինակի համար, մինչև անգամ պատճառ դարձավ Արշակի ընտանիքի քայքայմանը և բաժանմանը։

Բաբաջանը հուզված շարունակում եր, ապա խոսք խնդրեց Ալի Սադղ-օղլին. Նա դառնությամբ ու խորը վշտով եր խոսում, ասես դամբանական եր ասում մեռելի ընկերոջ շիրմաթումբի վրա։

— Ես ջուռա բան, յես չեյինք իսպասի, ինկերներ, մարդ վոր մտածում ես, ադամըն յուրագլի կտոր-կտոր ա ինում։ Բու բիզիմ ինկեր Արշակի չոխ խաբար ոլդու, չո՞խ։ Հիմա ինկերնե՛ր, իսպիսի ադամա տեղկոմըն նախագահի թողնել չես կարող։ Բա անկուսակցական բանվորին ինչ կասես, ալիր դըր, յոլդաշլար, ալիր։ Յես կարծում ա, վոր պետք ա փոխեմ Արշակին, պետք ա փոխեմ քանի շուտ ա...,— վերջին խոսքերն ավելի սրտանց ասավ նա և հուզված նստեց։

Ֆընդըքյանն իր տեմպերամենտին հատուկ ճառասեց, վորոշ անհամբերողականություն, վոր նա բերել եր կապիտալիստական աշխարհից, նորից յերևան յեկավ։ Նա վոչ միայն գտավ, վոր Արշակին գործարկոմի նախագահությունից պետք ե հանել, այլև անհանդուրժելի գտավ նրա ներկայությունը կուսակցության շարքերում, ինչպես նաև տպարանում, մինչև անգամ վորպես գրաշարի։

— Պարոնին աղջիկը կսիրե, բան մը չունինք, թող յերթա սիրե, անոր քոշկին մեջ ողի յե խմում և հարբում, վազ անցանք, թող ընե, բայց մենք չենք հանդուրժեր և թույլ չենք տար, վոր քոմունիստ մը բուրժուազիին շահերը պաշտպանե, գործիք դառնա անոր ձեռքին, բանվորներին խաբե և իրեն հանձնարարված աշխատանքներու վրա թքնե։ Մենք այդ թույլ չենք տար։ Մեր կուսակցությունն այդպիսիների տեղը չե։ Յես առաջարկում եմ Արշակին հանել իր պաշ-

տոնեն, վտարել կուսակցության շարքերին ու տպարանին։

Մաշինա Արտաշը խոսեց սառն և հանգիստ,—

— Ես Ֆընդըքյանի նման հարցը խիստ չեմ դնում, ընկերնե՛ր։ Արշակը մեր կուսակցության համար բոլորովին կորած չե։ Ինչ խոսք, վոր Արշակին գործարկոմի նախագահ թողնելն անմտություն ե և կուսակցության համար վարկաբեկիչ, այդ հարցում ընկեր Ալին միանգամայն ճիշտ մոտեցավ։ Վերջապես ինչպե՞ս կարելի յե հանդուրժել, վոր Արշակի նման անգործունյա, տատանվողին, փալասի մեկին, թող այս խոսքը ծանր չթվա ընկեր Արշակին, թողնել մեր վողջ բանվորության գործարկոմի նախագահի պաշտոնում։ Դա անկարելի յե, ընկերներ։ Սխալ ե նաև այն կարծիքը, թե Արշակին պետք ե կուսակցությունից վտարել։ Մեր բյուրոն, ճիշտ ե, նրան շատ տեղին կերպով արդեն մի նկատողության արժանացրել ե, բայց ես կարծում եմ, վոր մենք կարող կլինենք Արշակին պոկել ոտար ազդեցություններից և ավելի մոտեցնել մեզ, մանավանդ վոր նա դարձյալ գալու յե ստանոկի մոտ, և այդ ստանոկը նրա համար ավելի դաստիարակիչ կդառնա։

Ուշադիր դիտողը կնկատեր, թե ինչպես կոմիտեյի քարտուղարը կկոցուն ու թափանցող հայացքով դիտում եր մեկ Արշակին, մեկ հռետորին, մեկ ժողովականներին։ Նա մեծ ուշադրությամբ ունկնդրում եր հռետորներին և ավելի ուշադիր դիտողը կնկատեր, վոր նա հուզվում եր, յերբ լսում եր ընկերների ցուցմունքները Արշակի հակակոմունիստական վարքի մասին և վոգևորվում, նույնպես աննկատ կերպով, յերբ լսում եր

բանվոր կոմունիստների ճիշտ դատողություններն ու գնահատականները։

Նա խոսեց ամենից վերջը, խոսեց ծափերի տարափի տակ, անպաճույճ, հասարակ բառերով, բայց համոզիչ, նրա խոսքերն ասես մուրճի հարվածներ եյին, վորոնք իջնում եյին ծանր և ուժգին։

— Մեր կուսակցությունը Հայաստանում աշխատում ե շրջապատված մանր-բուրժուական միջավայրով և այդ միջավայրն ամեն անգամ փորձում ե իրեն արտահայտել կուսակցության մեջ, իր ազդեցությունը տարածել այնտեղ, տարրալուծել և կամ թե իր ծոցը քաշել ու կլանել այս կամ այն անփորձ ու տատանվող կոմունիստին։ Բայց կոմունիստը, մանավանդ բանվոր կոմունիստը, պետք ե պողպատի պես ամուր լինի,—նա իր բռունցքված բազուկը ճոճում եր ոդում, վորն ասես իրոք պողպատից ձուլված լիներ։—Քաղաքացիական կռիվներում տերտեր կամ խմբապետ գնդակահարելը շատ հեշտ եր, քան նման պայմաններում կուսակցության գիծն անշեղ տանելը, քան սոցիալիզմ կառուցելը։ Դրա համար յել մեզ, կոմունիստներիս վրա պարտականություն ե դրվում հանդես գալ ավելի կոփված ու անխորտակելի, ինչպես այդ վայել ե իսկական լենինիստի։ Իսկ գալով ընկեր Արշակին, պիտի ասել, վոր նա յել այն անկայուն զոհերից ե, վորոնք շատ հեշտ կերպով ընկնում են բուրժուական թակարդը և խճճվում, բայց ես յել կարծում եմ, վոր նրան բոլորովին չպիտի դեն շպրտել, վոր նա ավելի խճճվի այդ թակարդում, նրան պետք ե ոգնել, վոր ազատագրվի այդ ազդեցություններից և դառնա իսկական բոլշևիկ. մենք պետք ե դարձյալ փորձենք, իսկ յեթե տեսնենք,

վոր նրանից օգուտ չկա, ապա նոր միայն նրան կվռնդենք մեր շարքերից. յես նույնպես համաձայն եմ ընկերների հետ, վոր նրան արվի խիստ և վերջին նկատողությունը, հետո ազատել նրան գործարկոմի նախագահությունից և ստանոկի մոտ ուղարկել։ Իսկ գալով մեր տպագրական բջիջին, նա պետք ե ավելի ուշադրությամբ հետևի իր անդամների դաստիարակությանը և նման ցերեկույթները բնում խեղդի։

Վարպետ Ակոբը հուզված եր։ Նա ջղայնությամբ կտրատում ու մանրում եր ձեռքին յեղած թղթի կտորը, նա իրեն նախատում ու հանդիմանում եր, վորոշ չափով մեղավոր ճանաչում Արշակի խնդրում, վորովհետև ինքն եր առաջարկել նրա թեկնածությունը գործարկոմի նախագահության համար։ Նա հուզված եր և վոչինչ չխոսեց։

Արշակին պաշտպանող չեղավ։

Ներկա վեպի ընթերցողին պարզ հայտնի չի, ինչպես կասեր նրան ծանոթ վարպետ Ակոբը, վոր Արշակի նկատմամբ յերկու կարծիք լինել չեր կարող։

Առաջարկեցին նրան հանել գործարկոմի նախագահությունից և բոլոր մասնրը համերաշխությամբ վեր բարձրացան։ Արձանագրվեց նրա նկատմամբ ավելի լուրջ ու դաստիարակչական միջոցներ ձեռք առնելու անհրաժեշտությունը, ինչպես նաև նրան խիստ ու վերջին նկատողություն անելը և ժողովն անցավ օրակարգի հաջորդ հարցերին։

V

Հաջորդ օրը, բանվորական ընդհանուր ժողովն զբաղվեց նաև գործարկոմի նախագահի հարցով։

Վրդովմունքը մեծ եր։ Բանվոր հռետորները խարազանում եյին ուժեղ ու ամեն կողմից։ Ցավը ծանր եր Արշակին։ Նա տեսնում եր բազմաթիվ հայացքներ դեպի ինքն ուղղված, ո՜ այդ հայացքները, այդ աչքերը, նրանք խիստ են, պահանջկոտ, վոչինչ չզիջանող։

Պարոն Ասատուր Խաչքարյանը մի անկյուն քաշված, ծեր արջի նման մրթմրթում եր։

Ժողովը ժպտուն ու անտարբեր քվեարկեց Արշակին գործարկոմի նախագահությունից հանելու հարցը և ծափերի տարափի տակ գործարկոմի նախագահության համար առաջարկեց Դասակարգ Հայրոյի թեկնածությունը։

Հայրոն դուրս թռավ,—

— Դասակարգը չի ուզա՜, Դասկարգը չի՛ կարա, ինձ թողեք յես իմ այրեստը շարունակեմ։

Բայց ծափերը խեղդեցին նրա խռպոտ ձայնը և նա միաձայն ընտրվեց գործարկոմի նախագահ։

— Դե՜հ արի ու դիմացիր, պարոն Խաչքարյան, քո կեղտոտությունները թափող նոքարդ, այն «հիմար կոռն» գործարկոմի նախագահն ե։

— Դե՜հ արի ու դիմացիր, պարոն Խաչքարյան։

* * *

— Օրակարգի յերկրորդ հարցի, տրեստի տնտեսական և ֆինանսական դրության մասին զեկուցելու նպատակով խոսքը տալիս եմ ընկեր Սանդրո Փաշայանին, զեկուցելու համար,—հայտարարեց նախագահը։

Ավելի վոգևորված ծափահարեցին Սանդրոյին։ Հասակակից բանվորները հրճվում եյին, վոր մի քանի տարի առաջ, գլուխը կախած իրենց հետ գրա-

շարունթյուն անող Սանդրոն, այսօր տրեստի նախագահի զեկուցումով է հանդես գալիս իրենց մոտ։ Ցերկարորեն ծափահարեցին, Սանդրոն իր հեղինակությամբ նրանց աչքում ավելի յեր բարձրացել։

Նա նախագահի սեղանի վրա դրեց զեկուցման կոնսպեկտը,—վայրիվերո գրած մոտ յերեսուն թերթ։

Ոհո՜, բայց զարմանալի չէ, Սանդրոն յեկել է ռուսերեն թղթերով, հաշվեկշիռներով, թվերով, մեծադիր աղյուսակներով։ Բռավո՜, Սանդրո՜, բռավո՜...

Յերբ ծափերը վերջացան նա սկսեց.—

— Ընկերնե՛ր, եստեղ նախագահը հայտարարեց, վոր յես պիտի խոսամ տնտեսական-ֆինանսականից․ բայց յես պիտի սկսեմ նախ ֆինանսականից։

— Սկսի՛ր, Սանդրո ջա՛ն...

— Վորտեղից քեֆդ կուգի, ենտեղից էլ սկսի՛ր։

— Ընկերնե՛ր, եսքան ժամանակ ա, վոր յես ես աշխատանքումն եմ։ Պետք ա ասեմ, Յաղությանի գնալուց դեսը յես շատ դժվարություններ եմ ունեցել։ Եսքան ժամանակների ընթացքում ինձ հանդիպել ա 35 հազար մանեթի վեքսիլ, վորը վոր յես շատ դժվարությամբ եմ կարողացել թափել, վորը յեթե յես չթափեյի, պետք ա մենք ճղավել եյինք։ Առ մեկն հունվարի մուտք եմ ունեցել 211,553 մանեթ 41 կոպեկ և յելք եմ ունեցել 248,724 մանեթ 74 կոպեկ։ Վո՞րտեղից եմ լրացրել մնացածը, դա յեղել ա ժողտնտխորհի աջակցությունը, վորը վոր ինձ տվին փոխարինաբար։ Ես ելեկտրական թելերի համար,—նա աչքը վեր հառեց ու նայեց ելեկտրական թելերին,—և ինձանից պահանջում եյին զանազան գումարներ, վորը վոր, ինարկե, յես չտվի։ Գալով արտադրությանը, այստեղ

յես կտամ միքանի տեղեկություններ, վորը վոր վերցրել եմ իրանց գործերից։ Յես պետք ա ասեմ, վոր ինձ մոտ ձեռքի շարվածքի աշխատավարձը բարձրացել ա և արտադրությունը ճղավել ա 6,—նա նայեց ձեռքի աղյուսակին,—իսկ լինոտիպի շարվածք, արտադրությունը բարձրացել ա 9 և աշխատավարձը 6, եստեղ ոգավել ա 3։ Ի՞նչ ենք սպասում Գերմանիայից։ Բայց են էլ ասեմ, վոր ես մեր ընկեր Սիմոնը շատ ուշացավ, վորը վոր չպիտի եսքան ուշանար։ Յես վաղուց է Բաթումից ստացա հեռագիր, վոր պիտի ստանամ իրեք լինոտիպ։ Յեվս պիտի ստանամ 5 լինոտիպ, ընդամենը 8 լինոտիպ, սա իմացել եմ Սիմոնի իրա նամակից, վորը վոր նա գրել ա Բեռլինից։ Մեկ էլ նա արդեն ռատացիոն մաշինեն էլ գնել ա։ յես եստեղ կտամ միքանի տեղեկություններ, վորը վոր վերցրել եմ իրա նամակից։

— Ես մեր պատերազմ ունենալով տեղկոմների հետը,—շարունակեց Սանդրոն,—հազիվ հաջողվեց մուրհակ ստորագրել և վեքսիլ տալ, վոր բանվորները կրեդիտ ստանան։ Յես դաժե զբաղվել եմ մեր բանվորների բնակարանների խնդրով, Բաբաջանի, բանի հետ գնացել ման ենք յեկել և կենցաղի ֆոնդից 10000 բաց եմ թողել արդեն, վորը վոր դրել ենք իրանց տրամադրության տակին, բնակարան կառուցելու համար։

Մինչ Սանդրո Փաշայանը փոքր ինչ քրտնած, շարունակում եր իր զեկուցումը և բանվորները լարված հետաքրքրությամբ լսում եյին նրան, ներկա վեպի հեղինակի ձեռքն անցավ և նա կարողացավ ծանոթանալ զեկուցման վերին աստիճանի հետաքրքիր

կոնսպեկտի հետ և նա ավելորդ չհամարեց, կոնսպեկտի վորոշ մասերին ծանոթացնելու իր ընթերցողներին, նրանց ցույց տալու համար, թե ինչպես այդ նախկին գրաշարը հանդես է գալիս կարևոր մի տնտեսական հիմնարկի ղեկավարի դերում։

Այդ անպաճույճ ու վայրիվերո կոնսպեկտում ընթերցողը կտեսնի նաև այն քննադատական վերաբերմունքը, վոր Փաշայանը հանդես է բերում տարիներով այդ աշխատանքը վարող տրեստի նախագահի սխալների նկատմամբ։

Ահա բնորոշ հատվածներ այդ կոնսպեկտից.

5. Հրատարակչության հարաբերության մասին

Ինչ՞ումն է կայանում հին հաշիվը. 1927 թ. յեղել է վորոշ թուրիմացություն, վորը Սիմոն Յաղությանը սխալվել է, նրանով, վոր իրան նստել է շարվածք 1 ռ. 04 կոպեկ, իսկ նրանց վրա հաշվել է 1000 տառը 60 կոպ., վորը տվել է հետևյալ վնասը. № 3 ցուցակը։

Մինչև այսօր այս վոչ համաձայնությունը շարունակվում է. 1928 թ. հոկտ. 8-ին Յաղությանը գրել է Հրատարակչության, վոր վորքան կըլնի ինքնարժեքը, վրան կգամ 10%. բայց ինչու չի հանձնել իսկական հաշիվները, վոր լուծվեր այդ բոլոր թուրիմացությունները։ Այնպես վոր կնքում եմ նոր պայմանագիր. պահանջել եմ սմետա և խոստացել են, վոր վերջացնեն մինչև ամսի 25-ը։

7. Գործարքայինը

Գործարքային աշխատանքը համեմատած աշխատավարձքի հետ է մնացել արտադրությունը, վորը ցույց կտա թվերը. № 1։

8. Մեր պարտքերը

Միքանի զակազչիկներ մեզ մեծ գումարներ են պարտք մնացել և յեթե այս գումարի գոնե կեսը լիներ ձեռիս, այսքան ավելորդ տոկոսներ չտայի և թղթի կրիզիսից ազատվեյի։

10. Միքանի խոսք կասեմ տպարանում գործեր փչացնելու մասին յեվ գլխավորապես մեքենայական բաժ.

11. Պետական Հրատարակչություն

Մեր և Հրատարակչության միջև միշտ յեղել է դժգոհություն և գլխավորապես փողային կողմանից։

13. Շենքը

Ինչպես անդրադարձավ նոր շենքի տեղափոխությունը—5 ամյա ծրագրի վրա. այնպես վոր 2—3 ամսվա աշխատանքը կորավ և ստիպված ենք նորից կազմել տալ։ Ես մասին ինչու չեյին մտածի իր ժամանակին։

15. Ղարաքիլիսեյի տպար.

Տպարանը լավ հիմքերի վրին չի շնորհիվ նրան, վոր հաշիվները աշխատանքների վերաբերյալ

լավ չեն տանվում։ Այստեղ կտամ մի փոքրիկ Թիվը, վորը կպարզի ամեն ինչ և ստիպված եմ մարդ ուղարկել։

19. Ցաղուբյանի գալը

Սիմոնը շատ ուշացավ ես ի՞նչ ա մտածում․ բայց իմ կարծիքով մինչև ամսի վերջը պիտի ըստեղ լինի, յեթե Մասկվա չսպասի։

25. Վերջը

Այստեղ կտամ միքանի տեղեկությունները մեր անելիքների մասին № 7 և կվերջացնեմ։

Սանդրո Փաշայանը զեկուցում եր անկապ նախադասություններով, բայց ամբողջ ժողովը նրան լսում եր հուզված ու մտասևեռ։ Յերբ հասավ կոնսպեկտի 25-րդ կետին, Փաշայանը միքանի համոզիչ տեղեկություններ տվեց տրեստի հեռանկարների մասին և առանց «ցնցող» վերջաբանի ու ճռճռան ֆրազների, վերջացրեց։

Սրտալից ու արձագանքող ծափերով Թնդաց ժողովատեղին։ Բոլորը սրտանց վողջունեցին։

Արշակի համար ամեն ինչ մռայլ եր։

Փաշայանն այդոր ամբողջ իր հասակովը մեկ բարձրացավ բանվորների աչքին։

* * *

Գնա հիմա, Արշակ։

Նա մռայլ է ու մտախոհ։ Յերազ եր կարծես, ամեն ինչ յերազ եր Թվում նրան։

Նա հիշեց մի այլ ժողով, դարձյալ բազմամարդ, յերբ իրեն բարձրացրին, իսկ այդ նույն մարդիկն այսօր նրան ներքև շպրտեցին, ամուր ու շնդալից։

Նա դարձյալ մտաբերեց առաջին ժողովը, փորձող հայացքներ կային այնտեղ և ժպտուն դեմքեր։ Հիշեց մի այլ գիշեր, ելեկտրական կաԹնալույսի տակ․ Յեղիշին, ապա Վերգուշին հիշեց։ Վերգուշին, վորը գիտեր նրան սփոփել, սիրտ տալ, յերբ նա հուզված եր լինում ու լքված, իսկ հիմա ու՞ր գնա Արշակը, ու՞մ դիմի։ Ո՞ւմ հետ խոսի։ Լյալյա՛, Լյալյա՛, միակ ժպտացող պատուհանն այս մռայլ կամերայում... Յես կամուսնանամ, յես պիտի ամուսնանամ, Լյալյա՛, Լյալյա՛...

Գնում է Արշակը։

Մռայլ յերեկո յե։ Փողոցը Թափուր։ Քամին փոշի յե ցանում չորս կողմը։

V

Ցրում է Արշակը տառարկղի առաջ կռացած և շարում է անտրոտունջ։ Ակամայից նա մտաբերում է մանուկ ժամանակ իր դասագրքում կարդացած «Վասակի ձկնիկի հեքյաԹը» և հիշում կոտրած տաշտակը։

Շարում է նա լուռ ու մտախոհ, ընկերների խոսակցությանը չի մասնակցում, իսկ նրանք ել ակնածանքով են նայում Արշակին։ Մինչև անգամ Բուբուղազը նրան ամենևին չի կպչում, «ձեռք չի առնում», սա այնքան տարորինակ է, վոր խորհրդավորության ատիճանն է Թևակոխում։

Բայց Արշակին ուրիշ միտք է կրծում։ Նրա հա-

մար դժվարն այն չե, վոր գործարկումի թղթապանակից հետո, այժմ տառական ե բանել ձեռքին, և վոչ էլ այն, վոր ռոճիկից պակասում ե 20 ռուբլի, վորով նա հնարավորությունից զրկվելու չե իր ապրուստից զատ Վերգուշին հատկացնելու խոստացված կենսաթոշակը։ Վերգուշն արդեն հայտնել եր նրան, վոր ինքն աշխատանքի չե մտել և հրաժարվում ե նրանից դրամ ստանալ, վո՛չ, այդ բոլորը չեն նրան մտատանջում, այլ ուրիշ մտքեր են նրան հուզում։

Ահա թե ինչ։

Լյալյան, իր գեղեցկությամբ ու դիրքով այնքան անառիկ թվացող այդ աղջիկը, վորը հանձնվեց ավելի շուտ, քան Արշակն եր սպասում, արդեն կամաց-կամաց սկսում եր լքել և անտարբեր դիրք բռնել իր նկատմամբ։ Արշակը հաճախ եր հանդիպում նրան ուրիշ տղամարդկանց հետ, կենսուրախ, ծիծաղադեմ անցնելիս և խանդը կրծել եր սկսում նրա սիրտը։ Իսկ սառնությունն անտանելի յեր։ Կարծես նրանք յերբեք իրար ծանոթներ ու մոտիկներ չեն յեղել, այսպես եր թվում Արշակին։

Մտքերում յերկար եր խորասուզվում Արշակը։ Նա վոչնչով առիթ չեր տվել, ընդհակառակը, Լյալյային ամուր կապվելու համար բաժանվեց կնոջից, նոր ամուսնության եր պատրաստվում, իսկ այդ աղջիկը սառը ջուր լցրեց նրա պայծառ հեռանկարների վրա։ Ի՞նչ ե ուզում վերջապես, և ի՞նչ ե պահանջում։ Արշակը վոչինչ հասկանալ չեր կարող։

Եվ ի՞նչ պիտի անի Արշակը ո՞ւր գնա։ Հո չի՞ կարող մնալ այսպես, յերկու քարի արանքում։

Ծարում ե Արշակը, դարձյալ գլխիկոր և մտքերը հանգիստ չեն տալիս նրան։

* * *

Սանդրո Փաշայանը դեռ վաղուց հակառակում ու «սկզբունքով դեմ եր» կանանց տպարանում աշխատանք տալուն։

— Կնիկարմատը տպարանում բան շինող չի,— ասում եր նա,— արճիճի փոշուն նա դիմանալ չի կարող։ Ահագին ամագ ենք թափում, սովորացնում, աշակերտությունից գրաշարության ենք հասցնում, մեկ ել տեսար, ը՛հը, մարդ առավ ու տպարանից ձեռ քաշեց։ Ենքան տարի վո՞ր կնիկարմատը մինչև վերջը տպարանում մնացել ա ու գործը գլուխ տարել։ Եդ ռսի կնանիքանց համար ա ասված, մերոնց համար չի։

Բայց Սանդրոն իր հաշիվներում սխալ դուրս յեկավ։ Սիրուշը բոլորովին հակառակն ապացուցեց։ Նա նույնպես «մարդ առավ», ճիշտ ե. Ցընդըքյանի հետ ամուսնանալու հաջորդ որվանից, սովորականի նման նա կանգնեց տառարկղի առաջ ու շարեց։ Վոչ մի ձևականություն, վոչ մի բացակայություն։

Սանդրոն սկսում եր կամաց-կամաց իր տեսակետները փոխել։

— Աղջի, թազա հարս,— ասում եր Բոշբողազը,— վոտդ խերով եր, պսակվեցիր թե չե, մարդդ տպարանի վարիչ դարձավ։ Բեզպես մի խերով կնիկ ել չեմ կարող ճարել յես առնեմ։

— Իսկ դու շատախոսության համար ես ստեղծված, յեթե մի որ բոշբողազների ցուցահանդես լինի, դու այնտեղ առաջին մրցանակը կտանես, կբախտավորվես,— պատասխանում եր Սիրուշը։

Ժամացույցի մետրինակ բաբախյունի տակ ու-

րախ ե անցնում գրաշարական օրը։ Ե՛վ ծիծաղում, և՛ աշխատում, և՛ կատակում են նրանք։

Բայց դարձյալ տխուր ե անցնում Արշակի օրը. նա շարունակում ե իր միօրինակ լռությունը, վոչ մի խոսակցության չի խառնվում։ Շարում ե մտազբաղ ու ինքնամփոփ։

Ավելի տխրում ե նա, յերբ տուն ե վերադառնում, իր Նոր բախտի համար ձեռք բերած նոր բնակարանը։ Բայց կարծես բանտ լինի, թափուր ու մռայլ, ճնշող պատերով։

Նստում ե անշուք սեղանի առաջ, ձեռքը քունքին, ներսուզվում ու մտածում ե յերկար։ Հիշում անցյալը, վոր ժպտուն եր ու պայծառ. ներկան՝ մռայլ ե. հեռանկարը՝ գորշ ամպերով պատած։ Հիշում ե Վերգուշին, վորին սիրել ե ու վորից սիրվել ե ինքը։ Իսկ հիմա նա հեռու յե իրենից, օտար ե իրեն։ Իսկ հիմա գորշ ու մռայլ սենյակն ե ճնշող առօրյայով։

Վերգուշն այժմ բանվորուհի յե, Արշակն այդ գիտի։ Աշխատում ե ծխախոտագործարանում։ Բաժանումից կարճ ժամանակ անց, նա գործի դիմեց։ «Սուգ» չարեց։ Այդ գիտե Արշակը և դա յե գուցե, վոր Վերգուշի հմայքն այնքան բարձրացրել ե նրա աչքերին։ Արշակը հանդիպել ե նրան գլխավոր փողոցում, գլխին վառ-կարմիր թաշկինակ եր կապել և նրա դեմքն ավելի գեղեցիկ ու հրապուրիչ եր թվացել Արշակին այդ թաշկինակի տակ. նա քայլում եր հպարտ ու արհամարհող։ Չտեսնելու յեր տվել ու չեր բարևել Արշակին, չնայած նա այդ րոպեյին անչափ ցանկացել եր գոնե բարևել նրան, սփոփվել այդքանով։

Իսկ Լյալյա՞ն։ Նա չի՛ սիրում Արշակին, այդ պարզ

ե, խաղալիք ե դարձրել նրան ու ծիծաղել մեշչանական քրքիջով։ Յեթե սիրում եր Արշակին, հապա ո՞ւր ե հիմա, լքման ու տանջանքի այս օրերին ինչո՞ւ չկա, ինչո՞ւ չի հուսադրում իրեն, ինչո՞ւ չի սփոփում։ Մոռացա՞վ տան ճանապարհը, ի՞նչ ե։ Իսկ չե՞ վոր Վերգուշը հենց այսպիսի մոմենտներին ավելի յեր սիրում Արշակին, գորովում, շոյում ճակատը և Արշակն սկսում եր թեթևանալ։

Ո՞ւր ե Լյալյան...

Ո՞ւր ե Վերգուշը...

Յերկար ե մտածում Արշակը, խորասուզվում, վորոնում յելքը։

Շուրջը մռայլ ե։ Գորշ սենյակ։ Համր պատեր։

VI

Եվ ինչպե՜ս, ինչպե՜ս աշխատի պարոն Ասատուր Խաչքարյանը։ Եվ ինչպե՜ս շարժվեն նրա ձեռները և ինչպե՜ս զանազանեն նրա աչքերը։

Վոչ միայն նրա համար, վոր ներքևում, ուրիշների համար իր սեփական մեքենաներն են չխչխկում, վոչ միայն նրա համար, վոր իր սեփական տառերն աչք են ծակում, վոչ միայն նրա համար, վոր Արշակի պաշտոնի հետ կորան և իր բոլոր հույսերը և վոչ ել նրա համար, վոր գեներալ-նահանգապետի շքանշանների փոխարեն, այժմ «ինչ-վոր» Փաշայանից ու Ցրնդըքյանից նկատողություններ ե ստանում նա։ Վո՛չ, այս բոլորի հետ նա արդեն ընտելացել եր։ Վերջին դեպքը գլուխ գործոցն եր այդ բոլորի և պարոն Խաչքարյանի գանգը քիչ եր մնում պայթեր, աչքերը մթագնում եյին և սիրտը կորատվում եր։

Որոշ շշուկներ վաղուց էր լսել, իմացել էր, որ պարի դպրոցի ուսուցիչներից մեկը հատուկ կերպով հետապնդում է Լյալյային, և որ դա ուսուցման հետ վոչ մի առնչություն չունի։ Աղջկանը որոշ զգուշացումներ արել էր, բայց նման բան մտքովն անգամ չէր անցնում։

Երբ ասին, որ Արշակը սիրահարվել է Լյալյայի վրա և պիտի ամուսնանա, ոչինչ չառարկեց, նա վոգևորվեց նոր «փեսայով» և անմիջապես նրա հետ կապեց իր վիրավոր շահերի ամոքումը։ Այդ գլուխ գալ չէր կարող այլևս, դա պարզ էր պարոն Խաչքարյանին, բայց այս դեպքը շշմեցնող էր ու ցնցող։

Պարո՛ն Խաչքարյան, ա՞յս էր, ա՞յս էր միթե պահած քեզ համար։

Նա գլխահակ, հուզարկավորի տրամադրությամբ նստել է սեղանի առաջ և սրտով արտասվում։

Դեպքը պատմվում էր մի քանի վարիանտներով։ Վ՞որն էր ճիշտը։ Բոցբողազն այլ գունեղությամբ էր պատմում, դրսում բոլորովին այլ բաներ էին ասում։

Սակայն ներկա վեպի հեղինակը հնարավորություն ստեղծեց իրեն և աշխատեց պարզել դեպքի իսկությունը և համառոտակի կերպով ծանոթացնել իր ընթերցողներին։

*
* *

Պարի դպրոցի չերիտասարդ ուսուցիչ Առաքել Բարսեղյանը բոլորովին անտարբեր չէր ուսանողուհի Լյալյա Խաչքարյանի նկատմամբ։ Հանդիպման առաջին իսկ օրից նրա դեմքի գեղեցիկ գծագրությունը, մարմնի կազմվածքը, ճկունությունը, համարձակ շարժումները գրավեցին նրան։ Բարսեղյանը հավաստիացրեց, որ այդ աղջիկը լավագույն պարողուհի կարող էր դառնալ և սկսեց առանձնապես ուշադրություն դարձնել նրա վրա։ Սովորական պարապմունքներից դուրս, նա հատուկ ժամեր էր հատկացնում Լյալյայի հետ պարապելու համար։

Ձեռքի շոյուն հպումով էր ուղղում, ձև տալիս նրա թևերին, ոտքերին և մարմնի այլ մասերին, որոշ ջերմություն էին զգում նրա ձեռները, որը և հուզմունք ու գրգիռ էր առաջացնում։ Եվ չերբ Լյալյան հաջողությամբ էր կատարում յուրաքանչյուր ցուցմունքը, Բարսեղյանն ուսուցչաբար շոյում էր նրան և չերբեմն համբուրում նրա... ճակատը։

Լյալյան դրանում ոչինչ վատ բան չէր գտնում, ընդհակառակը, նրա ինքնասիրության ու հպարտության գանձարանը հարստանում էր նորանոր գանձերով։

Որոշ ժամանակից հետո Լյալյան զգաց, որ Բարսեղյանն իր շոյանքներով ավելի հեռուներն է գնում, և դրանում ուսուցչական ոչինչ չկա։

Լյալյան հուզվեց, մտածեց չերկար, չերկընտրանքի մեջ ընկավ, բայց չընդդիմացավ։ Նա էլ որոշ հաճույք և հետաքրքրություն զգում էր այդ բոլորի մեջ, ու այդ բոլորն ավելի ընդունելի էին դառնում Լյալյայի համար, քանի որ դիմացինն իր ուսուցիչն էր, որը կարող էր նրան լավագույն պարողուհի դարձնել։

Օրերն անցնում էին շոյանքով ու հպումներով։

Վերջին ժամանակները, մանավանդ, նրանք միշտ միասին էին լինում, զբոսնում միասին, և այդ մասին շշուկներ էին շրջում դպրոցում։ Լյալյան գիշեր-

ները ուշ էր տուն գալիս, և հաճախ տանը չէր ընթրում։

Չար ու վտանգավոր մտքեր էին շրջում պարոն Աաչքարյանի գլխով և նրա խրատները գնալով ավելի առատանում էին։ Լծողը ով։

Առաքել Բարսեղյանը գնալով իր ծրագրերը լայնացնում էր ու նախապատրաստվում նրանց կատարմանը։ Լյալյայի բարյացակամությունը, իր ամենօրյա շոյանքների հանդեպ ցուցաբերվող հյուրընկալությունը նրան վոգևորում էին ավելի առաջ գնալ։ Նա այդ ուղղությամբ սկսեց մտածել։

Տանը հյուրեր ընդունելու, այն էլ «փափուկ սեռից», ինչպես կասեր նույն ինքը՝ այդ պարի ուսուցիչը, հնարավորություն չուներ, առավել ևս՝ նրանց հետ զբաղվելու։ Փնտռեց ուրիշ միջոցներ։

Վորսաց մի վորոշ գումար և քաղաքի հյուրանոցում յերկու շաբաթով վարձեց մի սենյակ։ Բոլոր հարմարություններն ապահովված էին և Առաքել Բարսեղյանը գործի անցավ։

Յերեկոները Լյալյային նա իր նոր սենյակն էր հրավիրում,— Լյալյա,— ասում էր նա,— նահատակվեցի ուրիշների հետ ապրելով, այսուհետև վորոշել եմ այս հյուրանոցումն էլ ապրել։

Յեվ Լյալյան զարմանում էր իր ուսուցչի կարողության վրա, վոր հնարավորություն ունի հսկայական գումարներ վճարելով, ապրել հյուրանոցում։ Այդ հանգամանքն ավելի յեր վոգևորում Լյալյային։

Նրանք յերեկոները բավական խոսում էին, ապա իջեցնում բոլոր վարագույրները, ընթրում միասին. պահարանում միշտ էլ ընտիր գինի, կոնյակ և ուտե-

լիք կճարվեր։ Խմում էին իրար կենաց, շոյում իրար։ Գրկախառնումները սովորական էին դարձել և համբույրները՝ առատ։ Ապա սկսվում էր պարապմունքը։ Ուսուցիչ Բարսեղյանը «սովորեցնում էր» իր աշակերտուհուն և Լյալյան նրա ցուցմունքներով պարում էր գինով ու կիսամերկ, որորվում էր նա գինով ու կիսամերկ և գինով ու կրքոտ գրկում էր նրան ուսուցիչ Բարսեղյանը։

Նման մի գիշեր։

Ուսուցիչ Առաքել Բարսեղյանը, հարբած ու շլրջված աչքերով, բառերը ծամելով, առաջարկեց իր աշակերտուհուն պարել «Ադամ-Յեվայի շորերով» և խռպոտ ու կերկերուն ձայնով բացականչեց.—

— Լյալյա՛, հոգյակս, ճաշակենք արգելված պտուղը։

Լյալյան վոչինչ չհասկացավ։

— Պետք է ճաշակենք արգելված պտուղը,— մըլտաց նա։

Յերբ գինով ու կիսազգա Լյալյան դարձյալ չհասկացավ, նրա ուսուցիչ Առաքել Բարսեղյանը բացատրեց ավելի պարզ ու հասկանալի կերպով։

Լյալյան, ո՛վ վոչ, գուցե ինքը չէր, գուցե գինին էր, բայց Լյալյան վոչինչ չառարկեց։

Պարեց կիսազգա ու խելահեղորեն։

Նեղ մահճակալը ճռնչաց դառնորեն և կքեց իր ծանր բեռի տակ։

*
* *

Լուսանում էր։

*
* *

Առավոտյան, ժամը տասներկուսի մոտերը, հյու-

րանոցի ծերունի ծառան, գլուխն օրորելով, մաքրում էր սենյակը մրգի, քաղցրավենիքի, «դակուսկայի», գինու և ջարդված բաժակների մնացորդներից։

VII

Այն չի հետաքրքիրը, որ պարոն Ասատուր Խաչքարյանն ամբողջ գիշերը չքնեց և կես գիշերից հետո թափառեց քաղաքում իր աղջկանը որոնելով, և ոչ էլ այն, որ նրա աղջիկը տուն վերադարձավ գունատ ու շշմած, այլ կարևորն այն է, որ այդ դեպքը կայծակի արագությամբ տարածվեց ողջ քաղաքում, անցավ բերնեբերան, պատմվեց ամեն չերանգով.—կոմյերիտական կենտրոնական թերթում խարազանող հոդված լույս տեսավ ու գործը հանձնվեց դատախազության ուշադրությանը։

Եվ ինչպե՜ս, ինչպե՜ս աշխատի պարոն Ասատուր Խաչքարյանը։ Ինչպե՜ս ձեռները գրիչ բռնեն, ինչպե՜ս ականջներն այս բոլորից հետո հաշտվեն իր սեփական մեքենայի չխչխկոցի հետ։ Ինչպե՜ս աչքերը հանդուրժեն ուրիշի շարվածքի միջից թախծոտ կերպով իրեն նայող իր սեփական տառերի գերության փաստի հետ։ Յեվ ինչպե՜ս, ինչպե՜ս նա հանդուրժի ուրիշի կրքերը բավարարելու համար իր սեփակա՛ն պատվի առատաձեռն վատնումը։

Վո՜չ, ավելի լավ է սպանեցե՛ք, թաղեցեք նրան, ողջ-ողջ թաղեցեք, քան այս բոլոր տանջանքներն ու զրկանքները։ Սպանեցե՛ք, սպանեցե՛ք, էլ ի՞նչ եք ուզում նրանից։

Յեվ պարոն Ասատուր Խաչքարյանը յերկարորեն պայքարում էր ինքն իր դեմ, իր բազմաթիվ թշնամի-

ների դեմ, սկսած բանվորական կառավարությունից, մինչև իր յերբեմնի նոքարի ու այժմ նրան հարվածող ու հեգնող գործարկոմի նախագահը և մինչև իր փայփայանքներով մեծացած սեփական աղջիկը։

* * *

— Իսկ Արշա՞կը,—անպայմանորեն հարց կտա ներկա վեպի ընթերցողը,— ի՞նչ յեղավ նա։

Յեվ վեպի հեղինակն ընդառաջելով նրա հետաքրքրությանը, կպատմի վերջինը՝ Արշակի մասին։

Անակնկալ լուրը ցնցեց և նրան. մարմինը փշաքաղվեց։ Նա պարզապես հանկարծակիի յեկավ։

Այսպե՜ս ուրեմն։

Ճիշտ է, այն օրից ինչ Արշակը վերստին գրաշարական համազգեստը հագավ ու թողեց գործարկոմի խավաքարտե թղթապանակը, այն օրից Լյալյան սկսեց կամաց-կամաց հեռանալ ու սառել նրանից։ Մանավանդ վերջին շաբաթները, նա Արշակի հետ արդեն խզել էր իր հարաբերություններն ու կապերը։ Բայց Արշակը դեռ շարունակում էր մտածել նրա մասին. կարծում էր և հավատում նույնիսկ, որ սառնությունը ժամանակավոր է, որ այդ շուտով կանցնի, որ Լյալյան դարձյալ կմոտենա իրեն, որ դարձյալ կլինեն իրար հետ մոտիկ և նույնիսկ... որպես ամուսիններ։

Նա գիտեր, որ Լյալյան շատ է թափառում ուրիշ տղամարդկանց հետ։ Սիրտ մաշող շշուկներ էր լսում նրա մասին, բայց նման անակնկալ, այդպիսի խայտառակ վերջավորությամբ, նա յերբեք չէր սպասում։

Շարում է Արշակը լուռ ու մտախոհ և գլխում, աչքերի առաջ, մտքերի հսկայական կինո-եկրանին է

գործում։ Դեպքե՛ր, դեպքե՛ր։ Իրար հաջորդող, իրարից ծնվող և զարգացող, անսպառ։ Բազմապիսի մտքերի այդ եկրանում, բոլորին ծածկող և բոլորից պայծառ, ահա նա տեսնում է Վերգուշին, գլուխը Թաշկինակի կարմիր պսակում, զվարթադեմ, նա հռհռում, ծիծաղում է Արշակի վրա, և Արշակը նրան իրավացի չի համարում։

*
* *

Դեռ մայրամուտը չկար։ Արշակը մտավ «Նոյա-Տապան»-ը։ Զբաղվեց մի քիչ։ Ողի խմեց, ապա գարեջուր և դանդաղ քայլերով ուղղվեց իր նոր բնակարանի ճանապարհին։

Այդօր ավելի դժվար է նրան մտքերի և դեպքերի այդ ժխորում մենակ լուսացնել։ Նրա համար ամեն ինչ վերջացած է։

Փորձում է ընթերցել։ Ինչպե՞ս, մի՞թե այդ հնարավոր է, մի՞թե տառերն ու մտքերը հնազանդվում են նրան։

Տենդոտ քայլերով նա չափում է սենյակի յերկայնքն ու լայնքը, կանգ առնում այս կամ այն նկարի առաջ, անիմաստ աչքերով դիտում և նորից քայլում յերկայնքով ու լայնքով։

Բրքրում է վողջ պատմությունը, սկզբից մինչև վերջը, վերագնահատումներ անում։ Աշխատում է անաչառ լինել, պարզ է, ինքն է մեղավորը։

Յեվ հիմա Թող «քավի»։

Բայց նա չի կարող, սիրտը պայթում է, շունչը հատնում։

— «Իսկ ի՞նչ է անում Վերգուշը, հենց հիմա,— մտածում է նա,—իմ լա՛վ Վերգուշ, անկե՛ղծ բարեկամ,

դու այժմ հռհռում ես ինձ վրա, և դրանում դու իրավացի ես։

Միքանի անգամ դարձյալ չափեց սենյակի յերկայնքն ու լայնքը։ Հուզված մոտեցավ կոտրված հայելուն, դիտեց իր դեմքը, վոչի՛նչ, այնքան էլ այլանդակ չէր, ինչպես ինքն էր կարծում։

Վոչինչ վատ չի լինի։ Նա համոզեց իրեն, ծածկեց գլխարկը և դուրս գնաց։

*
* *

Փողոցում որորվում է նա գլխիկոր ու մտազբաղ. չի նկատում անցորդներին, հաճախ է բաղխվում նրանց, ծանոթները բարևում են և նա չի տեսնում։ Քայլերը գլխավոր փողոցից նրան առաջնորդեցին յերկրորդական մի փողոց։ Գնում է նույն մտազբաղությամբ։ Ահա և այն ծանոթ դուռը, վորը հաճախ է բացվել նրա բանալիով, վորից յերկար ժամանակ նա դուրս է յեկել և յերբեք չի մտաբերել։

Կանգ առավ Արշակը։ Մտածեց յերկար։ Բաղխե՞լ, թե վոչ։ Կնդունի՞ արդյոք։ Չի՞ վռնդի արդյոք, դրանով վերջին հարվածը հասցնելով Արշակին։

Նորից խորհեց. յերկմտանքը փոխվեց, բացասական մտքերը տեղի տվին և նա մեքենայորեն բաղխեց դուռը մի անգամ և կանգնեց։ Սիրտն ուժգնորեն բաբախում էր, շնչառությունն արագանում, թոքերը լայնանում էին, քրտինքը հոսում էր նրա մարմնի բոլոր ծակոտիներից։

Նա սպասեց մի փոքր, սրտապնդվեց և բաղխեց յերկրորդ անգամ։

Դուռը դռան ճռինչով բացվեց։ Կենվորներից մեկի աղջիկն եր։

Արշակը շփոթված քայլերով առաջ անցավ և քայլերը նրան տանում եյին դեպի վաղեմի ծանոթ այն սենյակը։

Կանգ առավ սենյակի դռան առջև։ Հուզմունքը կրկնապատկվեց։ Սիրտն ավելի արագաթափ խփել սկսեց և շնչելու համար օդն սպառվում եր ասես։

Սպասեց բավականին, ձեռքը դողալով վեր բարձրացավ և վախկոտորեն բաղխեց սենյակի դուռը։

— Մտե՛ք,—հնչեց վստահ ու ծանոթ կանացի ձայնը ներսից։

Բայց ինչպե՞ս մտնի Արշակը, նրա ծնկները ծալվում են, քրտինքը հոսում ե ամբողջ մարմնով։

— Մտե՛ք,—կրկնեց նույն ձայնը։

Վախկոտ յերեխայի նման, նա դուռը ճռռալով բացեց ու ներս սողաց։

Վերգուշը զարմացավ, այլայլվեց։ Արշա՛կը, այն ել այս ժամի՜ն։ Ի՞նչ ե պատահել։ Նա ընդոստ վեր ցատկեց։

Կարմիր թաշկինակի տակից փայլում եյին նրա պայծառ և աշխույժ աչքերը։ Արտևանունքներն արագ թարթելով ու զարմացկոտ, նա Արշակին եր դիտում։

— Վերգուշ ջա՜ն, իմ լա՜վ ընկեր,—համարյա հեկեկաց նա, բարև,—իմ լա՜վ Վերգուշ։

— Բարև՛,—քիչ անտարբեր և քիչ ժպտուն ասավ նա։

Յեվ այդ անտարբերությունը, և այդ ժպիտը ամբողջովին տակն ու վրա արին Արշակի սիրտը։ Նա բառեր չգտավ խոսելու և համրորեն նստավ սեղանի

մոտ, դեմքն յերկու ափերի մեջ առավ և մանկան նման սկսեց հեկեկալ։

Վերգուշը զարմացած եր, բայց նա ամեն ինչ կռահեց։ Մոտեցավ Արշակին, շոյեց նրա ճակատը և սկսեց նրան հանգստացնել։

Այդ ջերմ վերաբերմունքն ավելի հուզեց Արշակին և բառերը, վոր նա փնտռում եր ասելու համար, սկսեցին անհետանալ ու կորչել։

Յերբ քիչ հանգստացավ և շնչառությունը կանոնավորվել սկսեց, նա խոր հուզմունքով Վերգուշին դիմեց.—

— Ներիր, Վերգուշ, իմ լավ ընկեր, ներիր, յես մեղավոր եմ, յես ինձ պահել չկարողացա։ Նոր կյանք ենք կառուցում, նոր աշխարհ, և թշնամին բոլոր միջոցներով ուզում ե մեզ հաղթել, յես չկարողացա անսայթաք քայլել մեր ճանապարհով, վորը դժվար ե ու լի խորտուբորդներով։

Ներիր...

1927—1929 թ.

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ներկա վեպի հեղինակն իր ընթերցողներին (հատկապես բանվոր ընթերցողներին) խնդրում է վեպի մասին ունեցած իրենց գնահատականը, կարծիքներն ու դիտողությունները գրի առնել և ուղարկել իրեն հետևյալ հասցեյով.—

Յերեվան, Աբովյան փողոց № 7, Ալազանին:

Առանձին գրքերով լույս են տեսել Ա. ԼԱԶԱՆԻ հետեվյալ աշխատությունները.—

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ

1. «Տարիների խաղը» (պոեմ) (սպառված).
2. «Հրաբխապոեզիա» (բանաստեղծութ. ժողովածու) (սպառված).
3. «Աշխատանքային» (բանաստեղծութ. ժողովածու) (սպառված).
4. «Որիորդ Օլգա» (պոեմ) (սպառված).
5. «Գյուղի գիշերը» (պոեմ) (սպառված).
6. «Պոեմ գյուղի մասին» (սպառված).
7. «Դիրքերում» (բանաստեղծութ.) (սպառված).
8. «Դասալիք» (վիպակ) Պետական Հրատարակչութ. գինը՝ 50 կոպ.
9. «Պատմվածքներ» Պետական Հրատարակչություն, գինը՝ 20 կոպ.
10. «Ճանապարհին» (վեպ) Պետական Հրատարակչութ.

ԽՄԲԱԳՐԱԾ

11. «Բանվեցը» (գեղարվեստական ժողովածու). Պետական Հրատարակչութ., գինը՝ 75 կոպ.:

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ.

Կարդալուց առաջ պետք է անպայման ուղղել նկատված հետեվյալ վրիպակները.

եջ	տող	տպված է	պետք է լինի
13	9—10 վեր.	հետախուզության	հետազոտության
13	14 »	դրա վրա	իրար վրա
64	17 »	Սպիտակաձև	Ստորակետաձև
69	8 »	ներկա ընթերցողը	ներկա վեպի ընթերցողը
88	8 »	ու հանդ տեղը	ու քանդ տեղը
96	9—10 ներ.	ու բակայողներից	ու բացակայողներից
117	15 »	հո՞ր	հո՛ր
118	10 վեր.	Հարիկը	հարիֆը
121	16 »	ե փողոցում	և փողոցում
137	18 »	Ջհաննամ	Ջհաննամ
146	4 ներ.	ուրանում	ուրախանում
152	7 վեր.	խորհրդակցել	խորհրդածել
166	1 »	նայլապես	այլապես
166	1 »	կտեղայի	կտեղային
200	7 ներ.	հեռանկարների բա:	հեռանկարների վրա:

ՀՀ Ազգային գրադարան
NL0327686

211 - 192

Алазан

„В ПУТИ“

(Роман)

Госиздат ССР Армении

891.99
Ա-28

Գինը 1 ռ. 20

17.791